

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ԱՄԲԻՈՆ**



**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՐԿԱ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

**ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

*ՆԿԻՐՎՈՒՄ Է  
ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 5-ԱՄՅԱԿԻՆ*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ԱՍԲԻՈՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՐԿԱ ԵՎ ՄԻԶՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑ  
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆՎԻՐՎՈՒՄ Է  
ՌՈՍԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՍԲԻՈՆԻ  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 5-ԱՄՅԱԿԻՆ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2014

ՀՏԴ 801:06  
ԳՄԴ 81  
Թ 330

Հրատարակվել է ԵՊՀ ռուսնագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Կազմող, գլխ. խմբագիր՝ **Կարո Կարապետյան**  
Խմբագրական խորհուրդ՝

**Աննա Հակոբյան, Աննա Խաչատրյան,  
Նվարդ Վարդանյան, Լուսինե Մարգարյան,  
Ռուզան Միրզոյան, Գոհար Դանիելյան,**

Թ 330

Թարգմանությունը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց: Գիտական հոդվածների ժողովածու: Կազմող՝ Կ. Կարապետյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014 – 316 էջ:

Մեր օրերում, երբ արտասահմանյան երկրների ներկայացուցիչների հետ մեր մասնագետների, գիտնականների, գործարարների շփումներն ընդլայնվում են և օտար լեզուներով գիտատեխնիկական տեղեկատվության հոսքն ավելանում է, թարգմանագիտության տեսական խնդիրների ուսումնասիրությունը և դրանց գործնական ուղղվածությունը հիմք են հանդիսանում այնպիսի պրոֆեսիոնալ թարգմանիչների պատրաստման համար, որոնք հետագայում ունակ կլինեն մասնագիտանալու գեղարվեստական, գիտահետազոտական, հրապարակախոսական և այլ տեքստերի թարգմանության բնագավառում:

Գիտական հոդվածների սույն ժողովածուն ունի հոդվածների գիտագործնական ուղղվածություն, այն է՝ թարգմանագիտության տեսական խնդիրների քննարկման հետ մեկտեղ առաջարկվում են մասնագետ թարգմանիչների պատրաստման ուղիները և դիտարկվում են թարգմանության որպես գործնական առարկայի դասավանդման խնդիրները:

ՀՏԴ 801:06  
ԳՄԴ 81

ISBN 978-5-8084-1846-2

© ԵՊՀ հրատարակչություն, 2014  
© Հեղ. խումբ, 2014

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ԵՎ  
ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ**

*ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Որակյալ թարգմանիչների խիստ պակասը հանգեցրել է Հայաստանի շատ բուհերում թարգմանիչներ պատրաստող բաժինների բացվելուն, ընդ որում, արհեստավարժ թարգմանչին ուղղված միակ պահանջը բնագիր լեզվին տիրապետելն է: Արդյունքում՝ բազմաթիվ գրասենյակներում աշխատում են մարդիկ, ովքեր չունեն պրոֆեսիոնալ պատրաստվածություն կամ լավագույն դեպքում, օտար լեզու դասավանդողներ են կամ բնագիր լեզվի մասնագետներ:

Թարգմանիչներ կամ թարգմանելու հավակնություն ունեցող անձանց պատրաստող բազմաթիվ կրթական հաստատությունների և այլ կառույցների ի հայտ գալը կարճաժամկետ հեռանկարում չի կարող ապահովել այս խնդրի հիմնարար լուծումը: Իմ կարծիքով՝ պատճառը ոչ թե այս հաստատություններում ցանկության կամ խանդավառության պակասն է, այլ թարգմանիչների պատրաստման ծրագրի անհամապատասխանությունն այսօրվա պահանջներին, ինչպես նաև՝ **թարգմանություն դասավանդող որակավորված կադրերի սակավությունը:**

2011 թ. Երևանի պետական համալսարանի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի կողմից կազմակերպվել էր գիտաժողով, որի ընթացքում, բացի թարգմանաբանության տեսական հարցերից, քննարկվել է նաև որակավորված թարգմանիչներ պատրաստելու խնդիրը, ովքեր ի վիճակի են աշխատել մեր հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում: Կարծում եմ, որ գիտաժողովը կարողացել է սևեռել օտար լեզու դասավանդող դասախոսների ուշադրությունը այս խնդրի վրա: Սակայն, ծանոթ լինելով մեր երկրի բուհերում տիրող իրավիճակին, և, հենվելով սեփական փորձի ու թարգմանիչների պատրաստման գործում ներգրավված իմ գործընկերների փորձի վրա, կարելի է վստահաբար պնդել, որ հայաստանյան բուհերում առկա է թարգմանություն դասավանդող որակավորված դասախոսների պակաս:

Թարգմանություն դասավանդող որակավորված դասախոսների պակասը, թարգմանության դասավանդման մեթոդիկայի խնդիրները մինչ այժմ չեն արժանացել ո՛չ թարգմանիչների, ո՛չ էլ այդ առարկան դասավանդող մասնագետների լուրջ ուշադրությանը: Հատկանշական է, որ մասնագիտությունների անվանացանկում, որով մեր երկրում կարելի է ստանալ բարձրագույն մանկավարժական կրթություն, **թարգմանչության մանկավարժ** մասնագիտությունը բացակայում է: Ավելի վաղ, երբ նախկին Խորհրդային Միության միայն մի քանի թարգմանչական ֆակուլտետներ էին պատրաստում թարգմանիչներ, մեզ համար այնքան էլ մտահոգիչ չէր: Ներկայումս, երբ թարգմանիչներ պատրաստում են Հայաստանի կրթական հաստատությունները, անհրաժեշտ է թարգմանիչների և թարգմանություն դասավանդող որակյալ դասախոսների պատրաստման Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների առաջատար լեզվաբանական բուհերի հարուստ փորձը:

Բնական է, որ մեր կրթական համակարգում կատարվող փոփոխությունները չեն կարող շրջանցել նաև թարգմանությունը՝ որպես ուսումնական ոլորտ: Կյանքն առաջադրում է բազմաթիվ նոր խնդիրներ, որոնք չեն կարող լուծվել ավանդական մոտեցումներով:

Ներկայացնեմ այդ խնդիրներից մի քանիսը՝ փորձելով ուրվագծել նաև լուծման հնարավոր տարբերակները: Հաճախ ենք խոսում արհեստավարժ թարգմանիչների պահանջարկի աճի և համապատասխան մասնագետներ պատրաստող ուսումնական հաստատությունների թվի զգալի աճի մասին: Սակայն այս դեպքում, որպես կանոն, շրջանցվում է այն հանգամանքը, որ չունենք թարգմանության դասախոսներ պատրաստող բուհեր, իսկ թարգմանչական ֆակուլտետների և բաժինների շրջանավարտները, այսինքն՝ մարդիկ, ովքեր առավելապես պատրաստված են թարգմանության դասախոս աշխատելու համար, այսօր նախընտրում են աշխատել ըստ մասնագիտության: Եվ դա հասկանալի է. թարգմանիչների աշխատանքի վարձատրության պայմաններն այժմ ավելի լավ են, քան օտար լեզվի դասախոսներինը:

Որպես հետևանք՝ տեսության և պրակտիկայի ուսումնական դասընթացները շատ ժամանակ վարում են բանասերները կամ օտար լեզու դասավանդողները: Ուզում եմ ընդգծել, որ նրանք իրենց գործի նվիրյալներն են՝ մարդիկ, ովքեր ձգտում են փոխանցել ուսանողներին իրենց գիտելիքներն ու փորձը: Բայց հասկանալի պատ-

ճառներով նրանց երբեմն չի հերիքում տեսական և պրակտիկ գիտելիքների պահանջվող մակարդակը, ինչն անդրադառնում է մեր շրջանավարտ թարգմանիչների որակի վրա:

Շոշափվող հարցը, ելնելով նրա առանձնահատկությունից, կարող է լուծվել միայն պետական մակարդակով:

Մասնավորապես՝ խնդրի լուծումը կապված է օտար լեզուների բանասիրության ֆակուլտետներում թարգմանության դասախոսներ պատրաստող բաժինների ստեղծման, համապատասխան ուսումնամեթոդական բազայի ձևավորման, ուսուցման արդի տեխնիկական միջոցների ներդրման, թերևս նաև դասավանդող մասնագետների աշխատավարձերի բարձրացման և այլ հարցերի հետ: Ներկա իրավիճակից ելնելով՝ դրական դեր կարող է խաղալ օտար լեզվի դասախոսների (ովքեր վարում են թարգմանության դասընթացներ) նկատմամբ վերաբերմունքը, ինչը պետք է արտահայտվի բարոյական և մեթոդական անհրաժեշտ աջակցությամբ:

Մյուս խնդիրը առնչվում է ուսանողներին, որոնք սովորում են թարգմանչական ֆակուլտետներում և բաժիններում: Մի կողմից՝ նրանք միշտ չէ, որ ստանում են պատրաստման բավականաչափ բարձր լեզվական և թարգմանչական պատրաստվածություն, մյուս կողմից՝ հատուկ թարգմանչական առարկաների համար ուսումնական պլաններով հատկացված ժամերի սղության պատճառով ուսանողները խիստ սահմանափակ հնարավորություն ունեն դասախոսի հետ անմիջականորեն շփվելու համար:

Ստեղծված պայմաններում հատկապես կարևորվում է ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հետագա կատարելագործումը՝ հատկապես **ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացման միջոցով**: Վերջինիս մեծ հնարավորություն է տալիս էլեկտրոնային կրթությունը, որի դեպքում շեշտադրումն ինքնուրույն աշխատանքի վրա է: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել այն վարժությունները, որոնք ուղղված են տեքստի լսողական ընկալմանը (listening comprehension) հաջորդող հետևողական թարգմանությամբ, ինչն էլ կհանգեցնի բառապաշարի հարստացմանը, լեզվի տարբեր կրողների կողմից արտաբերվող խոսքի ընկալմանը, ինչպես նաև խոսքի անհատական հնչյունաբանական ինտոնացիոն պատկերների զարգացմանը:

Կարևորագույն խնդիրներից մեկը, որը կանգնած է մանկավարժական հանրության առջև, թարգմանությանը նվիրված այնպիսի դա-

սագրքերի ստեղծումն է, որոնք կարողանան արտահայտել հասարակական կյանքի նոր իրողությունները: Դասագրքերի ստեղծման ժամանակ անհրաժեշտ է առավելագույն ուշադրություն դարձնել ուսումնական գործընթացի սկզբնական փուլին և այն ուսանողներին, ովքեր նոր են սկսում ծանոթանալ թարգմանության տեսությանն ու պրակտիկային, ինչպես նաև հստակ տարանջատել ուսուցման նախնական և արդի մակարդակները:

Դասագրքերի ստեղծման ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բովանդակային կողմին:

Ըստ իս՝ թարգմանության ուսուցման նախնական մակարդակի ձեռնարկը պետք է նպատակաուղղված լինի ուսանողների մոտ թարգմանչական որակների, այն է՝ թարգմանչական գործունեության իրականացման համար անհրաժեշտ կարողությունների և գիտելիքների ձևավորմանը:

Վերջիններին, ի թիվս այլ հարցերի, դասվում են՝ թարգմանության ընդհանուր և առանձին տեսությունների հիմնական դրույթներին ծանոթացումը, թարգմանչական խնդիրը ի հայտ հանելու, նրա բնույթը որոշելու, նրա լուծման համար անհրաժեշտ թարգմանչական կոնկրետ տեխնիկական եղանակների ճիշտ կիրառման հմտությունները:

Թարգմանության դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման խնդիրը կարևորներից է, եթե ոչ ամենակարևորը, քանի որ դրանից է կախված թարգմանիչների պատրաստման ուսումնական գործընթացը: Այս խնդիրը պահանջում է առանձնահատուկ մոտեցում և լուծում:

Առանձնահատուկ է քննարկվող հարցերի շարքում բանավոր թարգմանության գործի տեսության և պրակտիկայի խնդիրը, որն այնքան էլ մեծ ուշադրության չի արժանացել գիտնականների և մանկավարժների կողմից, թարգմանության ընդհանուր տեսության և գրավոր թարգմանության համեմատությամբ:

Մեր կարծիքով՝ ժամանակն է ձևակերպել բանավոր թարգմանության բնույթից բխող այնպիսի կոնցեպցիա (անկախ այն հանգամանքից՝ այն առնչվում է միաժամանակյա, թե՛ հետևողական թարգմանությանը), որը տարբերվում է գրավորի տեսանկյունից:

Մեր համոզմամբ՝ այս կոնցեպցիայի հիմքում պետք է ընկած լինի այն, որ բանավոր թարգմանությունը գերազանցապես կողմնորոշված է ոչ թե տեքստի, այլ տեղեկությունը ընկալողի վրա, այսինքն՝ բառաշարահյուսական և բառաքերականական համարժե-

քության: Պատկերացումները և առավել ևս կառուցվածքային նմանությունը պետք է երկրորդային լինեն ֆունկցիոնալ և պրագմատիկ պահանջների համեմատությամբ: Բանավոր թարգմանությունը կոչված է մարդկանց միջև «այժմ և այստեղ» իրականացվող շփումը սպասարկելու: Բանավոր թարգմանության ժամանակ բացակայում են ինքնախմբագրման՝ արդեն իսկ ընդունված թարգմանչական լուծումները փոփոխելու, տեքստի նախորդ մասին վերադառնալու կամ հնչած մասի իմաստի ճշգրտման նպատակով անդրադարձի հնարավորությունները: Բանավոր թարգմանության խնդիրը կարելի է ավարտված համարել ոչ թե այն ժամանակ, երբ թարգմանիչը ավարտեց տեքստի արտաբերումը և «մոռացավ» դրա մասին, այլ երբ աղբյուրի՝ հոետորի կողմից հաղորդակցման որոշակի հատվածում արտահայտած մտքերի ամբողջ կամ համարյա ամբողջ հանրագումարը ընդունվել և ընկալվել է վերջնական հասցեատիրոջ՝ թարգմանությունը ստացողի կողմից: Ընդ որում՝ թարգմանիչը պետք է օժտված լինի զգալի ընդհանուր իմացությամբ, հատուկ թեմատիկ միջմշակութային և բուն թարգմանչական որակներով: Իսկ որակների հիմքը պետք է դրվի **թարգմանչի ուսուցման և պատրաստման ընթացքում. անկասկած, ուսուցման ընթացքում վճռական դերը պատկանում է թարգմանություն դասավանդողին, որն օժտված է մասնագիտական հմտությունների և իրազեկության համակցությամբ:**

Դասախոսի աշխատանքային փորձի հարստացմանը, իմ կարծիքով, կարող են նպաստել **փոխադարձ դասալսումները:** Գործընկերների կողմից անցկացվող դասերին մասնակցելու նպատակը պետք է լինի ոչ թե ստուգումը, այլ **փորձի փոխանակումը:** Սկսնակ դասախոսները սովորում են ավագներից, իսկ ավագները կարող են փոխառել իրարից հետաքրքիր հնարքներ և դիտարկումներ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում բանավոր և գրավոր թարգմանություն դասավանդողի պատրաստմանը նպատակաուղղված անհրաժեշտության հիմնավորման ջանքերը պետք է շարունակական լինեն և, կարծում եմ, իմ գործընկերները կօգնեն ինձ այս գործում:

Այնուամենայնիվ, վստահաբար ուզում եմ ասել, որ մանկավարժական այս նոր մասնագիտության ուսուցման համար թեկնածուների ընտրության ժամանակ նախապատվությունը պետք է տրվի թարգմանչական, այլ ոչ թե օտար լեզուների ֆակուլտետների շրջանավարտներին:



Իսկ մանկավարժների պատրաստումը կարելի է կազմակերպել մագիստրատուրայում՝ նախապես մանրամասն վերամշակելով ուսուցման ծրագիրը և բովանդակությունը՝ ստեղծելով արհեստավարժ մասնագետների պատրաստման համար լիարժեք պայմաններ:

Կարծում եմ, որ իմ կողմից բարձրացված հիմնախնդիրները լրացուցիչ արդիականություն են ներշնչում մեր դժվարին, սակայն այդքան անհրաժեշտ՝ արհեստավարժ թարգմանիչների և թարգմանության մանկավարժների պատրաստման գործում: Եվ միայն բարի կամք է անհրաժեշտ:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Миньяр-Белоручев Р.К.** *Как стать переводчиком.* М.: “Стелла”, 1994.
2. **Чеботарев П.Г.** *Перевод как средство и предмет обучения.* М.: “Высшая школа”, 2006.
3. **Новенко В.А.** *Преподаватель перевода: нужна ли специальная подготовка?* – “Мосты”, N 3, 2007.
4. **Гавриленко Н.Н.** *Обучение переводу в сфере профессиональной коммуникации.* М.: РУДН, 2008.
5. **Латьшев Л.К., Семенов А.Л.** *Перевод: теория, практика и методика преподавания.* М.: Издательский центр “Академия”, 2008.

**КАРО КАРАПЕТЯН – Проблема преподавания перевода и подготовки переводчиков.** В статье рассматривается проблема подготовки квалифицированных переводчиков, предлагаются некоторые пути решения этой современной задачи. Предлагается обратить внимание на подготовку профессиональных преподавателей перевода, а также разработку плана и программы по курсу “Методика преподавания перевода” на отделениях и факультетах по подготовке профессиональных переводчиков.

**KARO KARAPETYAN – Problems of Teaching Translation and Training of Future Skilled Translators and Interpreters.** The article is dedicated to the consideration of one of the vital problems of nowadays, i.e. special training of future lecturers translation skills both interpreters and translators. Methods of teaching translation skills, elaboration of proper course-books for students of translation departments are also in the centre of discussion in the article.

**ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

*Հայաստանի պետական մանկավարժական համալսարան*

**ԳԱՅԱՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները հանգեցնում են թե՛ թարգմանաբանության, թե՛ թարգմանության ուսուցման ոլորտներում մեթոդների, ձևերի, ընթացակարգերի, ռազմավարությունների վերագնահատման, վերանայման: Անհրաժեշտ է թարգմանության ուսուցման գործընթացում հաշվի առնել լեզվաբանության, լեզվադիդակտիկայի, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ոլորտներում տեղի ունեցող զարգացումները, կիրառել ժամանակակից ուսուցման, տեղեկատվական, հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ, որոնք ոչ թե հակասում, այլ բխում են ավանդական դիդակտիկական, լեզվադիդակտիկական սկզբունքներից:

Բանավոր թարգմանության ուսուցման նոր դասընթացներ նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հայրենական և արտերկյա թարգմանաբանական, թարգմանական, թարգմանության ուսուցման տեսական և մեթոդաբանական ժամանակակից մոտեցումներն ու հայեցակարգերը:

Կարևոր հիմնախնդիր է այն, որ հայ մեթոդիստները բանավոր թարգմանության ռազմավարություն մշակելիս հավուր պատշաճի ուշադրություն չեն դարձրել հայերենի և անգլերենի տիպաբանական առանձնահատկությունների բացահայտմանը: ՀՀ լեզվական, լեզվաբանական ուղղվածություն ունեցող բուհերում մասնագիտական բանավոր թարգմանության ուսուցման դասընթացների նախագծման և կազմակերպման հստակ մոտեցումներ ձևավորված չեն:

Բանավոր թարգմանության կարողությունների և հմտությունների ձևավորման գործընթացը սկսվում է բուհում: Անհրաժեշտ է մշակել հստակ ռազմավարություններ՝ հաշվի առնելով թարգմանության տեսության և պրակտիկայի արդի զարգացումները: Այդ առումով կարևորվում են հաղորդակցական և կոգնիտիվ-հաղորդակցական մոտեցումները:

Մի կողմից՝ անհրաժեշտ է հաշվի առնել դիդակտիկական մատչելիության, հաջորդականության, գիտականության, գիտակցականության, ակտիվության սկզբունքները, մյուս կողմից, հիմք ընդունելով հաղորդակցական և կոգնիտիվ հաղորդակցական մոտեցումների շրջանակներում ձևավորված ուսուցման սկզբունքները, իրականացնել հաջորդական և համընթաց, գրավոր և բանավոր թարգմանության փոխկապակցված ուսուցում:

Կոգնիտիվ-հաղորդակցական մոտեցումը ենթադրում է բառապաշարի ընտրության թեմատիկ խմբավորման առանցքային միավոր առաջադրել հասկացույթը կամ կոնցեպտը: Դա ենթադրում է նախ և առաջ կիրառել վերևից ներքև (top down), ներքևից վերև (bottom-up) ռազմավարություն:

Հասկացութային մոտեցման արդյունավերտությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ բանավոր թարգմանության գործընթացում տեղի է ունենում լեզվակիրների լեզվամտածողության առանձնահատկությունների շարունակական բացահայտում: Սկսնակ թարգմանիչներին բնորոշ է առաջին տարբերակը, երբ, հնարավորինս յուրացնում են անձանոթ լեզվակիրների մտածելակերպին բնորոշ լեզվակադապարներ՝ աշխատանքային գործունեության նախնական փուլում: Ինչ վերաբերում է փորձառու թարգմանիչներին, ապա նրանք շարունակաբար խորացնում են իրենց հենքային գիտելիքները, անկախ այն բանից, թե պորֆեսիոնալիզմի ինչ մակարդակի են հասել: Ակնհայտ է մի բան՝ թարգմանության ուսուցման և իրականացման բոլոր փուլերում թարգմանիչները յուրացնում են նոր հասկացույթներ:

Ինչպես Վ.Պ. Ներոզնյակն է բնութագրում, հասկացույթները, «որպես իմաստակիր պատկեր, արտացոլում են աշխարհի պատկերի ազգային որևէ դրվագը և ընդհանրացվում են բառի մեջ» (Нероз-нак 1998: 81):

Դիտարկելով այն որպես հոգևոր երևույթ՝ Յու. Ս. Ստեպանովը գտնում է, որ կոնցեպտը մշակութային միջավայրի խտացումն է մարդու գիտակցության մեջ (Степанов 1997: 40): Այդպիսի մոտեցումը մեծ նշանակություն ունի բանավոր թարգմանության այս կամ այն ռազմավարությունը մշակելիս, քանի որ անցում է կատարվում հասկացական մակարդակից դեպի հասկացութային մակարդակ այն առումով, որ թարգմանելիս առաջնային է դառնում ոչ թե բառիմաստային համարժեքության, այլ ընդհանուր տեքստի, հաղորդագրության համարժեք թարգմանության հիմնախնդիրը:

Նշված ռազմավարությունները հասկանալու և կիրառելու համար անհրաժեշտ է որոշակիորեն հստակեցնել «կոնցեպտ» հասկացության սահմանումը: Թարգմանաբանության տեսանկյունից ճիշտ է հաշվի առնել նախ և առաջ լեզվամշակութային մոտեցումները: Ըստ Ն. Հարությունյանի՝ «Լեզվամշակութային կոնցեպտը արտացոլում է տարբեր ժողովրդների մենթալիտետի, կենսատճի, մտածողության առանձնահատկությունները» (Арутюнян 2010: 40): Այն «մշակութի թանձրույթ է մարդու գիտակցության մեջ, որը մշակութի ձևով մտնում է մարդու մենթալ աշխարհը» (Степанов 1997: 40): Կոնցեպտը ոչ թե լեզվական, այլ մտածելակերպի մենթալ միավոր է:

Թարգմանության ցանկացած ռազմավարություն ուսուցանելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ փաստը այն առումով, որ կոնցեպտը ներակա ներկայացնում է տվյալ ժողովրդի մտածողության կարծրատիպերը: Կազմելով մտածելակերպի «ֆրեյմի» կամ մտահորիզոնի մի մասը՝ կոնցեպտները ներկայացնում են լեզվամտածողության կոնկրետ, առարկայական տարբեր ոլորտներ:

Փաստորեն, թարգմանելով որևէ տեքստ, մենք մեկնաբանում ենք տվյալ ժողովրդի մտածելակերպի բնորոշ որևէ կարծրատիպային իրադրություն: Օրինակ՝ եթե մենք թարգմանում ենք անգլիական հարսանիքին վերաբերող որևէ տեքստ, պետք է մենթալ մակարդակում յուրացրած լինենք «հարսանիք» հասկացությթը այն առումով, որ այն բովանդակային շատ բնութագրերով տարբերվում է հայկական հարսանիքից:

Վերևից ներքև ռազմավարություն կիրառելիս ուսանողները պետք է սկզբից նշեն, թե ինչ հարսանիքի մասին է խոսք գնում: Հաջորդ փուլում նրանք թվարկում են արարողակարգային բնութագրերը, որոնք բնորոշ են միայն հայկական հարսանիքին, հետո համեմատում են դրանք անգլիական հարսանիքի հետ: Վերջում կարելի է ներկայացնել տարբերակիչ և ընդհանուր կողմերը: Ավարտական փուլում ուսանողները գծում են Վենի տրամագիր:

Ներքևից վերև ռազմավարության ժամանակ ուսանողները շարժվում են հակառակ ուղղությամբ: Նրանք սկզբում թվարկում են հայկական և անգլիական հարսանիքների տարբեր արարողակարգային բաղադրիչներ, հետո առաջարկում են իրենց դասընկերներին՝ կռահել, թե ինչ հարսանիքի մասին է խոսք գնում: Օրինակ՝ ուսանողներից մեկը հարց է տալիս՝ ի՞նչ հարսանիքի մասին է խոսք

գնում, եթե լավաշ են փռում հարսի ուսերին, երբ հարսը ափսե է ջարդում ներս մտնելիս և այլն: Տորթն այտերին քսելը, կամ «տարոսիկը» հետ շարտելը դարձել են հայկական հարսանիքի բաղադրիչ, սակայն այդ լակունաներն ունեն եվրոպական ծագում:

Ակնհայտ է, որ թարգամանության ուսուցման գործընթացը չի սահմանափակվում մեկ կամ երկու հասկացույթի ուսուցմամբ: Հասկացույթների հետևողական ուսուցումը նպաստում է ուսանողների երկրորդային լեզվական անձի ձևավորմանը: Նրանք աստիճանաբար յուրացնում են ուսումնասիրվող լեզվի իմաստային դաշտը ոչ թե «բառից դեպի հասկացույթ», այլ «հասկացույթից դեպի բառ» ռազմավարությունը կիրառելով:

Անհրաժեշտ է ուսանողներին հստակորեն ծանոթացնել բանավոր թարգմանության ռազմավարություններին՝ կոնկրետացնելով ուսուցման փուլերը: Ինչպես նշում է Յա. Բ. Եմելյանովան, «Թարգմանչի տեխնիկական իրազեկությունը ներառում է թարգմանական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Այդ գիտելիքները նախևառաջ թարգմանության ռազմավարությունների, թարգմանական հնարների և փոխակերպումների մասին են» (Емельянова 2010: 38):

Ժամանակակից թարգամանության տեսաբանները թարգմանական գործունեություն ծավալելու գործընթացում առանձնացնում են նախևառաջ վերձանաչողական (մեթակոգնիտիվ) ռազմավարությունները, միջլեզվական և միջմշակութային հմտությունները: Վերձանաչողական ռազմավարությունը ենթադրում է հաղթահարել նախևառաջ թարգմանության մասին ուսանողի (թարգմանչի) թյուր պատկերացումները: Սկսնակ թարգմանիչը սկսում է թարգմանել բոլորովին այլ դրդապատճառներով. նա փորձում է աչքի ընկնել, հետապնդում է շահադիտական նպատակներ՝ փորձ ձեռք բերել, յուրացնել թարգմանության տարրերը: Նրա համար թարգմանությունը, հատկապես՝ բանավոր, կարող է լինել հայտնի դառնալու, անվերջ ճանապարհորդելու, նոր մարդկանց հանդիպելու, ինչ-որ տեղ նաև ինքնահաստատման միջոց: Վերձանաչողական ռազմավարություն կիրառելով՝ թարգմանիչը կարողանում է շարունակաբար զարգացնել թարգմանական իրազեկությունը, որի կարևոր բաղադրամասն է ինքնառեֆլեքսիան: Թարգմանիչը պետք է կարողանա հաղթահարել «միամիտ լեզու սովորողի պատկերացումները» (“naive language learners’ beliefs”) (Lave 1988; Wenden 1998):

Փաստորեն՝ վերճանաչողական ռազմավարությունը պետք է ընկած լինի թարգմանության տեսության և ուսուցման պրակտիկայում հայտնի փորձի և սխալի, սպասելու, ժամանակ շահելու և այլ ռազմավարությունների հիմքում: Ավելին, վերճանաչողական ռազմավարությունը ենթադրում է ցանկացած ռազմավարության կիրառման կամ ուսուցման հետևողական վերլուծություն: Ինչպես ընդունված է թարգմանական պրակտիկայում, այն ենթադրում է վերլուծություն կողքից: Օրինակ՝ կիրառելով գծայնության կամ «սուստնաժի» ռազմավարությունը, որի կիրառումը միտված է առավելագույն համարժեքության հասնելուն, թարգմանիչը պետք է մշակի նաև սեփական թարգմանությունը վերլուծելու և գնահատելու ռազմավարություն: Ակնհայտ է, որ առանց խոսութային կամ դիսկուրսիվ վերլուծության, դա հնարավոր չէ: Թարգմանիչը պետք է կարողանա ճիշտ գնահատել իրադրությունը, մասնակիցների կարգավիճակը, նպատակադիրքորոշումները, վարքագծային նորմերը, կարծրատիպերը, ընդհանուր առմամբ՝ հաղորդակցական վարքագիծը՝ հաշվի առնելով թարգմանության արտալեզվական գործոնները:

Խոսութային վերլուծությունը մեծ նշանակություն ունի հատկապես փորձերի և սխալների ռազմավարության կիրառման ժամանակ, քանի որ ինչպես նշում է Վ. Մ. Իյուլիսինը, այդ ռազմավարությունը կիրառվում է այն ժամանակ, երբ հաղորդագրություն անողը թվարկում է մի շարք հասկացություններ, որոնց թարգմանությունը դժվար է առանց լայն համատեքստի (Илюхин 2011: 20):

Սպասումի ռազմավարությունը նույնպես շատ դժվար է կիրառել, եթե թարգմանիչը չի փորձում կռահել, թե տեղեկատվությունը, հաղորդագրությունը ինչ հասկացութային-իմաստային դաշտի են վերաբերում: Նա պետք է կարճ դադար առնի այն հույսով որ տեքստի նոր հատվածներում կգտնի իր համար կարևոր կամ անհրաժեշտ տեղեկատվություն: Դա օգնում է նրան պարզել արտահայտության իմաստը, եթե տվյալ համատեքստում չի կարողանում ճիշտ կողմնորոշվել: Ինչպես նշում է Մեթոնը, համընթաց թարգմանության ժամանակ կարելի է մի քանի վայրկյան դադար տալ, եթե տեղեկատվություն ստացողին անհարմար վիճակի մեջ չեն դնում (Setton 1997:50):

«Ստոլինգի» կամ ժամանակ շահելու ռազմավարությունը ենթադրում է փորձել թարգմանվող նյութի հաղորդումը դանդաղեցնել՝ ժամանակ շահելու նպատակով (Gile 1995:130): Այս ռազմավարությ-

յունը կիրառելիս հաշվի են առնվում հաղորդվող տեղեկատվության կարևորության աստիճանը, ինչպես նաև դադար տալու նպատակահարմարությունը: Հոգեբանական առումով՝ դժվար է կիրառել կամ սովորեցնել կիրառել այդ ռազմավարությունը, քանի որ սկսնակ թարգմանիչները դադար տալը կամ ժամանակ շահելը վերագրում են իրենց անփորձությանը կամ իրազեկ չլինելուն: Այստեղ մենք գործ ունենք անփորձ թարգմանչի անհարգի շտապողականության հետ, երբ “public image”-ին արագ հասնելու ցանկությունը ընկալվում է իբրև «արջի ծառայություն»:

Ժամանակ շահելու ռազմավարությունը նույնպես ածանցվում է վերևից ներքև, ներքևից վերև ռազմավարությունից, քանի որ թարգմանիչը պետք է տվյալ թեմայի շրջանակներում բավականին տեղեկացված լինի, որպեսզի կարողանա անձանոթ հասկացություն պարունակող տեքստի տվյալ հատվածը լրացնել:

Ի տարբերություն նախորդ ռազմավարությունների՝ գծայնության պահպանման ռազմավարությունը ենթադրում է ոչ միայն վերձանաչողական ռազմավարության կիրառում կամ խոստթային վերլուծություն, այլև թարգմանվող կամ համեմատվող տեքստի ոճա-ժանրային վերլուծության կարողություն, քանի որ այն ենթադրում է աղբյուր և թիրախ լեզուների առավելագույն համարժեքություն: Պատահական չէ, որ Ժիրը գրում է այդ առումով. «Այդպիսի մարտավարությունը տեղին է այն դեպքերում, երբ թարգմանիչը գործ է ունենում աղբյուր և թիրախ լեզուների շոշափելի շարահյուսական և ոճաբանական տարբերությունների հետ» (Gile 1995: 130):

Հնարավոր կանխագուշակման ռազմավարությունը կիրառվում է այն խոսքային կադապարները օգտագործելիս, որոնցում բայը կամ առանցքային անվանական հասկացությունը գտնվում է իմաստային խմբի վերջում: Վերձանաչողական ռազմավարության տեսանկյունից կարևորվում է ոչ թե վերմշակութային, այլ վերլեզվաբանական վերլուծությունը, որն ուսումնական պայմաններում օգնում է ապագա թարգմանիչներին՝ ուսումնասիրել սեփական սխալները և համապատասխան հետևություններ անել:

Մեղմման (կոմպրեսիա) և ապասեղմման (դեկոմպրեսիա) ռազմավարություններն անհրաժեշտ է կիրառել բանավոր թարգմանության ուսուցման բոլոր փուլերում՝ հաշվի առնելով քերականական, թարգմանական և բառային փոխակերպումների տեսակները:

Այսպիսով՝ բանավոր թարգմանության ռազմավարություններն ընտրելիս առաջին պլան է մղվում վերճանաչողական կադապարը, որի հիմքում ընկած են ընկալման և խոսքասերման հոգելեզվաբանական մեխանիզմները, հասկացութային մոտեցումը, երբ թարգմանիչը «ընկղմվում է» թիրախ լեզվին բնորոշ որևէ կարծրատիպային իրադրության մեջ և լրացնում այն տեղեկատվական բացը, որն առաջ է գալիս առնչվող լեզուների անվանողական առումով նույն հասկացությունների ներակա համեմատումից:

Ցանկացած բանավոր կամ գրավոր թարգմանության ուսուցման դասընթաց կազմակերպելիս, անհրաժեշտ է հստակորեն դասակարգել բանավոր թարգմանության ուսուցման մեթոդները, ռազմավարությունները, հնարներն ու ձևերը, հստակեցնել այն կարողությունները և ունակությունները, որոնք կազմում են թարգմանչական գործունեության հիմքը, և մշակել բանավոր թարգմանության ուսուցման մեթոդական համակարգ:

Գործնականում առաջին պլան են մղվում բանավոր խոսքի զարգացման, մասնավորապես՝ շրջասման (paraphrase), փոխակերպման վարժությունները, որոնք ենթադրում են բառային փոխատեղում, լրացում, մասնատում և այլն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Gile D.**, *Basic Concepts and Models in Interpreter and Translator Training*. Amsterdam: Benjamins, 1995.
2. **Lave J.**, *Cognition in Practice: Mind, Mathematics and Culture in Everyday Life* / J. Lave. – New York: CUP, 1988.
3. **Setton R.**, *A Pragmatic Theory of Simultaneous Interpretation* / Doctoral Dissertation, Ann Arbor, Michigan, 1997.
4. **Wenden A.**, *Metacognitive Knowledge and Language Learning* / A. Wenden // *Applied Linguistics*. – 1998. – № 19.
5. **Арутюнян Н.**, *Трансцендентные сверхконцепты в лингвокультурном аспекте* (на материале английского языка в сопоставлении с армянским): дис. на соиск. степени док.пед. наук. Ереван, 2010.
6. **Емельянова Я.**, *Лингвострановедческая компетенция переводчика: теория и практика*: Монография / Я.Б. Емельянова. 2-е изд., испр. и доп. Нижний Новгород: ООО “Стимул-СТ”, 2010.



7. **Илюхин В.**, *Стратегии в синхронном переводе* (на материале англо-русской и русско-английской комбинаций перевода) Диссертация канд. филол. наук. – М.: МГЛУ, 2001.
8. **Нерозняк В.**, *От концепта к слову: к проблеме филологического концептуализма*, Изд. ОмГПУ, 1998.
9. **Степанов Ю.**, *Константы: Словарь русской культуры*. М.: Академический Проект, 2001.

**ИГОРЬ КАРАПЕТЯН, ГАЯНЕ ДАНИЕЛЯН – Стратегии обучения устному переводу.** В статье подчеркивается значение метакогнитивной модели в процессе отбора стратегий обучения устному переводу, так как в ее основе лежат психолингвистические механизмы восприятия и порождения речи, а также концептуальный подход, согласно которому переводчик погружается в конкретную стереотипную ситуацию и заполняет тот информационный пробел, который возникает при имплицитном сравнении в назывном плане тождественных концептов, контактирующих языков.

**IGOR KARAPETYAN, GAJANE DANIELYAN – Interpreting Teaching Strategies.** The article emphasizes the importance of metacognitive model to select interpreting teaching as psycholinguistic mechanisms of perceiving and generating speech as well as conceptual approach according to which an interpreter engages in concrete stereotyping situation and fills the information gap, which springs up in the process of implicit comparing nominatively the same concepts of contacting languages.

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ**

***ՄԵՂԱ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան*

Գեղարվեստական թարգմանության դերն ու նշանակությունը, ինչպես նաև դրա առանցքային հասկացության՝ համարժեքության խնդիրը տարբեր ժամանակներում տարբեր կերպ է արժևորվել: Գեղարվեստական թարգմանության նպատակն է մի լեզվից մյուսը փոխադրել բնագրի գեղարվեստական պատկերավորությունը, որպեսզի թարգմանությունը թիրախ լեզվի ընթերցողի համար ապահովի այնպիսի գեղագիտական ներգործություն և ընկալում, որը համարժեք է բնագրի ընթերցողի ընկալմանը: Հետևաբար, գեղարվեստական թարգմանությունն ավելին է, քան, Նայդայի խոսքերով, զուտ մի լեզվի վերակոդավորումը մեկ այլ լեզվի: Գեղարվեստական թարգմանությունը թարգմանչի առաջ շատ ավելի բարդ խնդիրներ է դնում. այն պահանջում է, որ թարգմանիչը անցնի հեղինակի ստեղծագործական ողջ ուղին, ըմբռնի, որսա բնագրի բուն ոգին և հետո միայն գտնի իր սեփականը դարձած մտքի, զգացմունքի, ապրումի, փորձառության ամենաճշգրիտ արտահայտությունը և ամբողջովին վերարտադրի կամ փոխադրի բնագրի բովանդակությունն ու ձևն այնպես, որ համապատասխանի բնագրի լեզվին և ոճին:

Պատմություններ հորինելը, ստեղծագործելը զուտ մարդկային գործունեություն է: Մարդը ոչ միայն գործիք ստեղծող կամ նշաններ ստեղծող և դրանց իմաստներ վերագրող արարած է (homo significans), այլև գրականություն ստեղծող էակ է, որով ընդգրկվում է make-believe կոչվող խաղի մեջ: Այն կայանում է երեք պարտադիր մասնակիցների դեպքում. մեկը, որ առաջարկում է խաղը (հեղինակը, սովյալ դեպքում գրողը), բուն խաղը (գրվածքը), և իհարկե մեկը, ում առաջարկվել է խաղի մասնակիցը դառնալ (ունկնդիրը կամ ընթերցողը): Յուրաքանչյուր գրող խաղի կանոնների մեկնաբանության իր ձևը, ոճը, տարբերակն է առաջարկում, որով էլ տարբերվում է մյուս գրողներից: Այն խիստ անհատական է ու բխում է հեղինակի աշխարհայացքից, ներաշխարհից և ծառայում է նրա միտմանը:

Բնագրի գեղարվեստական ոճն իր հիմքում անթարգմանելի է հենց միայն այն պատճառով, որ այն սովյալ հեղինակի մենաշնորհն է, նրա ինքնարտահայտման եզակի ձևը, որը կրկնության կամ պատճենման ենթակա չէ: Սակայն գործնականում բնագրի ոճի համարժեք թարգմանությունը դժվար իրականանալի, բայց լուծելի խնդիր է: Դրա լուծումը ստեղծագործական վերարտադրությունն է:

Բնագրի հետ նմանության (և ոչ թե նույնության կամ նույնականության) հարաբերություն ստեղծելու ճանապարհին թարգմանիչը կանգնում է ընտրության առջև: Եվ ինչպես նշում է չեխ տեսաբան Բ. Լևին, թարգմանությունը որոշման կայացման պրոցես է: Գտնվելով տարբեր լեզուների, մշակույթների խաչմերուկում՝ նա պետք է կատարի իր ընտրությունը՝ նվազագույն «ճնշում» գործադրելով սկզբնաղբյուր տեքստի վրա, հաղթահարի տարբեր լեզվակիրների և տարբեր մշակույթների պատկանող ընկալողների միջև լեզվական և մշակութային անջրպետը:

Պատահական չէ, որ անթարգմանելիության և համարժեքության մասին հիմնական դատողությունները քննվում են հենց գեղարվեստական թարգմանության առնչությամբ, որը երկի բովանդակության և ձևի ստեղծագործական ընկալման բարդ գործընթաց է և դրա վերակերտման արդյունքը, քանի որ գրական երկը չի սահմանափակվում միայն իմաստի, բովանդակության հաղորդումով, այլև արտահայտչական ամենատարբեր միջոցների համադրումով գեղագիտորեն ներգործում է ընթերցողի վրա: Գրական ստեղծագործության հենց այսպիսի բազմաշերտությամբ է պայմանավորված համակողմանի մոտեցումը գեղարվեստական թարգմանությանը, որը, բացի տաղանդից, պահանջում է նաև համապատասխան հմտություններ, որոնք ձեռք են բերվում բնագրի բազմաշերտ վերլուծությամբ և հեղինակի համատեքստի խոր իմացությամբ: Չէ՞ որ գեղարվեստական երկի թարգմանչի խնդիրն է վերստեղծել բնագրի գեղագիտական արժեքը, փոխանցել նրա «կենդանությունը»<sup>1</sup>, «հարազատ բույրն ու հրապույրը»<sup>2</sup>՝ միշտ նկատի ունենալով սկզբնաղբյուր և թիրախ լեզուների պատմական և մշակութային առանձնահատկությունները, այսինքն՝ հավատարիմ լինել բնագրին և հասկանալի՝ ընթերցո-

<sup>1</sup> Տե՛ս Հայ գրողները գեղարվեստական թարգմանության մասին, խմբ. Մաքսապետյան Մ., Երևան, 1985, էջ 142:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 129:

դին: Այլ կերպ ասած՝ գեղարվեստական թարգմանության նպատակն է ստեղծել մի տեքստ, որը որոշակի չափանիշներով համարժեք լինի բնագրին՝ ապահովելով սկզբնաղբյուր և թիրախ տեքստ համարժեքությունը: Խնդիրը նաև թիրախ լեզվի ընթերցողի կողմից համարժեք ընկալման ապահովումն է, ինչը տեղափոխում է հարցը մեկ այլ՝ ներգործության հարթություն:

Մյուս կողմից՝ ընկալումն ընդհանրապես շատ հարաբերական հասկացություն է. որքան ընթերցող կամ ունկնդիր՝ այնքան ընկալում:

Չէ՞ որ հատկապես գեղարվեստական ստեղծագործության ընկալման հարցին անդրադառնալիս ընդունված է համարել, որ միանշանակ ընկալում, այսինքն՝ հեղինակի միտմանը բացարձակ համարժեք ընկալում, փաստորեն հնարավոր չէ: Չկա տեքստի օբյեկտիվ ընթերցում, քանի որ ընթերցումն ու մեկնաբանությունը միանշանակորեն պայմանավորված են «ընթերցողի փորձառությամբ»<sup>3</sup>, կա «օբյեկտիվ տեքստ» և «սուբյեկտիվ ընկալում»: Հաղորդակցման, հատկապես գրական հաղորդակցման ստրատեգիական սկզբունքը արդյունքի և ընկալման յուրօրինակ հաշվեկշռի ստեղծումն է, որտեղ արդյունքի (product) նժարը միշտ պետք է ծանր լինի ընկալման նժարից<sup>4</sup>:

Այս առումով՝ թարգմանությունը (և ոչ միայն) միշտ էլ կանգնած է անհամապատասխանության վտանգի առաջ, քանի որ թարգմանված տեքստը ընկալելու և գնահատելու բացարձակ միանշանակ չափանիշներ չկան:

Գեղարվեստական ստեղծագործության թարգմանությունը երկու քայլ է ենթադրում. տարբերել ու գնահատել բնագրի ամբողջական բնույթը, ոճն ու ոգին: Այս նպատակով թարգմանիչը հետևյալ հարցերի պատասխանները պետք է պարզի և դրանք ընդունի որպես հանձնարարական. ի՞նչ է ասում բնագրի հեղինակը (հետևաբար՝ ի՞նչ չի ասում), ի՞նչ նկատի ունի բնագրի հեղինակը (ի՞նչ նկատի չունի) և ինչպե՞ս է նա այդ ասում:

Խնդիրը ոչ միայն այն է, թե ինչպես կարելի է հասնել համարժեքության, այլև թե որ տիպի համատեքստում կամ տեքստային իրա-

<sup>3</sup> Gadamer H.C. 1962. Truth and Method, New York.

<sup>4</sup> St' u Makaryk, I., 1993, Nitra School of Literary Criticism (Frantisek Miko, Anton Popovic), in Encyclopedia of Contemporary Literary Theory, pp.130-133.

վիճակում ինչպիսի համարժեքություն է հնարավոր ու նպատակահարմար՝ ելնելով տեքստի բնույթից, հեղինակի միտումից և ընթերցողի տեսակից:

Ելնելով վերոհիշյալից՝ գեղարվեստական թարգմանությունը համարժեքության միանշանակ սկզբունքներ չի կարող նախանշել: Կան սկզբունքներ, տեսակետներ, մոտեցումներ, որոնցից թարգմանիչը պետք է կարողանա ճիշտ ընտրություն կատարել, համադրել դրանք՝ նպատակ ունենալով չվնասել հեղինակի միտումը, հավատարիմ մնալ բնագրին և ընդառաջ գնալ թիրախ լեզվի ընթերցողին՝ չաղավաղելով թիրախ լեզուն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Bassnett S.**, Translation Studies, N.Y., Routledge, 1991.
2. **Gadamer H.**, Truth and Method, N.Y., 1962.
3. **Holmes J.**, Translated Papers on Literary Translation and Translation Studies, Amsterdam and Atlanta, 1994.
4. **Makaryk I.** (ed. and compiler), Encyclopedia of Contemporary Literary Theory: approaches, scholars, terms, University of Toronto Press, 1993.
5. **Nida, E.**, "Principles of Correspondence" from "Toward a Science of Translating", Leiden, Holland, 1964.
6. **Ray W.**, Literary Meaning: from Phenomenology to Deconstruction, N.Y., Blackwell, 1986.
7. Հայ գրողները գեղարվեստական թարգմանության մասին, իմր. *Մարտայեղյան Ս.Վ.*, Երևան, 1985:

**СЕДА ГАБРИЕЛЯН – Эквивалентность в литературном переводе.** Статья посвящена исследованию одной из наиболее актуальных и центральных проблем переводоведения, а именно-изучению проблемы художественной эквивалентности перевода, одной из основных концепций данной дисциплины.

Актуальность изучения данной проблемы объясняется прежде всего резким увеличением масштабов и значения переводческой деятельности.

Как показывает проведенное исследование, принципы эквивалентности при художественном переводе не однозначны. Переводчик должен сделать правильный выбор, сопоставив эти принципы так, чтобы не навредить автор-

скому замыслу, в то же время идти навстречу в данном случае армяноязычному читателю. Этот подход объясняется тем, что художественный перевод предполагает не только перекодирование текста из одного языка на другой, но также ставит цель воспроизведения авторского стиля и эквивалентного эстетического воздействия перевода на читателя.

**SEDA GABRIELIAN – Equivalence in Literary Translation.** It is generally accepted that translating fiction is a complex process subject to the influence of numerous variable factors, such as whether the translation should be source-oriented or target-language-oriented, or whether a given original should be adapted for certain pragmatic purposes. In fact, translation of fiction is much more complicated than the translation of other genres, as it deals not only with bilingual, but also bi-cultural and bi-social transference, including the entire complex of emotions, associations and ideas, which intricately relate different nations' languages to their lifestyles and traditions.

Literary translators, in addition to dealing with the difficulties inherent to translations of all fields, must consider the aesthetic aspects of the text, its beauty and style, keeping in mind that one language's stylistic marks can be drastically different from another's. The important idea is that the quality of the translation be the same in both languages also maintain the integrity of the contents at the same time.

For a translator, the fundamental issue is searching for equivalents that produce the same effects in the translated text as those that the author was seeking for readers of the original text. This forces the translator to consider the text, always from the perspective of literary translation, as the base of an ongoing "negotiation" with the author so that the language of the new text presents equivalent values to those of the original language, without forgetting its aesthetic quality.

## ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՆԱԴԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Թարգմանության՝ իբրև երևույթի և թարգմանաբանության՝ իբրև կայացած գիտաճյուղի խնդիրներից մեկը բոլոր դարերում եղել և մնում է համարժեքության հարցը:

Բանն այն է, որ թարգմանիչը որքան էլ ազատ լինի բառերի ու քերականական ձևերի ընտրության հարցում, նրա գերագույն նպատակը բնագիր ստեղծագործության հնարավորինս ճշգրիտ վերակողմնորոշումն է՝ ընդունող լեզվի նշանային համակարգին համապատասխան: Սա մի դժվարին գործընթաց է, որ միայն գիտակ թարգմանիչներին է հասու: Նախ՝ թարգմանիչը պետք է հրաշալի տիրապետի երկու լեզուներին էլ: Որպես կանոն՝ լեզուներից մեկը հանդիսանում է թարգմանիչի մայրենի լեզուն, որին նա տիրապետում է անթերի: Իսկ հնարավոր է ունենալ միանգամից երկու մայրենի լեզու: Հոգեկենդանությունը դրական է պատասխանում այս հարցին: Պարզվում է՝ երեխան մեծանում է իբրև կատարյալ երկլեզվյան անհատ, եթե ընտանիքում ծնողներից մեկն անընդհատ խոսում է մի լեզվով, իսկ մյուսը՝ մեկ այլ լեզվով: Այլ կերպ ասած՝ գործում է «մեկ անձ – մեկ լեզու» ուսուցման սկզբունքը (Առաքելյան, էջ 169):

Վերադառնալով համարժեքության խնդրին՝ նշենք, որ այստեղ ևս կարծիքները տարբեր են: Հարցին առավել հանգամանորեն է անդրադառնում Յուզին Նադան (Գաբրիելյան, էջ 170): Նա առանձնացնում է համարժեքության մի քանի տեսակներ: Սրանցից 1-ինը *ձևային համարժեքությունն է (formal equivalence)*, որի առանցքում աղբյուր լեզվով տեքստն է: Այս դեպքում թարգմանիչը փորձում է որքան հնարավոր է՝ ճշգրիտ փոխանցել բնագիր տեքստի ձևն ու բովանդակությունը: Այդ ճանապարհին նա ձգտում է պահպանել մի շարք ձևային տարրեր, մասնավորապես՝ քերականական միավորները, բառային գործածությունը և բառիմաստները, որում նրան օգնում են մի շարք սկզբունքներ: Օրինակ՝ քերականական միավորների պահպանմանը օգնում են գոյականները գոյականներով, բայերը բայերով և, այսպես, ցանկացած խոսքի մաս՝ միևնույն խոսքի մասով թարգմանելը:

Այդուհանդերձ, միշտ չէ, որ հնարավոր է լինում տեքստը նույնությամբ, բառ առ բառ փոխադրել մյուս լեզվի համակարգ, մանավանդ, երբ գործ ունենք գեղարվեստական գրականության հետ: Իբրև կանոն՝ գեղարվեստական երկերը հարուստ են լինում կերպարակերտման և նյութի կառուցման այնպիսի հնարներով, որոնց թարգմանությունը բավականին դժվար գործ է: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ թարգմանվող նյութը չափածո ստեղծագործություն է: Այս դեպքում թարգմանիչը, ի հավելումն վերը բերվածի, պետք է նաև տաղաչափություն իմանա: Նա պետք է կարողանա բնագրի հեղինակի նման հանգավորել ստեղծագործությունը, ստեղծել ռիթմ: Երբեմն խնդրո առարկա երկու լեզուների տաղաչափական համակարգերը չեն համապատասխանում իրար: Եվ սա պատահական չէ:

Հայտնի է, որ հայերենում բառաշեշտն ունի իր կայուն տեղը: Այն գրեթե միշտ դրվում է բառի վերջին վանկի վրա, բացառությամբ մի շարք դեպքերի: Սրանով է ահա պայմանավորված հայերենի տաղաչափության գերազանցապես վանկային բնույթը, երբ ռիթմը հիմնվում է ոչ թե շեշտերի կանոնավոր դասավորության, այլ տողում վանկերի թվի հավասարության վրա (Ջրբաշյան, էջ 204): Տաղաչափական նման համակարգը բնորոշ է նաև բառաշեշտի կայուն տեղ ունեցող մյուս լեզուներին (օրինակ՝ ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն և այլն): Սրան հակառակ՝ ռուսերենը, անգլերենը, գերմաներենը և շատ այլ լեզուներ բառաշեշտի մշտական տեղ չունեն: Դա է պատճառը, որ նշված լեզուներին բնորոշ է վանկաշեշտային համակարգը: Ռիթմն այս դեպքում ստեղծվում է շեշտադրության որոշակի կարգի հաշվին, կամ այլ կերպ ասած՝ շեշտված և անշեշտ վանկերի որոշակի հերթագայումների միջոցով (Ջրբաշյան, էջ 214):

Փաստորեն, հայերենն իր տաղաչափական համակարգով վանկային է, իսկ ռուսերենը՝ վանկաշեշտական: Նշանակում է՝ այս երկու լեզուների մեջ չափածո ստեղծագործություն թարգմանելիս մենք խնդրի առաջ ենք կանգնում:

Ահա այս դեպքում է, որ մեզ օգնության է հասնում համարժեքության 2-րդ տեսակը՝ ըստ Նայդայի: Խոսքը *ճկուն համարժեքության* մասին է (*dynamic equivalence*) (Գաբրիելյան, էջ 171): Այս դեպքում ուշադրության կենտրոնում թիրախ լեզվի տեքստն է: Թարգմանիչը ավելի շատ ձգտում է ոչ թե եղածը նույնությամբ թարգմանել, այլ ստանալ բարձրորակ թարգմանություն:



Խոսելով ճկուն համարժեքության մասին՝ Տաբերն ու Նայդան նշում են, որ «այս դեպքում բնագիր տեքստի ձևը փոխվում է: Բայց քանի որ այդ փոփոխությունը հետևում է թարգմանության կանոններին և ընդունող լեզվում տեղի ունեցող փոխակերպմանը, ուրեմն թարգմանությունը հավաստի է» (Nida 1969, p. 200): Այլ կերպ ասած՝ ձևային համարժեքությունը ուշադրություն է բևեռում թե՛ ձևին և թե՛ բովանդակությանը, մինչդեռ ճկուն համարժեքությունն ընդգծում է տեքստի ընթեռնելիությունը:

Վինեյր և Դարբելենն ևս հետաքրքիր դիտողություններ ունեն համարժեքության խնդրի հետ կապված: Հեղինակային այս գույզը նախ իրավամբ նշում է, որ թարգմանելիս բացարձակ համարժեքության հասնելուն խանգարում են այն լեզվական «բացերը» (gaps or “lacune”), որ սովորաբար թիրախ լեզվում պետք է «համարժեք միջոցներով լցվեն թարգմանության ժամանակ» (Գաբրիելյան, էջ 144): Թարգմանական տարբեր դժվարին իրավիճակներում օգնության է գալիս համարժեքության այս կամ այն տեսակը: Օրինակ, փոխաբերություն պարունակող նախադասություն թարգմանելիս թարգմանիչն օգտվում է իդիոմային համարժեքությունից (idiomatic equivalence):

Հաճախ կարող է այնպես պատահել, որ բնագրում նկարագրվող իրավիճակը պարզապես հնարավոր չլինի նույնությամբ թարգմանել, այլապես թյուրիմացություն կստացվի: Օրինակ, եթե հայ մշակույթում աղջկան ընկերաբար համբուրելը նորմալ է, ապա մուսուլմանական մշակույթում նման մոտեցումը իգական սեռի նկատմամբ կդիտվի իբրև ոտնձգություն: Ուստի՝ նմանատիպ իրավիճակում հայտնվելիս տեքստը նույնությամբ թարգմանել չի կարելի: Այս դեպքում, ըստ Վինեյի և Դարբելենի, թարգմանիչը պետք է օգտվի *իրավիճակային համարժեքությունից*: Նա կարող է ստեղծել մեկ այլ իրավիճակ, որը, սակայն, այլ կերպ կընկալվի թիրախ լեզվամշակույթում:

Համարժեքության խնդրին որոշակիորեն անդրադառնում է նաև Քաթոլոգը՝ նշելով, որ ճշգրիտ թարգմանության մեջ թարգմանական համարժեքություններ կարող են ծագել նախադասությունների, լեզվական կառույցների, խմբերի, բառերի և հազվադեպ՝ նաև ձևությունների միջև (Գաբրիելյան, էջ 176): Բայց նրա խոսքերով, չի կարելի դնել համարժեքության նման պարզունակ ու արհեստական սահման՝ աղբյուր և թիրախ տեքստերի միջև: Աղբյուր լեզվի խումբը թիրախ լեզվում կարող է համարժեք լինել կառույցի և այլն:

Քաթֆորդը այսպիսով գտնում է, որ համարժեքությունը մի հասկացություն է, որ բացահայտվում է աղբյուր և թիրախ լեզուների տեքստերը համեմատելիս: Նա առանձնացնում է *տեքստային համարժեքությունն ու ձևային ընկալումը*: Առաջինն աղբյուր լեզվի տեքստի համարժեք թարգմանված տարբերակն է: Ինչ վերաբերում է ձևային համընկնմանը, այս սա տեքստի բոլոր տարատեսակների համաձայնեցումն է: Փաստորեն, ըստ Քաթֆորդի՝ աղբյուր և թիրախ լեզուների բառերը միշտ չէ, որ լեզվական իմաստով նույն նշանակությունն ունեն (Catford 1965, p. 49):

Համարժեքության խնդրին բավականին ծավալուն անդրադարձ է կատարում Վ. Կոլլերը: Նախ՝ նա իրավամբ նշում է, որ թարգմանաբանությանը հայտնի են համարժեքության բազմաթիվ տեսակներ՝ առաջադրված տարբեր տեսաբանների կողմից (Գաբրիելյան, էջ 185): Ամենից հաճախ հանդիպողներից են բովանդակային, ոճական, ձևային, գործառական, տեքստային, հաղորդակցական, կիրառական, ազդեցության համարժեքությունները: Յուրովի քննարկելով այս ամենը՝ Կոլլերն այնուհետև տալիս է համարժեքության իր ուրույն դասակարգումը՝ առանձնացնելով 5 տեսակներ.

1) *մատնանշող համարժեքություն (denotative equivalence)*, երբ արտալեզվական բովանդակությունը փոխանցվում է տեքստի միջոցով,

2) *իմաստային համարժեքություն (connotative equivalence)*, երբ բառիմաստը փոխանցվում է բառային ընտրության միջոցով՝ հաշվի առնելով այդ բառերի ոճական պատկանելությունը,

3) *տեքստաչափորոշիչային համարժեքություն (text-normative equivalence)*, երբ կարևորվում են տեքստային ու լեզվական նորմերը տրված տեքստային տեսակների համար,

4) *կիրառական համարժեքություն (pragmatic equivalence)*, երբ կարևորվում է ընթերցողի տեսակը, ում որ հասցեագրված է թարգմանությունը,

5) *ձևային համարժեքություն (formal equivalence)*, երբ ուշադրության կենտրոնում են բնագիր տեքստի ձևային-գեղագիտական յուրահատկությունները:

Նյումարկը տարբերակում է համարժեքության երեք տեսակներ՝ *մշակութային (cultural)*, *գործառական (functional)* և *նկարագրական (descriptive)* (Newmark, 1988, p. 82): Մշակութային համարժեքությունը թարգմանում և փոխարինում է աղբյուր լեզվի մշակութային բառը թիրախ լեզվի նմանատիպ բառով: Գործառական համար-

ժեքությունը պահանջում է մշակույթից հեռու, մշակույթի հետ կապ չունեցող թարգմանական համարժեք, ընդհանրացնում և չեզոքացնում է աղբյուր լեզվի բառը: Նկարագրական համարժեքության դեպքում աղբյուր լեզվի բառը բացատրվում է մի քանի բառերով:

Բեյքերն ուսումնասիրում է համարժեքությունը՝ հենվելով ձևային կողմի վրա (Baker, 1992): Նա ենթադրում է համարժեքության հինգ մակարդակներ՝ *համարժեքություն՝ բառային մակարդակում, համարժեքություն՝ բառային մակարդակից բարձր, քերականական համարժեքություն, տեքստային համարժեքություն և գործառական համարժեքություն:*

*Բառային համարժեքությունը* հենվում է այն փաստի վրա, որ բառերը տարբեր լեզուներում հաճախ ունենում են տարբեր իմաստներ: *Քերականական համարժեքությունը* ուշադրությունը բնեռում է այն փաստի վրա, որ լեզուներում քերականական կարգերը կարող են տարբերվել, միննույն ժամանակ կարող են տարբեր լինել և քերականական օրենքները, ինչն էլ կբերի թարգմանական դժվարությունների: *Տեքստային համարժեքության* ուշադրության կենտրոնում աղբյուր և թիրախ լեզուներով տեքստերի հաղորդած տեղեկությունն է: Փաստորեն, այս դեպքում կարևորվում է տեքստային մակարդակը: Ի վերջո, *գործառական համարժեքությունն* ուսումնասիրում է թիրախ լեզվի տեքստի գործած ազդեցությունը:

Մեր կողմից ներկայացված տեսաբաններն, անշուշտ, միակ լեզվաբանները չեն, որ զբաղվել են համարժեքության խնդրի քննարկմամբ: Տեսաբաններից յուրաքանչյուրն առաջարկել է դրա տեսակային բաժանմանն առնչվող իր ուրույն եղանակը, տվել խնդրին իր կողմից առաջարկված լուծումները: Կարևոր չէ, թե դրանցից որին նախապատվություն կտա թարգմանիչը: Կարևորն այն է, որ նրա կատարած թարգմանությունը լինի գրագետ ու համապատասխանի թարգմանության տեսական դրույթներին: Թարգմանությունը վերջնական արդյունքում պետք է լինի այնպիսին, որ գոհացնի թե՛ աղբյուր լեզվի հեղինակի, թե՛ թիրախ լեզվի ընթերցողի պահանջները: Այլ խոսքով՝ մի կողմից՝ պետք է պահպանվի բնագրի ձևաբովանդակային ամբողջականությունն ու դրա հեղինակի անհատականությունը, մյուս կողմից՝ թարգմանված տեքստը պետք է առավելագույնս հասկանալի ու մատչելի լինի թիրախ լեզվի ընթերցողի համար:

Փաստորեն, չենք չափազանցի, եթե անդենք, որ թարգմանությունը ևս ստեղծագործական գործընթաց է, որ թերևս ավելի դժվարին է ու

պատասխանատու, քան բուն ստեղծագործողի աշխատանքը: Քանզի եթե գրողն ազատ է ստեղծագործելիս, կարող է վստահաբար և անկաշկանդ մանրել ձևի և բովանդակության տեսակային անեզրության մեջ, ապա թարգմանիչը կաշկանդված է, կապկապված թարգմանական օրենքներով ու չափորոշիչներով և, որ ամենադժվարն է, ինչպես նշեցինք, պատասխանատու է զույգ բևեռների՝ բնագրի հեղինակի ու իր կատարած թարգմանության ընթերցողի առաջ:

Այսպիսով՝ համարժեքության խնդիրն ու նրա ուսումնասիրությունը եղել և մնում են թարգմանաբանության առանցքային հարցերից մեկը, որին անդրադարձել և շարունակում են անդրադառնալ տարբեր լեզվաբաններ: Եվ չնայած արդեն իսկ կատարված աշխատանքներին և ունեցած ձեռքբերումներին՝ ոլորտում անելիքներ դեռ շատ կան:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Առաքելյան Ռ.**, *Հոգելեզվաբանություն*, Երևան, Լուսակն, 2007:
2. **Գաբրիելյան Ս.**, *Թարգմանաբանության քրեստոմատիա*, Երևան, Սահակ Պարթև, 2007:
3. **Ջրբաշյան Էդ.**, *Գրականագիտության ներածություն*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1996:
4. **Baker M.**, *In Other Words: A Course Book on Translation*, New York: Routledge, 1992.
5. **Catford J.**, *A Linguistic Theory of Translation: An Essay in Applied Linguistics*, London: Oxford University Press, 1965.
6. **Newmark P.**, *A Textbook of Translation*, New York & London: Prentice Hall, 1988.
7. **Nida E., Taber R.**, *The Theory and Practice of Translation*, Leiden: E.J. Brill, 1969.

**НАРИНЕ ЗАКАРЯН – Вопрос эквивалентности в переводе.** В статье рассматривается вопрос эквивалентности в переводе, его теоретические основы и виды, данные разными авторами. Особое место уделяется тем авторам, которые помогают раскрыть проблему целиком. В конце приведены наши заключительные предложения.

**NARINE ZAKARYAN – The Problem of Equivalence in Translation.** The article deals with the problem of equivalence in translation, its theoretical bases and types given by different authors. Particular attention is paid to the authors that help to open the problem entirely. At the end our concluding suggestions are given.

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ  
ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ, ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

**ՀԱՄՄԻԿ ԲԱՂՊԱՍԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Աշխարհի լեզվական պատկերում իր ուրույն տեղն ունի նաև իրականության գեղարվեստական արտացոլումը, որի հիմնական կատեգորիան գեղարվեստական պատկերն է: Լինելով գեղարվեստական խոսքի հիմնական կատեգորիան՝ այնուամենայնիվ «պատկեր» և «պատկերավորություն» հասկացությունները դեռևս հստակորեն սահմանված չեն: Պատկերը բազմապլանային հասկացություն է, այն հաճախ դիտարկվում է որպես հոգեբանական կատեգորիա կամ էլ քննվում որպես ոճագիտական, լեզվաբանական, գրականագիտական, կոգնիտիվ հասկացություն: Հետաքրքիր է նշել, որ որոշ լեզվաբանական տերմինների բառարաններում գեղարվեստական պատկերը նույնիսկ չի քննվում որպես լեզվաբանական հասկացություն, այսինքն՝ այն չի ներառվում լեզվի՝ որպես գիտության տերմինաբանական համակարգում: Իր հայտնի «Բանասիրական տերմինների բառարանում» Ֆ. Լասառո Կառետերը նշում է, որ «պատկերը շատ հաճախ նույնականանում է փոխաբերության հետ կամ էլ այս տերմինի տակ ընկալվում են այն անիրական, երևակայական տարրերը, որոնք ի հայտ են գալիս բացահայտ համեմատության կամ այլաբանության կազմում» (Lázaro Carreter 1998):

Որպես հոգեբանական կատեգորիա՝ պատկերները առաջ են գալիս ընկալման պրոցեսում և, մնալով հիշողության մեջ, դառնում են մտածողության և երևակայության պրոցեսի իրականացման միջոցներ: Պատկերներն արտացոլում են առարկայի օբյեկտիվ հատկությունները, սակայն պատկերավորման չափանիշի ընտրությունը կախված է ընդունող սուբյեկտի անհատական կարողություններից, նրա ճանաչողական փորձից և, իհարկե, «պրոդուկտիվ» գործունեությունից:

Անհատական պատկերացումները աստիճանաբար ամրակայվում են լեզվում՝ ժամանակ առ ժամանակ վերարտադրվելով խոսքում: Նրանք կորցնում են իրենց սուբյեկտիվ բնույթը և տեղ են գրավում տվյալ լեզվամշակութային համայնքի խոսքային գործունեությամբ:

յան մեջ: Նման պատկերացումները լեզվի սովորական կրողի հիշողության մեջ նվազագույն քանակի են, սակայն որոշակի հանգամանքներում կարող են ավելի ծավալվել, զարգանալ ու նորովի վերաիմաստավորվել:

Հետաքրքիր է նաև պատկերի ընկալման «գաղափարագրական» սկզբունքը, որն առաջադրել է ռուս լեզվաբան Ն.Վ. Պավլովիչը՝ կարևորելով «պատկերի հարացույց» հասկացությունը (Павлович 1999): Ըստ նրա՝ պատկերի հարացույցը պատկերավոր բնութագրումների անփոփոխակն է, որտեղ կայուն իմաստները կապված են նույնականության հարաբերությամբ, օրինակ՝ շատ լեզուների համեմատական կայուն կառույցներում դիտարկվում են հետևյալ զույգերը. *ժամանակ-չուր*, *մարդ-բուսական աշխարհ* և այլն: Իր հերթին պատկերի հարացույցը մտնում է պատկերների հարացույցների մեջ՝ ստեղծելով ուրույն իմաստային օրենք, որը գործում է բանաստեղծական լեզվում և ապահովում տվյալ լեզվամշակութային համայնքի անդամների հոգևոր կապն ու փոխըմբռնումը: Մարդն այդ հարացույցներին ծանոթանում է իր ողջ կյանքի ընթացքում՝ գիտակցորեն կամ ոչ գիտակցորեն, և կարելի է խոսել յուրաքանչյուր ժողովրդի մշակույթում պատկերների ուրույն համակարգի գոյության մասին:

Մարդկային մտածողության միասնությունը ենթադրում է նաև պատկերների հարացույցի համընդհանուր բնույթը՝ նվազ ազգամշակութային տարբերություններով հարացույցի կազմում և կոնկրետ պատկերներում: Այսպես, համեմատական կառույցներում լայն տարածում ունեցող *մարդ-կենդանական աշխարհ* հարացույցում գործածվում են այնպիսի կենդանիներ, որոնք հանդիպում են տվյալ լեզվամշակութային համայնքի տարածքում: Աշխարհագրական պայմանները ևս իրենց կնիքն են թողնում այդ կառույցների կազմավորման ժամանակ. եթե Կուբայում աղջկա գեղեցկությունը նշելու համար կարելի է ասել՝ *eres tan bonita como la flor de enero* (բառացի՝ այնքան գեղեցիկ ես, ինչքան հունվարյան ծաղիկը), ապա հայերենում բացասական հարանշանակությունից խուսափելու համար այն կարող ենք թարգմանել՝ *այնքան գեղեցիկ ես, ինչքան մայիսյան վարդը*: Պետք է նկատի ունենալ, որ փոխաբերականացումը տեղի է ունենում համապատասխան խոսքային և պատմամշակութային ավանդույթների շրջանակներում և կարող է համընկնել կամ չհամընկնել տարբեր լեզուներում:

Պատկերային հարացույցների համընդհանուր բնույթով է պայմանավորված նաև նրանց թարգմանելիությունը՝ պատկերների միջ-

լեզվական փոխադրման արդյունքում: Իր հերթին թարգմանական գրականությունը յուրահատուկ պատկերների փոխառության աղբյուր է, որը միավորում է պատկերների ազգային հարացույցները՝ տվյալ լեզվում կուտակելով համաշխարհային բառարվեստի պատկերավորման փորձը:

Այսօր պատկերավորության, ինչպես նաև պատկերավոր արտահայտությունների թարգմանության խնդիրը քննվում է նաև միջտեքստայնության խնդրի հետ սերտ առնչությամբ, երբ գեղարվեստական ստեղծագործությունը ընկալվում է որպես «տեքստային տիրույթի ուղղաձիգ համատեքստ» (Մուպրուն, Ախմանովա): Կան պատկերավորման որոշ աղբյուրներ, որոնք վերաբերում են «հավերժների» շարքին: Ըստ Վ. Տոպորովի՝ սրանք այն տեքստերն են, որոնք հաղթահարում են ժամանակատարածային սահմանները և, ձեռք բերելով ազատություն, ապրում են հավերժ և ամենուր (Топоров 1983): «Հավերժական» տեքստեր են սուրբ գրքերը, դիցաբանությունը և մարդկային պատմությունը: Մակայն տեքստերը անընդհատ նոր մեկնաբանության առարկա կարող են դառնալ: Ըստ Մ. Բախտինի՝ անցյալ դարերի երկխոսության արդյունքում ստեղծված տեքստերը չեն կարող լինել վերջնականապես կայուն, ավարտուն. նրանք կարող են փոփոխվել (նորացվել) երկխոսության հետագա զարգացման ընթացքում (Бахтин 1979): Կարելի է ենթադրել, որ տեքստային տիրույթում տեղի է ունենում մի մշտական շրջապտույտ, մի կատեգորիայից անցում մի այլ կատեգորիայի, երբ էթնոկենտրոն տեքստը դառնում է միջազգային, և հակառակը: Իսկ տեքստերը մեկընդմիջտ չեն մոռացվում, նրանք պահպանվում են որպես մարդկության կողմից կուտակված գիտելիքների ֆոնդ և ամեն պահ միջտեքստային կապերի շնորհիվ կարող են առկայանալ նոր մշակութային-ժամանակային կտրվածքում:

Փոխաբերականացման և պատկերավորման հիմնական աղբյուրները «հավերժական» տեքստերն են՝ Աստվածաշունչ, դիցաբանություն, պատմություն, գրական ժառանգություն: Միաժամանակ յուրաքանչյուր լեզվամշակութային հանրություն կան փոխաբերականացման այնպիսի աղբյուրներ, որոնք ունեն սոցիալ-մշակութային կարևոր նշանակություն տվյալ ժողովրդի համար: Խոսքը տվյալ ժողովրդի պատմության, արվեստի, դիցաբանության մասին է, որն իրականում կարող է տարբեր գուգորդումներ առաջացնել տարբեր լեզվակիրների մոտ: Իսպանիան, լինելով էապես կրոնապաշտ երկիր, իս-

պաներենում փոխաբերականացման կարևոր աղբյուրներից է կրոնական բառապաշարը: Կրոնական արտահայտությունների և պատկերների հարստությամբ և գործածման հաճախականությամբ իսպաներենը ռոմանական լեզուների շարքում կարելի է համեմատել միայն պորտուգալերենի և կատալաներենի հետ: Մեր ուսումնասիրությունը նույնպես ցույց տվեց, որ Միգել Դելիբեսի հայտնի «*Անմեղ սրբերը*» վեպի կրոնական բառապաշարի վրա հիմնված շատ պատկերներ պարզապես չեզոքանում են ֆրանսերեն թարգմանության մեջ: Հետաքրքիր է նշել, որ 20-րդ դարում գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց, փոխաբերականացման «հանվերժ» աղբյուրների կողքին ավելանում են նաև սպորտը, գիտության տարբեր ճյուղերը, արվեստի նոր տեսակները՝ կինո, հեռուստատեսություն, գովազդ և այլն: Ուրեմն՝ աճում է տեքստերի ծավալը, փոխվում է պատկերավորության աղբյուրների խնդիրը: Բոլորովին այլ էր իրավիճակը միջնադարում, երբ ողջ մշակույթը խարսխվում էր Սուրբ գրքի վրա, և գոյություն ունէր համընդհանուր ճանաչում գտած մշակութային կոդ: Այսօր համաշխարհային մշակույթում նման միասնական կոդ գոյություն չունի, բարդացել է նաև միջտեքստային կապերի ողջ համակարգը:

Թարգմանությունը որպես տեքստերի միջլեզվական կապերի միջտեքստային մեկնաբանության մի ձև, ենթադրում է պատկերային հարմարեցում (ադապտացիա): Տվյալ լեզվամշակութային հանրություն պատկերի յուրացումը (ասիմիլյացիան) կախված է մի շարք արտալեզվական և ներլեզվական գործոններից, ինչպես նաև թարգմանչի հմտությունից՝ փոխադրված պատկերները ներդնել թարգմանության լեզվի «հաղորդակցական մատրիցաի մեջ» (Նոյբերտ):

Պատկերների թարգմանելիության հետ մեկտեղ կան նաև անթարգմանելիության դեպքեր: Դա նկատելի է այնպիսի պատկերների թարգմանության ժամանակ, որտեղ մեծ դեր են խաղում պատկերի հնչյունային խորհրդանշանայնությունը, նրա բառային-շարահյուսական ձևավորումը, բաղադրիչների զուգորդային կապերը, միջտեքստային կապերը և ընդունողի ճանաչողական-մշակութային փորձը, որն ապահովում է պատկերի համարժեք ընկալումը:

Քննենք ներլեզվական մի քանի գործոններ, որոնք խնդիրներ են առաջադրում պատկերի թարգմանության ժամանակ: Գարսիլասոյի գրչին պատկանող հետևյալ երկտողը, իրավամբ, համարվում է իսպանական գրականության գոհարներից մեկը.

*En el silencio sólo se escuchaba un susurro de abejas que sonaba.*



Այստեղ բանաստեղծն արտահայտել է 2 թեմա՝ լռություն և մեղուների բզզոց: Լռության թեման արտահայտվում է շփական հնչյունների՝ նախ և առաջ s-երի կուտակմամբ (*silencio, sólo, se escuchaba, susurro, abejas, sonaba*), իսկ բնապատկերի լռությունը խախտող մեղվի բզզոցը՝ միակ rr-ով (*susurro*): Հայերեն թարգմանելիս գրեթե անհնար է պահպանել հնչյունական ձևում պարփակված այս պատկերը: Բերենք մի այլ օրինակ: Հ. Թումանյանի «Տերն ու ծառան» հեքիաթի հետևյալ նախադասության իսպաներեն, իտալերեն և ֆրանսերեն թարգմանություններում պատկերը վերափոխվել է՝ նշված ռոմանական լեզուներում քերականական սեռի առկայության պատճառով: Սա արդեն թարգմանական օրինաչափություն է, քանի որ այս վերափոխումը թարգմանիչները կատարել են մեկը մյուսից անկախ: Համեմատենք. *Արևը մեր մտավ, բայց տե՛ս, նրա ախպեր լուսնակը դուրս եկավ* – իսպ. *El sol se ha puesto, pero mira, su hermanita, la luna ha salido* (թարգմանիչներ՝ Հ. Բաղդասարյան, Ա. Դեյրմենջյան), իտ. *Il sole è tramontato ma vedi che è uscita la sua sorella luna* (թարգմանիչ՝ Վահե Վահունի), ֆր. *Le soleil s'est bien couché, mais regarde, sa sœur la belle lune est apparue* (թարգմանիչ՝ Ա. Մարանջյան): Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ երեք լեզուներում պատկերն արմատապես փոխվել է և թարգմանվել՝ *Արևը մայր է մտել, բայց տե՛ս, նրա քույրը՝ լուսինը, դուրս է եկել*:

Լեզվի պատկերավոր միջոցների թարգմանության ժամանակ կարևոր դեր է խաղում նաև գրական ավանդույթը: Միևնույն ժանրի ստեղծագործությունները տարբեր լեզուներում հաճախ բնութագրվում են լեզվառճական որոշ առանձնահատկություններով, ինչը պայմանավորված է սովյալ ազգային-գեղագիտական համակարգի յուրահատկություններով: Իսպանախոս ժողովուրդների հռետորական ավանդույթներում ընդունված են վերամբարձ նորմատիվ-ռճական նշույթավորվածություն ունեցող արտահայտությունները, որոնց պարզ վերարտադրության դեպքում թարգմանող լեզվում ստեղծվում է ավելորդ զգացմունքայնություն: Նման խնդիրների պատճառով թարգմանության ժամանակ հաճախ ծագում է ժանրային և ռճական հարմարեցման անհրաժեշտություն:

Պատկերի թարգմանության ժամանակ իմաստային վերափոխումները առավել մեծաքանակ վերափոխումներն են, ինչը պայմանավորված է միջլեզվական բառիմաստային անհամաչափությամբ, տարբեր լեզուների կրողների աշխարհընկալման տարբերություննե-

րով: Այս դեպքում պատկերի հարմարեցման նպատակով կիրառվում են թարգմանական մի շարք հնարներ՝ ընդհանրացում, կոնկրետացում, հականիշային թարգմանություն, բացատրություն և այլն:

Իհարկե, առավել մեծ դժվարություններ են հարուցում մշակութային պայմանավորվածություն ունեցող վերափոխումները: Մանրամասն չանդրադառնալով դրանց տեսակներին՝ քննենք միայն մի դասական օրինակ: Գեներալ դը Գոլի մահից հետո ֆրանսիական լրատվամիջոցներում տպագրվում է Ժ. Պոմպիդուի մահախոսական ուղերձը, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Le general De Gaulle est mort. La France est veuve» (բառացի՝ Գեներալ դը Գոլը մահացել է: Ֆրանսիան այրի է): Այս նախադասության բառացի թարգմանությունը հայ ընթերցողի մոտ կարող է առաջ բերել անցանկալի հակազդեցություն: Հայ սովորական ընթերցողը, որը չգիտի ֆրանսերեն, հետևաբար և տեղյակ չէ, որ «Ֆրանսիա» բառը իգական է, կարող է ընդհանրապես չընկալել այս պատկերը՝ այն նույնիսկ համարելով ծիծաղելի: Նույնը չի կարելի ասել իսպաներեն բառացի թարգմանության մասին, որտեղ «Ֆրանսիա» բառը պատկանում է իգական սեռին՝ El general de Gaulle ha muerto. Francia es viuda.

Տվյալ թարգմանության մեջ իսպանացի ընթերցողին կարող է զարմացնել երկրի ղեկավարի խորհրդանշանային-գուգորդական իմաստը, նրա «ամուսնական» կապը Ֆրանսիայի հետ: Բանն այն է, որ իսպանական մշակույթում երկրի ղեկավարի կերպարը զուգորդվում է «հայրենիքի հայր» և ոչ թե «հայրենիքի ամուսին» գաղափարի հետ: Ահա թե ինչու իսպաներենում և հայերենում առաջարկվում են հետևյալ թարգմանական տարբերակները.

*El general de Gaulle ha muerto. Francia ha quedado huérfana.*

*Գեներալ դը Գոլը մահացել է: Ֆրանսիան որբ է մնացել:*

Խոսելով լեզվի պատկերավոր համակարգի թարգմանության խնդիրների մասին՝ հարկ է անդրադառնալ նաև պատկերի հիմնական՝ հուզարտահայտչական գործառույթին: Իհարկե, պատկերի թարգմանության լավագույն տարբերակը նրա գործառական բոլոր բնութագրումների համընկնումն է թարգմանող և թարգմանվող լեզուներում: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում թարգմանիչը պետք է ճշգրտորեն որոշի պատկերի գործառական դոմինանտը և այն հարողի թարգմանության մեջ:

Հաճախ պատկերի թարգմանության ժամանակ պատկերի ճանաչողական հայեցակերպը բախվում է նրա հիմնական՝ հուզարտահայտչական գործառույթի հետ, որի պատճառով էլ առաջանում է պատկերի գործաբանական հարմարեցման անհրաժեշտություն:

Քննարկենք մի օրինակ Մերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպից, որտեղ ինքնատիպ անհատական-հեղինակային պատկերի հիմքում ընկած է թարգմանության ընթերցողին անձանոթ իրակություն՝ չափի միավոր (fanega):

*... y espera dos fanegas de risa, que te ha de causar el saber cómo se portó en su cargo* (T. II, c. XLIV, p. 245).

*... էրբ դու կիմանաս, թե ինչպես էր նա պահում իրեն նոր պաշտոնում, սրտանց կծիծաղես* (հ. II, էջ 323):

Հայերեն թարգմանության մեջ չեզոք նկարագրություն է, որը հնարավորություն չի ընձեռում ստեղծել պատկերի գեղարվեստական-հուզական ներգործության համարժեքություն, իսկ տարաշխարհիկ պատկերը (սպասիք 2 ֆանեգա ծիծաղի) օտար նյութ է, որը դժվարություն է հարուցում պատկերի սովորական ընկալման համար, ճնշում է գործադրում պատկերի հուզարտահայտչական գործառույթի վրա կամ էլ ստեղծում նրա գերաճ:

Այսպիսով պատկերավորության կատեգորիան դասվում է միջլեզվական ընդհանրությունների թվին, քանի որ այն հատուկ է բոլոր լեզուներին: Տարբեր լեզուներում գուգահեռ պատկերավոր արտահայտությունների առկայությունը, թարգմանության ժամանակ պատկերավոր շատ արտահայտությունների համարժեք վերարտադրման հնարավորությունը, ինչպես նաև հեղինակային-անհատական մի շարք պատկերների բառացի թարգմանության հնարավորությունը այդ կատեգորիայի համընդհանրության վառ ապացույցն է:

Եթե պատկերավորությունը, որպես լեզվաբանական հասկացություն, տեսական և գործնական մշակման առումով նշանակալից հաջողություններ ունի, ապա որպես թարգմանական հասկացություն, այն թարգմանության տեսության քիչ ուսումնասիրված խնդիրներից է և դեռևս բազմակողմանի քննության առարկա չի եղել: Բնականաբար պետք է հաշվի առնել, որ պատկերավոր մտածողության ազգային առանձնահատկությունները վերաբերում են այնպիսի բնագավառի, որտեղ թարգմանական գործընթացը ենթարկվում է ամենանվազ կանխատեսումների, իսկ դժվարին խնդիրների լուծումը գրեթե միշտ կախված է թարգմանչի հմտությունից: Միաժամանակ

չպետք է ժխտել մի լեզվից մյուսը պատկերավոր միջոցների հաղորդման ժամանակ որոշ օրինաչափությունների գոյությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бахтин М.М.**, *Эстетика словесного творчества*. М., Искусство. 1979.
2. **Королова А. Л.**, *Прагматические барьеры в передаче образности в переводе*// *Сборник научных трудов*. Выпуск 213, М., 1983.
3. **Павлович Н.В.**, *Словарь поэтических образов*, Т. 1., М., Эдиториал УРСС, 1999.
4. **Топоров В. Н.**, *Пространство и текст*// *Текст: семантика и структура*, М., Наука, 1983.
5. **Cervantes M.**, *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*, La Habana, Editorial de arte y literatura, 1974 (Т. II).
6. **Lázaro Carreter F.**, *Diccionario de términos filológicos*, М., Gredos, 1998.
7. **Reiss K., Vermeer H.**, *Fundamentos para una teoría funcional de la traducción*, Madrid, Ediciones Akal, 1996.
8. **Մերվանես Մ.**, *Հնարամիտ հիղալոզ դոն Կիխոտ Լամանչեցի*, Երևան, 1950 (II հատոր):

**HASMIK BAGHDASARYAN – On Some Problems of Figurativeness as a Concept of Translation Studies.** If figurativeness as a linguistic concept has made significant progress both in practical and theoretical development, it hasn't been a subject of a multilateral study as a concept of Translation Studies. Certainly, the national peculiarities of figurative thinking are considered to refer to a field, where the process of translation submits to the least possible previsions, and the solution of difficult issues as a rule depends on the skill of a translator. At the meantime, we can't deny the existence of some regularities in the process of transmitting figurative means from one language into another.

**АСМИК БАГДАСАРЯН – О некоторых проблемах образности: образность как переводоведческая категория.** Если образность, как лингвистическое понятие имеет значительные успехи с точки зрения теоретической и практической обработки, то как переводоведческое понятие, оно не являлось предметом разностороннего исследования. Естественно следует учесть, что национальные особенности образного мышления относятся к области, в которой переводческий процесс наименее предвидим, а решение трудных задач практически всегда зависит от профессионализма переводчика. В тоже самое время нельзя отрицать существования некоторых закономерностей при передачи образных методов.

## ԲԱՌԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐ

### *ՄԱՐԻԱՄ ԽԱՇԱԿՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Թարգմանության գործընթացը երկար և տևական աշխատանք է պահանջում: Եվ քիչ չեն խնդիրները, որոնց հաճախ բխվում ենք այդ ընթացքում:

Թարգմանաբանություն գիտության արմատները գալիս են հեռավոր ժամանակներից և, բնական է, որ թարգմանչի մասնագիտությունը հնագույններից մեկն է: Թարգմանաբանության գիտության պատմության մեջ հատկապես առանձնահատուկ տեղ զբաղեցրեց Աստվածաշնչի թարգմանությունը:

Ինչպես նշում է Ջոն Դրայդենը, թարգմանիչը պարտավոր է հրաշալի տիրապետել և՛ իր մայրենի լեզվին, և՛ այն լեզվին, որից կատարում է թարգմանությունը:

Անցած դարերի թարգմանության տեսություններն անհրաժեշտ է տեսնել պատմական համատեքստերում: Վիլիելմ ֆոն Հուսբրոլդտն ընդգծում է, որ անհրաժեշտ է հավատարիմ լինել ամբողջ տեքստին և ոչ թե դրա մասերին: Այս հավատարմությունը պետք չէ բառացիորեն հասկանալ, այլ ավելի շուտ համապատասխան համարժեքությունը մի լեզվից մյուսը:

Այս տեսակետն իր վերահաստատումն է գտնում Շոպենհաուերի մոտ. «Ոչ բոլոր բառերն ունեն իրենց համարժեքները մյուս լեզվում: Այսպիսով, ոչ բոլոր հասկացությունները, որ արտահայտված են մի լեզվի բառերով, ճշգրիտ կերպով նույնն են մյուս լեզվում:

Համարժեքության խնդիրը շատ ավելի նուրբ է և դժվարություններ հարուցող պոետիկ արտահայտությունների տիրույթում: Այստեղ, ըստ Շոպենհաուերի, համարժեքներ հնարավոր չեն: «Բանաստեղծությունները չեն կարող թարգմանվել, դրանք կարող են նորից գրվել, որն էլ գրեթե միշտ երկլիմաստ, անորոշ ձեռնարկում է»: Թեև երբ հանձարներն են թարգմանում հանձարներին, սա բոլորովին այլ խնդիր է, միանգամայն այլ հարթություն:

Թարգմանության բնագավառի ուսումնասիրության սահմաններն անընդհատ ընդլանվում են, և գնալով ավելի ու ավելի պարզ է

դառնում, որ թարգմանական մտածողությունը խիստ կարևոր է թարգմանություն կատարելիս: Այսպիսով՝ միանգամայն օրինաչափ է, որ լեզվի բնույթը, ծագումն ու գործառույթն ուսումնասիրելը թարգմանական մտածողության անքակտելի մասը կազմեն:

Մինիար Բելորուչևը նշում է. «Թարգմանության գործընթացը մի լեզվի միավորները մեկ այլ լեզվի միավորներով պարզ փոխարինում չէ»:

Բառը, որպես թարգմանության միավոր, միշտ էլ տարակարծությունների տեղիք է տվել: Լիարժեք թարգմանություն անելու համար **Ջոն Դրայդենը** թարգմանչին խորհուրդ է տալիս երբեք չկենտրոնանալ բառերի վրա, հասկանալ հեղինակի մտադրությունը, իմանալ հեղինակի արվեստի առանձնահատկությունները: Այդ դեպքում միայն թարգմանիչը կկարողանա ներկայացնել տեքստն այնպես, ինչպես հեղինակը: Եվ ընդհակառակը, եթե թարգմանիչը բառ առ բառ թարգմանի տեքստը, բնագրի անկենդան ու ձանձրալի պատճենում կստացվի:

Որպեսզի բնագրի առանձնահատկությունները լիարժեք արտահայտվեն թարգմանության մեջ, թարգմանիչը պետք է ներկայացնի ոչ միայն ընդհանուր իմաստը, այլ նաև նրբերանգները:

Թարգմանության գործընթացում որոշակի դժվարություններ են հարուցում բառապաշարի այն շերտերը, որոնք կիսով չափ ունեն իրենց համարժեքը թարգմանելի լեզվում, և այն շերտերը, որոնք բոլորովին չունեն իրենց համարժեքները:

Հատկապես պետք է հիշատակել *իրույթների կամ իրակությունների* (փաստ, երևույթ) մասին: Սրանք տվյալ լեզվի այն բառերն են, որ բնորոշ են տվյալ լեզուն կրող ժողովրդին, նրա կենցաղին, ուստի՝ անթարգմանելի են: Օր.՝ մածուն, լավաշ, սացիվի, տղեմալի, վալենկաներ, սամովար և այլն:

Բոլոր լեզուներում էլ կան *դիպլոմատիկ բառեր*, որ հասկանալի են միայն տվյալ համատեքստում կամ տվյալ ժամանակահատվածում: Օր.՝ ճաշք բառը ռուսերենում նշանակում է «շուկա», սակայն խոսակցական, ժարգոնային բառաշերտում այն ձեռք է բերել նոր իմաստ՝ նշանակելով «վեճ, կռիվ»: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել խոսակցական շերտին բնորոշ դիպլոմատիկ բառերի վրա:

Երբեմն հնչյունական նույն տեսքն ունեցող բառերն ունեն տարբեր նշանակություններ: Այս բառերը հատուկ ուշադրություն են պա-

հանջում թարգմանչից, քանի որ հեշտությամբ կարող են մոլորության մեջ գցել թարգմանչին և կոպիտ սխալների պատճառ դառնալ: Օր.՝ direction բառը անգլերենում նշանակում է «ուղղություն», իսկ дирекция բառը ռուսերենում նշանակում է «տնօրինություն», magazine բառը անգլերենում նշանակում է «լրագիր», իսկ магазин բառը ռուսերենում՝ «խանութ»: Մի անգամ “окружающая среда” արտահայտությունը լրագրողը հեռուստատեսությամբ թարգմանեց «շրջապատող չորեքշաբթի», կամ “because of”, որը դրական իմաստով թարգմանվում է *ճնորհիվ* և բացասական իմաստով՝ *պատճառով*, շատ հաճախ շփոթում են և սխալ թարգմանում, ինչպես և եղավ Եվրատեսիլը մեկնաբանելիս, որն արվում էր ոչ մասնագետի կողմից և գուցե մեկի, որը բոլորովին լեզվական հոտառություն չուներ:

Թարգմանական խնդիրներ են առաջանում հատկապես քարացած բառաձևերի ու արտահայտությունների՝ *կլիշեների* (կաղապար) թարգմանության ժամանակ:

**Էրիկ Փարթիջը**, կլիշե ասելով, հասկանում է.

1. իդիոմներ,
2. քարացած արտահայտություններ,
3. այլ լեզուներով գրականությունից վերցված խոսքեր:

Կլիշեի թարգմանության ամենատարածված մեթոդը թարգմանելի լեզվում համարժեքը գտնելն է: Օրինակ՝ «a tinkling cymbal» արտահայտությունը, որը բառացիորեն նշանակում է դողանջող ծնծղա, թարգմանվում է որպես «շատախոս, անուղեղ մարդ»: Կամ՝ «Пропавши ты пропадом» դարձվածքը հայերենում ևս ունի իր համարժեքը, այն է՝ «գրողի ծոցը կորի՛ր», կամ “to have bats in one’s belfry” նշանակում է *ծալը պակաս լինել*: Նմանատիպ օրինակները շատ-շատ են:

Այսպիսով՝ բառի ճիշտ ընտրությունը անփոխարինելի դեր ունի թարգմանության գործընթացում: Դրանով են պայմանավորված թարգմանության որակը, ճշգրտությունը, լիարժեքությունը, համապատասխանությունը բնագրին: Իսկ ինչ վերաբերում է գեղարվեստական թարգմանությանը, ապա պետք է նշել, որ գեղարվեստական պատկերի ստեղծման գլխավոր միջոցը բառն է: Մա չի նշանակում, թե յուրաքանչյուր բառ պատկերավոր է, այլ այն, որ նույնիսկ չեզոք բառերը պոտենցիալ պատկերավորության հնարավորություն ունեն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Миньяр-Белоручев Р.К.**, *Как стать переводчиком?* / Ответственный редактор М.Я. Блох. – М.: “Готика”, 1999.
2. **Усачева А. Н., Хайрова С. Р., Серопегина Т. В.**, *Письменный перевод (английский язык)*, Изд-во Волгоградского гос. ун-та, 2005.
3. **Hatim B. and Munday J.**, *Translation. An Advanced Resource Book*, Routledge, Language Arts & Disciplines, 2004.
4. *The Craft of Translation. Ed. Biguenet J. and Schulte R.*, Chicago: The University of Chicago Press, 1989.
5. [old.brusov.am/docs/lezvabanytyan%20lekicianer/targm-git.doc](http://old.brusov.am/docs/lezvabanytyan%20lekicianer/targm-git.doc)

**MARIAM KHAZHAKYAN – The Word as a Translation Unit.** Being one of the fundamental concepts always argued about in the realm of translation, the unit of translation has been given various definitions by different theorists. The present analysis leads us to the idea that the process of translation is not an easy task; it is a painstaking and time-consuming job. A translation unit is a segment of a text that the translator treats as a single cognitive unit for the purpose of establishing equivalence. The translation unit may be a single word, a phrase, a sentence, or a larger unit. The object of our study is the word. The art of translation requires a great skill and the slightest deviations can utterly change the meaning of the original text.

**МАРИАМ ХАЖАКЯՆ – Տառը որպես թարգմանության միավոր.** Երկուսը հիմնական հասկացումներն են թարգմանության ոլորտում, որոնց մասին միշտ քննարկվել է, թարգմանության միավորը տարբեր տեսաբանների կողմից սահմանվել է տարբեր կերպով: Այս անալիզը մեզ տանում է այն գաղափարին, որ թարգմանության գործը դժվար և ժամանակատանջ է: Թարգմանության միավորը տեքստի այն հատվածն է, որը թարգմանիչը համարում է մեկ կոգնիտիվ միավոր, որի նպատակն է հասնել համարժեքության: Թարգմանության միավորը կարող է լինել մեկ բառ, արտահայտություն, նախադրյալ կամ մեծ միավոր: Մեր ուսումնասիրության օբյեկտը բառն է: Թարգմանության արտը պահանջում է մեծ հմտություն, և ամենափոքր շեղումները կարող են ամբողջովին փոխել սկզբնական տեքստի նշանակությունը:

Երկուսը թարգմանության միավորներ կարող են լինել բառեր, ֆրազեր, նախադրյալներ, և այլն: Օբյեկտը մեր ուսումնասիրությանն է բառը: Թարգմանության արտը պահանջում է մեծ հմտություն, այնպես որ ամենափոքր շեղումը կարող է ամբողջովին փոխել սկզբնական տեքստի նշանակությունը:



**ԻՄԱՑԱԿԱՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՑԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒՅԹՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՂՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Անժխտելի փաստ է, որ որպես համընդհանուր իմացական/հասկացական և լեզվական երևույթ և որպես ոճական հնար, փոխաբերույթը գոյություն ունի բոլոր լեզուներում: Որպես գեղարվեստական երևակայության, խոսքի և արտահայտման միջոց՝ այն մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկվել բազմաթիվ լեզվաբանների և գրականագետների կողմից, որոնք, սակայն հիմնականում անտեսել են փոխաբերույթի իմացական-ճանաչողական առանձնահատկությունները: Ժամանակակից լեզվաբանությունը, չանտեսելով փոխաբերույթի երևակայական հորինվածքն ու ստեղծագործական-ոճական բնույթը, այնուամենայնիվ, առավել կարևորում է փոխաբերույթի ճանաչողական արժեքն ու խոսքում իրացվող գործառույթները:

Փոխաբերույթի թարգմանությունը «թարգմանական անթարգմանելիության» խնդրի անբաժանելի մասն է: Խնդիրը բարդ է ու երկկողմ. թարգմանիչը նախ՝ պետք է ընկալի փոխաբերույթի վերնշանային իմաստը, ապա՝ կարողանա գտնել դրա համարժեքը և համապատասխանաբար իրացվող գործառույթը թիրախ լեզվում: Այդուհանդերձ, փոխաբերույթի թարգմանությունը մատչելի է դառնում, երբ այն դիտարկվում է իմացական հայեցակերպից, որը ենթադրում է, որ տարբեր մշակույթներ ու լեզուներ իմաստավորվում են միևնույն իմացական հիմքի վրա, կառուցում իրենց համակարգերը հասարակական համընդհանուր ճանաչողության դիրքերից: Այլ խոսքով, ազգային, մշակութային, պատմական, աշխարհագրական տարբերությունները կարող են անսահման տարբեր լինել, բայց, հիմնականում, մարդկային բոլոր հասարակությունները կառուցվում են միևնույն համընդհանուր կենսաբանական հիմքի վրա, որն էլ պայմանավորում է միևնույն իմացական հայեցակերպը: Օրյելկոիվ իրականությունը, որի շրջանակներում իրացվում է այս կամ այն հասարակական կամ մշակութային կենսագործունեությունը, նույնը չէ,

բայց որոշակիորեն նման է (Chitoran 1973:69): Տարբեր մշակույթները իմաստավորում են իրենց գոյությունը և հաղորդակցվում համընդհանուր, համագային երևույթների ու առարկաների սահմաններում, միննույն իմացական կամ ճանաչողական տիրույթում, որի հիմքի վրա էլ կառուցվում է արդեն տարբեր ու բազմազան արտահայտումներով դրսևորվող երևակայական տիրույթը:

Ասվածը առավել բնորոշ է գիտագեղարվեստական փոխաբերույթին, որը հիմնականում ոչ թե առանձին վերցված մեկ ազգի կամ մշակույթի կրողն է, այլ խարսխվում է համընդհանուր, համամարդկային մտածական մոդելների վրա: Հիմքային իմացական փոխաբերույթը այնուհետև ստեղծագործաբար ընդլայնվում է՝ առաջացնելով մեկ կամ ավելի երևակայական փոխաբերույթներ: Սկզբնաղբյուր լեզվի իմացական փոխաբերույթի ընկալումը դժվարություն չի ներկայացնում, քանի որ, ինչպես նշվեց, հիմնված է մարդկային կանոնակարգված մոդելների վրա, իսկ այդ ընկալելիությունն էլ հեշտացնում է հաջորդող երևակայական փոխաբերույթի(ների) մեկնության ու թարգմանության գործընթացը: Ընդ որում՝ տվյալ գործընթացի հետ կապված խնդիրը վերաբերում է ոչ թե թիրախ լեզվում սկզբնաղբյուր լեզվի այս կամ այն լեզվական միավորի համարժեք տարրի բացակայությանը, այլ թարգմանության մեջ ներգրավված երկու լեզուների մշակութային-մտածական, իմացական ընդհանրությունների ընկալմանը (Snell-Hornby 1995, Katan 1999): Ընկալելիությունից զատ և՛ իմացական, և՛ երևակայական փոխաբերույթների թարգմանելիությունը պայմանավորված է նախ՝ սկզբնաղբյուր, ապա՝ թիրախ լեզվի առանձնահատկություններով:

Այսպիսով փոխաբերույթի թարգմանության գործընթացում առավելապես արժևորվում են սկզբնաղբյուր և թիրախ լեզուների իմացական-ճանաչողական տիրույթները, որոնց «նույնության» շնորհիվ հեշտությամբ տարորոշվում է թիրախ լեզվի համարժեք իմացական փոխաբերույթը:

Հարկ չհամարելով անդրադառնալ իմացական փոխաբերույթի հիմքի վրա առաջացած երևակայական փոխաբերույթներին, որոնց ճիշտ և հաջող թարգմանությունը կախված է թարգմանչի լեզվական իմացությունից և գրական երևակայությունից, քննարկենք անգլերեն գիտագեղարվեստական գրականությանը բնորոշ մի քանի հիմնական և ածանցյալ իմացական փոխաբերույթներ, որոնք հայերենում հանդես են գալիս ճշգրիտ համարժեքներով, որոնք էլ իրենց հերթին

հեշտացնում են բազմատեսակ և բազմազան գրական-երևակայական փոխաբերությունների թարգմանությունը:

Օրինակ՝ գիտագեղարվեստական գրականության համար ելակետային համարվող Change is motion/movement/transformation (Fowler 2001) իմացական փոխաբերության հայերեն «Փոփոխությունը շարժում է» համարժեքը լիովին ընկալելի է և թարգմանելի, քանի որ այն բխում է համընդհանուր մարդկային փորձից, որը ֆիզիկական և մտավոր շարժումը համարում է ցանկացած փոփոխության հիմք և դիտարկում այն որպես զարգացում, առաջընթաց, աճ՝ ներառելով նաև հակառակ ուղղվածությունը՝ ետընթաց, անկում, փլուզում: Երկու ուղղվածություններն էլ վառ արտահայտվում են փոփոխություն ենթադրող այնպիսի փոխաբերություններում, ինչպիսիք են՝ Change is forward motion, Scientific/technological change is progress, Progress is forward motion, Progress is advancement, Scientific/technological change is destruction, Scientific/technological progress is emotional regress և այլն:

Փոփոխությունը, որպես բնական համակարգերին բնորոշ հատկանիշ, սերտորեն կապված է համընդհանուր սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական հասկացությունների հետ, այստեղից էլ՝ դրանով արտահայտված փոխաբերությունների իմաստային և ապա՝ վերնշահանքային մասշտաբային, որով էլ պայմանավորված է դրանց թարգմանելիությունը բոլոր լեզուներում: Վերոնշյալ հիմնական փոխաբերությունները ճյուղավորվում են՝ ստեղծելով բազմաթիվ այլ, ածանցյալ փոխաբերություններ, որոնց փոխաբերականության աստիճանը կախված է համատեքստից: Որպես այդպիսիք՝ կարելի է նշել Action is motion, Action is self-propelled movement, Transformation is motion, Emotion is motion/power, Faith/purpose is a driving force, Evolution is progress, Evolution is blind, Harm is regression, Emotional/psychological change is self-propelled motion, Self-initiated change is an aim, Negative effect prevents forward motion, Progress cannot be held back, Nature is self-moving, որոնց բոլորի հեշտ թարգմանելիությունը լիովին ակնհայտ է:

Մրանցից ածանցվող, իմաստային առումով ավելի նեղ իմացական փոխաբերություններ, որոնք առնչվում են ճանաչողության բազմաթիվ և բազմազան հասկացությունների հետ, արտացոլվում են համատեքստի ավելի փոքր հատվածներում: Որպես այդպիսիք՝ կարելի է թվարկել հետևյալ իմացական փոխաբերությունները՝ Revolution is evolution, Death is an end/termination, Immortality is a burden, Immortality is a dream, Good and evil are inseparable, Man's choice of good over evil is

seldom awarded/is always awarded, Man is not Creator, Competition is good/bad, Existence is a living form, Society is an existing form, Morality is strength, Theories are linked with people, Words are power և այլն:

Ներքոնշյալ պատկերը պարզորոշ ներկայացնում է հիմնական Change is motion/movement իմացական փոխաբերությոը և դրանից ածանցվող ամբողջական համատեքստերին կամ համատեքստային ուրոշ հատվածներին բնորոշ այլ փոխաբերություններ.

Այն փաստը, որ զգացմունքների, ներըմբռնման և համընդհանուր մարդկային արժեհամակարգի վրա հիմնված միևնույն փոխաբերությոը կիրառվում է տարբեր լեզուներում, ցույց է տալիս, որ գոյություն ունի հստակ կապ իմացական և նյարդային տիրությունների միջև: Այլ խոսքով՝ մարդկային ուղեղի բանականի ու զգայականի համատեղումը իր լեզվական ճշգրիտ արտահայտությունն է գտնում իմացական փոխաբերությոի մեջ: Հենց այս ետնապատկեր-համադրության հիման վրա էլ ի հայտ է գալիս ոճական, երևակայական փոխաբերությոը, որի թարգմանությունը առավել դժվար է, բայց էականորեն հեշտանում է, երբ ճիշտ է ընկալվում դրա հիմքում գտնվող համընդհանուր իմացական փոխաբերությոը:

Բերենք գիտագեղարվեստական գրականության իմացական ետնապատկերային Change is motion փոխաբերությոի և մասնավորապես՝ դրա Scientific/technological change is destruction կամ Technology is a threat to our survival տարբերակի հիման վրա ստեղծված, միջաստեղային պատերազմ ներկայացնող և ընդլայնված երևակայական փոխաբերությո պարունակող մի օրինակ.

No human being should have been alive in the nightmare world of flame and deadly gas and electronic destruction. The earth had been roiled and heaved again and again, soaked by the poison rain, turned into a moonscape of despair under the rumbling, lightning-pierced sky. (Harryson H. (1977) Ad Astra. NY: Ace).

Ակնհայտ է, որ իմացական փոխաբերությոի ճիշտ ընկալումը կարող է հեշտացնել գեղարվեստական մեծ պատկերավորությամբ և ակտիվ փոխաբերություններով արտահայտված վերոնշյալ հատվածի թարգմանությունը, որը, այդուհանդերձ, պահանջում է նաև թարգմանական մեծ վարպետություն:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ փոխաբերությոի ընկալումը՝ որպես իմացականի և գեղարվեստականի համադրությամբ ստեղծված արտահայտչամիջոց (Suvin 1974; Kittay 1987:2), կարող է մեծապես

հեշտացնել գիտագեղարվեստական փոխաբերույթների թարգմանության գործընթացը:

## REFERENCES

1. **Chitoran D.**, *Elements of English Structural Semantics*. București: EDP, 1973.
2. **Fowler B.**, *The Science of Fiction.*//New Humanist. Vol.116, Issue 1, London: RA, 2001.
3. **Katan D.**, *Translating Cultures: An Introduction for Translators, Interpreters and Mediators*. Manchester: ST Jerome, 1999.
4. **Snell-Hornby M.**, *Translation Studies: An Integrated Approach*. Amsterdam: John Benjamins, 1995.
5. **Suvin D.**, *Radical Rhapsody and Romantic Recoil in the Age of Anticipation: A Chapter in the History of SF*. In: *Science Fiction Studies*. Vol. 1, № 4, Greencastle IN, DePaw University: SF-TH Inc., 1974.
6. **Kittay E.F.**, *Metaphor: Its Cognitive Force and Linguistic Structure*. Oxford: OUP, 1987.

**ГЯНЕ МУРАДЯН – Перевод концептуальной и художественной метафоры в научной фантастике.** В статье обсуждается перевод метафор в научной фантастике, основанные на концепции, которые по сути метафоричны и в свою очередь служат основой, на которой строятся. новые подлинные художественные метафоры Вывод в том, что перевод основных, универсальных концептуальных метафор намного облегчает перевод художественных/образительных метафор, которые являются результатом вдохновения, воображения и фантазии писателя и переводчика.

**GAYANE MURADYAN – Translating Conceptual and Image Metaphors in SF.** The paper discusses the translation of SF metaphors, which are based on concepts that are themselves inherently metaphorical and in their turn serve as a basis, on which new, genuine image metaphors are built. The conclusion is that the translation of the basic, mostly universal conceptual metaphor will make it easier to translate the image metaphors, which are the result of the writer's, then the translator's inspiration, imagination and fantasy.

**ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՐԼԹԱՑՈՒՄ**

***ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան*

Սույն հոդվածը նվիրված է բանավոր թարգմանությանն առնչվող մի քանի խնդիրների քննությանը: Մեր նպատակն է՝ քննության առնել հաղորդակցական իրադրության արտալեզվական բաղադրիչներից մեկով՝ խոսքի կերպերի գործոնով պայմանավորված հաղորդակցական առանձնահատկությունները՝ զուգադրելով հայ և անգլախոս լեզվամշակույթները:

Ինչպես գիտենք, խոսքի գործադրումը որպես ամբողջական գործընթաց ուսումնասիրելու հայեցական պահանջին համապատասխան՝ գործաբանական լեզվաբանության մեջ մշակվեց հաղորդակցական իրադրության կաղապարը: Վերջինս իր բովանդակային կազմում ներառում է մի շարք լեզվական և արտալեզվական բաղադրիչներ (խոսքային ակտ, խոսքի կերպեր, հենքային գիտելիքներ, հաղորդակցման եղանակ և ձև, հիշողություն), որոնք պարտադիր են հաղորդակցման գործընթացի համար՝ անկախ կիրառվող լեզվից: Միննույն ժամանակ պետք է փաստենք նաև, որ խոսքն ունի արտահայտման երկու ձև՝ գրավոր և բանավոր: Սույն բաժանումը բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տվել դիսկուրսի տեսության մեջ: Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանավոր խոսքի որոշ նմուշներ, ինչպես, օրինակ՝ նախօրոք գրված և հիշողության մեջ վերարտադրվող դասախոսությունները կամ բեմական խոսքը, իրենց առանձնահատկություններով նման են գրավոր խոսքին, իսկ գրավոր խոսքի նմուշներն էլ, իրենց հերթին, կարող են ունենալ բանավոր խոսքին բնորոշ հատկանիշներ, որոշ լեզվաբանների կողմից առաջարկվում է նախօրոք մշակված/ինքնաբեր խոսք տարբերակումը գրավոր/բանավոր խոսք տարբերակման փոխարեն: Մշակված է համարվում ցանկացած բնույթի հղկված, խմբագրված խոսք, որը ծավալվում է խոսքային գործունեության ընթացքում (դասախոսությո-

յուն, ճառ, քաղաքական ելույթ, բեմական խոսք և այլն), մինչդեռ ինքնաբեր է այն խոսքը, որը ստեղծվում է խոսելու ընթացքում (Brown, Yule 1983; Hatch 1992; Պարոնյան 2011):

Եթե դիսկուրսի տեսության այս գիտելիքը տեղափոխենք թարգմանաբանական դաշտ, ապա կտեսնենք, որ խոսքի այս երկու տարատեսակներն էլ թարգմանչի համար յուրօրինակ խնդիրներ են առաջադրում: Մշակված խոսք թարգմանելիս թարգմանիչը մի շարք առավելություններ ունի: Եթե դա գեղարվեստական, տեխնիկական, քաղաքական կամ որևէ այլ բնագավառի տեքստ է, ապա նա հնարավորություն ունի բառարանների, տեղեկատուների օգնությամբ ստուգելու այս կամ այն բառը, գրել-ջնջելու, փոխելու և փոփոխելու գրածը: Այսինքն՝ նա ժամանակ ունի մտածելու, քանի որ հասցեատիրոջ հետ հաղորդակցվելու նրա եղանակը միջնորդավորված է: Երբեմն նաև դա պատրաստի բանավոր ճառ է կամ դասախոսություն, որը նախօրոք կամ նախապես տրվում է թարգմանչին՝ ծանոթանալու և թարգմանելու: Այս դեպքում դարձյալ թարգմանիչը ժամանակ շահելու հնարավորություն ունի, իսկ մենք գիտենք, որ հմուտ թարգմանիչը մեկ անգամ աչքի անցկացնելով տեքստը՝ կարող է թարգմանել այն: Պետք է խոստովանել, որ մշակված խոսք թարգմանելիս թարգմանչի դերը «պասիվ» է. նա սուսկ տեղափոխում է ասվածը լեզվական մեկ կողից մյուսին՝ առանց հաշվի առնելու կոդավորողի՝ տվյալ դիսկուրսը ստեղծողի (ասենք գրողի, գիտնականի, քաղաքական կամ հասարակական գործչի, դասախոսի) և ապակոդավորողի, այսինքն՝ հասցեատերերի (ընթերցողի, լսողի) անմիջական արձագանքը, նրանց փոխըմբռնումը: Ինչպես գիտենք, ներկայումս քաղաքակիրթ համարվող բանավոր թարգմանությունների ժամանակ ո՛չ թարգմանիչն է տեսնում խոսողին, ո՛չ էլ խոսողը նրան: Քանի որ այս դեպքում խոսող-լսող կապը միջնորդավորված է, իսկ միջնորդը՝ թարգմանիչը, անմիջական կապ չունի ո՛չ խոսողի հետ (որպեսզի կարողանա ինչ-որ բառ, միտք պարզաբանել), ո՛չ էլ լսարանի (որպեսզի հասկանա, թե արդյո՞ք իր թարգմանածը սխալ չընկալվեց, արդյո՞ք պետք չէ՞ վերաձևակերպել ասածը՝ ավելի հասկանալի դարձնել և այլն), ապա թարգմանչի գիտելիքը և հմտությունը, տվյալ ոլորտի բառապաշարի իմացությունը, գործաբանական, այսինքն՝ իլլոկուտիվ իմաստի համարժեքության պահպանումը, չա-

փազանց կարևոր խնդիրներ են: Անշուշտ, բոլորս ականատես ենք եղել նման թարգմանությունների, երբ մենք՝ օտար լեզվի մասնագետներս, հասկանում ենք խոսողին, սակայն տվյալ թարգմանչի կատարած թարգմանությունը հայերեն ոչ մի իմաստ չունի կամ ուրիշ բան է արտահայտում:

Թարգմանչի առաջ միանգամայն այլ խնդիրներ են առաջանում ինքնաբեր խոսք թարգմանելիս, հատկապես՝ համաժամանակյա թարգմանության ընթացքում: Այստեղ առավելապես կարևոր են հիշողությունը, մտքի արագությունը, տվյալ ոլորտի բառապաշարի իմացությունը: Ինչ խոսք, որքան էլ դժվար լինի, բանավոր թարգմանության արվեստին կարելի է տիրապետել վարժանքների շնորհիվ, և, իհարկե, համապատասխան ունակությունների, նախադրյալների առկայության դեպքում: Մակայն, որքան էլ որ զարմանալի լինի, համաժամանակյա թարգմանությունն ունի մեկ ակնհայտ առավելություն. այստեղ թարգմանիչը վերակողմավորում է լսածը՝ անմիջական կապ ունենալով խոսողի և լսողի հետ: Նա հաղորդակցական իրադրության մասնակից է և անհրաժեշտության դեպքում կարող է վերաձևակերպել ասվածը: Նույնիսկ այն դեպքում, եթե սխալ կամ ոչ ճշգրիտ թարգմանության, խրթին բառապաշարի կամ աղավաղված արտասանության պատճառով կողմերից մեկը ինչ-որ բան լավ չի ընկալում, նա կարող է հարցերի միջոցով պարզաբանել դա:

Համաժամանակյա բանավոր թարգմանություններն, ինչ խոսք, գործադրվում են տարբեր ոլորտներում և խոսքային իրադրություններում՝ տեղեկատվության փոխանցում, քաղաքական բանավեճ, գործարար բանակցություն, առևտրային գործարք և այլն: Թարգմանիչն ականատես է լինում բազմաթիվ ծանր, կոնֆլիկտային, պայթյունավտանգ իրավիճակների և իր մաշկի վրա զգում ողջ լարվածությունը, կրում իրավիճակից բարեհաջող դուրս գալու պատասխանատվությունը: Մեկ սխալ կամ ոչ համարժեք թարգմանված բառ կամ արտահայտություն, և կողմերի բախումն անխուսափելի է: Իհարկե, բոլորովին հաճելի չէ նման իրավիճակում թարգմանություն անելը, բայց ոչ ոք նախապես չի կարող գուշակել, թե ու՞ր կտանի բանակցային գործընթացը: Կարծում եմ, որ ձեզանից շատերը կհամաձայնեն, որ հատկապես կոնֆլիկտային իրադրություններում՝ գործարար բանակցությունների, քաղաքական բանավեճերի ժամանակ



մեծ է թարգմանչի դերը, քանի որ նա ստանձնում է նաև միջնորդի դեր: Գործը առավել բարդանում է այն դեպքերում, երբ հայ թարգմանիչը ոչ բնիկ անգլերեն խոսողի խոսք է թարգմանում: Անգլերենի համաշխարհայնացման պայմաններում գործարար բանակցությունների, դիվանագիտական և քաղաքական հաղորդակցությունների մեծ մասն իրականացվում է անգլերենով, սակայն մեկ բան է, երբ խոսողը բնիկ անգլիացի կամ ամերիկացի է, և մեկ այլ բան՝ երբ դա անգլերեն խոսող ճապոնացի է, չինացի, արաբ կամ ֆինն: Բանն այն է, որ անգլերեն խոսող չինացին կամ ճապոնացին պահպանում է իր լեզվամշակույթին բնորոշ գծերը: Այս դեպքում առավել կարևորվում է միջմշակութային հաղորդակցության ոլորտին պատկանող գիտելիքի առկայությունը, որը ներառում է ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական մշակութային ցուցիչների իրազեկություն: Ընդամին՝ լեզվական և արտալեզվական մշակութային իրազեկությունը թույլ կտա խուսափել թյուրըմբռնումից և խոսողի միտքը առավելագույնս ճիշտ փոխադրել մեկ լեզվից մյուսին: Սա նշանակում է, որ թարգմանիչը պետք է կարողանա հարմարակվել թիրախ լեզվամշակույթին, իսկ դրա համար նա պետք է իրազեկ լինի ոչ միայն կոնկրետ թիրախ լեզվի (տվյալ դեպքում՝ անգլերենի) լեզվամշակութային առանձնահատկություններին, այլ նաև տվյալ խոսողի մայրենի լեզվամշակույթին: Ինչպես գիտենք, մարդկանց՝ հասարակական էակաների խմբավորման մի շարք սկզբունքներ կան՝ ըստ ազգությունների, լեզվի, կրոնի, քաղաքական հայացքների, և այլն: Այսօր շատ է խոսվում նաև ազգությունների լեզվամշակութային ենթախմբերի մասին, առանձնացվում են ազգերի լեզվամշակութային տարբեր տիպեր (մոնոխրոն/պոլիխրոն, բարձր/ցածր համատեքստայնացված, դեպի անցյալը կամ ապագան ուղղորդված, և այլն) (Hofstede 2003; Lewis 2003): Թարգմանիչը պետք է տեղյակ լինի այս մշակութային առանձնահատկություններին, քանի որ միջմշակութային հաղորդակցության նրբություններին առնչվող այս գիտելիքը նրան թույլ կտա կանխատեսել տվյալ լեզվամշակույթի ներկայացուցչի վարքը, հասկանալ, թե ինչ ներակա իմաստ է արտահայտված խոսքում, ինչ նկատի ունի խոսողը: Ըստ այդմ՝ նա կկարողանա օտար լեզվով հնչեցրած խոսքը ճիշտ վերարտադրել հայերեն, իսկ հայի ասածն էլ թարգմանել այնպես, որ համահունչ լինի օտար լեզվամշակույթի

ներկայացուցչի սպասելիքներին, ընդունելի լինի, վիրավորական չլինի նրա համար: Այսինքն՝ թարգմանչի գործը ոչ միայն խոսքը ճշգրիտ, համարժեք թարգմանելն է, այլ նաև երկու տարբեր լեզվամշակույթներն իրար հարմարեցնելը:

Ասվածն ավելի պարզ դարձնելու համար անդրադառնանք արտալեզվական միջմշակութային գործոնների քննարկմանը, քանի որ դրանք աններելիորեն անտեսված են թարգմանության ուսուցման գործընթացում:

Քննենք այդ գործոններից մի քանիսը: Նախ անդրադառնանք մի շատ անմեղ և աննկատ, «համր» արտալեզվական գործոնի՝ լռությամբ, կամ երկու խոսակիցների խոսքի միջև ընկած խոսքադադարին: Որքան էլ տարօրինակ թվա, դադարը շատ կարևոր արտալեզվական գործոն է, քանի որ դրա տևողությունը տարբեր է լեզվամշակույթներում, և այն խախտելու դեպքում՝ կողմերից մեկի մոտ բացասական վերաբերմունք կարող է առաջանալ: Որպես օրինակ՝ ասեմ, որ գերմանացի, բրիտանացի խոսողների համար դադարը 2-3 վայրկյան է, հույների, քուվեյթցիների համար՝ 1-2 վայրկյան, ֆրանսիացիների, իտալացիների, ամերիկացիների, նաև հայերիս համար այն հազիվ նկատելի է, սակայն արևելյան մշակույթում դադարը բավականին երկար է, առնվազն՝ 5-10 վայրկյան: Ռ. Լյուիսի ձևակերպմամբ՝ ճապոնացիները, չինացիները, վիետնամացիները, կորեացիները, ինչպես նաև ֆինները արձագանքող տիպի լեզվամշակույթին են հարուստ, որտեղ անմիջապես տրվող պատասխանը դիտվում է որպես վիրավորանք անձի նկատմամբ (Lewis 2003): Արձագանքող տիպի մշակույթներում գտնում են, որ պատասխանելուց առաջ պետք է երկար մտածել: Ըստ այդմ, եթե բանակցային կողմերից մեկը, տվյալ դեպքում՝ հայ գործարարը, քաղաքականագետը կամ մասնագետը, չգիտի այդ նրբությունը և այդ մշակույթի ներկայացուցչի տված հարցին անմիջապես պատասխանում է, կամ նյարդայնանում՝ պատասխանի խոսքի ուշացման դեպքում, ապա թարգմանչի պարտքն է ուղղել այդ սխալը՝ թարգմանությունը ուշացնել, աննկատ հորդորել լսողներին սպասել պատասխանին և այլն: Ընդհանուր առմամբ՝ միանգամայն անընդունելի է ընդհատել արևելյան մշակույթի ներկայացուցչին: Իսկ, օրինակ, երկար լռությամբ, երկարատև դադարով կարելի է նյարդայնացնել ամերիկացի զրուցակցին:

Հաղորդակցությունը երկկողմանի գործընթաց է և դիմացինին լսելը կարևոր հիմնություն է, որը նաև լեզվամշակութային արժեք ունի: Ոչ պաշտոնական հաղորդակցական իրադրություններում, հատկապես՝ ուղքի վրա կանգնած զրույցների թարգմանության ժամանակ թարգմանիչը պետք է հետևի նաև խոսակիցների միջև եղած տարածությանը: Որոշ մշակույթներում խոսակիցների միջև ընդունված հեռավորությունը 1 մ է, որոշ երկրներում՝ 0.5 մետր: Հայ գործարարի կամ քաղաքական գործչի համար անբնական կլինի 1.2 մետր տարածության վրա խոսել հույժ գաղտնի կամ կարևոր գործերի մասին, սակայն այդ տարածքը խախտելու դեպքում բանակցային գործընթացը բացասական ելք կարող է ունենալ:

Այժմ անդրադառնանք մարմնի շարժումներին, որոնք նույնպես կարևոր են միջմշակութային հաղորդակցման ժամանակ փոխըմբռնում հաստատելու համար: Արևելյան և ֆիննական մշակույթներում մարմնի շարժումները նվազագույնի են հասցված, մինչդեռ հայկական, իսպանական, իտալական, ֆրանսիական, արաբական, լատինաամերիկյան մշակույթներում մարմնի շարժումները բավականին կիրառելի են: Թարգմանիչն ինքը պետք է իրազեկ լինի և հետևի իր ձեռքի շարժումներին թարգմանության ժամանակ:

Կարևոր արտալեզվական մշակութային գործոններից է նաև աչքերի, հայացքի կոնտակտը: Որոշ մշակույթներում, օրինակ՝ Իսպանիայում, Հունաստանում, արաբական երկրներում, ընդունված է նայել ուղիղ զրուցակիցների աչքերի մեջ, իսկ արևելյան մշակույթներում՝ ոչ: Ճապոնացին, չինացին, նայում է խոսընկերոջ պարանոցին, երբ նա խոսում է, իսկ երբ ինքն է խոսում՝ նայում է իր ոտքերին: Նրանք նայում են խոսակցի աչքերին միայն այն ժամանակ, երբ ցանկանում են խոսքը նրանց տալ: Այսպիսով՝ քանի դեռ ասիական մշակույթի ներկայացուցիչը չի նայել խոսընկերոջ աչքերի մեջ, նա խոսքը չի փոխանցում խոսընկերոջը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, խոսընթացին բնորոշ են յուրօրինակ դրսևորումներ, որոնք պայմանավորված են խոսընկերների ոչ լեզվական գործողություններով և տվյալ լեզվամշակույթի առանձնահատկություններով: Ընդամին՝ թիրախ լեզվի միջմշակութային ցուցիչների իրազեկությունը կարևոր է արդյունավետ և հաջող թարգմանություն կատարելու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Brown G., Yule G.**, *Discourse Analysis*, Cambridge University Press, 1983.
2. **Hatch E.**, *Discourse and Language Education*, N.Y., CUP, 1992.
3. **Hofstede G.**, *Cultures and Organizations*, London, Harper Collins, 2003.
4. **Lewis R.D.**, *When Cultures Clollide*, London, NB Books, 2003.
5. **Պարոնյան Շ.**, *Հեղինակախոսություն և դիալոգ*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:

**ШУШАНИК ПАРОНЫАН – Роль экстралингвистических лингвокультурных факторов в процессе устного перевода.** Статья посвящена исследованию некоторых вопросов, связанных с проблемами устного перевода. Целью автора является исследовать трудности устного синхронного перевода, связанные с экстралингвистическими коммуникативными факторами. Путем сравнения английской и армянской лингвокультур автор указывает на важную роль невербальной коммуникации в процессе межкультурного общения.

**SHUSHANIK PARONYAN – The Role of Extralinguistic Linguocultural Factors in the Process of Oral Translation.** The article deals with some problems concerning oral translation. The aim of the author is to analyse certain difficulties of oral translation which have to do with extralinguistic communicative factors. By comparing English and Armenian linguocultures, the author stresses the importance of non-verbal communicative clues in the process of cross-cultural communication.

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*ԱՆՆԱ ԽԱՉՍՏՐՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Բանաստեղծական խոսքի թարգմանությունը գեղարվեստական թարգմանության տարատեսակներից ամենաբարդն է: Նախևառաջ՝ բանաստեղծական լեզուն շատ հագեցած է, քանի որ ընդամենը մի քանի խոսքով կարող է ներկայացվել մի ամբողջ պատկեր: Բանաստեղծական տեքստի թարգմանության համարժեքությունը կապված է մի շարք խնդիրների լուծման հետ: Դրանք կարող են լինել բանաստեղծական տեքստի ձևաչափային առանձնահատկությունների խախտումները՝ բառիմաստային բովանդակության պահպանմամբ, կամ ընդհակառակը՝ բնագրի պատկերային համակարգի որոշակի տարրերի կորուստը՝ արտաքին ձևի պահպանմամբ: Ուստի բանաստեղծական խոսքի թարգմանության գործընթացը ենթադրում է արտահայտչամիջոցների չափազանց բծախնդիր ընտրություն, որը կօգնի լուծել հետևյալ խնդիրները.

- փոխանցել բովանդակությունը այնպիսի առավելագույն արդյունավետությամբ, որ թարգմանությունն ունենա նույն հուզական ներգործությունը, ինչ որ բնագիրը;
- թարգմանությունը պետք է դառնա լիարժեք գեղարվեստական ստեղծագործություն՝ ըստ էության հավասարվելով թարգմանության լեզվով գրված բնագիր ստեղծագործությանը, այսինքն՝ ընթերցողը երբևէ չպետք է զգա, որ դա թարգմանություն է;
- հարկ է առավելագույնս պահպանել բնագիր ստեղծագործության ձևը, այն է՝ վանկերի, տողերի, տների համամասնությունը, հանգավորման համակարգը և այլն:

Ինչպես թարգմանության ցանկացած այլ տեսակ, բանաստեղծական խոսքի թարգմանությունն էլ ունի իր մշակված սկզբունքները, սակայն դրանց իմացությունը շատ քիչ է բանաստեղծություն թարգմանելու համար: Թարգմանական գործունեության այս ոլորտը, թերևս, գեղարվեստական թարգմանության տեսության ամենախոցելի հարցերից մեկն է, քանի որ այստեղ գործում են հենց տվյալ

Ժանրային առանձնահատկություններով թելադրված խիստ սահմանափակումներ. անհրաժեշտությունը թարգմանության մեջ փոխանցել ոչ միայն բնագրի բովանդակությունը, այլև դրա ռիթմամեղեդային և կառուցվածքային կողմերը: Այսինքն՝ մի կողմից թարգմանչից պահանջվում է պահպանելով լեզվական նորմերը՝ հասնել իմաստային համարժեքության, իսկ մյուս կողմից՝ համապատասխանորեն արտահայտել բնագրի հուզական-էսթետիկական առանձնահատկությունները: Ամփոփելով ռուսական թարգմանական դպրոցի մոտեցումը այս հարցին՝ ներկայացնենք պահանջները, որոնց բավարարումը կապահովի բանաստեղծական ձևի և պատկերային համակարգի ապահովումը. 1. ստեղծագործության ձևաչափային առանձնահատկությունների պահպանումը (այստեղ խոսքը վանկերի, տողերի, տների քանակական և կառուցվածքային առանձնահատկությունների մասին է); 2. ռիթմաառոգանային առանձնահատկությունների պահպանումը՝ հանգավորման առկայությամբ կամ բացակայությամբ; 3. Հանգերի համապատասխան հաջորդականության պահպանումը; 4. պատկերային համակարգի արտահայտման միջոցների համապատասխան փոխանցումը (բառային, ոճական և շարահյուսական)՝ ոճական հնարների համապատասխան տեսակների հնարավորինս համարժեք պահպանմամբ:

Իհարկե, անիմաստ է որևէ մեկին հատուկ հրահանգներով և կանոններով սովորեցնել, թե ինչպես կարելի է ստեղծել բանաստեղծական ստեղծագործություն, իսկ թարգմանությունը նույնպես բանաստեղծության կերտում է, և ամեն մարդ, ով զբաղվում է դրանով, անում է դա յուրովի՝ ելնելով իր ստեղծագործական մոտեցումից և ընկալումից, սակայն ընդհանուր կանոնը մեկն է. **ոչինչ երբեք չի գրվի մինչև թարգմանիչը դա չգգա ներքին հնչողությամբ, իր մեջ՝ ներթափանցելով բնագրի բանաստեղծական հյուսվածքի մեջ:**

Բանաստեղծական թարգմանության վարպետության բարձունքներին կարող է հասնել միայն բանաստեղծական ձիրքով և պատկերավոր մտածելակերպով օժտված անհատականությունը, ով ունի բանաստեղծական ռոմանտիկ աշխարհընկալում: Ինչպես արվեստի մեջ ընդհանրապես, իսկ բանաստեղծական թարգմանությունն անհերքելիորեն արվեստ է, այստեղ ևս հաջողության հասնելու համար հարկավոր է կատարել հայտնագործություն: Մակայն համեմատած բնագիր ստեղծագործության կերտման հետ՝ թարգմանությունը տարբերվում է նրանով, որ այստեղ ստեղծագործելու ծավալա-

յին շրջանակը որոշ առումներով նեղանում է: Բնագիր ստեղծագործության կերտման ժամանակ հեղինակի մոտ առաջանում է գաղափար, որի մարմնավորման համար նա ստեղծում է որոշակի ձև՝ վերածելով պատկերները բանաստեղծական տողերի: Իսկ թարգմանիչը, իր բանաստեղծական խնդրի իրագործմանը անցնելիս, թվում է, արդեն անցել է այդ ստեղծագործական ուղու առաջին կեսը, քանի որ բանաստեղծությունն արդեն ունի իր գրական ձևը և ապրում ու հնչում է մեկ այլ լեզվով: Բանաստեղծի առջև այժմ ստեղծագործական ուղու երկրորդ կեսն է, այն է՝ արդեն հղացած գաղափարը արտահայտել թարգմանության լեզվով, և ահա իր բոլոր ստեղծագործական նկրտումները նա ուղղում է՝ գտնելու արտահայտման այնպիսի միջոցներ, որոնք տվյալ ձևի մեջ մտնելով՝ կվերստեղծեն ստեղծագործության ոգին ու գաղափարը: Ահա թե ինչու բանաստեղծական թարգմանություն անելու համար պետք է օժտված լինել բանաստեղծական հոգով և էությանը: Ի դեպ, մեծ թվով հայտնի բանաստեղծներ կատարել են բարձրակարգ բանաստեղծական թարգմանություններ՝ անշուշտ, ընտրելով այնպիսի ստեղծագործություններ, որոնք համահունչ են իրենց սեփական բանաստեղծական աշխարհայացքին – Մովսես Խորենացի, Հովհ. Թումանյան, Համո Սահյան, Նաիրի Զարյան, Վահան Թոթովենց, Ղևոնդ Ալիշան, Սամուիլ Մարշակ, Բորիս Պաստերնակ, Օսիպ Մանդելշտամ, Վալերի Բրյուսով, Դանթե, Քրիստոֆեր Մարլո, Շեկսպիր և այլն:

Այն թարգմանիչը, ով որոշել է զբաղվել բանաստեղծական թարգմանությամբ, պետք է նախ և առաջ ուսումնասիրի բանաստեղծական գրագիտության հիմունքները մայրենի լեզվով և քաջատեղյակ լինի մայրենի լեզվով գրված բանաստեղծական ժառանգությանը:

Ինչպես արդեն նշվեց, բանաստեղծական լեզվի գլխավոր առանձնահատկությունը նրանում է, որ մտքի և պատկերի փոխանցումն ուղեկցվում է մեծ հագեցվածությամբ ու խտացվածությամբ: Օրինակ՝ Պուշկինի *«Ելզենի Օնեգինը»* շատ գրականագետների կողմից համարվում է այդ դարաշրջանի ռուս իրականության հանրագիտարանը, սակայն իրականում դրա ծավալը ամենևին շատ չէ, մոտ 30 տպագիր էջ, որը կհավասարվեր մի փոքրիկ վեպի: Մա կարելի է համարել Նեկրասովի հայտնի սկզբունքի դրսևորումը, որ ասում էր. *«Թող բառերի համար տեղը նեղ լինի, բայց մտքերի համար՝ ընդարձակ»:*

Ամփոփելով բանաստեղծական թարգմանության տեսության հիմնասկզբունքները՝ վստահաբար կարելի է ասել, որ.

- Չնայած այն բանին, որ բանաստեղծական թարգմանությունը, ելնելով ժանրային առանձնահատկություններից, կապված է մի շարք դժվարությունների հետ, համարժեք բանաստեղծական թարգմանությունը հնարավոր է միայն փոխհատուցողական մոտեցման կիրառման դեպքում, որը ենթադրում է ամբողջական մոտեցում թարգմանվող տեքստի նկատմամբ:
- Բանաստեղծական թարգմանությունն ունի տեսական հիմքեր, սակայն այն նախևառաջ ստեղծագործական գործընթաց է, իսկական արվեստ, քանի որ ամբողջովին կախված է թարգմանչի անհատական ստեղծագործական որոշումներից: Թարգմանական բազմազանությունը, այսինքն՝ այն, որ նույն ստեղծագործության թարգմանությունները տարբեր թարգմանիչների կողմից կարող են էապես տարբերվել, կարող է առիթ տալ որոշակի բանասիրական վեճերի, սակայն ինչպես և ցանկացած այլ ստեղծագործական ոլորտում, այս երևույթը այստեղ ևս կարելի է համարել դրական և միանգամայն օգտակար:
- Բանաստեղծական տեքստի թարգմանությունները անխուսափելիորեն կրում են այն լեզվամշակութային հասարակության ազգային բնութագիրն ու մտածելակերպը, որին պատկանում է թարգմանիչը, ինչպես նաև որոշակի ձևով արտացոլում են ստեղծման դարաշրջանը և թարգմանչի գաղափարախոսությունը:

Նույնիսկ այսօր՝ ռացիոնալ 21-րդ դարում, երբ շուկայական օրենքները կարծես թե ստիպում են գերակայությունը տալ թարգմանության այլ տեսակներին, բանաստեղծական թարգմանությունը շարունակում է մնալ թարգմանության տեսության առանցքային հարցերից մեկը: ԱՄՆ-ի ամենաականավոր նախագահներից մեկը՝ Ջոն Քենեդին ասել է հետևյալ հանճարեղ խոսքերը.

*Երբ պաշտոնը մարդուն գոռոզամիտ է դարձնում, պոեզիան է հիշեցնում նրան, որ իշխանությունը սահմանափակ է: Երբ պաշտոնը նեղացնում է մարդու աշխարհընկալման շրջանակները, պոեզիան է հիշեցնում գոյության հարստության և բազմազանության մասին: Երբ պաշտոնը փչացնում է մարդուն, պոեզիան է օգնում նրան մաքրել իր հոգին:*



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Алефиренко Н.Ф.**, *Поэтическая энергия слова: Синергетика яз. сознания и культуры* / Отд-ние лит. и яз. РАН и др. М.: Академия, 2002.
2. **Дановский Н.Ф.**, *Вводное слово в искусство перевода*, Москва, 2006.
3. **Алексеева И.С.**, *Введение в переводоведение: учебное пособие для студентов филологических и лингвистических факультетов высших учебных заведений*. М.: Издательский центр «Академия», 2008.
4. **Алякринский О.А.**, *Поэтический текст и поэтический смысл* // Тетради переводчика. М.: 1984.
5. **Бархударов Л.С.**, *О лексических соответствиях в поэтическом переводе* // Тетради переводчика. М.: Международные отношения, 1964.

**АННА ХАЧАТРЯН – Перевод поэтического текста.** Поэтический перевод является одним из сложнейших видов художественного перевода. Поэтический язык отличается большой насыщенностью, так как иногда всего лишь несколькими словами могут передаваться целые образы. Проблема эквивалентности перевода поэтического текста связана с решением целого ряда задач. При работе с поэтическим произведением переводчику необходимо быть максимально внимательным ко всем особенностям авторского текста и проявить целостный подход, как к форме, так и к содержанию текста.

**ANNA KHACHATRYAN – Poetry Translation.** Poetry translation is one of the most complicated types of literary translation. Here the translator has to solve a number of problems in order to ensure an equivalent translation of the original text. The poetic language is noted for its great saturation, as here a few words can sometimes convey manifold images. In poetry translation the translator is to take into consideration all the peculiarities of the source text, manifesting an integrated approach both to the form and the content of the text.

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՄԻԶՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ**

**ԱՆՆԱ ՀԱԿՈՒԹՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Ինչպես վկայում են մշակույթի պահպանված հուշարձանները, թարգմանության պատմական արմատները ձգվում են շատ հեռու մինչև մարդկության քաղաքակրթության վաղնջական ժամանակները: Թարգմանությունը մարդկային համընդհանուր գործունեություն է, որն անհրաժեշտություն է եղել բոլոր ժամանակներում և երկրագնդի բոլոր մասերում տարբեր լեզուներով խոսող համայնքների միջև առնչությունների, շփումների համար. լինեն այդ համայնքները անհատական կամ կոլեկտիվ, պատահական կամ հարատև, կապված լինեն տնտեսական փոխանակությունների հոսանքներով կամ հայտնվեն պատահական ճանապարհորդությունների առիթով, լինեն նորմա դարձած կողավորումների առարկա (ինչպես, օրինակ՝ պետությունների միջև կնքված պայմանագրերը): Այսօր գրեթե չկա որևէ մեկուսացած ժողովուրդ, որ գոյություն ունենա առանց թարգմանության: Հենց սրանով է պայմանավորված սույն խնդրի արդիականությունը: Այն, որ թարգմանությունը պետք է դառնար և՛ գիտություն, և՛ արվեստ, ինչպես ժամանակին կարծում էին ռոմանտիկ քննադատները, իրականացել է. սա է նրա արդի ձևկատագիրը:

Հայ թարգմանական գիտության պատմությունը ոչ թե դարեր, այլ հազարամյակներ է ընդգրկում: Այստեղ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը հին հրեերենից և արամերենից (Հին Կտակարան), ինչպես նաև հին հունարենից (Նոր Կտակարան): Թարգմանչական գործունեությունը նպաստեց, որ պետականորեն ընդունված քրիստոնեությունը (301թ.) վերջնականապես մտնի հայության մեջ: Բացի այդ, օտար փիլիսոփայական մտքին և մշակույթային այլ գրավոր արժեքներին հաղորդակցվելու համար անհրաժեշտ էր հունարեն, ասորերեն կամ լատիներեն համատարած կրթություն, մի բան, որ ոչ միայն դժվար էր, այլև՝ վտանգավոր: Հետագայում՝ V դարի կեսերից սկսած, թարգմանչական սերունդը ստեղծեց հայերենի նոր բառապաշար և գրական լեզու: Ողջ

աշխարհում Աստվածաշնչի լավագույն թարգմանություններից մեկն իրավամբ համարվում է հայերենը, որն իրականացրել են Մեսրոպ Մաշտոցի աշակերտները հայերեն գրերի ստեղծումից հետո (406թ.) մեր թվարկության 5-րդ դարում: Մաշտոցյան Թարգմանչական դպրոցը, մեծապես նպաստելով հայ մշակույթի հետագա զարգացմանը, փրկեց անտիկ շրջանի մի շարք բարձրարժեք կոթողներ՝ Տիմոթեոս Ալեքսանդրացու, Արիստիդես Աթենացու և այլոց երկերը՝ նրանց հայերեն թարգմանության շնորհիվ: Հայ ազգային գրականության և մշակույթի կազմավորման գործում թարգմանությունների դերն ու նշանակությունն այնքան մեծ է եղել, որ վաղնջական ժամանակներից Հայաստանում սահմանվել է *Թարգմանչաց տուն*, որի ավանդական նշումը շարունակվում է ցայսօր ինչպես եկեղեցու, այնպես էլ ժողովրդի կողմից: Այս տունը բացառիկ է ամբողջ աշխարհում:

Սակայն որքան էլ արտասովոր հնչի, *թարգմանաբանություն* եզրույթը նորաբանություն էր մինչև 1970 թվականը: Այնուհետև այն շրջանառության մեջ դրվեց և ծավալվեց: *Թարգմանաբանություն* հասկացությունն առաջին անգամ գործածել են ժամանակակից ֆրանսիացի թարգմանաբան Ժան-Ռընե Լամիրալը 1972թ. և միաժամանակ կանադացի թարգմանաբան Բրիան Հարիսը: *Թարգմանաբանությունը* գիտություն է, որն ուսումնասիրում է նախ թարգմանության գործընթացը, ապա թարգմանության բոլոր տեսակետները: Այս գործի մեծ երախտավոր Արման Նազարյանը *թարգմանաբանություն* եզրույթը ոչ միայն մտցրեց հայ լեզվաբանական իրականություն, մանրամասնելով իր գիտական աշխատություններում, այլև ծավալեց իր գործունեությունը մանկավարժության բնագավառում՝ գրելով և տպագրելով ուսումնական ձեռնարկներ, բազմապիսի թարգմանական բառարաններ, մենագրություններ և այլն:

Կարևորագույն ուսումնասիրությունների մեջ անհնար է չհիշատակել ֆրանսիացի նշանավոր տեսաբան Անտուան Բերմանի անունը: Լինելով թարգմանիչ՝ գերմաներենից և իսպաներենից, նա թարգմանաբանությունը օժտեց իսկական քննադատական մտքով՝ շարունակելով Ֆրիդրիխ Շլեյերմախերի և Վալտեր Բենյամինի ավանդույթները: Թարգմանության մասին թերևս ոչ ոք չի կարողանա ավելի ճշգրիտ և պատկերավոր խոսել, ինչպես ինքը՝ Անտուան Բերմանը. «Խոսել թարգմանության մասին՝ նշանակում է խոսել կյանքի, ճակատագրի և ստեղծագործությունների բնույթի և ձևի մասին, որով նրանք արտացոլում են մեր կյանքը: Դա նշանակում է՝ խոսել հա-

դորդակցության, հաղորդման, ավանդույթների, Մեփականի և Օտարի մասին, դա նշանակում է՝ խոսել մայրենի լեզվի և ուրիշ լեզուների մասին, դա նշանակում է՝ խոսել դավաճանության և հավատարմության, գրվածքի և բանավոր խոսքի մասին, նմանակման, որոգայթների, հոգեբանական երկրորդայնության մասին, դա նշանակում է՝ խոսել իմաստի և բառի ապրելակերպի մասին, դա նշանակում է՝ ընկնել մտորումների արբեցնող փոթորկի մեջ, որտեղ ինքը թարգմանություն բառը անընդհատ փոխակերպվում է»<sup>5</sup>:

Թարգմանաբանության մեջ տեսությունը սկզբունքորեն հակադրվում էր գործնականին: «Վատ թարգմանությունը,– գրում է Վալտեր Բենիամինը,– ոչ էական բովանդակության ոչ ճշգրիտ փոխանցումն է»<sup>6</sup>: Այստեղ փորձ է արվում վերջ դնել, գոնե սկզբունքների տեսակետից, թարգմանությանը վերաբերող անընդհատ ավելացող գաղափարների անվերջությանը:

Թարգմանության պատմության մեջ ողջ աշխարհում չենք կարող գտնել հակադրման այդ սկզբունքը՝ մինչև 20-րդ դարի լեզվաբանությունը, որը կարողացավ տեսությունը բաժանել գործնականից՝ հավաստի դարձնելով տեսության ինքնավար գոյությունը: «Պետք է ասել, որ, նույնքան երկարախոս, որքան և անհավանական է հենց իրենց թարգմանիչների դիրքորոշումը. ամեն ինչ անել՝ բաժանելու ազատ մտորելու ժամանակը և թարգմանչի ծանր պարտականությունը»,– գրում է Վալտեր Բենիամինը իր նույնանուն «Թարգմանչի ծանր պարտականությունը» աշխատության մեջ<sup>7</sup>:

Այսօր՝ միջազգային համագործակցության ընդլայնման արդի պայմաններում, առավել հրատապ է դառնում միջմշակութային հաղորդակցման արդյունավետության բարձրացման խնդիրը: Մշակութային կապերը երբևէ իրականություն չէին դառնա, եթե չլինեին ժողովուրդների հաղորդակցման արդյունավետության բարձրացման խնդիրը, ազգային գրականությունների, արվեստի տարբեր ճյուղերի առկա շփումներն ու փոխշահավետ համագործակցությունը, մշակութային արժեքների փոխանակումները:

Թարգմանական հաղորդակցման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից: Պատմամշակութային բնույթի գիտե-

<sup>5</sup> Sté u Berman, Antoine, La traduction et la letter ou l'auberge du lointain, Seuil, 1999, p. 145.

<sup>6</sup> Sté u Benjamin, Walter, Œuvres I, Gallimard, 2000, p. 256.

<sup>7</sup> Sté u նույն աշխ., էջ 198.

լիքների բացակայությունը կարող է ուղղակիորեն հանգեցնել տեքստի թյուրըմբռնման, և այդ պարագայում արտալեզվական համատեքստն անմիջականորեն ընդգրկվում է հենց լեզվաբանության ոլորտի մեջ:

Հոգեվերլուծությունը նույնպես խոր առնչություններ ունի թարգմանության հետ այնքանով, որքանով այն ուսումնասիրում է մարդու հարաբերությունը խոսակցական լեզվի, այլ լեզուների, մայրենի լեզվի հետ՝ խորապես տարբերվելով թարգմանական լեզվից: Էթնոլոգիան ևս անդրադառնում է լեզուների, մշակույթների և թարգմանության գերխնդրին: Ինչ վերաբերում է լեզվաբանությանը, այն թարգմանությունն ընդունում է իբրև իրականություն, որը բնորոշ է իրեն: «Ոչ մի լեզվաբան չի կարող գիտականորեն մեկնաբանել լեզվական որևէ իրողություն առանց թարգմանության»,– գրում է Անտուան Բերմանը<sup>8</sup>:

Թարգմանաբանության արդի ամենաերևելի տեսաբաններից շատերը թարգմանիչներ են, իսկ նրանց ուսմունքները, ինչպես օրինակ՝ Անտուան Բերմանի, Յուջին Նայդայի, Անրի Մեշոնիկի, Ումբերտո Էկոյի, Դանիելա Մելեշկովիչի և շատ ուրիշների ուսմունքները, հիմնված են իրենց առանձնահատուկ գործունեության և անձնական փորձի վրա: Եթե Անրի Մեշոնիկի առաջարկած թարգմանության պոետիկան կապված է ընդհանրապես տեքստաբանության ուսումնասիրությունների հետ, ապա Նայդայի թարգմանության տեսությունն ավելի շուտ ներառում է ժամանակակից թարգմանաբանների իրատեսական մոտեցումները: Դանիելա Մելեշկովիչի տեսությունը և՛ գրավոր, և՛ բանավոր թարգմանության վերաբերյալ, ամբողջովին հիմնված է իր թարգմանական բազմամյա փորձի վրա:

Արդեն դասական համարվող լեզվաբան Ժորժ Մունենը թարգմանությունը դիտարկում է իբրև միջմշակութային հաղորդակցության միջոց: Ըստ լեզվաբանի՝ երկու լեզուները կարող են շփման մեջ լինել, եթե դրանք հաջորդաբար օգտագործվել են միևնույն անձանց կողմից: Իսկ երկու լեզուների հաջորդաբար օգտագործման փաստը նույն անհատի կողմից ոչ այլ ինչ է, քան *երկլեզվություն* (bilinguisme)<sup>9</sup>: Եթե երկու լեզուները շփման մեջ են, այսինքն՝ կիրառվում են նույն անհատի գործունեության մեջ, ապա, ընդհանուր առ-

<sup>8</sup> Sté u Berman, Antoine, La traduction et la letter ou l'auberge du lointain, Seuil, 1999, p.17.

<sup>9</sup> Sté u Mounin, Georges, Les problèmes theoriques de la traduction, Gallimard, 1963, p.109.

մամբ, կարելի է այդ անհատի խոսքում նկատել երկու լեզուների նորմերից էլ շեղվելու օրինակներ: Այդ շեղումները երկու լեզուների փոխներթափանցումն է: Օրինակ՝ որպես աղբյուր կամ մեկնարկային լեզու վերցնենք ֆրանսերենը. *un simple soldat*: Հայերենում այս միտքն արտահայտվում է *շարքային զինվոր՝ հասարակ զինվորի* բառացի թարգմանության՝ գոյություն ունեցող համարժեքի փոխարեն: Այս տեսանկյունից կարելի է պնդել, որ լեզուների շփման վայրը, որտեղ իրագործվում են լեզուների փոխներթափանցումները, միշտ խոսողն է:

Շփման իրավիճակներում լեզուների գնումը փոխներթափանցման գործընթացում իրենից ներկայացնում է լեզվի կառուցվածքի ուսումնասիրման մի յուրօրինակ եղանակ: Այն անհրաժեշտ է՝ մասնավորապես ճշտելու համար, թե լեզուներում առկա հնչյունային, բառային, ձևաբանական և շարայուսական համակարգերն իրոք համակարգ են, այսինքն՝ իրենց բոլոր համահունչ մասերով արդյոք կազմում են մի կուռ միասնություն, որտեղ մեկ կետի վրա արված յուրաքանչյուր ձևափոխությունը, տվյալ դեպքում՝ փոխներթափանցումը, կարող է խախտել համակարգի ամբողջականությունը, կամ անհրաժեշտ է ճշտելու համար, թե այս կամ այն համակարգը, կամ այդ համակարգի մասերից մեկը, ինչպես, օրինակ, ձևաբանությունը կամ շարահյուսությունը անթափանցելի է թարգմանության ժամանակ՝ մեկ լեզվից մյուսին անցնելիս:

Երկլեզվությունը, եթե սահմանելու լինենք, թարգմանչի համար հիանալի տարածք է շփվելու համար, անգամ եթե իմաստը, երբ թարգմանիչը հաջորդաբար գործածում է երկու լեզուն, փոքր ինչ առանձնահատուկ է հնչում:

Անառարկելի է նաև աղբյուր լեզվի ազդեցությունը թիրախ լեզվի վրա, որը կարող է ի հայտ գալ առանձնահատուկ փոխներթափանցումներով, որոնք շատ հաճախ թարգմանական սխալներ են կամ թարգմանիչների միտումնավոր ընդգծված լեզվաբանական մոտեցումներ՝ հակում օտարաբանությունների, նորաբանությունների, փոխառությունների, պատճենումների, չթարգմանված մեջբերումների, տեքստում մի անգամ արդեն թարգմանված բառի կան չթարգմանված արտահայտությունների պահպանում և այլն:

Թարգմանությունը, լինելով լեզուների շփման անառարկելի վիճակ, նույն շփման միջոցով կարող է բնութագրվել իբրև ծայրահեղ դեպք: Վերջինս վիճակագրորեն հազվադեպ է պատահում, քանի որ

երկլեզվության սովորական դժվարություններին դիմակայելը չափազանց գիտակցված և հիանալի է կազմակերպված. սա այն դեպքն է, երբ երկլեզվյա անհատը գիտակցաբար պայքարում է թարգմանաբանական բոլոր նորմատիվ շեղումների դեմ:

Երկլեզվության ուսումնասիրությունը, ինչպես նշում է Մունենը, բացի լեզվաբանական իրողություն լինելուց, նաև յուրահատուկ միջոց է՝ ստուգելու կառուցվածքների գործառույթը: Օրինակ՝ այն փաստը, որ հայոց այբուբենի ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտոցը, մի շարք լեզուների էր տիրապետում, հնարավորություն տվեց, որ նա նշանագրեր ստեղծի և սքանչելի թարգմանություններ անի, որոնք անջնջելի հետք թողեցին հայերենի բառապաշարի վրա:

Այսօր միջմշակութային կապերի ընդլայնման և ընդհանուր լեզվաբանության աննախադեպ զարգացման հետևանքով թարգմանական խնդիրները դարձել են լեզվաբանների և գրականագետների քննարկման առարկան: Դա հիմք է տալիս մեր ժամանակները գնահատել որպես թարգմանության դարաշրջան:

21-րդ դարը՝ երրորդ հազարամյակի սկիզբը, նշանավորվեց նաև բանավոր թարգմանության զարգացմամբ: Ակնբախ է տարբերությունը գրավոր արտահայտված մտքերի թարգմանության և բանավոր թարգմանության միջև: Չնայած բանավոր թարգմանությունը կարող է համարվել թարգմանության ենթաբաժին՝ դիտարկվելով որպես թարգմանության ուսումնասիրության գործընթաց, գործնականում սրանք պահանջում են միանգամայն տարբեր ունակություններ:

Տարալեզու միջավայրում թարգմանության հաջողությունը պայմանավորված է ոչ միայն լեզուների իմացությամբ, այլև մշակութային գիտելիքներով: Այդ պատճառով այսօր մշակվում և գործում են նաև բանավոր թարգմանության գնահատման չափանիշներ:

Այսպիսով՝ թարգմանությունն այժմ դիտարկվում է ոչ թե որպես միջլեզվական, այլ միջմշակութային հաղորդակցության միջոց: Արտալեզվական գործոնների առկայության պատճառով թարգմանական խնդիրները ձեռք են բերում նոր կարևորություն: Գլոբալ հաղորդակցությունն իրենից ներկայացնում է տարբեր քաղաքակրթություններ, որոնք, սակայն, միասնական են և՛ իմաստով, և՛ հաղորդագրությամբ:

Գիտական նոր մոտեցումները հատուկ շեշտադրում են լեզվական անհատականությունը մշակութային համատեքստում, այսինքն՝ թարգմանությունը ընդունվում է որպես ոչ թե մի լեզվով ար-

տահայտված փոխակերպում մեկ այլ լեզվով տեքստի, այլ որպես համատեքստի փոխակերպում, որի մեջ մտնում են հաղորդակցման թե՛ լեզվական և թե՛ արտալեզվական չափանիշները: Թարգմանությունը դիտվում է որպես լեզվամշակութային հաղորդակցության գործընթաց, որի նպատակն է ապահովել տարբեր ազգամշակութային պատկանելություն ունեցող մասնակիցների փոխըմբռնումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Walter B.**, *O. Euvres I*, Gallimard, 2000.
2. **Antoine B.**, *La traduction et la lettre ou l'auberge du lointain*, Seuil, 1999.
3. **Georges M.**, *Les problèmes théoriques de la traduction*, Gallimard, 1963.
4. **Georges M.**, *La communication poétique*, Gallimard, 1969.
5. **Jean-René L.**, *Traduire: théorèmes pour la traduction*, Gallimard, 1994.

#### **ANNA HAKOBYAB – Translation as a Means of Intercultural Communication.**

The following article attempts to evaluate translation as a means of intercultural communication. Today, translation is considered not only as an interlinguistic, but also as an intercultural phenomenon. Thanks to the intralinguistic factors, translation problems turn to be of special importance. In the multilanguage world the success of the translation is determined by the translator's cultural knowledge, too. Global communication represents different civilizations, which are united both in meaning and in message.

**АННА АКОПЯН – Перевод как способ межкультурного общения.** Данная статья рассматривает перевод как способ межкультурного общения. Сегодня перевод является не только межлингвистическим, но и межкультурным явлением. Благодаря внеязыковым факторам, проблемы перевода приобретают особую важность. В многоязыковом мире успех перевода также зависит от культурных знаний переводчика. Глобальная коммуникация представляет разные цивилизации, которые едины в смысловом и в коммуникативном аспекте.



**ԲՆԱԳՐԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

*ԱՆՈՒՇ ԱՅՈՒՆՑ*

*Երևանի պետական համալսարան*

Չուգաղրական քննության մեթոդը ի հայտ եկավ 20-րդ դարում, երբ լեզուների համեմատական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ձեռք բերեց հաղորդակցության համար: Լ. Շչերբան այս մեթոդը համարում է բավականին ներունակ, քանզի համեմատական ուսումնասիրության շնորհիվ մայրենի լեզվի էության մեջ ներթափանցելը մեծ կարևորություն ունի:

Չուգաղրական ուսումնասիրության մեթոդը համեմատաբար նոր է կիրառվում գեղարվեստական երկի լեզվաոճական առանձնահատկությունները քննելիս և մեծապես հենվում է ոճաբանական հետազոտությունների ոլորտի ձեռքբերումների վրա: Լեզվաբանաստեղծական Չուգաղրության մեթոդը, որի օգնությամբ վերլուծաբանը կարողանում է ներթափանցել տվյալ երկի խորքային էության մեջ, հատկապես կարևորվում է գեղարվեստական երկի քննության հերմենևտիկ մոտեցման համատեքստում:

Ինչ վերաբերում է գեղարվեստական ստեղծագործության բնօրինակի և դրա թարգմանական տարբերակների Չուգաղրական քննությանը, նշենք, որ առավելապես դրա արդյունքում է, որ ի հայտ է գալիս տվյալ ստեղծագործության ոճական առանձնահատկությունների ամբողջականությունը, ինչը կարևոր է քերթողական արվեստի գործը լիակատար ընկալելու և մեկնաբանելու համար (Задорнова 1981, 1992, Кукурьян 1990):

Նմանատիպ ուսումնասիրության առաջին փորձերն արվել են 1970-ական թվականներին՝ շեքսպիրյան երեք մենախոսություններ գուգաղրելով գոյություն ունեցող բոլոր թարգմանությունների հետ (Задорнова 1976, Ахманова, Задорнова 1978): Այսպիսի մոտեցումը հնարավորություն էր տալիս բնագիրը այլ լեզվով առավել ճշգրտո-

րեն հաղորդելու և, իհարկե, առավել խորը ներթափանցելու ստեղծագործության մեջ: Փաստորեն այստեղ միևնույն երկի տարբեր թարգմանությունները հանդես են գալիս որպես բնագրի բանասիրական լայն համատեքստ՝ նպաստելով ստեղծագործության համակողմանի բացահայտմանը (Ахманова, Задорнова 1981):

Թարգմանության գուգադրումը բնագրի հետ հնարավոր է դարձնում վեր հանել դրա կարևորագույն ոճական առանձնահատկությունները: Չուգադրական քննության շնորհիվ ի հայտ են գալիս լեզվական միավորների ոճական և իմաստային կարևոր փոխներգործությունները, ինչի շնորհիվ բացահայտվում են հեղինակի ոճական մտածելակերպի առանձնահատկությունները: Բնօրինակի և թարգմանության գուգադրական քննության շնորհիվ բացահայտվում են այնպիսի ոճակագմիչ հնարներ, որոնք մեկ լեզվի շրջանակներում ուսումնասիրվելու դեպքում աննկատ կմնային: Որքան էլ աննշան թվան սույն միավորները, պետք է հիշել, որ գրողի ոճը կերտվում է նման նուրբ և փոքր լեզվական հնարների շնորհիվ: Հետևաբար գուգադրական քննության մեթոդը օժանդակում է գրողի անհատական ոճի առանձնահատկությունների լուսաբանմանը:

Գեղարվեստական երկի թարգմանությունը դիտվում է որպես լայն բանասիրական համատեքստի բաղկացուցիչ տարր, որի հիման վրա վեր են հանվում բնօրինակի որոշակի հատկանիշներ: Թարգմանությունն ասես մեկնաբանում է բնօրինակը, նպաստում դրա առավելագույն ընկալմանը: Ահա թե ինչու բնօրինակի և թարգմանության գուգադրման շնորհիվ բացահայտվում են բնօրինակի խորքային հատկանիշները:

Ոճաբանները սովորաբար քննության են առնում հեղինակի միտումը՝ հիմնվելով իրենց կենսավորածի և ներըմբռնման վրա: Նման սուբյեկտիվիզմը հավանաբար առաջացել է այն պատճառով, որ շատ ստեղծագործություններ հնարավոր չէ գուգադրել իրենց թարգմանության հետ և լուսաբանել դրանց ոճական առանձնահատկությունները, մինչդեռ վերլուծության գուգադրական մեթոդը հարցին հիմնաբար և արդյունավետ լուծում է առաջարկում, քանի որ *բնօրինակ – թարգմանություն – բնօրինակ* շարքում բնօրինակի թարգմանությունը հանդես է գալիս որպես գուգահետ ստեղծագործություն, որի հետ կարելի է համեմատել վերլուծության արդյունքը:

Վերը ասվածը առավել պատկերավոր դարձնելու համար անդրադառնանք հետևյալ օրինակին: Օրինակը վերցված է Լ. Դարբելի

«Ալեքսանդրյան քառյակ» ստեղծագործությունից, որը զուգադրվում է վերջինիս ֆրանսերեն թարգմանության հետ:

*He fell upon the central problem like a fury, thinking that this would be the one means of penetrating the affective armour of his beautiful tacit wife; the wife he had married and hung up in a cobwebbed corner of his life, by the wrists, like a marionette on strings!*

(p. 295)

*Il s'attaqua à ce problème comme une furie, pensant que c'était la seule arme capable de percer l'armure affective de son adorable et marmoréenne épouse; la femme qu'il avait épousée et liée par les poignets dans un coin de sa vie, parmi les toiles d'araignées de son esprit comme une marionnette au bout de ses fils.*

(p. 339)

Օրինակների զուգադրական քննությամբ պարզվում է հետևյալը. անգլերենում օգտագործված է *կյանքի սարդոստայնապատ անկյուն* (*a cobwebbed corner of his life*) մակդիրավոր կապակցությունը: Լեզվական մակարդակում բառն անգլերենում ունի բառարանային մեկ հիմնական իմաստ՝ *սարդոստայն*: Այլ է պատկերը ֆրանսերեն թարգմանության մեջ՝ *իր կյանքի մի անկյունում, իր ոգու սարդոստայնում* (*dans un coin de sa vie, parmi les toiles d'araignées de son esprit*): Ինչպես տեսնում ենք, ֆրանսերեն տարբերակում օգտագործված է նաև *esprit* (*ոգի*) բառը, որը Վ. Պոտոցկայայի ֆրանսերեն-ռուսերեն բառարանում ունի հետևյալ իմաստները.

1. ум, рассудок (*միտք, բանականություն*);
2. дух; сознание (*ոգի, գիտակցություն*);
3. настроение; характер (*տրամադրություն, բնավորություն*):

Սարդը ուժ, անսպասելիություն և սարսափ է խորհրդանշում, քանզի անդադրում սարդոստայն է հյուսում՝ իր գոհին ծուղակը գցելու համար: Լայն բանասիրական համատեքստից պարզ է դառնում, որ հերոսը՝ Նեսսիմը խոր զգացմունքներ է տածում կնոջ՝ Շուստինի հանդեպ: Սակայն նույնը չենք կարող ասել Շուստինի մասին, որը Նեսսիմի հետ է կապել իր կյանքը՝ նրա մեջ տեսնելով իր կորած ե-

րեխային գտնելու միակ հույսը: Այդ պատճառով Նեսսիմը կնոջը տիկնիկի նման պահում է իր մտքի, ոգու, էության սարդոստայնապատ անկյունում: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ֆրանսերենում *esprit* բառի առկայությունը, որի բառարանային երեք իմաստներն էլ միաժամանակ և հավասարապես առկա են մակդիրավոր կապակցության մեջ, պատկերավորություն է հաղորդում ասվածին և նպաստում բնօրինակի առավել խորքային ընկալմանը:

Այսպիսով՝ բնագրի և դրա թարգմանության լեզվական երևույթների զուգադրական քննությունը հնարավորություն է ընձեռում թափանցելու գեղարվեստական երկի պատկերավորությանն առնչվող այն նուրբ և անտեսանելի խորքերը, որոնք աննկատ են մնում մեկ լեզվի նյութի հիման վրա ուսումնասիրություն կատարելիս:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ахманова О.С., Задорнова В.Я.,** *О филологическом подходе к переводу классической поэзии // Проблемы общего и германского языкознания.* М., 1978.
2. **Ахманова О.С., Задорнова В.Я.,** *Теория и практика перевода в свете учения о функциональных стилях речи. // Лингвистические переводы.* М.: МГУ, 1981.
3. **Задорнова В.Я.,** *Филологические основы перевода поэтического произведения:* Автореф. дис. канд. филол. наук. – М., 1976.
4. **Задорнова В.Я.,** *Восприятие художественного произведения в единстве его содержания и формы // Основные направления в развитии научной работы на кафедре английского языка филологического факультета МГУ. /Под ред. О.С. Ахмановой, Н.Б. Гвишиани, В.Я. Задорновой/,* М.: МГУ, 1981.
5. **Задорнова В.Я.,** *Словесно-художественные произведения на разных языках как предмет лингво-поэтического исследования.* Автореф. докт. фил наук, М., 1992.
6. **Кукурян И.Л.,** *Английские переводы романа А. С. Пушкина “Евгений Онегин” как предмет лингвопоэтического анализа.* Дис. канд. филол. наук. М., 1990.

**АНУШ АЙУНЦ – Роль сопоставительного исследования оригинала с его переводом в процессе анализа художественного произведения.** Исследование определяет важность применения метода лингвопоэтического сопоставления произведения словесно-художественного творчества с переводом данного произведения в ходе раскрытия основной художественной идеи произведения и замысла автора.

**ANOUSH AYUNTS – The Role of the Confrontative Study of the Original and Its Translation in the Process of Analyzing a Work of Verbal Art.** The aim of the research is to establish the significance of applying the method of linguopoetic confrontation of the original and translated versions of a work of verbal art which contributes to the solution of the all important philological problem of understanding and interpreting a work of verbal creativity.

ԱՐԹՅՈՒՐ ՌԵՄԲՈՅԻ ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

*ՏԱԹԵՎԻԿ ԼԱԶԱՐՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Արթուր Ռեմբոն իր ստեղծագործական կյանքը սկսել է 1870-ին՝ ֆրանսիական պատմության համար տխուր մի ժամանակաշրջանում, որը լի էր շեղումներով, քաղաքացիական պատերազմով, նյութական և բարոյական նահանջով: Ա. Ռեմբոյի ստեղծագործությունները շրջադարձային ազդեցություն ունեցան դարաշրջանի բանաստեղծական մտքի, հատկապես գրական նոր լեզվաարտահայտչամիջոցների և տաղաչափական ձևերի զարգացման վրա՝ առաջ բերելով գրականագիտական նորանոր հետաքրքրություններ: Ա. Ռեմբոն գրական կարճ կյանք է ունեցել (1870-1873թթ.): Մինչդեռ՝ ելնելով գրականություն բերած նրա մոտեցումներից, գրականագետները նրա ստեղծագործությունը բաժանում են երեք շրջանի:

Առաջինը՝ կույր հանճարի շրջանն է, որը դրսևորվում է ճիշով և լարվածությամբ: Այս շրջանում նա գրում է ռիթմիկ և հանգավորված բանաստեղծություններ:

Երկրորդը՝ պայծառատեսի շրջանն է: Այս շրջանում նա փորձում է ընթերցողին հասցնել իր հիմնադրած նոր արվեստի «մեթոդը»: Այս շրջանում է, որ նա ստեղծում է իր գլուխգործոցներից մեկը՝ «Մի եղանակ դժոխքում» ժողովածուն, որտեղ կիրառում է իր հիմնադրած նոր արվեստի «մեթոդը»՝ բանաստեղծական արձակը:

Երրորդ շրջանը համարվում է նրա ստեղծագործության գագաթը: Նա ստեղծում է «Պայծառացումներ» ժողովածուն, որն ամբողջությամբ գրված էր իր ստեղծած ռճով՝ արձակ բանաստեղծությունների տեսքով:

Ռեմբոյի գրական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն սիմվոլիստական ռճով գրված բանաստեղծությունները: Բանաստեղծին այլևս չի հետաքրքրում իրական աշխարհը, նա միջոցներ է որոնում արտահայտելու այն, ինչը թաքնված է այդ աշխարհի ետևում: Նրա

բանաստեղծություններն ավելի երաժշտական են, ունեն անկանոն ռիթմ, ներքին հանգավորում: Ա. Ռեմբոն բաց է անում գունավոր մի աշխարհ, ստեղծում է «մշուշապատ պոեզիա», որով էլ նրա բանաստեղծությունների իմաստը մնում է անհայտ, իսկ ձևը հստակվում է՝ մոտենալով սիմվոլիզմին:

Այդ «մշուշապատ պոեզիա»-ն թարգմանչի համար իսկական մարտահրավեր է, քանի որ անկանոն ռիթմը դժվարեցնում է թարգմանության գործընթացը: Թարգմանիչն անընդհատ բառերի փնտրտուքի մեջ է, որպեսզի գտնի ֆրանսերենի նմանաձայնությունների համարժեքը, որոնք փոխարինում են հանգերին, հայերենում:

*Du désert de bitume furent droit en déroute avec les nappes de broumes échlonnées en bandes affreuses au ciel qui se recourbe, se recule et descend, formé de la plus sinistre fumée noire que puisse faire l'Océan en deuil, les casques, les roues, les barques, les croupes. – La bataille ! "Métropolitain"*

*Կուպրե անապատից, պարուրվելով մշուշե շղարշներով, որոնք ահավոր ելուստներով աստիճանավորված են կորացող, ընկրկող և իջնող երկնքում՝ կազմված ամենաչարագույժ սև ծխից, որ կարող է արձակել սգավոր օվկիանոսը, գլխակորույս փախչում են սաղավարտներ, անիվներ, նավեր ու գավակներ: Ճակատամարտ է: «Մետրոպոլիտեն»:*

Ա. Ռեմբոյին բնորոշ երկար և կարճ նախադասությունների համադրությունը դժվարացնում է թարգմանչի աշխատանքը: Այս օրինակում թարգմանական դժվարություններից է իմաստի ճիշտ փոխանցումը: Օրինակն ամբողջությամբ պատկերների հաջորդականություն է՝ լի փոխաբերություններով և համեմատություններով: Շատ բառերի ընտրության ժամանակ թարգմանիչը երկընտրանքի մեջ է ինչպես օրինակ «Ճակատամարտ է» թե «Պատերազմ է»: Դժվար է նաև փոխաբերությունների ճիշտ ընտրությունը, ինչպես օրինակ՝ **սգավոր օվկիանոս, կուպրե անապատ, կորացող, ընկրկող և իջնող երկինք:** Թարգմանիչն ամեն կերպ փորձել է հավաստարիմ մնալ ֆրանսիական մտածողությանը և ճշգրիտ փոխանցել է պատկերավորման միջոցները թարգմանվող լեզվում:

«Մի եղանակ դժոխքում» ժողովածուն Ռեմբոյի հրատարակած հեղինակային միակ գիրքն է (Բոյուսել, 1873), որը համարվում է հա-

մաշխարհային պոեզիայի գլուխգործոցները մեկը: Ժողովածուն իր մեջ ներառում է ութ արձակ բանաստեղծություն, (Գեշ արյուն, Գիշերը դժոխքում, Առավոտ, Հրաժեշտ, և այլն): Ամբողջ ժողովածուն, կարելի է ասել, բաղկացած է պատկերներից և համեմատություններից: Նա օգտագործում է աստվածաշնչյան, ավետարանական բառեր և բառակապակցություններ, որոնց կողքին դնում է հասարակ ժողովրդի բառապաշարը:

«Պայծառացումներ» (1872-1873 թթ.) արձակ բանաստեղծությունների շարքը Ռեմբոն ստեղծել է, այսպես ասած, իր ստեղծագործական «պայծառատեսության» շրջանում: Ծավալով փոքր այդ բանաստեղծությունները, որոնք առերևույթ թվում են նկարներ, խտացած են, ներկայացված են հավաք կերպով և լակոնիկ ոճով:

«Պայծառացումներ» շարքի բանաստեղծությունները զգացողություններ են, պատկերներ, հիշողության դրվագներ, երաժշտություն, մտքի և տրամաբանության ցրիվ եկած բեկորներ, որոնցով բանաստեղծը բացահայտում է «անհայտը, անտեսանելին»: Այն պոետական հայրուցինացիաների չընդհատվող, անդադար հոսք է: «Պայծառացումներ» բանաստեղծությունների շարքը, որտեղ բազմաթիվ են բանաստեղծական պատկերներն ու փոխաբերությունները, չունի կոնկրետ բովանդակություն: Սակայն ժողովածուն աչքի է ընկնում իր ոճային առանձնահատկությամբ, որն էլ հետագայում մեծ ներգործություն ունեցավ սիմվոլիստական պոեզիայի զարգացման վրա:

Թարգմանչի աշխատանքի դժվարություններից մեկն էլ այդ երաժշտության, հիշողության, պատկերների ճշգրիտ փոխանցումն է թարգմանվող լեզվում, այս դեպքում հայերենում, ինչն ավելի դժվար է, քանի որ հայերեն բառերն ավելի երկար են քան ֆրանսերեն բառերը և սխալ բառ ընտրելու դեպքում կխախտվի արձակ բանաստեղծություններին բնորոշ ներքին ուժերը:

*“A vendre l’anarchie pour les masses ; la satisfaction irrépressible pour les amateurs supérieurs; la mort atroce pour les fidèles et les amants !*

*A vendre les habitations et les migrations, sports, fêtes et comforts parfaits, et le bruit, le mouvement et l’avenir qu’ils font! ” « Solde»*

*Վաճառվում է անարխիան զանգվածներին, անշիջանելի հագուրդը ամենամեծ գիտակներին, դաժան մահը հավատացյալներին և սիրահարներին:*



*Վաճառվում են բնակավայրերն ու արտագաղթը, սպորտը, դյու-  
թախադն ու կատարյալ հարմարավետությունը, և աղմուկը, և շար-  
ժումը, և նրանց կերտած ապագան: «Ձեռչավաճառք»:*

Ռուս գրականագետ Լ. Գ. Անդրեևի կարծիքով՝ «Ռեմբոյի պոե-  
զիան առանձնանում է հարուստ բառապաշարով, որը ներառում է  
կյանքի ամենատարբեր ոլորտները, առանձնանում է կտրուկ հա-  
կադրություններով, թռիչքաձև ռիթմով» Այդ ամենը ստեղծում է նրա  
բանաստեղծության բազմահնչունությունն ու բազմաձայնությունը:

«Ես փորձել եմ հայտնագործել նոր գույներ, նոր աստղեր, նոր  
լեզու», – ասում է Ռեմբոն:

*O Douceurs, o monde, o musique ! Et là, les formes, les sueurs, les  
chevelures et les yeux, flottants. Et les larmes blanches, bouillantes, – o  
douceurs! – et la voix féminine arrivée au fond des volcans et des grottes  
arctiques. “Barbare”.*

*Օ, Քնքշանքներ, օ, աշխարհ, օ, երաժշտություն: Իսկ այստեղ՝  
ծածանվող ձևեր, քրտինք, վարսեր և աչքեր: Ու ճերմակ, թրթռացող  
արտասուքներ, օ, քնքշանքներ-և հրաբուխների ընդերքից ու արկտի-  
կական անձավներից հասնող կանացի ձայնը: «Բարբարոս»*

Այսպիսով, «Պայծառացումներ» ժողովածուն իր նորարարությո-  
յամբ համաշխարհային գրականության մեջ դառնում է արձակ բա-  
նաստեղծության առաջին օրինակներից մեկը՝ ստեղծելով բանաս-  
տեղծական հարուստ ու ճկուն լեզու:

Հայտնի է, որ գեղարվեստական թարգմանության ժամանակ  
թարգմանչի հիմնական խնդիրը հեղինակի ոճին հարազատ մնալն է:  
Այդ ընթացքում թարգմանիչը թույլ է տալիս որոշ արդարացված ա-  
զատություն: Հաճախ նա ստիպված է կրճատումներ և հավելումներ  
կատարել, որպեսզի հավատարիմ մնա բնագրին: Արձակ բանաս-  
տեղծություններ թարգմանելիս թարգմանիչը նմանատիպ խնդիրնե-  
րի հետ հիմնականում չի բախվում, քանի որ ազատ է հանգավորման  
մեջ, բայց պետք է պահպանի ներքին ռիթմը, որն ավելի դժվար է փո-  
խանցել, քան բառարանի օգնությամբ որևէ բառ թարգմանելն ու  
հանգավորելը:

Արթուր Ռեմբոյի արձակ բանաստեղծությունները թարգմանելիս թարգմանիչը չի կարող խուսափել տողատակային բացատրություններից, քանի որ Ռեմբոն շատ է օգտագործում գեղջուկների կողմից օգտագործվող բառեր, աստվածաշնչյան տերմիններ և այլն: Օրինակ՝

«**Քաւ**» – սևամորթների նախահայրն ըստ Աստվածաշնչի:

«**Տերդինան**» – սատանայի անվանումը արդենյան գյուղացիների շրջանում:

«**Ալեգաններ**» – ԱՄՆ-ի արևելյան մասում ընկած լեռնային գանգված:

«**Սողոս**» – աստվածաշնչյան քաղաք, որը պատժվել է բնակիչների անառակ բարքերի պատճառով:

«**Սոլիս**» – ֆրանսիական ժողովրդական որոշ խոսվածքներում այդպես են անվանում Երուսաղեմը:

«**Մայանդրոս**» – ուղղանկյուն լաբիրինթոս, որոնցով առանձնաձևում էին ֆրանսիական XVII- XVIII դդ. ծառուղիները:

«**Օսսիան**» – կելտական ժողովրդական էպոսի նշանավոր հերոս, որն ըստ ավանդության ապրում էր Իռլանդիայի հարավում:

«**Սամարիա**» – հիշատակվում է Աստվածաշնչում, պաղեստինյան հնագույն քաղաք:

«**Գուարանիական**» – վերաբերվում է Հարավային Ամերիկայի հնդկացիներին:

«**Բաու**» – գարշահոտ խոտ, որը հանդիպում է Յավայում:

Թարգմանչի գործն ավելի է դժվարանում վերնագրերի թարգմանության ժամանակ, քանի որ Ա. Ռեմբոն, գրելով միայն ֆրանսերեն, երբեմն անգլերեն բառեր է գործածել վերնագրերում: Թարգմանիչն այս դեպքում կանգնում է երկընտրանքի առաջ. թարգմանն է թե՛ ոչ: Հայերեն թարգմանություններում թարգմանիչը (Աննա Հակոբյան) պահպանել է անգլերենը՝ հավատարիմ մնալով հեղինակին: Օրինակ՝

«**Being Beauteous**» – հայերեն նշանակում է «գեղեցիկ էակ»:

«**Fairy**» – հայերեն նշանակում է «հեքիաթային», «կախարդական»:

«**Bottom**» – հայերեն նշանակում է «Հիմք»:

Ռեմբոն օգտագործել է նաև իտալերեն բառեր, օրինակ՝ **PATER** և **AVE MARIA** (Հայր մեր, Ողջույն քեզ, Մարիամ), որոնք նույնպես թարգմանիչը պահպանել է:

«**Քաղաքներ**» բանաստեղծության մեջ կա դժվարընթեռնելի բառ, որը ֆրանսերենում «\*»-ով է դրված: Հայերենում պահպանվել է ձևը և տողատակում բացատրություն է տրված: Ռեմբոյագետները, և հատկապես Իվ Դրենին կարծում է, որ դա **brahmanes-քրահմաններ** բառն է:

Ռեմբոն հայերեն թարգմանվել է մեկ անգամ, որը լույս է տեսել «Ապոլոն» հրատարակչության կողմից 1991թ-ին: Ներկայումս երիտասարդ թարգմանիչները փորձ են կատարում թարգմանել Ռեմբոյի չափածո բանաստեղծությունները, բայց արձակը՝ դեռ ոչ:

Շատ երկար կարելի է խոսել Արթյուր Ռեմբոյի արձակ բանաստեղծությունների մասին, բայց պետք է կարդալ և գնահատել նրա ներդրումը համաշխարհային գրականության և մշակույթի մեջ, ինչը անվերապահորեն նկատելի է նաև այսօր: Ռեմբոն մինչ օրս ունի բազմաթիվ հետևորդներ, որոնք օգտվել և օգտվում են նրա լեզվական բառապաշարի և ոճական ձևերի հարստությունից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Arthur Rimbaud**, *Poésies. Une saison en enfer. Illuminations*, Edition Gallimard, 1999
2. **Julien Roumette**, *Les poemes en prose*, Ellipses, Paris, 2001.
3. **Henry de Bouillane de Lacoste**, *Rimbaud et le probleme des "Illuminations"*, Mercure de France, Paris 1949.
4. **Gérard Macé** “*Ex-Libris*” - Gallimard, 1980.
5. **Л. Г. Андреев**, и др. *История французской литературы*, 1987.
6. **Արթյուր Ռեմբո**, *Բանաստեղծություններ*, Ապոլոն հր, Երևան, 1991 թ.:
7. **Աննա Հակոբյան**, *Թարգմանության տեսության հիմունքներ*, Ա և Մ հր., Երևան, 2006թ.:
8. **Նվարդ Վարդանյան**, *Թարգմանչական արվեստ, տեսական և գործնական ուսումնասիրություններ*, Երևան, 2011թ.:

## Բառարաններ

1. Le Petit Robert de la langue française
2. <http://www.larousse.fr/encyclopedie>
3. <http://fr.wikipedia.org>

**ТАТЕВИК НАДЖАРЯН – Стихи в прозе Артюра Рембо и их проблемы перевода на армянском.** В статье изучены проблемы перевода стихов в прозе Артюра Рембо. Особый интерес представляют стилистические и словообразующие проблемы во время перевода. В стилистической окраске заключено многое (метафор, исторический колорит, повторение и т.д.), это изучено переводчиком в переводе на армянский язык. В качестве образцов стихов в прозе взяты переводы Артюра Рембо.

**TATEVIK NAJARYAN – Arthur Rimbaud’s prose poetry and the problems of translating them into Armenian.** The problems of translating Arthur Rimbaud’s prose poetry are examined in the article. Stylistic and word formative problems are of great importance in the translation. From the stylistic point of view much is observed: metaphor, historical colouring, repetition, etc. The translator studied them in the Armenian translation. All the examples are taken from Arthur Rimbaud’s prose poetry in translation.

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ  
ԸՆԿԱԼՄԱՆ ՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ**

*ԱՐՄԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

*ՄԵԼԻՆԵ ՂՈՆՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Գեղարվեստական ստեղծագործության ընկալման դժվարությունները մասամբ պայմանավորված են գեղարվեստական գրականության բարդ ու բազմակողմանի բնույթով: Թերևս այդ է պատճառը, որ գեղարվեստական գրականության ընկալման և ճիշտ արժևորման հարցը բոլոր ժամանակներում հանդիսացել է բանասիրության առանցքային խնդիրներից մեկը՝ հուզելով միաժամանակ, թե՛ լեզվաբաններին, և թե՛ գրականագետներին:

Գեղարվեստական ստեղծագործության կարևորագույն տարրերից է գրական կերպարը: Հայտնի է, որ գրական ցանկացած կերպար կերտելիս հեղինակը դիմում է զանազան միջոցների: Հաստատված է, որ լեզվական տարրերի մանրակրկիտ հետազոտությունը կարող է զգալիորեն հեշտացնել գրական կերպարի ընկալումը: Սակայն ուսումնասիրությունների ճնշող մեծամասնությունն այս բնագավառում սահմանափակվում են գրական կերպարի խոսքի լեզվաոճական վերլուծությամբ, մինչդեռ գրական երկը արվեստի ստեղծագործությունն ընկալելու համար՝ խիստ կարևոր է բացահայտել գեղագիտական էությունը: Ահա այս դեպքում էլ հենց դիմում ենք լեզվաբանաստեղծական մեթոդին, որն օգնում է գտնելու կոնկրետ լեզվական փաստերի և ստեղծագործության կառուցվածքային գեղարվեստական հյուսվածքի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լեզվաբանաստեղծական վերլուծությունը նպատակաուղղված է պարզելու, թե ինչպես բառի, բառակապակցության, քերականական կառուցվածքի, ռիթմի ու հնչերանգի յուրօրինակ գործածությունը տեքստում հանգեցնում է գեղագիտական ազդեցության: Հետևաբար գրական կերպարի լեզվաբանաստեղծական վերլուծությունը ընդգրկում է տարբեր մակարդակներ՝ թեմատիկ բովանդակություն, բառեր, բառակապակցություններ և իդիոմատիկ դարձվածքներ:

Այս ուսումնասիրության մեջ փորձ է արվում վերը ներկայացված դիրքերից վերլուծել Մոմերսեթ Մոեմի «Միսիս Քրեդոք» վեպի երկու հերոսների՝ Բերտայի և Էդուարդի կերպարները:

Հայտնի է, որ այս վեպը համարվում է Ս. Մոեմի լավագույն ստեղծագործություններից: Վեպի գործողությունները զարգանում են 1890-1900թթ.-ին՝ Լոնդոնում, Փարիզում և Քենթի շրջանում: Գործող անձինք վեպում թվով շատ չեն: Բերտան՝ քմահաճ մի ժառանգորդուհի, դեռ փոքր հասակում կորցրել է ծնողներին և այժմ ապրում է իր տատիկի՝ տիկին Լեյի հետ: Վերջինս ծագումով ազնվական է և իր հսկայական կարողությունը կտակել է իր սիրելի թոռնիկին՝ Բերտային: Դրսևորելով իր խավին բնորոշ «իմաստություն» ու «հեռատեսություն»՝ տիկին Լեյը հոգու խորքում փայփայում է Բերտային մեծահարուստ արիստոկրատի հետ ամուսնացնելու երազանքը: Այդ է պատճառը, որ նա չափազանց դժգոհ է Բերտայի և Էդուարդի միանգամայն անսպասելի ամուսնությունից: Այդ տրամադրությունը կիսում են բոլորը, քանի որ Էդուարդը հասարակ ազարակատեր է: Մակայն, երբ տիկին Լեյը ավելի մոտիկից է ծանոթանում Էդուարդի հետ, հասկանում է, որ վերջինս օժտված է մարդկային լավագույն արժանիքներով և այնքան նվիրված է Բերտային, որ պատրաստ է կատարելու նրա բոլոր քմահաճ թելադրանքները: Վեպում ակնհայտ են հակադրությունները, որոնք դրսևորվում են հերոսների խոսքում:

Բուն նյութի ուսումնասիրությունն սկսելուց առաջ, անհրաժեշտ է ուշադրությունը բևեռել հերոսների ներկայացրած հասարակության սոցիալ-պատմական կողմին, այսինքն այն բանի պարզաբանմանը, թե ի՞նչ չափով, որտեղ և ինչպես է տեքստում նշմարվում նրանց սոցիալական պատկանելիությունը, կրթությունը, տարիքը, ինչպես նաև բարոյական, էթիկական և էսթետիկական հայացքները: Բերտան, տատիկը և նրանց ազգականները ապրում են իրենց դասակարգին հատուկ պատկերացումներով և համոզմունքներով: Այս խավի ներկայացուցիչների մոտ մարդկային հարաբերություններն աղավաղված են, նրանց էության մեջ խորն են շողոքորթության, քծնանքի արմատները, և նրանք տառապում են ձևամոլության «կանոնները» պահպանելու ախտով: Նրանք առանձնապես «բժախնդիր» են ամուսնության հարցում: Նրանց համար հարուստ կալվածքն ու ազնվականի տիտղոսը գերադասելի են ազնվությունից և շիտակությունից: Ու թեև թվում է, թե Բերտան, իր անսահման սերը Էդուարդին նվիրելով, առանձնանում է այս տոնի վրա, այնուամենայնիվ, ինչ-

պէս հետո պարզվում է, նա զերծ չէ իր նախկին արատներից: Երջանկության մասին նրա պատկերացումները կտրված են իրական կյանքից, սահմանափակվելով միմիայն սիրո բնագավառով: Նա ընդունակ էլ չէ հասկանալու, որ իսկական երջանկությունը երկու կողմերի երջանկությունն է, որը ձեռք է բերվում փոխադարձ զիջումներով և նվիրվածությամբ:

Էդուարդին ուղղված իր խոսքում Բերտան ասում է. “I want to be placed above your God and honour. The love I want is the love of the man who will lose everything, even his own soul”:

Ի տարբերություն Բերտայի՝ կյանքի նկատմամբ Էդուարդի մոտեցումն ավելի բազմակողմանի է և իրական: Երիտասարդ գույզը չի կարող համատեղ կյանք վարել, որովհետև նրանք բացարձակապէս տարբեր են, թե սոցիալական ծագմամբ, թե իրենց աշխարհընկալմամբ: Օրինակ, սիրո մասին Էդուարդի դատողությունները ներկայացվում են հետևյալ հաստատմամբ: ‘My idea of love is that it’s a very good thing its place, but there’s a limit to everything. There are other things in life’. (p. 148)

Էդուարդն իր կայուն սկզբունքներն ունի ոչ միայն կյանքի, կենցաղի և անձնական փոխհարաբերությունների, այլև արվեստի, ընթերցանության, երաժշտության գնահատման հարցում: Այդ են վկայում, օրինակ հետևյալ հաստատմանը. “Bertha’s a perfect terror. She wants me to spend my whole life in kissing her. Don’t you think it’s unreasonable Aunt Polly? My motto is: everything in the place and season”. (p.10)

“I don’t pretend to have any book-learning. I’m a practical man. In my business you find that the man who read books comes a mucker. It’s better to have a good and pure heart, Bertha, and a clean mind than any amount of learning”.

Կերպարի լեզվաբանաստեղծական վերլուծության մեջ հաջորդ քայլը բառապաշարի հետազոտությունն է, քանի որ սկզբունքորեն կարևոր է պարզաբանել ոչ միայն այն, թե ինչ են խոսում հերոսները, այլև այն, թե ինչպէս են նրանք խոսում:

Սկզբից նեթ վեպում ուշադրություն է գրավում կոնկրետ և վերացական գոյականներով հագեցած տարբեր հաստատմաների հակադրությունը: Կոնկրետ գոյականների գերակշռությունը Էդուարդի ամենօրյա խոսքում, մեկ անգամ ևս հաստատում է, որ նրա մտքերն ու դատողությունները սկսվում են իրական կյանքի ակունքներից, որ

նա գործունյա մարդ է և ապրում է իր ամենօրյա աշխատանքային ռիթմով: Նրա կարծիքով աշխատանքն ու երջանկությունը անհամատեղելի չեն, քրտնաջան աշխատանքով է, որ ստեղծվում են երջանկության նախադրյալները: Օրինակ՝ “Now, I’ve planted rose-trees outside the drawing-room window”. Էդուարդի խոսքը հիմնականում զերծ է ոճական երանգավորումից, քանի որ վերամբարձ ոճը հեռու է նրա հոգեբանությունից: Առանձին դեպքերում հանդիպող երանգավորված բառերը *chap, hubby, fellow* և այլն, պատկանում են բառապաշարի խոսակցական շերտին և բառարանում հանդես են գալիս *colloqu*. նշագրումով: Էդուարդը չի ձգտում ավելորդություններին: Նա չի սիրում ի ցույց դնել իր զգացմունքները, թեև նվիրական սիրով սիրում է Բերտային:

Ի տարբերություն Էդուարդի, Բերտան համակ զգացմունք է, հեռու կյանքի առօրյա շոշափելի խնդիրներից: Նրա ուսերին երբեք չի ծանրացել հոգսերի բեռը: Անհոգ ու ազատ կյանք վարելով, նա անձնատուր է եղել ռոմանտիկային: Թերևս դրանով կարելի է բացատրել վերացական գոյականների առատությունը նրա խոսքում: Միրո մասին Բերտայի խորհրդածություններում հանդիպում են այնպիսի վերացական գոյականներ, ինչպիսիք են *duty, honour, prig, God, Love, soul, opinion, brougham, crime*.

Մեծ թվով ածականներ, որոնք օժտված են ներունակ դրական զգացմունքային արժեքավորող երանգներով, վեպի համատեքստում կերպարանափոխվել են՝ ձեռք բերելով բացասական գունավորում: Մա ամենայն հավանականությամբ պետք է կապել Բերտայի կերպարի, իր շրջապատն ընկալելու և գնահատելու նրա քմահաճ վարքագծի հետ: Բերտան հաճախ է ունենում նյարդային ջղաձիգ պահեր կամ իր դժգոհությունն է արտահայտում տարբեր առիթներով: Եվ հենց այդպիսի պահերին է, որ նրա խոսքում գերակշռող են դառնում բացասական երանգները:

Այսպես. “You have put me in a good mess, cried Bertha”.

Եվս մեկ օրինակ. “You played a wonderful trick, said Bertha ironically”.

Հարկ է նշել, որ Բերտայի խոսքում բառակապակցությունների զգալի մասը նույնպես օժտված են հուզական երանգներով: Այսպես՝ *a charming smile, naked branches, sickening expectation, thrill of pleasure, willing heart, shining eyes, delicate rain, painful thoughts, artificial paradise, tumultuous passion, etc.*



Էդուարդի խոսքում, ընդհակառակը, բավականին մեծ տեղ են գրավում ոճական առումով չեզոք բառակապակցությունները, որոնք հաղորդման գործառույթ են կատարում:

Այսպես օրինակ՝ to give up smoking, to have a farm, to buy the villa, to speak about smb's affairs, a young lady, an old woman, a great deal of work, etc.

Բառակապակցությունների մանրագնին քննությունը մյուս կողմից բացահայտում է Էդուարդի խոսքում տեղ գտած զգալի թվով կադապարային կապակցություններ, որոնք հիմնականում բացասական են և մեծ մասամբ կապված են նրա գործի հետ:

Օրինակ՝ to do one's duty, to make a business, to give a chance to do smth, to make money, to be dreadfully tired, etc.

Ինչպես արդեն նշվել է, Բերտան չափազանց ռոմանտիկ է, անգործնական, կտրված իրական կյանքի հողեղեն հիմքից: Թերևս այս է պատճառը, որ նրա խոսքում կարելի է գտնել հասկացական հիմքից կտրված այնպիսի կապակցություններ, ինչպիսիք են silver speech, malicious pleasure, etc.

Բերտայի և Էդուարդի խոսքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում իդիոմների օգտագործման տեսակետից: Հայտնի է, որ շատ գործածական և վաղուց արդեն գրական անգլերեն մուտք գործած կայուն դարձվածքները, որոնք երկարատև գործածությունից «մաշվել» ու «խամրել» են, վերարտադրվելիս սովորաբար ենթարկվում են որոշակի ձևափոխությունների՝ նպատակադրված լինելով կենդանացնել պատկերը, թարմություն հաղորդել խոսքին: Սակայն, ինչպես ցույց է տալիս ուսունասիրությունը, վեպի տեքստում օգտագործված դարձվածքները դեֆորմացված չեն: Դրանք արտահայտված են իրենց ընդունված բառարանային ձևով, մի երևույթ, որի լիակատար պատասխանը, մեր կարծիքով, կարող է տալ միայն այս խնդրի տարածմանակյա ուսումնասիրությունը: Եվ, այնուամենայնիվ, արդեն առաջին դիտարկումները թույլ են տալիս ասելու, որ այս երևույթը հավանաբար, կարելի է բացատրել տվյալ ժամանակաշրջանի բնորոշ անգլերենի առանձնահատկություններով:

Ի տարբերություն Բերտայի, որի համար առավել բնութագրական է պերճախոսությունը, Էդուարդի խոսքը հարուստ է դարձվածքներով, դարձվածաբանական համեմատություններով և ասացվածքներով, որոնք ըստ էության արտացոլում են կենցաղում և աշխատանքում Էդուարդի կատարած դիտարկումները: Այսպես օրինակ՝

it's raining cats and dogs, as quiet as a lamb, as regular as possible, all's well that ends well, I'm dead beat, etc.

Հայտնի է, որ գրական կերպարի խոսքը, նրա անհատական առանձնահատկությունները, և կոնկրետ իրադրության մեջ նրա վարքագիծը ճիշտ հասկանալու և գնահատելու համար, ըստ երևույթին նախ և առաջ, անհրաժեշտ է դիմել հեղինակային այն մեկնաբանություններին, որոնք ուղեկցելով գործող անձի խոսքը, ոչ միայն արտահայտում են հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ, այլև հաճախ լրացուցիչ տեղեկություն են տալիս գործող անձի հոգեվիճակի, վարքագծի, ինչպես նաև խոսելաձևի մասին, որը և ուղղակի արտացոլումն է գտնում նրա խոսքի հնչերանգում: Հատկապես որոշիչ է հեղինակի մեկնաբանություններում տեղ գտած բայերի և բայական կապակցությունների դերը:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, Էդուարդի և Բերտայի խոսքից առաջ կամ հետո հանդիպող մեկնաբանություններում խոսողության բայերը արմատապես տարբերվում են իրենց բնույթով:

Էդուարդի խոսքն ուղեկցող said Edward laughing, said cheerily, shouting with merriment, said smiling, said cheerfully, answered with a laugh բայական կապակցությունները վկայում են, որ նրա ձայնը հավասարակշռված է, երբեմն բնութագրվում է այնպիսի արտալեզվական հատկանիշներով, ինչպիսիք են ժպիտն ու ծիծաղը: Խոսքի տեմպը համաչափ է: Խոսքի հնչերանգը մեկ անգամ ևս հաստատում է, որ Էդուարդը ուրախ, զվարճասեր, կատակասեր մարդ է, պատրաստ գնալու տարբեր զիջումների ընտանիքում խաղաղ մթնոլորտ պահպանելու համար: Grumbled out, mutter, cried angrily, burst out furiously, said drily, cried between her teeth, answered bitterly, etc բառերը և բայական կապակցությունները գալիս են հաստատելու Բերտայի կերպարի հակասականությունը: Տարբեր իրադրություններում նրա խոսքը ձեռք է բերում տարբեր երանգներ: Ամենքի և ամեն ինչի նկատմամբ ունեցած դժգոհությունը, հաճախակի նյարդային ջղաճգությունները, նրա էությանը բնորոշ իշխելու ցանկությունը մի կողմից, և կյանքի ու սիրո մասին նրա ռոմանտիկ դատողությունները մյուս կողմից, իրենց ուղղակի արտացոլումն են գտնում Բերտայի խոսքի հնչերանգում (տեմպի ու ձայնի ուժգնության աճ, խոպոտացում, հնչյունների լարված արտաբերություն, կտրուկ դադարներ, որոնց հաջորդում են զայրույթի շեշտեր, դանդաղ տեմպ, ձայնի ուժգնության նվազում և շնչեղություն, իսկ երբեմն շշուկ):

Ամփոփելով մեր քննությունը՝ հարկ ենք համարում նշել, որ գեղարվեստական ստեղծագործության ընկալման ու մեկնաբանման գործընթացում չափազանց կարևոր է խոսքային դիմանկարի համակողմանի ուսումնասիրությունը, որն ըստ էության ենթադրում է գործող անձի խոսքում տեղ գտած տարբեր լեզվական միավորների մանրակրկիտ քննություն, մեծապես օգնում է գրական կերպարի գեղագիտական էության բացահայտմանը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Linguostylistics: Theory and Method* /Ed. By **Olga Akhmanova** /Moscow University Press, 1972
2. **Гаспарян С.К.**, *Лингвопоэтика образного сравнения*, изд. Лусакн, Ереван, 2008.
3. **Жунисбаева А.К.**, *Лингвопоэтическая характеристика образа литературного персонажа*, Автореферат дис. ... канд. филол.наук., Москва, 1988.
4. **Чижевская М.Н.**, *Язык, речь и речевая характеристика*. Москва, 1986.
5. **Будагов Р.А.**, *Человек и его язык*. – Москва, Изд-во Моск. Ун-та, 1976.
6. **Луконина Е.К.**, *Идиоматическая фразеология в языке и речи*: Автореф. дис., ... канд. филол. наук., Москва, 1986.

**АРМИНЕ МАТЕВОСЯՆ, МЕЛИՆԵ ԳՈՆՅԱՆ – К проблеме интерпритации художественного произведения.** В данной статье предпринимается попытка изучения произведения словесно – художественного творчества. Метод лингвопоэтического анализа в работе используется для исследования образов литературных персонажей из романа Сомерсет Моэма “Миссис Кредок”. Интерпритация и анализ показывает, что адекватное восприятие образа литературного персонажа в большой степени зависит от изучения его речевого портрета.

**ARMINE MATEVOSYAN, MELINE GHONYAN – On the Problem of Interpretation of a Work of Verbal Art.** The present paper concerns the problem of interpretation and evaluation of a piece of belles-lettres style. Hence, a linguopoetic method of analysis has been carried out to reveal those linguistic units( words, word-combinations, idiomatic expressions, etc) which help the reader to understand, interpret and perceive a piece of literary text in its aesthetic globality.

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ՝ «ԱՐՔԱ ԼԻՐԻ»  
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳԻՐ**

**ԷՄՄԱ ԹԵՄՐԱԶՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան,  
Իջևանի մասնաճյուղ*

2007 թ. ՀԳՄ հրատարակչությունը լույս ընծայեց Վ. Շեքսպիրի «Արքա Լիր» ողբերգության Հովհաննես Խան-Մասեհյանի թարգմանությունը՝ Եղիշե Չարենցի ստեղծագործական խմբագրությամբ: Տպագրության համար հիմք է հանդիսացել Եղիշե Չարենցի կատարած աշխատանքի ինքնագիրը, որը եղել է Ռուբեն Չարյանի մոտ, ով հետագայում այն հանձնել է ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Շեքսպիրագիտության կենտրոնի գրադարանին:

Պետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչի պաշտոնում աշխատելու ժամանակ Եղիշե Չարենցը, ի թիվս հայ և համաշխարհային գրականության բազմաթիվ ընտիր գործերի, ձեռնարկել է նաև Վ. Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգության տպագրությունը: Նա խմբագրել է Հ. Խան-Մասեհյանի թարգմանությունը՝ համեմատելով այն ռուսական և գերմանական տարբեր թարգմանությունների հետ: Սակայն չբավարարվելով ստեղծագործության խմբագրությամբ՝ Չարենցն ամբողջովին ավարտել է Մասեհյանի թարգմանության իր խմբագրությունը: Լիրը Չարենցի հոգու մեջ էր, հարազատ մի անձ էր դարձել և այնքան էր հուզել, որ Չարենցը որոշել է թարգմանել ողբերգությունը, չնայած այն բանին, որ անգլերեն չգիտեր:

Ռուբեն Չարյանի վկայությամբ Չարենցը սկսել է «Լիր արքա» ողբերգության թարգմանությունը, քանի որ գտել է, որ այն Շեքսպիրի ամենալավ, ամենախոր ու ամենաընդգրկուն ստեղծագործությունն է, որ ամբողջությամբ միտք ու փիլիսոփայություն է, որ միայն կարողավ կարելի է ըմբռնել գրվածքի ողջ խորությունը, իսկ խաղավ հնարավոր չէ:

Հետաքրքիր է, որ բանաստեղծը թեև չի պատկերացրել «Արքա Լիրը» բեմում, մտածելով, որ գործողությունն առաջին պլան կմղվի և կդառնա մի սովորական սրտառուչ պատմություն, այնուամենայնիվ ողբերգության իր խմբագրած օրինակը հանձնել է Արմեն Գուլակյանին՝ բեմադրելու համար: Չնայած «Արքա Լիրի» այդ տարբերակը

բեւ չի բարձրացել, բայց Ա. Գուլակյանի շնորհիվ պահպանվել են Չարենցի աշխատանքի մեքենագիր օրինակի պատճենները:

Հայտնի չէ, բանաստեղծն ավարտել է ողբերգության իր թարգմանությունը թե ոչ, սակայն Չարենցի կյանքի ողբերգական ընթացքի պատճառով նրա խմբագրական աշխատանքը չի տպագրվել և 1938 թ. Հ. Խան-Մասեհյանի թարգմանությամբ հրատարակվել է «Արքա Լիրը»՝ ոչ բանաստեղծի խմբագրությամբ:

Ներկա հրատարակությունը մեզ հնարավորություն է տվել ուսումնասիրել և համեմատել Չարենցի խմբագրած «Արքա Լիրը» և 1938թ. Հ. Խան-Մասեհյանի թարգմանությամբ, առանձին գրքով լույս տեսած «Արքա Լիրը», որի մեջ խմբագրի անունն ընդհանրապես նշված չէ: Պարզվել է, որ բանաստեղծը հիմնականում նույնն է թողել արձակ հատվածները, կատարելով այնտեղ միայն բառային որոշակի փոփոխություններ, մինչդեռ թարգմանության չափածո հատվածները խնամքով խմբագրվել են և ներկայացվել որպես բանաստեղծական ուրույն միավորներ:

Ինչպես նշում է Հենրիկ Բախչինյանը, Չարենցն, ըստ էության, նոր կյանք է տվել «Արքա Լիրի» Խան-Մասեհյանի թարգմանությանը՝ այն դարձնելով շատ ավելի հնչեղ ու բանաստեղծական, ներարկելով իր անհատական շունչն ու ոգին:

Չարմանալի է, որ անգլերեն չիմանալով և բնագրից օգտվել չկարողանալով, հայ մեծ բանաստեղծը կարողացել է զգալ համաշխարհային հանճարին և բանաստեղծական իր ողջ զինանոցն օգտագործել է՝ Մասեհյանի հայերեն թարգմանությունը Շեքսպիրին վայել ներկայացնելու համար:

Այն Մասեհյանի, ով «գտավ լեզվի այն գաղտնի հատկանիշները, որոնք սովորական, մաշված բառը հնչեցնում են անսովոր թարմությամբ, իմաստային հարստությամբ ու հեռագնացությամբ, տաղաչափական առնականությամբ»:<sup>10</sup>

Այն Մասեհյանի, ով «Շեքսպիրի երկերի հարուստ բառագանձի դիմաց նույնպիսի բառագանձ հրապարակ հանեց, այդ բառերի բազմազան, նուրբ ու հանդուգն նշանակությունների դրսևորման հնարները ստեղծեց»<sup>11</sup>:

<sup>10</sup> Վարազ Առաքելյան, Հ. Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստը, Շեքսպիրական, գիրք 1, Երևան, 1966, էջ 148

<sup>11</sup> Վարազ Առաքելյան, Հ. Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստը, Շեքսպիրական, գիրք 1, Երևան, 1966, էջ 148

Այն Մասեհյանի, ով «այս ամենը ստեղծեց հայերենի համար դեռևս մեզ անծանոթ ու անսովոր մի արվեստով, խտրություն չդնելով հայոց լեզվի բազմադարյան ճյուղավորումների ընձեռած հնարավորությունների ընտրության, մշակման և օգտագործման մեջ»<sup>12</sup>:

Մասեհյանն ինքն էլ անընդհատ վերանայել ու վերաթարգմանել է իր աշխատանքները: 20-րդ դարի սկզբին, չնայած Շեքսպիրն սկսել էր թարգմանել ընդամենը մեկ տասնամյակ առաջ՝ 1892 թվականից, և ամեն անգամ բոլորովին նոր ստեղծագործություններ է ներկայացրել ընթերցողի դատին: Դիվանագիտական բազմազբաղ աշխատանքը հնարավորություն չի տվել հանճարեղ թարգմանչին վերանայել իր կատարած բոլոր թարգմանությունները, այդ թվում նաև «Արքա Լիրը», իսկ 1931թ. նոյեմբերին հիվանդության պատճառով դիվանագիտական աշխատանքից հրաժարված «ազնվական հայրը»՝ Ն. Խան-Մասեհյանը, Թեհրան վերադառնալու ճանապարհին վախճանվում է:

Գրեթե չորս տասնամյակ առաջ թարգմանված «Արքա Լիրը» Չարենցը փորձել է նորովի ներկայացնել հայ ընթերցողին՝ ժամանակի ոգուն ու լեզվին համահունչ: Ստորև բերված օրինակները դրա վկայությունն են:

### **Մասեհյան՝**

Լիր – Թող ձեզ հայտնի լինի,  
Որ բաժանել ենք մեր պետությունը  
Երեք մասերի, և վճռել հաստատ՝  
Ցնցել ամեն հոգ և աշխատություն  
Մեր ծերությունից, և հանձնել դրանք  
Մեզնից ավելի կայտառ ուժերի,  
Այն ինչ ինքներս թեթևանալով՝  
Կը սողանք դեպ մահ: (էջ 13)

### **Չարենց՝**

Լիր – Թող հայտնի լինի,  
Որ բաժանել ենք մեր պետությունը  
Երեք մասերի և հաստատ վճռել  
Թոթափել ամեն հոգս ու տքնություն

---

<sup>12</sup> Ռուզան Մարգունի, Շեքսպիրի թարգմանության առանձնահատուկ դժվարությունները (Չ.Մասեհյանի թարգմանական փորձից), Շեքսպիրական, գիրք 6, Երևան, 1980, էջ 140

Մեր ծեր ուսերից և հանձնել դրանք  
Մեզանից կայտառ ուժերի, իսկ մենք  
Այդ մեծ հոգսերից թեթևանալով՝  
Կընթանանք դեպ մահ: (էջ 14)

Լիր արքայի խոսքի այս համեմատությունից երևում է, որ Մասեհյանը պահպանել է բնագրի **ցնցել (shake)** և **սողալ (crawl)** բայերը, իսկ Չարենցը դրանք փոխարինել է **թոթափել** և **ընթանալ** բայերով, որոնք ավելի համահունչ են **թեթևանալ** բային:

Բնագրի **from our age** արտահայտությունը Մասեհյանը թարգմանել է՝ **մեր ծերությունից**, իսկ Չարենցի խմբագրությամբ՝ **մեր ծեր ուսերից**, որտեղ պահպանված է վանկերի քանակը, սակայն ավելացված **ուսեր** բառը կարծես ավելի է շեշտում բեռը, որ ծեր մարդու համար դժվար է տանել:

#### Մասեհյան՝

Լիր – Բայց ասացեք ինձ, իմ աղջիկներս,  
(Քանի որ շուտով թոթափելու ենք  
Թե՛ իշխանություն, թե՛ երկրի շահեր  
Եվ թե՛ պետության հոգածություններ) (էջ 13)

#### Չարենց՝

Լիր – Ասացե՛ք, սակայն, դստե՛րք սիրասուն,  
(Քանզի մենք շուտով թոթափելու ենք  
Թե՛ իշխանություն, թե՛ հոգս պետական  
Եվ թե՛ պետության տքնություն աննինջ) (էջ 14)

Այս հատվածի մասեհյանական բառացի թարգմանության (**my daughters – իմ աղջիկներս**, և այլն) չարենցյան խմբագրումն ավելի ազատ է (**դստերք սիրասուն, պետության տքնություն աննինջ**) ու ավելի հնչեղ:

#### Մասեհյան՝

Գոներիլ – Ես Ձեզ սիրում եմ,  
Տե՛ր իմ, առավել քան բառերը  
Կարող են հայտնել, և Դուք ինձ համար  
Թանկ եք առավել, քան թե աչքի լույս,  
Օդ, ազատություն, քան ամենայն ինչ,  
Որ համարվում է ճոխ և հազվագյուտ. (էջ 14)

## Չարենց՝

Գոներիլ – Ես սիրում եմ Ձեզ,  
Տե՛ր իմ, առավել քան բառերը սին  
Կարող են հայտնել, և Դուք ինձ համար  
Թանկ եք առավել, քան լույսն աչքերի,  
Քան ազատություն, քան ամենայն ինչ,  
Որ համարվում է հազվագյուտ և ճոխ: (էջ 15)

Մասեհյանի բնագրային **աչքի լույս (eye-sight)** թարգմանության փոխարեն Չարենցը ներկայացրել է հոգնակի թիվ՝ **լույսն աչքերի**, ավելացրել է **սին** ածականը, իսկ **օդ** բառը փոխարինելով երրորդ անգամ կրկնվող **քան** բառով՝ եռակի անգամ հզորություն է հաղորդել Գոներիլի խոսքին:

Ինչպես այս հատվածում, այնպես էլ ամբողջ ողբերգության մեջ Չարենցը նպատակահարմար է գտել կատարել բառերի տեղափոխություն (**Ես Ձեզ սիրում եմ – Ես սիրում եմ Ձեզ, Որ համարվում է ճոխ և հազվագյուտ – Որ համարվում է հազվագյուտ և ճոխ**):

## Մասեհյան՝

Ռեգան – Ես հորինված եմ միևնույն նյութից,  
Որից իմ քույրը, և իմ արժեքը  
Գնահատում եմ նրա արժեքով: (էջ 14)

## Չարենց՝

Ռեգան – Ես ստեղծված եմ միևնույն նյութից,  
Ինչպես և քույրս, միևնույն ենք մենք. (էջ 15)

Բնագրային **I'm made of** արտահայտության մասեհյանական **Ես հորինված եմ** թարգմանության փոխարեն չարենցյան **Ես ստեղծված եմ** խմբագրումն է, իսկ **Prize me at her worth** նախադասության թարգմանությունը (**իմ արժեքը գնահատում եմ նրա արժեքով**) Չարենցը պարզապես խմբագրել է **միևնույն ենք մենք**, որ ավելի բնական է հնչում ու համոզիչ՝ **միևնույն** բառի կրկնակի օգտագործման շնորհիվ:

## Մասեհյան՝

Կորդելիա – Ի՜նչ դժբախտ եմ ես,  
Որ անկարող եմ բարձրացնել սիրտս  
Մինչև շրթունքս: Ես ձեզ սիրում եմ,  
Ինչպես իմ պարտքն է. ոչ ավել, ոչ պակաս (էջ 16)



### Չարենց՝

Կորդելիա – Որքա՞ն դժբախտ եմ,  
Որ չեմ կարենում բարձրացնել սիրտս  
Մինչև շրթերս: Ես ձեզ սիրում եմ,  
Ինչպես իմ պարտքն է պահանջում, արքա՛,  
Օ՛, ոչ ավելի և ոչ էլ պակաս: (էջ 16)

Մասեհյանի **շրթունքս (բնագրում՝ mouth)** եզակի թվի փոխարեն Չարենցը դարձյալ գործածում է հոգնակի՝ **շրթերս**, իսկ ավելացված **արքա՛** կոչականը և **Օ՛** բացականչությունը ավելի հուզական են դարձնում Կորդելիայի խոսքը:

### Մասեհյան՝

Լիր – Վկա՞, արևի սուրբ ճառագայթը,  
Հեկատի խորհուրդն ու մուլթ գիշերը,  
Ազդեցությունքը երկնագնդերի,  
Որոնցով ծնվում կամ մահանում ենք: (էջ 17)

### Չարենց՝

Լիր – Թող վկա լինի լույսը արևի,  
Հեկատի խորհուրդն ու գիշերը մուլթ,  
Մոլորակների պտույտը, որ մեզ  
Կյանք է պարգևում և տարածում մահ: (էջ 17)

Բնագրային **The mysteries of Hecate and the night** տողի մասեհյանական **Հեկատի խորհուրդն ու մուլթ գիշերը** թարգմանության մեջ Չարենցը դարձյալ բառերի տեղաշարժ է կատարել, իսկ վերջին երկու տողերում՝ բանաստեղծական խմբագրում:

### Մասեհյան՝

Լիր – Իմ երկու աղջկանց օժիտների հետ  
Մարսեցե՛ք նաև այս երրորդ մասը:  
Թող գոռոգությունը, որ նա կոչում է  
Պարզախոսություն, նրան կլին առնի: (էջ 18)

### Չարենց՝

Լիր – Իմ երկու դստերց օժիտների հետ  
Վերցրե՛ք նաև այս մասը երրորդ:  
Թող նրա համար հպարտությունը,  
Որ նա կոչում է պարզախոսություն,  
Դառնա ամուսին, և՛ փառք, և՛ օժիտ: (էջ 17)

Մասեհյանի թարգմանության **Մարտեցե՛ք** բայը (բնագրում՝ **Digest**) Չարենցը խմբագրել է՝ **Վերցրե՛ք**, իսկ **գոռոզություն** գոյականը՝ **հպարտություն** (բնագրում՝ **pride**): Վերջին տողում Չարենցի ավելացրած **և՛ փառք, և՛ օժիտ** բառերը ավելի ուժգնացնում են Լիրի գայրույթը:

### Մասեհյան՝

Քենտ – Ո՛չ, թող սլանա,  
Սլաքը թեկուզ սրտիս մեջ միսլի:  
Անքաղաքավարի լինի թող Քենտը,  
Երբ Լիրը խենթ է: (էջ 18)

### Չարենց՝

Քենտ – Ո՛չ, թող սլանա,  
Թեկուզ սլաքը սրտիս մեջ մտնի:  
Քծնող չի՛ եղել Քենտը երբևէ,  
Եվ չի լինի արդ, երբ արգո արքան  
Քայլեր է անում խելագարային: (էջ 18)

Այս հատվածում կրկին խմբագիր Չարենցին օգնության է հասել բանաստեղծ Չարենցը, ով դարձյալ կատարում է բառերի տեղաշարժ և փոխարինում է **Երբ Լիրը խենթ է** (բնագրում՝ **When Lear is mad**) նախադասությունը **Երբ արգո արքան քայլեր է անում խելագարային** նախադասությամբ:

### Մասեհյան՝

Լիր – Եթե հետևյալ տասներորդ օրը  
Վտարված լեշո գտնվի դեռևս,  
Մեր պետության մեջ, այդ թույնն քեզ մահ է:  
Կորի ը իմ աչքից. Արամագղը վկա՞,  
Խոսքս անդարձ է: (էջ 20)

### Չարենց՝

Լիր – Եթե տաս օր անց լեշո վտարված  
Գտնվի հանկարծ մեր պետության մեջ,  
Այդ վայրկյանը հենց մահ է քեզ համար,  
Հեռացի ը հիմա. Երկինքը վկա՛  
Անդարձ է խոսքս: (էջ 19)

Լիր արքայի այս խոսքերի մասեհյանական թարգմանության հետևյալ արտահայտությունները **այդ ընդհանուր (քննադրում՝ the moment), Կորի ը իմ աչքից (քննադրում՝ Away!), Արամագոր վկա (քննադրում՝ By Jupiter)** Չարենցի կողմից խմբագրվել են համապատասխանաբար՝ **Այդ վայրկյանը, Հեռացի ը հիմա, Երկինքը վկա:** Այս հատվածում Չարենցը դարձյալ կատարել է բառերի տեղաշարժ և այս ամենի շնորհիվ Լիրի գայրույթն ավելի բնական է հնչում:

### **Մասեհյան՝**

Խեղկատակ – Նրանք լացին ցնծությունից,  
Ես երգեցի տրտմությունից,  
Երբ որ տեսա, որ մի արքա  
Աչքախփուկ պետք է խաղա  
Եվ խենթերի  
Կարգն անցնի: (էջ 47)

### **Չարենց՝**

Խեղկատակ – Ցնծությունից նրանք լացին,  
Իսկ ես վշտից երգեցի,  
Որ մի այդքան խելացի  
Հիմարների շարքն է  
Անցնում բառացի... (էջ 35)

Չարենցն այստեղ ավելի ազատ է խմբագրում Մասեհյանի թարգմանությունը և նվազեցնելով վանկերի ու տողերի քանակը, փորձում է խեղկատակի խոսքը ավելի հակիրճ ու դիպուկ դարձնել: Յուրատեսակ ռիթմ է ապահովում նաև «ց» բաղաձայնի անընդհատ կրկնությունը:

### **Մասեհյան՝**

Լիր – Ես ամաչում եմ,  
Որ դու կարող ես  
Ցնցել այս կերպով իմ այրությունս.  
Այս տաք արցունքներս, որ դուրս են ցայտում  
Կամքիս հակառակ, քեզ լինեն բաժին:  
Խորշակ, մառախուղ հարվածե՞ն թող քեզ.  
Թող հոր անեծքի անբույժ խոցերը  
Պատառեն ամեն զգայարանքդ (էջ 53)

## Չարենց՝

Լիր – Ես ամաչում եմ, որ կարող ես դու  
Զրկել ինձ այսպես արհուրոյունից:  
Այս արցունքներս, որ դուրս են հորդում  
Կամքիս հակառակ՝ թող քե՛զ վիճակվեն:  
Խորշակ, մառախուղ հարվածեն թող քեզ,  
Թող հոր անեծքի անբույժ վերքերը  
Ծածկե՛ն, խոցուտե՛ն մարմինդ ամբողջ: (էջ 39)

Մասեհյանի թարգմանության **Ցնցել այս կերպով իմ այրուքունս** տողը (**բնագրում՝ to shake my manhood thus**) Չարենցը խմբագրել է՝ **Զրկել ինձ այսպես արհուրոյունից**, իսկ **Պատառեն ամեն զգայարանքդ** (**բնագրում՝ Pierce every sense about thee!**) տողի փոխարեն՝ **Ծածկե՛ն, խոցուտե՛ն մարմինդ ամբողջ** առավել պատկերավոր արտահայտությունը:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ Չարենցն աշխատել է պահպանել Մասեհյանի թարգմանությունների շունչն ու ոգին, միաժամանակ կատարելով այնպիսի խմբագրումներ, որոնք ավելի հասկանալի և ընդունելի լինեն իր ժամանակի հայ ընթերցողին: Իսկ ընթերցողի համար վերածննդի հսկան հավերժ մնա իր ժամանակակիցը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Шекспир, Король Лир**, на англ. яз., Москва, Изд. литературы на иностр. языках, 1950.
2. **Шекспир, Трагедии**, перевод с англ., Ереван, “Айастан”, 1986.
3. **Շեքսպիր Վ.**, *Արքա Լիր*, թարգմ. Հ. Մասեհյանի, Եղ. Չարենցի ստեղծագործական խմբ., ՀԳՄ հրատարակչություն, Երևան, 2007:
4. Շեքսպիրական, հատոր 6, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980:
5. Շեքսպիրական, հատոր 1, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1966:
6. **Չարյան Ռ.**, *Հուշապատում*, գիրք Ա, Երևան, 1975:
7. **Չարյան Ռ.**, *Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին*, Երևան, 1961:

**ЕММА ТЕМРАЗЯН – Егише Чаренц – редактор перевода “Короля Лира” на армянский язык.** Знаменитый армянский поэт Егише Чаренц, имея руководящую должность в государственной издательской конторе, взялся за публикацию “Короля Лира” Шекспира на армянском языке. По его мнению, эта трагедия была лучшей и самой глубокомысленной работой писателя, но перевод О. Масеяна не удовлетворяет требования поэта, так как работа была сделана более сорока лет назад.

В исследовании рассматривается творческий подход знаменитого армянского поэта в редакторской работе этого перевода. Чаренц смог почувствовать философию всемирно известного гения, и его редакторство сохранило душу перевода Масеяна, одновременно будучи более принятым для читателя своего времени.

**EMMA TEMRAZYAN – Yeghishe Charents – Editor of “King Lear”’s Armenian Translation.** While having a leading post in the state publishing office, the famous Armenian poet Yeghishe Charents undertook the publication of W. Shakespeare’s “King Lear” in Armenian. He thought the tragedy was the writer’s best and the most profound work but H. Masehyan’s translation didn’t meet the poet’s demands as it was done more than forty years ago.

The paper discusses the creative work of the famous Armenian poet while editing this translation. Charents was able to feel the philosophy of the world famous genius and his editorship kept the soul of Masehyan’s translation meanwhile being more acceptable for the reader of his time.

**ԺԱՆ ԺԻՈՆՈՅԻ «ՊԱՆԻ ՆԱԽԵՐԳԸ»  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ**

**ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

*Թարգմանությունը ստեղծագործություն չէ,  
այլ՝ ուղի դեպի ստեղծագործությունը*  
**Օրսեկա-ի-Գասեստ**

Ժան Ժիոնոն համաշխարհային գրականության մեջ մուտք է գործել նախ և առաջ իր ուրույն ոճով, որի գաղտնիքը կայանում է պատկերների ճշգրիտ օգտագործման, խոհրդանիշներ ստեղծելու մեծ վարպետության մեջ՝ արտահայտված ժիոնոյական հնարներով:

«Պանի նախերգը» ստեղծագործության մեջ հիմնական առանձնահատկությունն այն է, որ հեղինակը սիմվոլիկ պատկերների միջոցով է հայտնում իր վերաբերմունքը բնության և կենդանական աշխարհի հանդեպ մարդու գործած չարիքի դեմ: Խորհրդանշանը Ժիոնոյի ստեղծագործության մեջ հանդես է գալիս նշանների միջոցով՝ տերմինների, անվանումների, պատկերների նկարագրությամբ: Թվում է՝ դրանք ընդունված երևույթներ են շատ ստեղծագործությունների համար և ունեն այնպիսի բացատրություններ, որոնք միավորվում են իրենց պայմանական և ակներև իմաստների հետ: Այսինքն, խորհրդանշանակումը բովանդակում է անորոշության, անհայտ կամ մեզ անծանոթ երևույթների կողքին՝ նաև հայտնի դրսևորումներ: Սակայն Ժան Ժիոնոյի «Պանի նախերգը» ստեղծագործության մեջ խորհրդանշականը արտահայտվում է ևս խրատական և էսթետիկական պայմանավորվածությամբ, դրանց միանում են գրողի մշակութային գործոնները, գիտելիքների պաշարը, փիլիսոփայական խոր մտքերը և արվեստագետի ներքին զգացողությունը: Չարությունը և բարությունը հակասության մեջ են, պայքարում են միմյանց դեմ: Եվ քանի որ չարությունը մեծ տարածում է գտել մարդու կյանքում, դիցաբանական կերպարը՝ Պանը, գլխավոր հերոսը, ստիպված է ընդունել, որ ժամանակն է հասունացել մարդուն ուշքի բերելու պատժի մի-

ջոցով: Ժիռնոյի ստեղծագործությունն այսօր ևս խիստ արդիական է: Այսօրվա մարդը նույնպէս, իր շահից և հաճույքից ելնելով անտեսում է երկրագնդին սպառնացող աղետները, միայն թէ իր ցանկությունները բավարարություն գտնեն: Բայց, ընդհանուր պայմանով, ամեն ինչ կյանքում բումերանգի պէս վերադառնում է այն մարդուն, ով որևէ արարք է գործում, ինչ բնույթի էլ լինի, վաղ թէ ուշ նրան պատուհասելու է չարիքը, վարձատրվելու է անշահախնդիր բարիքը: Նշենք նաև, որ նույնիսկ հեղինակի լեզվական միջոցները, երկի սկզբից, հրաշալի պատկերների նկարագրությունները ընթանում են տեղանքին հատուկ բառուբանով, մտածողությամբ, երկխոսություններում, հատկապէս, և կոտոր, այս առումով ավելի համոզիչ է:

Այս հնարները բնավ չպետք է անտեսվեն թարգմանչի կողմից: Տվյալ պարագայում, հայերեն թարգմանության մեջ դրանք լայն ու ճշգրիտ կիրառում են գտել: Այդ նույն ցավին և խնդիրներին է անդրադառնում նաև Ժիռնոն «Մարդը, որ ծառեր է տնկում» գրական գործի մեջ, սակայն այստեղ ոչ թէ պատժի միջոցի գաղափարն է իշխում, այլ անխոնջ պայքարի արտահայտումը հանուն բնության պաշտպանության: Մեջ բերվող օրինակում, («Պանի նախերգը»), այս հատվածը անմիջականորեն գրավում է ընթերցողի ուշադրությունը, մուտքն է, որ ներգործում է միանգամից՝ ցավ ու ավստասնք արտահայտող հրաշալի բառապաշարով և նկարագրությամբ, բուն ասելիքի մեջ.

*Ceci arriva le 4 septembre, l'an de ces gros nuages, cet an où il eut du malheur pour tous sur notre terre. Si vous vous souvenez, ça avait commencé par une sorte d'éboulement du côté de Toussière, avec plus de cinquante sapins culbutés cul-dessus-tête. La ravine charriait de longs cadavres d'arbres, et ça faisait un bruit. C'était pitié de voir éclater ces troncs de bon bois contre les roches, et tout ça s'en allait sur l'eau, en charpie comme de la viande de malade...*

(page 52)

*Դեպքը տեղի ունեցավ սեպտեմբերի 4-ին, ուժեղ փոթորիկների ժամանակաշրջանում, այն տարին, երբ մեր երկրին պատուհասեց դժբախտությունը՝ ընդգրկելով բոլորին: Եթե հիշում եք, դա սկսել էր Թուսիերի կողմերից, մի տեսակ փլուզմամբ. հիսուն եղևնի գլխիվայր թավազոր*

*տապալվել էին ձորը: Հեղեղատը քշում տանում էր ծառերի երկար դիակներ. և ի՞նչ աղմուկ: Ցավալի էր տեսնել, ինչպես են ճայթում այդ հրաշալի փայտե կոճղերը ժայռերի դեմ. և այս ամենը տարվում ջրերից՝ ամբողջովին ծվատված, վերքերով պատված մարմնի պես...*

Նկարագրված հատվածում պատիժն անխուսափելի է, դիցաբանական աստվածը խորհրդանշում է, դեռևս առանց մասնակցելու գործողություններին, որոնց դեռ հասու չէ ընթերցողը, բայց զգում է, որ գերբնական մի ուժ արդեն սկսել է իր նպատակն իրականացնելու մասին մտածել, երբ, ավելի ուշ, համոզվում է դրանում՝ անմիջական շփում ունենալով անսիրտ մարդկանց հետ: Այս ամենն, իհարկե, արտահայտվում է հեղինակի աննման գրչի միջոցով: Պատմողը, այսինքն՝ դեպքերը նկարագրողը, նույնպես զերծ չէ պատժից, նա ակամա մասնակիցն է գործվող չարիքի: Իր «կաշվի վրա է զգում» կարծես այդ ամենը: Այս հանգամանքն ավելի է համոզում ընթերցողին, որովհետև ինքն իր հերթին լսում է դեպքերն արձանագրողին, նրա կողքին կանգնած է և լսում է չար մարդկանց խոսակցությունները, ունկնդրում է անկախ իրենից: Եվ հետևություն է անում. բնությունը պարտադրում է իր գեղեցկությունը, մարդը խելամտորեն այն պետք է ծառայեցնի իրեն: Ջուրը, որ արտացոլում է իր հայելու մեջ հայողի պատկերը, նույնպես բնության կարևոր տարրերից է: Ըստ հեղինակի՝ ինչպես երկնքում, այնպես էլ ջրի մեջ լողում են ամպերը: Այս բանաստեղծական պատկերը մարդուն կանչում է տիեզերական միասնության, որտեղ ամեն ինչ ամեն ինչի հետ խոսում է: Հեղինակը ջրի միջոցով նախապատրաստում է ընթերցողին ինչ-որ անսովոր ու տհաճ հետևանքի, և այս ամենը ներկայանում է էսթետիկա ապահովող բառապաշարի ճշգրիտ ընտրությամբ:

Այս հատվածին կհետևի հայերեն տարբերակը, թարգմանական գործընթացի ճիշտ կամ սխալ արտահայտումը ի հայտ կգա, երբ համեմատվեն բնագիրն ու թարգմանությունը:

*Cette haute prairie soudain toute molle, puis cette bouche qui s'ouvrit dans les herbes, et on entendait au fond balloter l'eau **noire**, puis ce vomissement qui lui prit à la montagne, et le vallon qui brillait sous les **lourds paquets** d'eau froide.*

(page 52)



*Բարձրադիր մարզագետինը միանգամից լիովին կակ-  
ղեց, հետո գետաբերանը բացվեց խոտերի մեջ. և լսում  
էինք, ինչպես է տարուբերվում սևամաղձ ջուրը, այնու-  
հետև՝ այդ փսխուքը, սարի վրա և՛ հովտի վրա հորդացող,  
որ պոռչտում էր պաղ ջրերի ծանր ծանրոցների տակ:*

(Էջ 53)

Այս օրինակում սևամաղձ ջուր, փսխուք, պոռչտալ պաղ ջրերի ծանր ծանրոցների տակ բառերի պատկերների օգտագործումը խորհրդանշում են ջուրը որպես մարդու կենսական պայման, իսկ անձնավորված ջուրը կարող է առաջարկել մարդուն իր օգտակարությունը, եթե ճիշտ է վարվում իր հետ, նաև զայրանալ նրա դեմ, եթե խեղաթյուրում է իր էությունը:

Հայտնի է, որ գեղարվեստական թարգմանության ժամանակ թարգմանչի առաջին և հիմնական պայմանը հեղինակի ոճի արտացոլումն է: Այդ գործողությունն իրականացնելու ճանապարհին թարգմանիչը թույլ է տալիս որոշ գիտակցված և արդարացված ազատություն: Հաճախ նա ստիպված է կրճատումներ և հավելումներ կատարել՝ ճշգրիտ, հավատարիմ թարգմանություն ստեղծելու համար, երբեմն անհավատարիմ գտնվելով: Նաև՝ երկու լեզուներին (թարգմանող և թարգմանվող) տիրապետելու պայմանով:

Հատկապես այս ստեղծագործության մեջ բառերի բովանդակության բուն իմաստի փոխանցումը բավական բարդություններ է ներկայացնում, որովհետև Ժ. Ժիռնոյի գրական լեզուն հեղված է խորհրդանշական և հարանշանակային բառերով: Իսկ գեղարվեստական լավ թարգմանություն ունենալու համար պետք է ճիշտ և ամբողջական համարժեքով փոխանցել բնագիրը, միաժամանակ ընկալվելու համար այն ընթերցողի կողմից, որն արտահայտվում է այդ լեզվով: Բնապատկերները, բուսական ու կենդանական աշխարհը պետք է թարգմանության ընթերցման ժամանակ ստեղծեն այն տպավորությունը, ինչ՝ բնագիրը:

«Պանի նախերգը» ստեղծագործության մեջ ոճի արտահայտման կարևոր պայմաններից է նաև բառիմաստի հարցում հանդես եկող հարանշանակության դերը և նրա ճիշտ վերարտադրությունը թարգմանվող լեզվում: Հեղինակը շեշտը հատկապես դնում է բառերի փոխաբերական իմաստների վրա: Ժիռնոն երկու ծայրահեղություններից է ընտրում բառապաշարը. մի դեպքում բառապաշարում հան-

դես են գալիս բարին արտացոլելու գաղափարը, կյանքը ճիշտ ընկալելու և գնահատելու նպատակը, մյուս կողմից՝ չարի, բնության և կենդանիների հանդեպ ունեցած մարդու անտարբերության վերաբերյալ բառապաշար, որը պարզորոշ ընդգծում է բառի և արտահայտությունների իմաստը, հեղինակի բուն ասելիքը: Մի կողմից բարձրության վրա կանգնած շնչավոր արարածն է, մյուս կողմից ստորին դիրքում գտնվող շնչավոր էակների հակասության դրսևորումը: Հակասություններ ներկայացնելու հարցում հեղինակին օգնում են նաև կերպարների կերտման համար կիրառած ոճական այնպիսի միջոցներ, ինչպես օրինակ՝ համեմատությունները և փոխաբերությունները, որոնց ևս կանդադառնանք:

Թարգմանությունը ոչ միայն պետք է արտահայտի բնագրի բառապաշարը բառարանների միջոցով, ինչպես նաև՝ շարադրանքի արտաքին նույն ձևը պահպանի, այլ թարգմանչի միջոցով պետք է ճշտորեն վերարտադրի հեղինակի զգացումները, հույզերը՝ թեկուզ կիրառելով ոչ բառարանային իմաստներ և նույնատիպ շարադրանք:

«Պանի նախերգը» իր մեջ ամփոփում է Ժողովրդական առանձնահատուկ միտք, որն այնուհետև զարգանալու է Պանի *եռագրության* մեջ: Պանի կերպարը ի հայտ է բերում սահմանազատված երկու ծայրահեղություններ՝ երկնահասության և հողին կառչած մնալու հատկությունները, որ միախառնվում են, դառնում են կյանքի արտացոլման դրսևորումներից մեկը: Պանը սկսում հայտնվում է իրենց բնույթով ստորադաս մարդկանց միջավայրում: Այսպիսով, բարձրությունը խորհրդանշում է հոգու անաղարտությունը: Ժողովրդի այս պատումը սկսում է վերահաս փոթորկի նկարագրությամբ: Այստեղ արտասովոր ոչինչ չի նկատվում, պարզ է սակայն, որ պատկերման այս ձևը ընթերցողին տեղափոխում է այլ ծրագրի մեջ. մահկանացուի կյանքի իմաստը՝ տոնակատարությունը, որն այստեղ արտահայտվում է խղաղկան պարերով, անտրամաբանական, ցածր ոճի արտահայտմամբ դառնում է աղետի նախասկիզբը, երբ այս ամենի սկանառեսն է հենց ինքը՝ բնաստվածը, անտես, մի անկյունում ծվարած *բարությունը*, նա պետք է միջամտի անարդարության դեմ՝ տեսնելով բնության հանդեպ գործված չարիքը.

*Ils étaient tous tournés vers le fond de la pièce: vers une chose que l'ombre délivra un peu de temps après, et qui était l'homme. Il émergea de l'ombre comme d'une eau, je ne sais pas*

*si ce fut l'effet du jour qui tournait autour du village et venait un peu d'aplomb ou si la force de cet homme rayonnait de lui en délayant l'ombre, le fait est que je le vit tout à coup. Il était debout, très triste, accablé par une grande pensée qui teignait ses yeux en noir. Et c'est à ces deux-là, à lui, et à la colombe que le Boniface tout perdu de vin en avait.*

(page 70)

*Բուրրի դեմքերը շրջվել էին սրահի խորքը. ինչ-որ բանի կողմը, որին քիչ անց ստվերը պարզեց, և դա մարդն էր: Նա դուրս եկավ մթությունից, ինչպես ջրի միջից, և չհասկացա. տպավորությունն էր օրվա լույսի, որ պտտվում էր գյուղի շուրջը ու մի փոքր ուղղաձիգ առաջանում էր, թե՛ այդ մարդուց հորդող ուժն էր ճառագում՝ ցրելով մթամածությունը, սակայն փաստն այն է, որ տեսա նրան միանգամից: Կանգնել էր. չափազանց տխուր էր ու ծանր խոհից ընկճված, որ շրջագծել էր աչքերը սևով: Նրա ուսին անտառային աղավնի էր նստել: Եվ այդ երկուսի՝ այդ մարդու և աղավնու դեմ էր ասում ggել գինուց գլուխը կորցրած Բոնիֆասը:*

(էջ 71)

Ժիռնոն այս և այլ հատվածներում *մարդ* բառի հատկանիշը վերագրում է դիցաբանական կերպարին, որ աստվածությունների շարքում է դասվում: Իսկական մարդիկ, որ գտնվում են միևնույն տեղում՝ սրահում, իրենց վայրենությամբ չեն ընդունում այդ գոյական-բառի բուն իմաստը: *Մարդ* բառը սիմվոլիկ բնույթ է կրում ստեղծագործության մեջ և նրա վրա դրված մակդիրներն ամբողջացնում են հեղինակի կերտած կերպարի պատկերը, ինչպես ինքն է ցանկանում ներկայացնել, հակադրություն ստեղծելով Պանի և այնտեղ հավաքված *nhusalyh* միջև: Մակդիրների հոմանիշ շարքից թարգմանության մեջ ընտրվել են նրանք, որ ճշգրիտ ձևով վերարտադրում են Ժիռնոյի խոսքը: Նրա հոսուն երևակայությունը պահանջում է թարգմանչից ճիշտ ոճաբանական համարժեքով բառապաշարի ընտրություն և տարբեր մշակույթներին բնորոշ խիստ ընդարձակ գիտելիքների պաշար: Կոնկրետ այս տեքստում, բավական չէ տեքստը թարգմանել, այլ միևնույն առիթների բերումով վերստեղծել զգացումները և հույզերը, որոնք տվյալ գործի առանձնահատ-

կույթունն են կազմում ընդունող լեզվին բնորոշ հասկանիչներով: Պատկերները, պատկերավոր արտահայտությունները, որոնք կենդանի և նուրբ ձևով է ներկայացնում հեղինակը, անմիջականորեն հուզում են ընթերցողին և անմիջականորեն ուշադրություն գրավում՝ բառերի միջով անցնելով: Վերջինս՝ կլանված ընթերցողը, նույնպես նույն տազնապով է համակվում, նրա քիմքը, ասես, նույնպես զգում է լեղին, տհաճ համը, որ լցվել է ամբոխի յուրաքանչյուր անդամի բերանի մեջ: Իրոք ահագորու տեսարան է բացվում տողերի միջից բառերի օգնությամբ: Եվ թարգմանությունը պետք է հասու լինի ընթերցողին նույն զգացողություններով՝ կրի նույն տպավորությունը, ինչ բնագիրն է մատուցում:

*Alors la porte des écuries éclata. Il se rua sur nous les mulets et les chevaux, et les poulains, et les ânes entiers qui étaient tous en chaleur.*

*Alors, les poulaillers s'ouvrirent comme les noix, et on recevait dans les figures des poules et des coqs fous qui se cramponnaient de leurs ongles dans la peau de nos joues, des pigeons qui tombaient sur nous comme de la neige, et l'air bouillait de toute cette oisellerie. Du fond de la vallée toutes les hirondelles... jaillirent des saules et des buissons et des prés chauds... on en été inondé et écrasé comme sous une chute d'eau.*

(page 92)

*Այդ ժամանակ ախոռների դռները ճայթեցին: Մեզ վրա սուրացին ջորիներ ու ձիեր, մտրուկներ ու ավանակներ. բոլորն էլ գրգռված:*

*Այդ ժամանակ թռչնանոցները ևս բացվեցին ընկույզի նման, և մեր դեմքերին բախվեցին խենթ ու խելառ հավեր ու արլորներ, որոնք ճանկերով կառչում էին մեր այտերի մաշկից, աղավնիներ, որոնք ձյան նման թափվում էին մեզ վրա, և օդը եռում էր այս ամեն տեսակի հավքերից: Հոփտի խորքում բոլոր ծիծեռնակները ... դուրս հորդեցին ուռիների, թփուտների և տաքուկ արոտների միջից... ծանրացել էինք նրանցով, ողողվել ու ճզմվել էինք, ինչպես ջրվեժի տակ:*

(էջ 93)

Հարկ ենք համարում ներկայացնել մի երևույթ ևս: Այս ստեղծագործության մեջ առկա են գրական գեղարվեստական ժանրի տարբեր տեսակներ, որոնք առանց անցում կատարելու ակնհայտորեն, հայտնվում են իրար կողքի, ամուր փակվելով միմյանց, ինչպես օրինակ՝ նատուրալիստական, ռեալիստական, իմպրեսիոնիստական ուղղությունները, գրական ժանրերը: Այս ստեղծագործության մեջ ականատես ենք և ունկնդիր ենք տարբեր տեսակի շարժումների, որ կատարվում են բնության մեջ, տարբեր հնչյունների, կախարդական երաժշտության, բազմապիսի հարբեցնող հոտերի, որ մեր հոտառությանն են հասնում: Լույսը և ստվերը հաջորդում են իրար: Փշում է քամին: Փայլում է արևը, և ընթերցողը նույնպես զգում է, ինչպես է այն ծակելով անցնում մարմինների միջով, և ամբողջ տոնակատարությունը նյարդային վիճակում է հայտնվում: Փոթորկի գոյացումը կարծես դառնում է այս գործի գլխավոր կերպարը: Պանի շնչի տակ նա հարձակվում է բնակիչների վրա և ամեն ինչ տակնուվրա անում: Սա երկնային պատիժն է, որ թափվում է նրանց գլխին: Սա պարզորոշ իմպրեսիոնիզմին հատուկ երևույթ է, ինչպես նաև՝ նատուրալիզմին, ռեալիզմին ու ֆանտաստիկային: Եվ այդ մարդիկ գիտակցում են, որ Պանն է այս ամենի պատճառը, բայց ի վիճակի չեն հասկանալու, ինչու այդպես վարվեց, այլապես, գուցե մտածեին ուղղել իրենց սխալները, բայց մարդկությունը միշտ շարունակելու է այսպես ապրել, քանի դեռ չի գիտակցում իր արարքները: Եվ այս ամենը ընթերցողին է փոխանցվում հեղինակի գերբնական բառապաշարի օգնությամբ: Ինչպես նշեցինք, Պան աստվածը հաճախ է հանդես գալիս հումանիշ բառով՝ *մարդ* գոյականով: Ահա ինչպես և ինչ բառապաշարով է հեղինակը ներկայացնում *մարդուն* ամբոխի միջավայրում.

*...L'autre (l'homme) continuait, de sa petite voix tranquille. Cette voix, dès entendue, on ne pouvait plus bouger ni bras ni jambe. On se disait «Même j'ai déjà entendu ça?», et on avait la tête pleine d'arbres et d'oiseaux, et de pluie, et de vent, et du tressautement de la terre.* (page 78)

*...Մյուսը (մարդը) շարունակում էր մեղմ ու հանգիստ խոսել: Այդ ձայնը լսելուն պես ոչ ձեռք էր շարժվում, ոչ ոտք: Մտածում էինք. «Ինչ-որ տեղ արդեն լսե՞լ են», և գլխներիս մեջ լիքը ծառեր ու թռչուններ էին, և անձրև ու քամի էր, հողի սաքսուռ էր:* (էջ 79)

Ուշադրություն դարձնենք, թե բառերի ինչպիսի համարժեք ընտրություն է կատարված թարգմանության մեջ՝ նկատելով, որ այն իր բուն իմաստը ստանալու է ենթատեքստում: Վերցնենք պարզ մի բառ *gros* (նախնական իմաստը՝ խոշոր), որը շատ իմաստներ ունի ֆրանսերենում և տարբեր համարժեքներ՝ հայերենում, և տեսնենք ինչ բառերով են փոխարինվել թարգմանության մեջ. *մեծ, խոշոր, հաստ, ուռած, ամուր, կոշտ, կոպիտ, գեր, չաղ, լիքը, հաստ պարարտ, նշանակալի, ծանր, ողջ, ամբողջ, ուժեղ, հարուստ, հզոր*, ինչպես նաև փոխաբերական իմաստով արտահայտությունների մեջ՝ այլաբանորեն կիրառված բովանդակություններով և այլն: Բնագրում նույն *gros* (*grosse*) բառը թարգմանության մեջ տարբեր բառ-տերմիններով է հանդես եկել: Ճիշտ կլինի, եթե այն ներկայացնենք տեքստի մեջ կիրառված բառակապակցություններով.

*L'an de ces gros orages (52); grosse chenille (66); équipe de gros hommes (70); t'as dû écraser des choses pour être si gros que ça (78); -Encore une fois, qu'il fait le gros, tu me la rends, ma bête? (80); Le gros Boniface (82); Montrant les grosses touffes de poils roux de dessous ses bras (90); Les gros béliers étaient en tête (96); La grosse Amélie (96); Grosse motte de sang (98).*

*Ուժեղ փոթորիկների ժամանակ: Հսկա թրթուր: Խոշորակազմ մարդկանց խումբ: Պետք է շատ բան խորտակեի՞ր, որ այսքան հաստանայիր: Մեկ էլ եմ ասում, - վրա տվեց ճարպակալած մարդը, - կենդանու տալու՞ ես, թե՞ չէ: Գեր Բոնիֆասը: Յուցադրելով կոնատակերի առատ շիկավուն խրճերը: Խոշոր խոյերը գլխավորում էին նրանց: Չաղ Ամելին: Արնաշաղախ հողակույտ:*

*Ուժեղ, հսկա, խոշորակազմ, հաստ, ճարպակալած, գեր, առատ, խոշոր, չաղ, կույտ* բառերը թարգմանության մեջ փոխարինել են մեկ բառի՝ *gros* (*grosse*)-ին, նկատի առնելով հայերենի իմաստաբանական դաշտի հարուստ ընտրանին, որպեսզի տարբեր իրավիճակներում ճիշտ արտահայտեն բնագրի իմաստը:

Ֆրանսերենի այլ առանձնահատկություն է դրսևորում *gros* (*grosse*) բառը՝ հայտնվելով տարբեր դարձվածների, արտահայտությունների մեջ, բազմիմաստ բառի դերում: Ուրեմն, թարգմանիչը

ստեղծագործողի վիճակում է հայտնվում՝ չենթարկվելով կանոնների: Հայերեն թարգմանության մեջ համարժեք են ձեռք բերել վերոհիշյալ բառով, թվարկված բառախմբերը, որոնք համապատասխանում են թե՛ կերպարներին, թե՛ վիճակներին: Կարող ենք նաև ավելացնել, որ գեղարվեստական թարգմանություն կատարելու համար թարգմանչի երևակայությունը և գրական երկի կերտումը բնագրի սահմաններում կարևոր դեր են կատարում:

Խորհրդանշաններ ստեղծելու հարցում Մ. Ժիոնոն մեծ վարպետ է, ինչին նպաստում են նաև ոճական միջոցները, դառնալով հեղինակային հնարներ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է մակդիրներին, փոխաբերություններին և համեմատություններին: Այս հարցի մասին խոսելիս, մեր աչքից չի վրիպում գրական այն հոսանքը ևս, որ նատուրալիզմի կողքին հանդես է գալիս սուր կերպով՝ իմպրեսիոնիզմը: Ինչպես նշել ենք, Միոնոն իր ստեղծագործության մեջ ընթերցողին առաջարկում է հազարավոր բույրեր զգալ, հնչյուններ լսել և լուսային երանգներ տեսնել: Եվ այս ամենը հառնում է խորհրդանշանների և առեղծվածային պատկերների նկարագրության միջից, որ հորդում են նրա գրչի տակ: Որքան էլ տիեզերական ոգին ձգտում է դեպի երկնակամար, այնուամենայնիվ, նրա արմատները խրված են հողի մեջ: Սա է պատճառը, որ վերլուծելով Միոնոյի պոետիկական պատկերները, նկատում ենք, որ վերոհիշյալ երկու ծայրահեղ կետերի արանքում կա մի ազատ տարածք, որ ընթերցողի երևակայության համար է վերապահված: Եվ այդ պատկերները չափից շատ առատ են և կազմում են Միոնոյի ոճի կարևոր առանձնահատկություններից մեկը:

Ժամանակի և տարածության միավորները նույնպես խիստ կապի մեջ են իրար հետ: Մարդն ապրում է բնության մեջ, և ժամանակն ու տարածությունը անբաժան են նրանից, որովհետև *օդ, հող, ջուր, կրակ* տարրերը մշտապես իշխում են բնության գրկում:

*Enfin il y eut de nouveau du large et de l'espace vide dans la rue et les deux cafés, et pendant q'on dînait, il y eut aussi, dans le ciel, comme un oiseau, un épais silence, lourd et seul. Dans ce silence il n'y avait ni bise, ni bruit de pas, ni soupir d'herbe, ni bourdon de guêpes ; il était seulement du silence, rond et pesant, plein de soleil comme une boule de feu.*

(page 63)

Վերջապես նորից տեղերն ազատվեցին, դատարկ տարածություն առաջացավ փողոցում ու երկու սրճարաններում, և երբ ամեն ընտանիք ճաշում էր իր հարկի տակ, երկնքում նույնպես տիրեց խոր լռություն՝ անձայն ու միայնակ թռչունի նման: Այդ լռության մեջ ոչ հովիկ կար, ոչ ոտնաձայն, ոչ խոտի հառաչ, ոչ մեղունների բզբոց, միայն լռություն՝ շրջանաձև ու ծանր, լիքը արև՝ հրե գնդի նման:

(էջ 65)

Այս ստեղծագործության մեջ օգտագործված փոխաբերությունները նույնպես հանդես են գալիս՝ շարունակ կցվելով ոճական այլ արտահայտչամիջոցների, ինչպես անձնավորումը կամ համեմատությունը, չարաշահույթը, որը անհարիր է հիմնական մակդիրի հետ: *Անտառը, երկինքը, օդը, հողը* մարդկային հատկանիշներ են ձեռք բերում՝ ի հաշիվ անձնավորման, և բոլոր փոխաբերությունները սիմվոլիկ իմաստ են ստանում և դառնում են տեքստի բովանդակությունը: Թարգմանության մեջ անհրաժեշտ է ցույց տալ այդ փոխաբերության ճշգրիտ իմաստը հատուկ ընտրված տերմիններով, որպեսզի բովանդակությունը չխախտվի թե՛ իմաստային առումով, թե՛ բանաստեղծական պատկերի արտահայտմամբ:

Հեղինակը շատ է օգտագործում անձնավորման երևույթը՝ հատկապես այն առումով, որ տեքստն է դա պահանջում: *brailleur, gémir, s'étaler, dormir, écraser...* բայերի միջոցով Ժիոնոն, նախ և առաջ, շարժում է հաղորդում *հովտին, լեռանը, արևին*, ինչպես նաև հնչյունների արձագանք է բերում, որ հեղինակի հնարներից են, իսկ թարգմանության մեջ դրանք նույն հզորությամբ են արտացոլվում բառերի ճիշտ ընտրությամբ, հատկապես բնաձայնության առկայությամբ՝ բաղաձայնությունների կուտակմամբ: Հետևյալ օրինակները կփաստեն մեր ասելիքը.

*Le vallon qui **brillait** sous les lourds paquets d'eau froide*  
(52)

*La montagne qui **gémissait** comme en mal d'enfant* (54)

*Le soleil **s'étala** sur la terre et se mit à y **dormir en écrasant** les ombres* (60)

*Հովիտը, որ **պռոչտում էր** պաղ ջրերի ծանր ծանրոցների տակ:*

*Լեռը, որ **հեծեծում էր** ծննդաբերողի նման:*



*Արևը փովեց գետնին և սկսեց այնտեղ մրսփել՝ ճզվելով ստվերները:*

Այսպիսով, կարող ենք վստահաբար ասել, որ Ժիռնոն նախընտրում է որպես ոճական միջոց, առավելապես դիմել փոխաբերությանը, համեմատությանը, անձնավորմանը՝ որակելու, արժևորելու համար բնությունը, որ տվյալ պարագայում զայրույթով է լցված մարդկության հանդեպ: Հեղինակին դա լիովին հաջողվել է:

Խոսելով թարգմանական հարցերի շուրջ, մեկ անգամ ևս անդրադառնանք այն մտքերին, որ անհրաժեշտ է կիրառել տվյալ աշխատանքն իրականացնելիս: Եթե իրավիճակից ելնելով՝ գրողն ընտրում է այսպիսի բառեր, զաղափարներ, մտքեր, պատկերներ, զգացումներ և զգացողություններ, թարգմանիչը, նախ և առաջ, ներքին զգացողությամբ, այնուհետև՝ հմտությամբ և արհեստավարժությամբ (եթե հասել է այդ աստիճանին), գտնելու է ճիշտ համարժեքներ, որպեսզի ընդունող լեզվով ընթերցելիս, նույն տպավորությունն առաջանա, ինչ՝ բնագրի դեպքում: Ուրեմն, թարգմանել՝ նշանակում է, ինչպես Էդմոն Քարին է նշում, ընկալել նիշի, բառի, արտահայտության, շարադասության յուրաքանչյուր երանգը, մտքի և հոգու, սրտի յուրաքանչյուր թրթիռը: Հեղինակի և թարգմանչի միջև պետք է լինի անմիջական կապ և փոխհասկացողություն: Ավելացնենք նաև, եթե թարգմանչի համար հիմնում են կանոններ, նշանակում է՝ թարգմանելու համար բառերը պետք է երկու լեզվում լիարժեք համապատասխանություն ունենան, և նույնը վերաբերում է նախադասության կառույցին: Սակայն հայտնի է, որ հաճախ բառերն ունեն տարբեր իմաստներ կամ բազմիմաստ են, որոնք հաճախ չեն համապատասխանում տարբեր լեզուներում, քերականական ձևայինները նույնպես տարբեր կառույցով կարող են հանդես գալ, ուստի թարգմանիչը պետք է իմանա, երբ ընտրի համարժեքներ, երբ բառացի թարգմանություն կատարի, երբ փոխարինի բառը մեկ ուրիշով, որ ոչ մի բառարանում չի գտնի նույն արժեքով, ինչ հեղինակն է օգտագործել: Եվ ի վերջո, նշենք, որ թարգմանիչը պետք է պատկերացնի բառի կամ արտահայտության, կամ նախադասության այն դրսևորումը, որ հեղինակն է ուզել ներդնել դրանց մեջ: Այս ամենն ապացուցում է դարձյալ, որ գեղարվեստական թարգմանությունը ստեղծագործական գործընթաց է, եթե թարգմանիչն ունի նաև երկու լեզուների ոլորտում բարձր մակարդակի գիտելիքներ և ստերձագործելու հմտություն:

Այսպիսով, եթե ամփոփենք մեր շարադրանքը, կասենք վստաբար, որ Ժան Շիոնոյի «Պանի նախերգը» ստեղծագործության հիմնաքարը պատկերների առեղծվածային խորհրդանշաններին դիմելն է, որով հագեցած է նրա շարադրանքը, իսկ դրանք ստեղծվում են ոճական հնարների և արտահայտչամիջոցների օգնությամբ: Խոսքը ազդեցիկ է, որովհետև դրա միջոցով է բուն ասելիքը հասու դառնում ընթերցողին: Կենդանական, բուսական աշխարհները Շիոնոյի գրչի տակ դառնում են տիեզերական մտքի առանցքը: Իսկ մարդը, որի ընդունակությունները նրան ուղղում են դեպի աշխարհի հայտնաբերման կողմը՝ շնորհիվ տեսողության, լսողության, լեզվի միջոցով արտահայտվելուն, որ իրեն ճիշտ ծառայեցնելու դեպքում կարող է միայն հասնել բարձունքի, կառուցել, վերափոխել աշխարհը: Այս պարագայում Շիոնոն շեշտը դնում է ամենագոր խոսքի վրա: Իսկ մարդ դրան հասնում է այն ժամանակ միայն, երբ բնության տարերքն է միջամտում և «դասեր տալիս» նրան: Գրողի ճշգրիտ նպատակը այն է, որ մարդ պետք է ճիշտ ընկալի բնության ձայնը, կենդանական աշխարհը, ընդհանուր առմամբ՝ աշխարհը լիովին, որպեսզի հասնի ոգու գործությանը և երջանիկ ապրի:

Շիոնոյի ամբողջ տիեզերքը կրում է փոխաբերական բառերի նշանը, որը ճոճվում է իրականի և հրաշալիքի միջև: Համեմատությունների շնորհիվ, որ պատկանում են գրողի խորին ներաշխարհին, հեղինակը ստեղծում է իսկական բանաստեղծական բարձր արվեստ՝ նպաստելով փոխաբերությունների առաջացմանը:

Այս ամենը, եթե հիմնավորապես նկատի և զգա թարգմանիչը, անտեսանելի թելերով ամբողջովին կապվի հեղինակի հոգու, սրտի հետ, կարող է, անկասկած, ստեղծել համարժեք գործ մեկ այլ լեզվում, եթե այդ լեզուն նույնպես հագեցած է հարուստ բառապաշարով, ինչ Շիոնոյինը, և պատկերներ կերտելու, երկի ձայնը, շարժումը արտահայտելու դժվարություն չի լինի, դա կլինի հենց իր՝ թարգմանչի և իր կրած լեզվի ամենամեծ հնարավորությունն ու հմտությունը: Կարևորագույն կիրառվող հատկանիշ է նաև, որ, անկախ ամեն ինչից, թե՛ լեզվական կառույցների տարբերությունից, թե՛ աշխարհայացքների դրսևորման տարբերությունից, թարգմանիչը պետք է գտնի և անարգել թափանցի ստեղծագործության գաղտնաբանները, զգա, հասկանա սեփական զգայարանների միջոցով, նաև՝ բնագրով, թե ինչ է թաքնված հեղինակի խոսքի տակ և վեր հանի այդ ամենն ու մատուցի փոխանցվող լեզվով իր ընթերցողին, այնպես որ

վերջինիս թվա, թե այդ ստեղծագործությունը սեփական լեզվով է գրված, որովհետև փոխանցվել է հեղինակի արվեստի ոգին՝ բառերի ճիշտ ընտրությամբ և ոճի արտահայտման նշանների ճշգրտությամբ: Իսկ հայերենն իր հարստությամբ ու ճկունությամբ ավելի շատ է օգնում ու նպաստում թարգմանչին՝ պատվով իրականացնելու իր աշխատանքը, եթե, անշուշտ, այս ամենին միահյուսվում է ստեղծագործելու նրա օժտվածությունը:

**NVART VARTANIAN – Le symbolisme dans le vocabulaire de Jean Giono “Prélude de Pan” et son équivalent en arménien.** Dans cet article nous avons étudié les idées originaires sorties de la plume de Jean Giono qui circulent dans les pages de l’œuvre «Prélude de Pan» et dans lesquelles il définit (sans donner de définition) l’homme comme un être dont les capacités le prédestinent à la découverte du monde bien que muni d’yeux, d’oreilles, de langue, mais qu’il ne sais pas s’en servir.

L’analyse métaphorique, comparative et d’autres moyens stylistiques employés par l’auteur, ainsi que le cas de la personnification, de l’épithète, de la connotation ou dénotation, tout cela figurent au cœur du texte un véritable art poétique. Giono tente surtout à développer l’imagination, par exemple, du déluge et il joue avec les métaphores artistiques ce qui ne l’empêche pas de citer ensuite la réalité crue. Ses images sont tirées de la vie des paysans et paraissent tout à fait habituelles et réelles. Son œuvre est ainsi dotée d’un monde intérieur qui révèle des contradictions diverses de ses métaphores mi-réelles, mi-imaginaires.

**НВАРД ВАРДАНИЯН – Метафоры, сравнения и выражения персонификации символов в соответствии “Прелюд Пана” Жан Жионо и их перевод на армянский язык.** В стилистической окраске произведения Жан Жионо “Прелюд Пана” большую смысловую и выразительную роль играет выбор слова, являющегося по своему смыслу синонимом к соответствующему слову, отличающегося от последнего только своей лексической окраской в результате принадлежности к определенному пласту словарного состава (к числу архаизмов, диалектизмов).

В стилистической окраске заключено многое (авторская ирония, ирония персонажа, исторический колорит, указание на местные черты в образе действующего лица и т.д.). Все это кропотливо изучено и использовано переводчиком в переводе на армянский язык.

**ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ Մ. ԷՄԵԻ  
«ԹԱՌԱՍԾ ԿԱՏՎԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ»  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ**

**ՌՈՒՋԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Թարգմանությունը, հատկապես գեղարվեստական գրականության թարգմանությունը, մշակութային առաջընթացի և միջմշակութային հաղորդակցության միջոցներից է: Թարգմանության միջոցով են կատարվում տարբեր մշակույթների փոխազդեցությունները և հարստացումը՝ լեզվական, հոգևոր, գաղափարական, գիտական, փիլիսոփայական և այլ առումներով:

Թարգմանաբանությունն, անցյալ դարի երկրորդ կեսից դառնալով գիտության առանձին ճյուղ, իր էությամբ միջգիտակարգային է և համադրական: Համարժեքությունը թարգմանական ուսումնասիրությունների մեջ լայնորեն տարածված, սակայն շատ վիճահարույց հայեցակարգ է: Տեքստի համարժեքության խնդիրը թիրախ լեզվում թարգմանության մեջ առկա է 1970-ական թթ.-ից և մինչ այսօր քննարկվում և ուսումնասիրվում է, և կարծում ենք այն կշարունակի մնալ թարգմանաբանական հիմնարար հարցադրումներից մեկը: Արդյո՞ք գոյություն ունի համարժեքություն: Այս հարցադրումն ուղիղ համեմատական է մեկ այլ հարցադրմանը. ի՞նչ է թարգմանությունը, հնարավո՞ր է արդյոք թարգմանել: Իհարկե, այսպիսի հարցադրումները կարող են մի փոքր տարօրինակ թվալ, քանի որ թարգմանությունը գոյություն ունի և կիրառվել է դեռևս վաղնջական ժամանակներից (Հին Կտակարանի թարգմանությունը հրեերենից հունարեն, որը կոչվում է Յոթանասանից թարգմանություն և Աստվածաշնչի թարգմանությունը հունարենից հայերեն 5-րդ դարում և այլն) և շարունակում է իր պարտադիր երթը, քանի որ նաև նրա միջոցով է իրականանում մարդկության առաջընթացը:

Ուրեմն, փորձենք այլ կերպ շարադրել հարցադրումները՝ հաջողության ինչպիսի՞ աստիճան կարող է ունենալ թարգմանությունը, իսկ համարժեքությունը ինչպիսի՞ դեր է խաղում նրա առկայացման ընթացքում:

Համարժեքությունը բազմաշերտ է, այն ընդգրկում է լեզվաբանական, մշակութային, բանաստեղծական, գրականագիտական մակարդակի հարցեր:

Գեղարվեստական գրականության թարգմանությունը բարդ ստեղծագործական աշխատանք է, որովհետև խնդիրները բազմաթիվ են և բազմաբնույթ, միայն ճիշտ լուծումներ գտնելու դեպքում այն կարելի է հաջողված համարել: Գեղարվեստական տեքստի լեզվական միավորների քննությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի փոխադարձ կապ վերջիններիս և ողջ երկրի ճանաչողական, գաղափարական, գեղագիտական հայեցակերպերի, ինչպես նաև ազգային մտածելակերպի միջև՝ արտահայտված լեզվի մեջ: Դրական արդյունք ակնկալելու համար շատ կարևոր է թարգմանության գործընթացը ճիշտ կազմակերպել: Այն կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլերի՝ նախնական, իրականացվող և իրականացած, որոնք պահանջում են խորքային և մանրակրկիտ աշխատանք:

Առաջին փուլը, որը կոչվում է Մ. Էմեի հեքիաթների թարգմանության վրա հենվելով, ներառում է հեղինակի ստեղծագործության լուրջ ուսումնասիրություն՝ գրականագիտական և լեզվաբանական առումներով:

Երկրորդ փուլը ստեղծագործության վերոհիշյալ ուղղություններով կիրառված հետազոտությունների գործնական փոխանցման գործընթացն է թարգմանվող լեզվում, որը սովյալ դեպքում իր արտացոլումն է գտել Էմեի հեքիաթներում,

Երրորդ փուլը ներառում է կատարած թարգմանության մշակման, խմբագրման աշխատանքները, որի հարաբերական (քանի որ համոզված ենք, որ այն անվերջ գործընթաց է) ավարտին առկա է թարգմանված ստեղծագործությունը թիրախ լեզվում:

Համառոտ ներկայացնենք հեղինակին:

Մ. Էմեն 20-րդ դարի ֆրանսիական գրականության մեջ ունի իր ուրույն և մնայուն տեղը: Մ. Էմեի հեքիաթները ներծծված են հումորով, երբեմն՝ սատիրայով, որը յուրահատուկ հմայք է հաղորդում նրա վեպերին, պիեսներին, հեքիաթներին: Նրա գրքերն ամենաթարմն ու ուժեղներից են համարվել իր դարաշրջանում: Նա շատ բազմազան է՝ երբեմն իրական, երբեմն ծաղրական, երբեմն ֆանտաստիկ: Հեղինակը ներկայանում է ոչ թե բարոյախոսի կերպարով, այլ գննողի, դիտողի, որն իր նպատակն իրականացնում է հումով, հաճախ նաև սարկազմով: Բավական է հիշել «Մարդը, որն անցնում

է պատի միջով» պատմվածքը, որտեղ հերոսը՝ Դյուտիյուլը, հնարավորություն ունենալով անցնել պատի միջով, իւելագարության է հասցնում իր սահմանափակ տնօրենին կամ բանտապետին, որը նրա ֆանտաստիկ վարքագծից ապշած սկսում է ապուրը պատառաքողով ուտել: Նա դասեր չի տալիս, պարզապէս զուսպ, զվարճալի, երբեմն քնքուշ կերպով, ծաղրական երանգներով ներկայացնում է շրջապատող աշխարհը: Կարծես թէ իր հերոսների անհավանական ընդունակություններով՝ անցնել պատի միջով, բազմանալ, դառնալ վաթսուկոթ հազար «Մարիններ», ցանկանում է ներկայացնել մարդկային հնարավորությունների անսահմանությունը:

Մ. Էմեն ծնվել է 1902 թ. Ժոանիում (Ֆրանսիա): Շատ վաղ տարիքում կորցրել է մորը և մեծացել մայրական կողմի ծնողների մոտ՝ գյուղում, որը հետագայում իր արտացոլումն է գտել «Կանաչ զամբիկը» վեպի մեջ: Բազմաթիվ մասնագիտություններ է փոխել՝ բանկի աշխատակից, ապահովագրական գործակալ, լրագրող: Առաջին անգամ տպագրվել է 1925 թ., բայց հայտնի է դարձել իր «Կանաչ զամբիկը» վեպով:

Կվորձենք ներկայացնել Մ. Էմենի հայտնի «Թառած կատվի հեքիաթները» շարքում հեղինակին բնորոշ և նրա ստեղծագործությանը խիստ հատուկ հումորի և երևակայականի դրսևորումները ֆրանսերենում, ինչպես նաև թարգմանվող լեզվում՝ հայերենում:

Ընդհանրապէս հեքիաթներում ներկայացված է լինում բարու և չարի, լավի և վատի պայքարը, որտեղ հաղթում է բարին և արդարը: Դա է միգուցե ամենալավ բացատրությունը, որ այդ ժանրի ստեղծագործությունները ընդունվում և սիրելի են դառնում բոլոր տարիքի մարդկանց համար, քանի որ մարդը բարության, ազատության, արդարության կարիք ունի բոլոր տարիքներում:

Բացի հիմնական գաղափարից, որն է բարության հաղթանակը, Էմենի հեքիաթներում, կա շեղում ժանրի չափանիշներից, հերոսները, որոնք մարմնավորում են չարությունը, երևութական են, նրանք ևս բարի են: Գայլը նույնանուն հեքիաթում շատ նման է Շարլ Պերոյի «Կարմիր գլխարկի» գայլին, բայց ընթերցողը համակրում է նրան, քանի որ ցանկանում է բարի դառնալ, նույնիսկ անտառի վայրի կենդանիներին բարություն է քարոզում: Դառնալով Դելֆինի ու Մարինետի (հեքիաթաշարի գլխավոր հերոսուհիներն են) բարեկամը, նա ափսոսում է, որ կերել է Կարմիր գլխարկին և այդ արարքը համարում է իր երիտասարդական մեղքերից մեկը և կարծում է, որ բոլոր մեղքերին

պետք է թողություն տալ: Բայց հեքիաթի ավարտին ընկրկում է կենդանական բնագրի առջև և ուտում է երկու քույրերին: Այստեղ է, որ Էմեն այլ վերջաբան է գտնում: Դելֆինն ու Մարինետը, նաև՝ ծնողները, ազատ են արձակում գայլին՝ մարդուն բնագրից, չարությունից, վրեժխնդրությունից բարձր դնելով: Բարությունն է աշխարհը առաջ մղում:

Իր հեքիաթներում Էմեն իդեալականացնում է բարեկամությունը: Կատուն համանուն հեքիաթում պատրաստ է գոհաբերել իր կյանքը փոքրիկ քույրերի համար, շունը նույնպես համանուն հեքիաթից իր տեսողությունն է նվիրաբերում անշնորհակալ տիրոջը, որը նրան անմիջապես լքում է՝ թողնելով կույր վիճակում ճամփաներին, բայց բնույթով հավատարիմ լինելով՝ նա նորից է նրան առաջնորդում, քանի որ գիտակցում է, որ կույր տերը չի կարող ապրել առանց իր ուղեկցության:

Այս հեքիաթում այնպիսի տպավորություն է, թե բարության մրցույթ է: Բարության ապացույցներ Էմեն տալիս է գրեթե բոլոր հեքիաթներում:

«Թառած կատվի հեքիաթները» շարքը հասցեագրված է 4-75 տարեկաններին: Այն բաղկացած է 17 հեքիաթներից: Պատմությունները տեղի են ունենում միաժամանակ իրական և երևակայական աշխարհում: Հեքիաթներում իրադարձությունների վայրը ֆերման է, հերոսներն իրական են, բայց իրավիճակները, դեպքերն՝ անիրական: Հեքիաթաշարը երկու գեղջուկ քույրերի՝ Դելֆինի ու Մարինետի պատմությունների շարքն է, որոնք ենթադրաբար մեծանում են Ֆրանսիայում (քանի որ երբեք չի նշվում վայրը)՝ ծնողների խորհուրդներով և կենդանիների բարեկամությամբ շրաջապատված: Դուստրերը երկակի բնույթ ունեն: Մի կողմից իրական կերպարներ են՝ դպրոց են գնում, տանը և ֆերմայում օգնում են ծնողներին, մյուս կողմից դառնում են հեքիաթի կերպարներ՝ իրական աշխարհը փոխարինելով անիրականով. հավին դարձնում են փիղ, իրենք դառնում են՝ մեկը ձի, մյուսն ավանակ, հավն այնքան շատ է ցանկանում հաճույք պատճառել խոզին, որ ներշնչանքի շնորհիվ ճոճանակի մի ծայրին նստած խոզին վեր է բարձրացնում և ճոճում է: Կենդանիները պահպանել են բնությունից իրենց տրված առանձնահատկությունները՝ շունը հավատարիմ է իր բնագրին, աքաղաղը նույն հիմարն ու գլուխգովանն է, կատուն ծույլ է ու ինքնահավան և այլն: Դա ինչ-որ չափով անիրական աշխարհ է, որտեղ կենդանիները օժտված

են խոսելու և մտածելու կարողությամբ և կարող են իրենց նախասիրություններով, հետաքրքրություններով, դատողություններով կիսվել մարդկանց հետ, նույնիսկ՝ ընկերանալ: Սրանք հեքիաթներ են, որտեղ առօրյան միաձուլվում է հրաշքին և ընթերցողին տանում է դեպի երանելի աշխարհ:

Ծնողները, բնականաբար, ավելի բարձր մտավոր կարողություններ ունեն, քան նրանց դուստրերը և կենդանիները: Նրանք գրեթե բոլոր հեքիաթներում պահպանում են մարդուն հատուկ հատկանիշները, իսկ միտքը միշտ արթուն է:

Հեքիաթաշարի հերոսներին կարելի է բաժանել երեք խմբի՝

1. երկու քույրերն են, որոնք շատ են սիրում իրենց ծնողներին, ինչպես նաև ֆերմայի բոլոր կենդանիներին: Նրանք միմյանց հետ կապված են բարեկամական զգացմունքներով: Այդ է պատճառը, որ երբ ծնողները ինչ-ինչ անհնազանդության պատճառով պատժում են փոքրիկներին, կենդանիները որպես լավ բարեկամներ միավորվում են ու փորձում են լուծումներ գտնել դժվար իրավիճակներից դուրս գալու:

2. ֆերմայում ապրող ընտանի կենդանիներն են, որոնք ունեն եզակի կարողություն՝ խոսում և մտածում են մարդու նման: Տասնյոթ հեքիաթներից տասնվեցը, բացառությամբ «Ներկատուփերից», վերնագրված են այն կենդանու անունով, որն այդ հեքիաթի գլխավոր հերոսն է՝ իր կենդանական առանձնահատկություններով. շունը՝ հավատարմությամբ, կատուն՝ հնարամտությամբ ու ծուլությամբ, եզները՝ հնազանդությամբ ու աշխատասիրությամբ, սիրամարգը՝ գեղեցկությամբ ու սնապարծությամբ, աքաղաղը՝ հիմարությամբ և այլն: Բնարկե բոլոր հեքիաթներում կարմիր թելի նման անցնում է բարության և ընկերասիրության թեման: Նույնիսկ այնպիսի կենդանին ինչպիսին կատուն է, որի բնութագրական հատկանիշներից է եսասիրությունը, Էմելի մոտ ալտրուիստական դրսևորում ունի և բարություն անելու մտքից հաճույք է ստանում:

Դատելով այս հեքիաթներից հասկանում ենք, որ հեղինակը անհանդուրժող կեցվածք ունի հիմարության («Մև, փոքրիկ աքաղաղը»), դավաճանության («Կովերը»), չարության («Մորաճուռակը և խոզը») հանդեպ, քանի որ միայն այս հեքիաթներում են աքաղաղը, Կորնետ անունով կովը մեռնում, իսկ մորաճուռակը կորցնում է թևերը: Մյուսներում հեղինակը քույրերի և կենդանիների միջոցով զանազան հնարամտություններ է բանեցնում, շատ հաճախ ներողամտություն ցուցաբերելով կենդանիների թերությունների հանդեպ,



ինչպես «Միրամարգը» հեքիաթում սիրամարգի նման գեղեցիկ դառնալու խոզի զավեշտական նկրտումների հանդեպ կամ «Ներկատուփերում» արքադադի ձիուց մեծ լինելու անհեթեթ մտայնության: Օրինակները շատ են:

3. ծնողներն են, որոնք բացառությամբ «Բաղը և հովազը» հեքիաթի՝ գեղջուկ աշխատավորներ են, որոնց միակ նպատակն այն է, որ իրենց երկու դուստրերը լավ սովորեն դպրոցում և նաև լավ աշխատեն տանը, լինեն խոհեմ ու հնազանդ: Նրանք շատ խստաբարո են և փոքրիկների գանցանքները փոխհատուցվում են միայն օրվա ընթացքում չոր հաց և ջուր ունենալու պատժով, վատագույն դեպքում մորաքույր Մելինային այցելելով, որը շատ տգեղ և չար կին է: Բայց նրանց չարությունը կարծեցյալ է, այն կարելի է խստություն համարել, քանի որ նրանք էլ ինչպես փոքրիկ քույրերը սիրում են ֆերմայի բոլոր կենդանիներին:

Հեքիաթը խորհրդանշում է բարու ներկայություն, նրա հաղթանակ, անիրականի, երազանքի իրականացում, և այլ շատ ու շատ դրական զգացողություններ և ապրումներ: Այն մեզ ուղեկցում է մանկությունից մինչև կյանքի ավարտը:

Գաղափարական առումով Մարսել Էմեի հեքիաթները նոր խոսք չեն ասում ոչ հեքիաթի ժանրում, ոչ էլ գրականության մեջ: Նրա բերած նորությո՞ւր արտահայտչամիջոցների և խաղացկուն հնարամտության մեջ է: Արդեն ասվել է, որ Մ. Էմեն իր բոլոր ստեղծագործություններում առանձնանում է շատ նուրբ հումորով և երևակայականի դրսևորմամբ, որոնք արտահայտվում են բնականաբար լեզվի, ոճի միջոցով:

Շատ կարևոր է թարգմանությունը սկսելուց առաջ ուսումնասիրել հեղինակի լեզուն և ոճը: Մ. Էմեի լեզուն համեմատում են Մոլիերի լեզվի հետ: Հերոսուհիները և կենդանիները միմյանց դիմում են դուրքով, որպես հավասարը հավասարին: Օրինակ՝

- Շատ քաղցած եմ... Հորթի միս եք տանում, այնպես չէ՞:
- Այո, աղեկալ է, – ասաց Դելֆինը: Բայց հասկանո՞ւմ եք, շո՛ւն, այն գնել ենք ծնողների համար: Մեզ չի պատկանում...
- Ուրեմն նախընտրում եմ այդ մսախի չմտածել:

«Շունը»

Արդեն ասել ենք, որ հեքիաթներում կենդանիները խոսում և մտածում են մարդկանց նման, բայց որ քաղցած շունն այդքան մշակ-

ված լեզով այդպիսի բարձր մտածողություն արտահայտի ասելով՝ «ուրեմն նախընտրում եմ այդ մասին չմտածել», կարծում ենք, իհարկե, որ դա հեղինակի ընտրությունն է և փորձել ենք նրան հավատարիմ մնալ:

Կամ՝

«Վերջապես, տիրոջս մատուցում էի անհրաժեշտ, փոքրիկ ծայրություններ, էլ չեմ խոսում ինձ լսելու հաճույքի մասին: Ընդունում եմ, որ ես ընդամենը շուն եմ, բայց խոսելն օգնում է, որ ժամանակն անցնի...»

– Դուք նույնքան լավ եք խոսում, որքան մարդը, շո՛ւն:

«Շունը»

Այս փոքրիկ հատվածում երևում է, թե Էմեն որքան է շան հատկանիշները բարձրացրել, հավասարեցրել մարդու մակարդակին, որ շունն իրեն լսելը հաճույք է համարում, իսկ նրա խոսելաձևը, ըմբռնողականությունը գնահատելով՝ փոքրիկները նրան դուք-ով են դիմում և համեմատում մարդու հետ:

Բնականաբար դա պատահական չէ, քանի որ ողջ հեքիաթաշարը բարեկամության, ընկերասիրության, նվիրվածության, սիրո, հարգանքի դրսևորում է:

Գիտակցելով հեղինակի նպատակը՝ փորձել ենք հայերեն թարգմանության մեջ պահպանել այդ մոտեցումը: Թարգմանության ժամանակ նպատակ չենք ունեցել հեքիաթները հայացնել, այլ հայերեն ներկայացնել ֆրանսիացի հեղինակին՝ փորձելով պահպանել ֆրանսիական հոգեբանությունը, լեզվամտածողությունը, վարվեցողությունը, իրականությունները, քանզի գիտակցում ենք, որ թարգմանության գլխավոր առաքելություններից մեկը օտար մշակույթը թիրախ լեզվում ներկայացնելն է, սակայն պահպանելով այն դժվար սահմանը, որը հատելու դեպքում ընթերցողը կարող է այլևս չզգալ, որ ստեղծագործությունը գրված է այլ լեզվով: Նման բան ենք տեսնում ռուսերեն թարգմանության մեջ: Վերնագիրը փոխված է և կարծում ենք, որ ռուսերեն տարբերակի վերնագիրն իսկ հուշում է Էմեի ինքնատիպ հեքիաթները ռուսացնելու միտումը: Թարգմանվող լեզվում ունենալով *perché* թառած, ածականը, որը նշանակում է բարձր տեղում նստած, ինչը մեր կարծիքով շատ ինքնատիպ է, խոսուն և կատվի ծուլությունը, ինքնաբավությունը բնորոշող, ռուսերենում ստացել է *Мурлык* հատուկ անունը, որը ռուսական շատ հեքիաթներում կատվի համար գործածվող անուն է, սակայն հայերեն տարբե-

րակում պահպանել ենք հեղինակի ընտրած թառած ածականը, որը ուղիղ իմաստով գործածվում է թռչունների համար, իսկ անուղղակի իմաստով՝ մարդկանց, կենդանիների, որոնք խուսափում են աշխատանքից, ծուլանում են: Գիտակցելով էմեի ընտրությունը կատվին բնութագրելու հարցում՝ մենք պահպանել ենք այդ հատկանշանական բառը, չնայած հայոց լեզվում կատվի համար այն քիչ է գործածվում կամ չի գործածվում: Պահպանել ենք նաև հեքիաթաշարի «Կովերը» հեքիաթում գլխավոր հերոս Cornet անունով կովի անունը, որը ռուսերեն թարգմանության մեջ ստացել է Буренушка անունը, քանի որ թարգմանիչը հնարավորինս պետք է փոխանցի ստեղծագործությունն ամբողջությամբ՝ փորձելով թիրախ լեզվում պահպանել ստեղծագործության արժեքները, տվյալ դեպքում կատվին բնորոշող թառած ածականը և կովի Կորնետ անունը, չնայած այն հանգամանքին, որ թիրախ լեզվում կատվի համար բնութագրական է *մռան* ածականը, իսկ կովի համար շատ գործածական է *Օտղիկ* անունը:

Մարսել էմե թարգմանելիս, կարծում ենք, թարգմանիչն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի նրա շատ նուրբ, թեթև, գուտ ֆրանսիական հումորին, որը նրա ստեղծագործության ամենաբնութագրական առանձնահատկություններից է: Նրան հաջողվում է շատ դիպուկ բառերով ներկայացնել որևէ կերպարի և՛ առավելությունները, և՛ թերությունները: Օրինակ, աքաղաղի կերպարում տարբեր հեքիաթներում ծաղրանքով պատկերում է նրա սակավատությունը, սին համարձակությունը, գլուխգոլանությունը:

*– Այո՛, պարո՛ն, – ասում էր աքաղաղը զայրացած ձայնով, – ավելի պիտանի, քան դուք, ու նաև ավելի խելացի: Եվ ծաղրանքով մի՛ նայեք, խնդրեմ, կարող եմ մի հատ դաստիարակիչ հարված հասցնել:*

*«Ներկատուփերը»*

Այս խոսքերն ուղղված են ձիուն:

Կամ

*– Եվ ինչի՞՞ համար ես կատարում այդ մեծ ճամփորդությունը, աքաղա՛ն:*

*– Դա երկա՛ր պատմություն է, փոքրիկներ, երկա՛ր պատմություն (և էլ ավելի էր փքում կտնառքը): Երբ այդ մասին մտածում եմ... Ա՛հ, զայրանում եմ, գիտե՛ք: Պատկերացնում եք, այս գիշեր վերջին տասնհինգ օրերի ընթացքում աղվեսը երրորդ անգամ եկավ թափառելու հավաքնի շուրջը: Օգտվում է այն հանգամանքից, որ մի քիչ խորն եմ քնում, բայց հանգիստ եղեք, ես նրան չեմ թողնի միշտ շա-*

հավետ դիրքում լինել: Թող պարծենա, որ բախտը բերել է, քանի որ արթուն չեմ եղել...

*Մարինետը հագիվ զսպեց, որ չփոթկա: Նա բացականչեց.*

*– Բայց աքաղաղ, աղվեսը քեզ կուտե՛ր, դու շատ փոքրի կ ես:*

*Այդ լսելով աքաղաղը մի ցատկով ետ շրջվեց, իսկ կատարը կատաղությունից ցնցվում էր:*

*– Շատ փոքրի կ, ասացեք խնդրեմ, շուտով կտեսնենք... Միայն մի բան է կարևոր՝ քաջությունը, և ես դրա պակասը չունեմ, փառք Աստծո: Աղվեսն այս գիշեր էլ փախավ ինձնից, բայց լավ իմացեք, լուսաբացին դուրս եմ եկել հավանոցից ու ճանապարհ ընկել, որ հասնեմ անտառ: Ես կգտնեմ աղվեսին, որտեղ էլ թաքնված լինի և ինչպես հարկն է դաս կտամ:*

«Ա, փոքրիկ աքաղաղը»

Այս հատվածում տեսնում ենք, թե ինչպիսի հաճելի հումորով է Էմեն ներկայացրել աքաղաղի սին էությունը, որը հայերեն ամփոփվում է մեկ բառի մեջ «աքլորություն»: Այն ավելի ամբողջական է դառնում համատեքստային ընթերցումից հետո:

«Գայլը» հեքիաթը նույն Շ. Պերոյի «Կարմիր գլխարկն» է, բայց Մ. Էմեի մեկնաբանությամբ: Այս հեքիաթում, ինչպես Էմեի մյուս հեքիաթներում հաղթում են բարությունն ու ընկերասիրությունը: Թարգմանական առումով հետաքրքիր է մոտեցումը խաղերի թարգմանությանը: Կան խաղեր, որոնց համարժեքը գոյություն ունի հայկական մշակույթում և թարգմանական առումով դժվարություն չեն ներկայացնում, օրինակ՝ տըրզ, գետնից բարձր, բայց նաև խաղատեսակներ կան, որոնք թիրախ լեզվում, որ հայերենն է, գոյություն չունեն: Այդ խնդիրը լուծել ենք՝ ելնելով Վինեյ և Դարբելնեի, որոնց համակարծիք են շատ ուրիշ տեսաբաններ և թարգմանիչներ, ինչպիսին են Նայդան, Սեզինոն թարգմանության ժամանակ կիրառվող explicitation (մեկնություն, բացատրություն, վերլուծություն) մեթոդից, որը կիրառվում է լեզվական, իմաստային, մշակութային և այլ իրակությունների, երևույթների դեպքում, երբ թիրախ լեզվում դրանք գոյություն չունեն: «Թառած կատվի հեքիաթները» շարքում այն կիրառվել է խաղերի պարագայում, հասկանալի է այն խաղերի, որ հայկական միջավայրին անձանոթ են: Պահպանելով ֆրանսիական բառը՝ փորձել ենք ներկայացնել խաղի բովանդակությունը էջի ստորին մասում: Նման մոտեցումը հետապնդել է երկու նպատակ. ներկայացնել խաղը՝ չփորձելով խաղի անունը թարգմանել, այն թողնելով համապատասխան մասնա-

գետներին, և երկրորդ՝ այդ միջոցով, իհարկե այն համարելով ոչ լիարժեք, կատարել խաղի մշակույթի փոխանցում հայկական իրականության մեջ: Ահավասիկ մի քանի օրինակ՝

– *Երբ միայն երկուսով ենք, խաղն այնքան էլ լավ չի ստացվում: Հնարավոր չի ա լա դոնդ*<sup>13</sup> խաղալ:

– *Իսկապես, հնարավոր չի ա լա դոնդ խաղալ, ոչ էլ գնդախաղ:*

– *Ոչ ֆուդե*<sup>14</sup>, ոչ էլ կոտոդ մալադ<sup>15</sup>:

– *Ոչ ա լա մադիե*<sup>16</sup>, ոչ էլ բալ ֆոնդու<sup>17</sup>:

– *Բայց և այնպես, չկա ավելի զվարճալի խաղ, քան ա լա դոնդը կամ գնդախաղը:*

– *Ա՛հ, եթե երեքով լինեի՛նք...*

Քանի որ փոքրիկները պատուհանին մեջքով էին կանգնած, գայլը քթով հարվածեց ապակուն, որպեսզի հասկացնի, որ ինքն այնտեղ է: Թողնելով խաղը, նրանք ձեռք-ձեռքի բռնած մոտեցան պատուհանին:

– *Բարև՛, – ասաց գայլը, դրսում տաք չէ: Կծող ցուրտ է, գիտե՞ք:*

Ամենաշեկիլկը սկսեց ծիծաղել, որովհետև նրան զվարճալի էին թվում գայլի սրածայր ականջներն ու գլխի վրա ցրտից ցից-ցից տնկված վրձնանման մազերը: Դելֆինն անմիջապես ճանաչեց նրան: Սեղմելով կրտսեր քրոջ ձեռքը շնջաց.

---

<sup>13</sup> Երեխաները շրջան են կազմում և պտտվում են: Հետո ընտրում են մեկին մեջտեղում կանգնելու համար, որը հրամաններ է տալիս, օրինակ՝ բարձրացնել ձեռքերը, պագել, բարձրացնել մի ձեռքը և այլն: Նա, ով սխալվում է, միանում է կենտրոնում գտնվող երեխային: Վերջինը հաղթող է ճանաչվում: «Գայլը»

<sup>14</sup> Երեխաները շրջանաձև նստած են: Նրանցից մեկը թաշկինակը ձեռքին պտտվում է շրջանի շուրջը: Նա թաշկինակը դնում է նստած երեխաներից մեկի մեջքին, որը պետք է վերցնի թաշկինակը և փորձի բռնել երեխաներից նրան, որը ցանկանում է մինչև հարված ստանալը առաջինը ազատ տեղը զբաղեցնել: Եթե հարված է ստանում, ապա պետք է մտնի շրջանի մեջ, և այդպես շարունակ: «Գայլը»

<sup>15</sup> Երեխաներից մեկը հիվանդի դեր է տանում: Նա գլուխը վերցնում է ձեռքերի մեջ, ձեռքն է բարձրացնում, մեջքն է բռնում, քայլում է կաղալով և այլն: Մյուսները պետք է կրկնեն: Եթե մեկը սխալվում է, ապա խաղից դուրս է գալիս: Վերջինը հաղթող է ճանաչվում: «Գայլը»

<sup>16</sup> Երեխաները խաղում են քաղաքապետի, նորապսակների, վկաների, ծնողների, հարսնաքույրերի դերերը: Նրանք հարսանիք են նմանակում:

<sup>17</sup> Երեխաները շրջան են կազմում: Նա, ում մոտ գնդակն է, պետք է նետի անուշաղիք երեխային: Եթե գնդակը դիպչում է այդ երեխային կամ նրան հաջողվում է այն բռնել, ապա հաջորդ երեխային ինքն է ընտրում շրջանից (նա կարող է խաբս տալ գնդակը նետելիս):

- Գայլ է:
- Գա յլ, - ուրեմն պետք է վախենա՞նք:
- Իհարկե պետք է վախենանք:

Դողահար փոքրիկները գրկախառնվեցին, միախառնելով շիկավուն մազերն ու փսփսոցները: Գայլն այն ժամանակից ինչ վազում էր անտառներով ու դաշտերով երբևէ այդպիսի գեղեցկություն չէր տեսել: Նրա սիրտը քնքշությամբ լցվեց:

- Ի՞նչ է ինձ հետ կատարվում, - մտածում էր նա, - ոտքերս ծալվում են:

Մտածեց ու հասկացավ, որ բարի էր դարձել:

«Գայլը»

Շատ երկար կարելի է խոսել Մ. Էմեի հրաշալի հեքիաթների մասին, բայց անհարաժեշտ է դրանք կարդալ և վայելել ֆրանսիական լեզվամտածողության հարստությունը, նրբությունը և խորությունը, որը ցանկացել ենք պահպանել թարգմանության մեջ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Aymé M.**, *Les contes du chat perché*, Paris, Gallimard, 1939.
2. **Guidère M.**, *Introduction à la traductologie*, Bruxelles, 2008.
3. **Էմե Մ.**, *Թառած կատվի հեքիաթները*, Երևան, Անտարես, 2013:

**РУЗАН МИРЗОЯН – Некоторые проблемы эквивалентности в переводах “Сказок кота на насесте” М. Эме.** Целью перевода является не арменизирование сказок, а представление французского писателя на армянском языке, сохраняя при этом психологию, языковое мышление, реалии французской культуры, поскольку главная миссия перевода – передать иностранную культуру на переводимый язык, причём сохраняя нелегкую грань переводимости, при пересечении которой, читатель сможет уже понять, что произведение написано на другом языке.

**RUZAN MIRZOYAN – Some Problems of Equivalence in “The Tales of the Perching Cat” by M. Ayme.** In the process of translation we didn't have the intention to Armenianize the fairy tales, but to present the French author in Armenian trying to preserve the French psychology, linguistic mentality, manners, realia, as we understand that one of the primary missions of translation is to introduce a foreign culture in the target language, keeping the difficult border which, if intersected, will make the reader feel that the work was originally written in another language.

## ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДА ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ

*КРИСТИНА СОГОМОНЯН*

*Ереванский государственный университет*

Фразеология составляет наиболее яркую, живую и своеобразную часть словарного состава любого языка. Фразеология важна для изучения семантических процессов, связанных с развитием системы значений слов, рождением новых знаков. Если мы говорим о процессе перевода, то изучение фразеологизмов представляет еще большую важность.

Различают три группы фразеологизмов:

### *Фразеологические сращения или идиомы*

Фразеологические сращения или идиомы – абсолютно неделимые словосочетания, значение которых независимо от их лексического состава и от значения их компонентов. Они немотивированы и непроеизводны. В их значении нет никакой связи со значением их компонентов.

### *Фразеологические единства*

Во фразеологическом единстве (ФЕ) новое, фразеологическое значение создается изменением значения всего комплекса компонентов словосочетания. При этом поглощается и теряется индивидуальный смысл слов-компонентов. Они образуют неразложимое семантическое целое. Эта группа характеризуется мотивированностью значения.

### *Фразеологические сочетания*

Фразеологические сочетания – это фразеологизмы, компоненты которых в известной степени равноправны между собой.

Чтобы говорить о приемах перевода ФЕ, нужно всю фразеологию данного языка расклассифицировать по какому-то обоснованному критерию на группы, так как от степени слитности компонентов несомненно зависит в некоторой мере и возможность полноценного перевода, выбор наиболее удачных приемов. Возможности достижения полноценного словарного перевода ФЕ зависят в основном от соотношений между единицами исходного языка (ИЯ) и переводимого языка (ПЯ):

Несколько упрощая, можно сказать, что ФЕ переводят либо фразеологизмом – фразеологический перевод, либо иными средствами (за отсутствием фразеологических эквивалентов и аналогов) – нефразеологический перевод.

Рассмотрим варианты фразеологического перевода.

*Фразеологический эквивалент*

Фразеологический эквивалент – это фразеологизм на ПЯ, по всем показателям равноценный переводимой единице. Значительному числу фразеологизмов в немецком языке можно найти полные соответствия в армянском. Так, например, немецкому фразеологизму – **es ist nicht alles Gold, was glänzt** соответствует армянский *սո՛ւնն փայլողը բո՛ւն ուկէ չէ*:

В данном примере мы можем видеть полное семантическое соответствие. Смысл, который был заложен в языке оригинала, полностью сохранен при переводе. Читатель воспринимает данный фразеологизм одинаково, прочитав его и на армянском, и на немецком языке. И армянин, и немец, увидев или услышав, данный фразеологизм, поймут, что речь идет о том, что не все то, что кажется красивым или правильным на самом деле таковым является. Подобных примеров соответствия в двух языках (немецкого и армянского) достаточно много. По такому же принципу строятся следующие фразеологизмы: **auf Kohlen sitzen** – *ստեղնե՛րի վրա նստած լի՛նէ*; **einen Schatten auf j-n / etw. werfen**. – *սովեր գգել սեկի վրա*. В данных примерах можно наблюдать полное соответствие на лексическом и семантическом уровнях.

*Относительный фразеологический эквивалент*

Относительный фразеологический эквивалент уступает полному лишь в том, что отличается от исходной ФЕ по какому-либо из показателей: другие, часто синонимические компоненты, небольшие изменения формы, изменение синтаксического построения. **Aus einer Mucke einen Elefanten machen** – *լու՛ն ուղտ շի՛նէլ*, демонстрирует те же самые особенности и на семантическом, и на лексическом, и на грамматическом уровне. Дословно данный фразеологизм переводится как – *սնծակից փիղ սարքել*. В армянской фразеологии в ситуации излишнего преувеличения используют похожий фразеологизм, и вместо комара, из мухи делают слона. Таким образом, семантика обоих выражений одинакова. И то, и другое, используют в одной и той же ситуа-



ции. Или например, **die Spuren verwischen**. – *hknprnprn fshprnti, z'uzet;*  
**die Welt ist ein Dorf** – *wzhshprhn' itn t.*

Во всех примерах семантика фразеологизмов одинакова. Значение фразеологизмов на обоих языках одно и то же. Лексика отличается иногда значительно, а иногда всего лишь парой слов.

#### *Нефразеологический перевод*

Нефразеологический перевод, как показывает само название, передает данную фразеологическую единицу при помощи лексических, а не фразеологических средств ПЯ. К нему прибегают обычно, лишь убедившись, что ни одним из фразеологических эквивалентов или аналогов воспользоваться нельзя. Такой перевод, трудно назвать полноценным: всегда есть некоторые потери (образность, экспрессивность, коннотации, афористичность, оттенки значений), что и заставляет переводчиков обращаться к нему только в случае крайней необходимости. К основным приемам нефразеологического перевода относят калькирование и описательный перевод.

#### *Калькирование*

Калькирование, или дословный перевод возможно только тогда, когда дословный перевод доводит до читателя истинное содержание всего фразеологизма (а не значение составляющих его частей). Это осуществимо, во-первых, в отношении пословиц и, в первую очередь, таких, которые не обладают подтекстом. Например, фразеологизм **weisse Rabe** переводится при помощи калькирования – *uyhushuq' shqnuq'*. Причем данный фразеологизм имеет позитивное значение “умный, одаренный человек”, в то время, как армянский фразеологизм – негативное значение “непохожий на других”. Таким образом, грамматика и лексика данных фразеологизмов будет полностью схожа, а вот в плане семантики, данные выражения будут иметь разные смыслы в немецком и армянском языках.

#### *Описательный перевод*

Описательный перевод ФЕ сводится, по сути дела, к переводу не самого фразеологизма, а его толкования, как это часто бывает вообще с единицами, не имеющими эквивалентов в ПЯ. Рассмотрим пример описательного перевода фразеологизмов. **Däumchen drehen** – *shqnrp'd j'p'ri qsh'*. Грамматическая структура сохранена, т.к. в оригинале ин-

финитивная конструкция сохраняется и в переводе. Лексика, естественно, подобрана другая, не та, что в оригинале. Это очевидно, так как перевод является описательным. Говоря о семантике, то здесь она сохранена. Смысл высказывания на исходном языке сохранен и передан на переводимый язык.

Исходя из этого, следует сделать вывод, что фразеологическое единство можно и нужно переводить с помощью фразеологического перевода, который сохраняет всю яркость, оригинальность и национальное своеобразие фразеологических единиц.

### ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. Архипов А.Ф., *Письменный перевод*, Москва, 2008
2. Левковская К. А., *Лексикология немецкого языка*, Москва, 1956
3. Iskos A., Lenkowa A., *Deutsche Lexikologie*, Ленинград, 1970
4. Schwarz E.A., *Gebrauchen Sie das treffende Wort*, Москва 1969
5. Մուրիսյան Ա.Ս., *Ժամանակակից հայոց լեզու*, ԵՊՀ, 2004
6. Ասատրյան Մ.Ե., *Ժամանակակից հայոց լեզու*, ԵՊՀ, 2004
7. Եզեկյան Լ., *Հայոց լեզու*, ԵՊՀ, 2005

**ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ – Դարձվածքների թարգմանության առանձնահատկությունները.** Թարգմանության ընթացքում մեծ նշանակություն ունի դարձվածքների ուսումնասիրումը Սույն հոդվածը անդրադառնում է դարձվածքների ուսումնասիրության անհրաժեշտությանն ու կարևորությանը թարգմանության մեջ: Վերջինիս նպատակն է վերլուծել դարձվածքների թարգմանությունը գերմաներենից հայերեն՝ դասակարգելով դարձվածքները և ուսումնասիրելով գերմաներեն դարձվածքների թարգմանության յուրահատկություններն ու միջոցները:

**KRISTINA SOGHOMONYAN – The features of the translation of fraseological units.** In translation process studying of phraseological units represents great importance.

This article focuses on the importance and necessity of analysis phrases in translation This aims to analyze the translation of phrases from Armenian into German, classifying and studying features and resources of translation of German Phrases.

**ԱՍՍՑՎԱԾՔՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ԱՐԺԱՆԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ  
ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ**

**ԳՈՀԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

**ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Բոլորին է հայտնի, որ ժողովրդի իմաստությունն ու ոգին արտացոլված է նրա ասացվածքների և առածների մեջ: Առածներն ու ասացվածքները յուրաքանչյուր լեզվի անբաժանելի մասն են կազմում: Նրանք համարվում են լեզվի հարստությունն արտահայտող առանձնահատուկ միջոցներ: Ասացվածքների միջոցով մենք կարող ենք հասկանալ այս կամ այն ժողովրդի մշակույթն ու արժեքները, նրանց բնավորությունն ու մտքերը, ինչպես նաև հնարավորություն ունենալ համեմատել մի ժողովրդի մոտ հանդիպող ասացվածքներն այլ ժողովուրդների ասացվածքների հետ:

Ասացվածքներն ու առածները ժողովրդական ստեղծագործության ամենահին և տարածված ժանրն են: Դրանք դարձվածաբանական արտահայտություններ են, որոնք իրենց կազմով և օգտագործմամբ կայուն բնույթ ունեն և որոնց առանձնահատկությունն այն է, որ դրանք օգտագործվում են որպես խոսքի պատրաստի միավորներ՝ նույն բառային կազմով և իմաստով:

Օգտագործելով այս կամ այն ասացվածքը՝ խոսողը ձգտում է հաստատել և ընդգծել իր խոսքը: Դա անխուսափելի է ցանկացած ժամանակ, քանի որ ասացվածքներն եղել են, կան և միշտ կլինեն մեր խոսքի բաղադրիչ մասնիկներ: Այդ իսկ պատճառով ասացվածքների թարգմանությունը ստեղծում է որոշակի դժվարություններ թարգմանիչների համար: Դա հատկապես վերաբերում է բանավոր թարգմանությանը, երբ ընդամենը մի քանի բոլորների ընթացքում թարգմանիչը պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել և այս կամ այն ասացվածքին կամ առածին տա համապատասխան ճիշտ թարգմանություն: Ի տարբերություն բանավոր թարգմանիչների՝ գրավոր թարգմանիչները որպես առավելություն իրենց տրամադրության տակ ունեն անսահմանափակ ժամանակ և տարբեր տեղեկատվա-

կան բառարաններից օգտվելու հնարավորություն, որոնք օգնում են գտնել թարգմանության լավագույն տարբերակը:

Այն, որ թարգմանիչը պետք է լինի նաև գրող, անվիճելի է: Մալկայն անմտություն է մտածել, որ առանց լեզվաբանական կանոնների գիտության հնարավոր է լինել լավ թարգմանիչ: Չէ՛ որ առանց անատոմիա ուսումնասիրելու հնարավոր չէ լինել լավ քանդակագործ:

Ասացվածքների թարգմանության հիմնական խնդիրն այն է, որ դրանք մի ժողովրդի աշխարհայացքային արտացոլումն են: Մեծ դժվարություն են ներկայացնում այն ասացվածքները, որոնք պարունակում են իրակություններ (ռեալիաներ): Մալկայն իրակություններից հնարավոր է և խուսափել, եթե թարգմանվող լեզվում կա հարմար տարբերակ: Իրակությունները շատ կարևոր նշանակություն ունեն հատկապես հեքիաթներում: Հեքիաթներում հանդիպող ասացվածքներում կամ առածներում ազգային կոլորիտը պահպանելու համար պետք է դրանք թարգմանել այնպես, ինչպես բնօրինակում են, այնուհետև համառոտ նկարագրել, թե ինչ ռեալիա է դա (կա՛մ փակագծերում, կա՛մ որպես ծանոթագրություն):

Դրա համար գոյություն ունեն թարգմանչական տարբեր ձևեր: Տարբերակներից մեկը ասացվածքների ճշգրիտ թարգմանությունն է, որը միաժամանակ և՛ փոխանցում է ասացվածքի իմաստը մյուս լեզուն կրողին, և՛ պահպանում է այն՝ որպես դարձվածաբանական միավոր: Օրինակ՝ *Alle Wege führen nach Rom.* – *Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ*: Կամ *Der Schuster hat (oder trägt) die schlechtesten Schuhe.* – *Կոշկակարի կոշիկներն ամենավատն են*: Ասացվածքների իմաստը պահպանված է: Մենք ամբողջությամբ հասկանում ենք, թե ինչ բարոյախոսություն է ընկած նրանց հիմքում: Բացի դրանից, ճշգրտորեն փոխառված է յուրաքանչյուր բառ իր ուղիղ իմաստով և շարահյուսական կառույցով: Նույնը նաև այս ասացվածքի դեպքում. *Der Appetit kommt beim Essen.* – *Ախորժակն ուտելիս է բացվում*:

Ասացվածքների թարգմանության մյուս տարբերակը կիսահամարժեք թարգմանությունն է, երբ ասացվածքը թարգմանվում է գրեթե նույնությամբ, միայն մեկ կամ մի քանի բաղադրիչների փոփոխությամբ՝ բնականաբար պահպանելով կոլորիտը: Օրինակ՝ *Gute Saat, gute Ernte.* – *Ինչ ցանես, այն կհնձես*: Այս ասացվածքը թարգմանելիս գերմաներեն ասացվածքում օգտագործված *gut* (շավ)՝ բառը հայերեն համարժեքում բացակայում է: Կամ մեկ այլ օրինակ՝ *Zwei*

*Fliegen mit einer Klappe schlagen.* – Մի զարկով երկու նապաստակ խփել: Գերմաներեն ասացվածքի մեջ օգտագործված *Fliege* (ճանձ) բառը հայերենի ասացվածքում ունի իր համարժեքը, մասնավորապես նապաստակ բառը: Այնուամենայնիվ, ասացվածքի իմաստը մնացել է նույնը, այն է՝ միանգամից երկու նապաստակի հասնել: Այլ կերպ ասած՝ թարգմանիչը իմաստափոխության չի ենթարկում ասացվածքը: Նույն երևույթը կարող ենք տեսնել նաև հետևյալ ասացվածքի մեջ. *Man sieht nicht auf die Goschen (die Maul), sondern auf die Groschen.* – Մարդիկ նայում են ոչ թե բերանին (այսինքն, թե ինչ են խոսում), այլ գրպանին (այսինքն, թե ինչքան փող ունեն): Այս ասացվածքը հատկապես ցայտուն է արտահայտում օտար լեզվի դարձվածաբանական միավորների՝ այլ լեզվով փոխանցման վերոնշյալ տարբերակը: Չնայած թարգմանված տարբերակում հանգեր արդեն չկան, բայց դա չի խանգարում ասացվածքի ճշգրիտ փոխանցմանը: Դարձվածաբանական միավորների թարգմանության մյուս տարբերակը նրանց փոխանցումն է թարգմանվող լեզվում արդեն գոյություն ունեցող համարժեքներով: Ինչպես օրինակ՝ *Alle Gewässer fließen ins Meer.* – Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ: Չնայած գերմաներենում նույնպես, ինչպես վերը նշվեց, կա նույն, համարժեք ասացվածքը (*Alle Wege führen nach Rom*): Մեկ այլ օրինակ՝ *Aller guten Dinge sind drei.* – Սասված երրորդություն է սիրում: *Eile mit Weile* ասացվածքը թարգմանված տարբերակում ոչ միայն տարբերվում է իր բառային կազմով, այլ նաև չունի նույն երանգավորումը հանգային առումով Շտապի ը դանդաղորեն կամ Դանդաղ, բայց հստակ քայլերով:

Միևնույն լեզվում կարող են լինել նույն ասացվածքի և բառացի, և՛ համարժեք թարգմանությունները: Բերենք մի քանի օրինակ, որոնք թարգմանչական առումով ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քան իրենց համարժեքներն ունեցող ասացվածքները:

*Die Liebe geht durch den Magen.* – Տղամարդու սիրտ տանող ամենակարճ ուղին անցնում է ստամոքսով (բառացի թարգմ. – Մերն անցնում է ստամոքսով):

*Erst wägen, dann wagen.* – Հազար չափի՛ր, մեկ կտրի՛ր (բառացի թարգմ. Սկզբում կշռել, հետո ռիսկի դիմել):

*Auf jeden Regen folgt auch Sonnenschein.* – Չկա չարիք առանց բարիք (բառացի թարգմ. Ամեն անձրևի հաջորդում է արևը):

*Den Nagel auf den Kopf treffen.* – Աչքը սարքելու տեղը ունքն էլ հետը հանեց (բառացի թարգմ. Մեխը գլխին խփել):

*Du bist nur einmal jung.* – Մի անգամ ենք սալրում (բառացի թարգմ. Միայն մի անգամ ես երիտասարդ):

*Von den Worten zu den Taten ist es ein weiter Weg.* – Սուելը հեշտ է, գործելը՝ դժվար (բառացի թարգմ. Բառերից մինչև արարքներ երկար ճանապարհ է):

*Frisch gewagt ist halb gewonnen.* – Ռիսկը գործի կեսն է (բառացի թարգմ. Ռիսկի դիմողը կիսով չափ հաղթող է):

*Die Wahrheit hört man ungern.* – Ճշմարտությունն աչք է ծակում (բառացի թարգմ. Ճշմարտությունը տհաճությամբ են լսում):

Թարգմանության այս տարբերակը, սակայն, ունի իր թերությունները (Alles hat seine zwei Seiten): Այն չի կարող փոխանցել տվյալ ժողովրդի լեզվամտածողությունն ու կոլորիտը, երանգավորումը, քանի որ դա արդեն արտահայտված է մեկ այլ լեզվին բնորոշ ասացվածքի միջոցով: Թարգմանության այս տեսակը երբեմն ունի շատ էական նշանակություն: Չէ՞ որ կան այնպիսի բառեր, ասացվածքներ և առածներ, որոնց բառացի, ճշգրիտ թարգմանությունը չի կարող ունենալ նույն ազդեցությունը և իմաստը, ինչ բնօրինակում է: Օրինակ՝ եթե գերմաներեն *Ochse* բառը գերմաներենում նշանակում է *ցլի պես հիմար*, ապա հայերենում այն ունի *ցլի պես ուժեղ* իմաստը: Նույնը նաև ասացվածքների դեպքում: Բերենք գերմանական հետևյալ ասացվածքը. *Auf dem Messer kann man nach Breslau reiten*: Այս ասացվածքի սկզբնաղբյուրը գերմանական կախարդների մասին հեքիաթներն են եղել: Ըստ դրանցից մեկի՝ կախարդները կարող են դանակի ծայրից թռչել Բլոքսբերգ: Բլոքսբերգը Հարցյան լեռներից է, որը հայտնի է որպես կախարդների հավաքատեղի: Եթե այս ասացվածքը թարգմանվի բառացի՝ *Դանակի վրայից կարելի է թռչել Բրեսլաու*, ապա մյուս լեզուն կրող անհատը չի հասկանա, որ իրականում խոսքը սուր դանակի մասին է: Այս ասացվածքում արտահայտված է գերմանացի ժողովրդի սնահավատությունը, որը բնականաբար հնարավոր չէ արտահայտել մի լեզվով, որի մշակույթի մեջ այդպիսի երևույթներ չկան:

Թարգմանչական խնդիրներ են առաջանում նաև այն պատճառով, որ լեզուները, որքան էլ նույն լեզվաընտանիքին պատկանեն, ունեն միայն իրենց բնորոշ հատկանիշներ ու առանձնահատկություններ: Գերմաներենն ունի իր օրենքները, հայերենն՝ իրենը: Օրինակ՝ գերմաներենում սխալ է նույն նախադասության մեջ երկու անգամ ժխտում օգտագործել, մինչդեռ հայերենում առանց դրա հնա-

րավոր չէ: *Es ist noch kein Meister vom Himmel gefallen.* – Ոչ որ միանգամից չի վարպետանում:

Գերմաներենում կան մեծ թվով ասացվածքներ, որոնք անդեմ նախադասություններ են. նրանց ենթական արտահայտված է անդեմ *man* դերանվամբ, որը հայերենում չի թարգմանվում. թարգմանվում է միայն ստորոգյալը, հիմնականում՝ երրորդ դեմքով, հոգնակի թվով: *Man soll den Tag nicht vor dem Abend loben.* – Ճտերն աշնանն են հաշվում: Կա թարգմանության ևս մեկ ձև, որն ավելի տարածված է. թարգմանություն. երկրորդ դեմք, եզակի թվով: *Wie man es treibt, so geht es.* – Ինչ ցանես, այն էլ կհնձես: Թարգմանության այս տեսակը առանձնապես փոփոխություններ չի առաջացնում բնօրինակի իմաստային արտահայտման մեջ, թարգմանիչը պարզապես հարմարեցնում է այն իր լեզվի կանոններին: *Das Gute soll man nicht übergüten.* – Բարությունը չպետք է չարաշահել: Այստեղ նույն անդեմ *man soll* կապակցությունը թարգմանվել է *չպետք է* բառով, որն ավելի հասկանալի է դարձնում ասացվածքը:

Տարբեր լեզուներ ունեն երանգավորման տարբեր ձևեր: Այն, ինչը մի լեզվի համար առաջնային է, մյուս լեզվի համար կարող է լինել երկրորդական և անուշադրության մատնվել: Խոսքի երանգավորման, կոլորիտի մեջ են ժողովուրդների կյանքը և նրանց պատկերացումները: *Stille Wasser gründen tief* ասացվածքի հայերեն տարբերակն է՝ *Մարմանդ գետից վախեցի ը.* հայերեն տարբերակում չի նշվում այն փաստը, որ այդ գետերը կամ ջրերը խորն են, քանի որ հայերենի մեջ ավելի հարմար տարբերակ է գտնվել: Գետից կամ ջրից պետք է վախենալ, այսինքն՝ այնտեղ հնարավոր է խեղդվել:

Թարգմանության կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որ թարգմանիչը ճիշտ հասկանա բուն, բնագրում եղած ասացվածքների հիմնական իմաստը, այլապես դրանց սխալ ընկալումը կհանգեցնի թարգմանված տեքստի խեղաթյուրմանը: Օրինակ՝ *Abwarten und Tee trinken*. Եթե սա թարգմանվի բառացի, առանց դարձվածաբանական իմաստի (*Մպասել և թեյ խմել*), ապա այն կկորցնի իր ոճական և իմաստային նրբերանգները: Այնինչ այն իրականում ունի իր համարժեքը՝ *Կսպրենք, կտեսնենք:*

Եզրակացնելով՝ կարելի է ասել հետևյալը.

Դարձվածաբանական միավորների՝ ասացվածքների և առածների թարգմանության համար կան որոշակի լեզվաբանական կանոններ.

1. Թարգմանչական լավագույն տարբերակը, անկասկած, համարժեք դարձվածաբանական միավորների՝ ասացվածքների և առածների որոնումն է: Համապատասխան տարբերակ չգտնելու դեպքում կարելի է այն թարգմանել դրան նման ասացվածքով, չնայած, որ այն կունենա բառային այլ կազմ:
2. Շատ դեպքերում լեզվական մեկ միավորի համապատասխանում է մյուս լեզվի համատեքստային համարժեքների մի ամբողջ շարք: Ասացվածքների դեպքում թարգմանիչը պետք է կարողանա ընտրել լավագույն տարբերակը, թեկուզ որոշ բաղադրիչների փոփոխությամբ: Սա կոչվում է կիսահամարժեք թարգմանություն:
3. Բառացի թարգմանություն (երբեմն այս տարբերակն արդյունավետ չէ):
4. Պատմա – մշակութային երանգավորում ունեցող ասացվածքներն ու առածները թարգմանել բառացի՝ կցելով համառոտ նկարագիրը: Այսպիսի թարգմանությունը կոչվում է կրկնակի կամ զուգահեռ թարգմանություն:
5. Եթե թարգմանվող լեզվում չկա համապատասխան որևէ դարձվածաբանական միավոր, ապա պետք է փնտրել թեկուզ մի բառ կամ բառակապակցություն, որը կհամապատասխանի այդ ասացվածքին իմաստով և երանգավորմամբ (այս տարբերակը շատ քիչ կիրառություն ունի, քանի որ ասացվածքի իմաստը մեկ բառով կամ բառակապակցությամբ արտահայտելը շատ դժվար է):

Ասացվածքներն ու առածները, համարվելով տվյալ ժողովրդի մշակույթի մի մասը, միշտ եղել են և կլինեն արդի՝ չնայած զարգացմանն ու առաջընթացին: Իսկ երկու ժողովուրդների հաղորդակցման համար կարևոր է նաև դրանց թարգմանությունը, քանի որ ասացվածքներ հանդիպում են ոչ միայն խոսակցական լեզվում, այլ նաև գեղարվեստական ստեղծագործություններում, երբեմն նաև հրապարակախոսական ժանրում: Թարգմանիչը պետք է դրան նայի միաժամանակ և՛ բնագրի, և՛ թարգմանվող լեզուն կրող ժողովրդի աչքերով: Իսկ դրա համար նա պետք է իմանա տվյալ ժողովուրդների երկրագիտությունը և սովորույթները: Ճիշտ է՝ թարգմանիչն իր աշխատանքում հիմնականում ազատ է (եթե հաշվի չառնենք լեզվաբանական հատուկ օրենքները), բայց նա չպետք է անուշադրության մասնի նաև լեզուններում գործող առանձին օրենքները, համատեքստը և կենսակերպը:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Байер Х., Байер А., *Немецкие пословицы и поговорки*. – Москва: Высш. шк., 1989.
2. *Мастерство перевода*. – Москва, 1973.
3. Копанев П.И., Беер Ф., *Теория и практика письменного перевода (Часть 1)*. – Минск: Вышэйшая школа, 1986.
4. Подгорная Л.И., *Русские пословицы и поговорки и их немецкие аналоги* / Л.И. Подгорная // Санкт-Петербург: КАРО, 2001.
5. Федоров А.В., *Введение в теорию перевода*. – Москва, 1958.
6. Федоров А.В., Кузнецова Н.Н., Морозова Е.Н., Цыганова И.А., *Немецко – русские языковые параллели*. – Москва, 1961.
7. Հերմաներեն – հայերեն արածարի, Երևան 1988.
8. <http://www.duden.de/>
9. <http://www.bk-luebeck.eu/sprichwoerter-armenische.html>

ГОАР ДАНИЕЛЯН, ЛИЛИТ АРАКЕЛЯН – **Пословицы, как наследие национальной культуры, достойный вызов переводчикам.** Использование пословиц и поговорок, существующих уже в языке в качестве фразеологических комплексов, характерно для художественной литературы и для авторской речи. Пословицы и поговорки широко применяются и в публицистике и даже в научной литературе. Поэтому они должны рассматриваться не только как специфический вопрос перевода художественной литературы, но и как один из очень существенных общезыковых вопросов перевода. Передача пословиц и поговорок с сохранением их образной основы чаще всего невозможно и ненужно. Переводчик должен на это посмотреть со стороны двух языков. Переводчик свободен в своей работе (не считая лингвистические правила), но он должен обращать внимание на отдельные правила, существующие в разных языках, на контекст и на образ жизни народов.

GOHAR DANIELYAN, LILIT ARAQELYAN – **Proverbs as National Cultural Heritage: Worthy Challenge for Translators.** The use of proverbs and sayings, already existing in the language as complex phraseology, is typical in literature and in the author's speech. Proverbs and sayings are widely used in journalism and even in the scientific literature. Therefore, they should be considered not only as a specific issue of translation of fiction, but also as one of the very important issues of general language translation. Transfer of proverbs and sayings with preservation of their most imaginative basis is impossible and unnecessary. The translator must look at it from two languages. Translator is free in his work (not counting the linguistic rules), but he/she should pay attention to some of the laws that exist in different languages, in the context and the lifestyle of people.

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

**ԳՈՒՐԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Ինքնին հասկանալի է, որ քաղաքական տեքստեր թարգմանելիս, թարգմանիչը բախվում է մի շարք դժվարությունների: Այս դժվարությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ թարգմանիչը գործ ունի երկու տարբեր լեզուների հետ, տարբեր մշակույթներով, տարբեր աշխարհընկալմամբ և մտածելակերպով:

Քաղաքական լեզվի թարգմանությունը պահանջում է քրտնաջան աշխատանք: Քաղաքական խոսույթը ունի լեզվական միավորներ, որոնք հատուկ են այդ լեզվին և պահանջում են թարգմանչից լինել բանիմաց և ունենալ ճկուն միտք: Ընդհանուր քաղաքականության վերաբերյալ գրքերը բնութագրվում են մի կողմից գիտական ուճով, մյուս կողմից էլ արտահայտության զգայական երանգավորումներով:

Վերոնշյալ դժվարությունները, որոնց առնչվում է թարգմանիչը, կարելի է բաժանել չորս խմբի՝

- ✓ քերականական դժվարություններ
- ✓ լեքսիկական կամ բառային դժվարություններ
- ✓ ոճական դժվարություններ
- ✓ դարձվածքների և իդիոմների թարգմանության դժվարություններ:

Խոսենք քերականական դժվարությունների մասին:

Դժվար է պատկերացնել քաղաքական խոսույթի թարգմանություն աղբյուր լեզվից թիրախ լեզու առանց անհրաժեշտ քերականական փոփոխությունների, այլ կերպ ասած, առանց փոխակերպումների: Ինչպես գիտենք, լեզուների կառուցվածքը տարբեր է, ահա թե ինչու, անհրաժեշտ է կատարել որոշ փոփոխություններ թարգմանության ժամանակ: Անդրադառնալով անգլերեն և հայերեն լեզուներին, մենք կարող ենք ասել, որ անգլերենը հիմնականում վերլուծական բնույթի է, որը նշանակում է, որ բառերի միջև հարաբերությունը արտահայտվում է շարադասությամբ, այսինքն՝ շարահյուսական միջոց-

ներով, իսկ ձևաբանական միջոցները երկրորդական դեր են խաղում: Անգլերենում շարադասությունը կայուն է, իսկ հայերենում ազատ է: Շատ դեպքերում հանդիպում ենք շարահյուսական փոփոխությունների, բայց միշտ չէ, որ նրանք ունեն իրենց համարժեքները հայերենում: Եվ այս հանգամանքը ստիպում է թարգմանչին օգտագործել տարբեր տեսակի փոխակերպումներ, երբ նա թարգմանում է քաղաքական լեզվի նյութ: Բացի սրանից, անգլերենում նախադասությունները կառուցվածքային առումով ավարտուն են, և մենք չենք կարող որևէ բառ բաց թողնել՝ առանց այն մեկ ուրիշով փոխարինելու: Այս հանգամանքի շնորհիվ է, որ անգլերենը օգտագործում է այսպես կոչված կառուցվածքը հագեցնող (structure filling words) բառեր, ինչպես օրինակ՝

- ✓ դերանուններ՝ one, ones, this, that և այլն
- ✓ բայեր՝ do, have, should, may, must, ought, dare և այլն:

Իհարկե կառուցվածքը հագեցնող այս բառերը չունեն անվանողական (denotative) իմաստ: Նրանք զուտ համատեքստային են: Նման բառերը թարգմանելիս, թարգմանիչը պետք է օգտագործի ամբողջական կամ ավարտուն իմաստով բառեր, կամ օգտագործի համատեքստից բխող գործառնությունային բառեր:

*e.g. The first sign of general crisis is the splitting of the united capitalist economy into two antagonistic systems of economy: the socialist system which is developing successfully, and into the capitalist one, which is going through a period of terrible economic crisis (Joel, 1964:37).*

Համընդհանուր ճգնաժամի առաջին նշանը միասնական կապիտալիստական տնտեսության բաժանումն է երկու հակոտնյա համակարգերի, սոցիալիստական համակարգի, որը հաջողությամբ զարգանում է, և կապիտալիստական համակարգի, որն ապրում է տնտեսական խիստ ճգնաժամ:

Այս նախադասությունը թարգմանելիս, ամբողջությամբ վերծանել ենք one բառը և թարգմանել այն համապատասխան գոյականի միջոցով:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքական տեքստեր թարգմանելիս, թարգմանիչը կատարում է քերականական փոխակերպումներ, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- ✓ փոխարինում (substitution)
- ✓ շարադասության փոփոխություն (բառերի) transposition
- ✓ բաց թողնում omission
- ✓ ավելացում supplementation

Քննարկենք սրանք առանձին-առանձին: Եվ այսպես, փոխարինումը նախադասության անդամների միջև քերականական հարաբերություններից մեկն է:

*You think USA will start war against Iraq? – No, one does.*

– *Պոք կարծում եք, որ ԱՄՆ-ն պատերազմ կսկսի Իրաքի դեմ:*

– *Ոչ որ չի կարծում:*

Երկրորդ նախադասության մեջ does-ը փոխարինվում է ժխտական բայով չի կարծում, քանի որ հայերենում մենք չունենք կառուցվածքը հազեցնող բառեր, ինչպես օրինակ does բառը անգլերենում: Այսպիսով, մենք կարող ենք ասել, որ թարգմանություն կատարելիս, թարգմանիչը դիմում է փոփոխությունների՝ ելնելով մի շարք պատճառներից: Օրինակ, նույն կառույցների և որոշ ձևերի բացակայությունը հայերենում:

*It causes me no surprise that men who have embarked on this career for the sake of titles and emoluments, having not the least idea of the real duties of their post, have occasioned grave harm to the public interest.* (Joel, 1968:188).

*Ես ընդհանրապես չեմ զարմանում, որ մարդիկ, որոնք զբաղեցրել են այս պաշտոնը տիտղոսների և շահի համար, չունենալով անգամ տարրական պատկերացում իրենց պարտականությունների մասին՝ մեծ վնաս են հասցրել հասարակության շահերին:*

Այս նախադասությունը թարգմանելիս մենք փոխել ենք աղբյուր տեքստի կառուցվածքը՝ *it causes me no surprise* ես ընդհանրապես չեմ զարմանում կառույցով թիրախ լեզվում: Կարող ենք նշել, որ օգտագործել ենք փոխարինումը, քանի որ հայերենում բացակայում է նման կառույցը: Փոխարինումը օգտագործվում է նաև կրավորական կառույցների թարգմանության ժամանակ:

*e.g. Throughout the rich heritage of Indian literature there are innumerable passages illustrating every known theory of government and temporal power. But it should not be forgotten that political thought is an integral aspect of Indian philosophy* (Joel, 1964:12).

Հնդկական գրականության հարուստ ժառանգության մեջ կան բազմաթիվ երկեր, որոնք լուսաբանում են կառավարության և ժամանակավոր տերության հայտնի տեսությունը: Բայց չպետք է մոռանանք, որ յուրաքանչյուր քաղաքական միտքը հնդկական փիլիսոփայության անբաժանելի մասն է կազմում:

Մեկ ուրիշ օրինակ.

*It is not necessary to turn far back into the past in order to understand what can be achieved by negotiations (Joel, 1964:189).*

Կարիք չկա անդրադառնալ անցյալին, հասկանալու՝ թե ինչ կարելի է ձեռք բերել բանակցությունների շնորհիվ:

Այս նախադասություններում կրավորական կառույցները should not be forgotten, և can be achieved փոխարինվել են ներգործական կառույցներով՝ չպետք է մոռանանք, կարելի է ձեռք բերել:

Երբ խոսում ենք փոխակերպումների մասին, մենք պետք է անդրադառնանք նախադասության շարադասության փոփոխությանը (transposition)

*e.g. In every single decade since the 1940s the UK has been part of global agreements to increase the IMF's resources. Mason C. 23 March 2013.*

1940թ-ից ի վեր յուրաքանչյուր տասնամյակում Միացյալ Թագավորությունը եղել է արժույթի միջազգային հիմնադրամի ռեսուրսները ավելացնելու վերաբերյալ համընդհանուր համաձայնագրերի ջատագովներից մեկը:

Այս նախադասության թարգմանության ժամանակ, օգտագործել ենք ավելացում, որը փոխակերպումների մեկ ուրիշ տեսակ է: Թիրախ լեզվում ավելացրել ենք «վերաբերյալ» բառը և դարձրել թարգմանությունը ավելի ավարտուն: Այստեղ քերականական փոխակերպումը ուղեկցվում է բառային փոխակերպմամբ: Part բառը, որը հայերենում թարգմանվում է որպես «մաս», այս նախադասության մեջ թարգմանվել է «ջատագով» բառով, որը ավելի է համապատասխանում համատեքստին:

Հարկ է նշել, որ հաճախ քերականական, ինչպես նաև բառային փոխակերպումները պահանջում են որոշ բառերի կամ կառույցների ավելացում կամ բացթողում: Խոսելով ավելացումների մասին, անհրաժեշտ է նշել, որ ավելացումը նախևառաջ բնութագրվում է հայերեն և անգլերեն լեզուների նախադասության կառուցվածքային տարբերությամբ: Առկա է նաև որոշ բառերի և բառակապակցությունների համարժեքների բացակայությունը:

*e.g. That we are in the midst of crisis is now well understood. Our nation is at war against a far-reaching network of violence and hatred. (Mason C. March 23 2013).*

Այն, որ մենք ճգնաժամի մեջ ենք, քաջ գիտակցում են բոլորը: Մեր երկիրը պատերազմում է բռնության և ատելության կործանարար ցանցի դեմ:

Այս նախադասության թարգմանության ժամանակ առկա է բացթողման երևույթը: Աղբյուր լեզվի *in the midst* – բառակապակցությունը չի թարգմանվել, բայց նախադասության բովանդակային մասը դրանից չի տուժել:

*Far-reaching* բառակապակցությունը, որը կարող է նշանակել «հեռանկարային», այս համատեքստում նպատակահարմար է թարգմանել «կործանարար»:

Մեկ ուրիշ օրինակ.

*The battle was fierce while it lasted (Joel. 1964:194).*

*Դաժան մարտ էր ընթանում:*

Այստեղ առկա է փոխարինման երևույթը, և ամբողջ նախադասության հնչեղությունը հարմարեցվել է հայերենին:

Եվ այսպես կարելի է եզրակացնել, որ քերականական փոփոխությունները չի կարելի զատել միմյանցից, դրանք առկա են թարգմանության ժամանակ, և հնարավոր է, որ լինեն թե՛ մեկը թե՛ մյուսը նույն նախադասության մեջ:

Քաղաքական խոսույթը լի է նման լեզվական երևույթներով և թարգմանիչը՝ գրավոր, թե՛ բանավոր, պետք է խիստ ուշադիր լինի վրիպումներ թույլ չտալու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Patil C.**, *Rhythm in Translation: Between the Words and beyond Them*, Bombay: Popular Prakashan, 1988.
2. **Ray M.**, *Studies in Translation*. Atlantic Publishers and Distributors, (P) Ltd, 2008.
3. **Robinson D.**, *Becoming a Translator*, Abidgon oxen: Routledge, 2003.
4. **Sehaffner C.**, **Chilton P.**, *Politics as Text and Talk. Analytic Approaches to political discourse*, Library of Congress Cataloging-in-Publication Data, 2002.
5. **Venuti L.**, *The Translator's Invisibility. A History of Translation*, London and New York, Routledge, 1995.

**GURGEN GEVORGYAN – Grammatical difficulties in translating political discourse.** It is difficult to imagine the process of translation of political discourse from the source language into the target language without necessary grammatical changes, or in other words, window transformations. As we know the structures of languages are quite different, and that is why, it is necessary to make some changes in the process of translation. The grammatical transformations can be divided into the following groups:

- substitution
- transposition
- omission or ellipsis
- supplementation

Of course, these changes occur separately but there are cases when one or two may happen in one sentence. The ultimate goal of such changes is to be more precise and to represent the matter in a better way.

**ГУРГЕН ГЕВОРГЯН – Грамматическиетрудности при переводе политического дискурса.** Трудно представить себе процесс перевода политического дискурса с одного языка на другой без необходимых грамматических изменений, иначе говоря, без трансформаций. Известно, что структура языков сильно отличается друг от друга, вот почему необходимо сделать несколько изменений в процессе перевода. Грамматические трансформации можно разделить на следующие группы:

- замена
- переставление (порядок слова в предложении)
- пропуск
- дополнение

Конечно, эти трансформации происходят не все вместе, но бывают случаи, когда одна или две могут иметь место в одном предложении. Конечная цель подобных трансформаций передать информацию оригинального текста точно и детально.

## ОСОБЕННОСТИ ПЕРЕВОДА ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА

*ЛИЛИТ ЗАКОЯН*

*Ереванский государственный университет*

В современном мире политический дискурс приобретает особо важное значение, т.к. он прежде всего адресован широким массам и реализуется через глобальные средства массовой информации с максимальным разнообразием языков и политических картин мира. Как известно, политический дискурс обладает высоким прагматическим потенциалом, содержит в себе авторские интенции, и его свойства должны быть в полной мере переданы на иностранный язык с целью достижения конструктивного диалога между государствами разных стран. В современных условиях перевод общественно-политических текстов приобретает особое значение, выступая как средство пропаганды и орудие идеологической борьбы. Перевод общественно-политических текстов является ответственной и нередко чрезвычайно сложной миссией для переводчика, так как передача мотивационных стратегий не всегда может быть выполнена успешно в силу межъязыковой интерференции, либо вследствие ошибки переводчика при декодировании информации. Проблемы перевода политических текстов требуют, прежде всего, рассмотрения политической коммуникации, характеризующейся наличием различных составляющих таких, как: политическая ситуация, установки автора, специфики восприятия текста адресатом и др. Политические тексты отличаются наличием специальной терминологии, специфичных словосочетаний, обладающих сильным эмоциональным тоном. Перевод подобного рода сочетаний представляет трудности для переводчика, в связи с тем, что такие сочетания не всегда фиксируются в двуязычных словарях: ‘once in a blue moon – very rarely’, ‘walk in someone’s shoes – know what something feels like’, ‘under the weather – intoxicated’, ‘save one’s bacon – to rescue one’s own life’. Для адекватного перевода переводчику нужно внимательно подвергнуть анализу контекст, в котором употребляется словосочетание, чтобы установить, какое значение оно выражает.



При переводе текстов политического дискурса, на наш взгляд, на первое место выдвигается отражение его главных функций – информативной и воздействующей. При анализе и переводе лексических единиц текста оригинала и выборе соответствий при переводе перво-степенную роль приобретает учет экстралингвистической ситуации, включающей в себе социальные и идеологические нормы и стереотипы рецепторов текстов оригинала и перевода. Стоит также отметить, что при переводе прагматические отношения в тексте оригинала могут подвергаться модификации, так как соотношение между прагматикой оригинала и перевода может быть различным. Многое зависит от переводческой стратегии: *'The general was maneuvered out of the presidency in 1974. – Генералу пришлось уйти с поста президента в 1974 году в результате маневров его противников'*.

При переводе политических текстов переводчику приходится усваивать особенности политического дискурса на обоих языках. В содержание политического дискурса включаются все присутствующие в сознании продуцента и реципиента текста компоненты (факторы), способные влиять на порождение и восприятие речи: другие тексты, политические взгляды автора, политическая ситуация и др. (Чудинов 2007, 41). В двуязычной коммуникации с переводом к ним прибавляются как объективные факторы, связанные с преодолением языкового и лингвоэтнического водораздела, так и субъективные факторы, связанные с личностными характеристиками переводчика. И если даже в одноязычной коммуникации личностные и социальные характеристики слушающего и говорящего важны, то при двуязычной коммуникации с переводом мы имеем на одного слушающего и говорящего (читающего и пишущего) больше, т. е. количество факторов, способных влиять на порождение и восприятие речи, умножается (ван Дейк 1989, 122).

На наш взгляд, успех переводимого текста определяется тем, насколько эффективно используются в переводе языковые средства воздействия. При переводе политических текстов, переводчик должен принимать во внимание языковую особенность с позиций лексики; особенность исполнения; особенность воздействия скрытых смыслов; особенность индивидуальной переводческого толкования текста.

Объектом общественно-политического перевода являются общественно-политические и публицистические тексты. Характерной чер-

той политических текстов является пропагандистская или агитационная установка, отличающаяся яркой эмоциональной окраской и большой насыщенностью политической терминологии. На наш взгляд, с целью достижения адекватности данный вид перевода обладает свойствами художественного и специального перевода. Ж.А. Голинова разделяет общественно-политические материалы на три группы: 1) документально-деловые материалы (конституции и законодательные акты); 2) информационно-описательные материалы (информационные заметки, справочные материалы, исторические описания и обзоры и т.д.); 3) публицистические материалы в узком смысле слова (речи, статьи и т.д.) (Голинова 2003).

Перевод политических текстов подразумевает целый ряд трудностей языкового (как правило, терминологического или стилистического) и экстралингвистического характера, преодоление которых поможет добиться адекватного перевода политических текстов. Экспрессивность в политическом дискурсе служит основной цели – специально привлечь внимание населения к тому или иному факту или явлению. Использование многих политических идиом отражает существующие характерные реалии анализируемого явления. Например, дословный перевод идиомы ‘carrot and stick – жёсткая политика, политика кнута и пряника’ звучит как ‘морковь и палка’. Анализ исходного значения показывает, что обозначаются политические отношения, во время которых позитивные обстоятельства чередуются с жесткими мерами и негативным поведением в отношении народа. Дословный перевод выражения ‘a political football – политические игры’ означает ‘политический футбол’. Любопытно, что для обозначения взаимоотношений политиков употребляется именно слово футбол. В силу того, что в подобной игре тоже допустимы всевозможные поведенческие противодействия на поле борьбы, проведенные по конкретным определенным правилам. Это означает, что в данном случае проведена определенная параллель между спортом, спортивными играми и политикой. Что касается выражения ‘snow under – амер. провалиться на выборах’ изначально употреблялось в разговорной речи и обозначало «завалить работой». А дословный перевод звучит как ‘под снегом’. Позже значение идиомы расширилось и в американском английском идиома приобрела другой смысл и теперь обозначает политические силы, с треском провалившиеся на выборах. Словосочетание

'a dark horse – темная лошадка' применяется для определения характеристики политического деятеля, включая анализ его взглядов и намерениях, которые не всегда понятны и прозрачны для народа. К чисто политическим идиомам можно отнести выражение 'vote of confidence – вотум доверия', которое дословно означает 'голосование, выбор конфиденциальности'. Данная идиома часто применяется для обозначения избирательной системы. Также существует противоположная по значению идиома – 'a vote of unconfidence – вотум недоверия'. Употребление данного выражения тоже ограничивается политической сферой общения.

Попробуем кратко прокомментировать некоторые приемы и их соответствующие переводы, употребляемые в языке британского и американского политического дискурса:

1) Рекламная лексика. Бывают случаи, когда некоторые образные слова и словосочетания пробираются в язык политики из рекламных текстов: 'big daddy – большая шишка, большой начальник'; 'to wrestle / struggle / fight (with) – бороться', 'new Labour – new Britain, better Britain – новые лейбористы, новая Британия, лучшая Британия', 'work goes on – работа идет', 'don't go back – не отказывайтесь'. 'prosperity for all – процветание для всех', 'vote Labour – голосуйте за лейбористов'.

Например, словосочетание 'to sell an idea' дословно означает 'продать идею', хотя на самом деле переводится 'убедить в привлекательности чего-л., убедить в целесообразности (выгоде) чего-л.', что касается выражения 'selling a candidate – продажа кандидата', то в данном случае имеется в виду рекламирование кандидата. Если политик заявляет: 'That's my piece of action', то он подразумевает: 'Это мой вклад'. Само словосочетание 'get your piece of the action' раньше означало приобщиться к этому и вы, совершите выгодную покупку и вы', т. е. взято из рекламы.

2) Пословицы. Использование пословиц в современном политическом дискурсе способствует образности языка. В последнее время появляются новые неповторимые политические пословицы. Например, 'A rising tide lifts all the boats', значение которой состоит в том, что когда отмечается общий экономический подъем, то выигрывают от этого все. В пословице 'How you stand depends on where you sit' можно наблюдать намек на то, что индекс популярности какого-либо кандидата во многом зависит от его поста и влияния.

3) Метафоры. Метафоры употребляются в общественно-политических текстах довольно часто. Метафоризация текста расширяет смысловой объем слова за счет возникновения переносных значений. Данный прием бесспорно увеличивает экспрессивные свойства текста. В американском и английском политическом дискурсе, когда речь идет о влиятельных политиках, то их часто называют 'big guns, big shots, great guns, biggies, big noise, big wigs, big timers, big wheels.

Так как язык политики постоянно меняется, то меняются и, даже умерев, возрождаются некоторые политические метафоры. Например, метафору 'gutter flyer – грязный листок, предвыборная листовка, содержащая бездоказательные, порочащие кандидата-соперника обвинения' сменяет слово 'roorback – диффамация, пасквиль'. 'Swing voter – колеблющийся избиратель' сменяется словом 'floater – (а) избиратель, не примкнувший ни к одной из партий б) избиратель, нелегально голосующий в нескольких избирательных участках в) избиратель, голос которого можно купить'. Далее значение слова корректируется и предпочтение отдается эвфемизму 'independent voter – независимый избиратель'. Среди возрождающихся метафор можно выделить: 'snollygoster – прагматичный беспринципный человек, особенно политик', 'mossback – крайний консерватор, реакционер', 'a philippic – филиппика, обличительная речь'.

Перевод метафорических выражений с английского языка на русский может сопровождаться уменьшением образности в языке перевода по сравнению с текстом оригинала: 'Let me just offer an advance warning to the old, big-spending, do-nothing, me-first-country-second crowd: change is coming'. переводится как 'Я хочу заранее предупредить эту стареющую толпу, которая много тратит, ничего не делает, живёт по принципу «сначала я, потом страна»: грядут перемены'.

4) Метонимия. Прием метонимии заключается в замене одного слова другим на основе связи их смежности и принадлежности. Например: Buckingham Palace is not expected to issue a statement on the matter. Полагается, что Букингемский дворец не сделает заявления по этому вопросу. В данном случае на самом деле имеется в виду король или королева Великобритании.

5) Эпитеты. Назначение эпитета – подчеркнуть тот или иной признак предмета, выразить свое отношение к нему. Если эпитет употребляется с тем или иным словом постоянно, то он постепенно

перерастает в клише (речевой штамп). Например: America the Beautiful – здесь используется рекламное изречение. New Deal следует переводить «новый курс», поскольку данное определение переросло в политический штамп. Bleeding Kansas – историко-политический штамп, означавший борьбу в штате Канзас против рабства.

Рассмотрим пример из инаугурационной речи Б. Обамы: ‘To the Muslim world, we seek a new way forward, based on mutual interest and mutual respect. To those leaders around the globe who seek to sow conflict, or blame their society's ills on the West – know that your people will judge you on what you can build, not what you destroy. To those who cling to power through corruption and deceit and the silencing of dissent, know that you are on the wrong side of history; but that we will extend a hand if you are willing to unclench your fist. – *Обращаясь к мусульманам мира – мы будем искать новых путей взаимопонимания на основе взаимной выгоды и уважения. Лидеры тех стран, которые ищут конфликты, или обвиняют Запад в заболеваниях своих народов, знайте: ваши народы будут судить вас по вашим созиданиям, а не разрушениям. Те, кто липнет к власти посредством коррупции, обмана и замалчивания голоса протестующих, знайте, что вы по другую сторону барьера истории, но мы всё равно протянем вам руку, если вы разожмёте кулак.*

Таким образом, можно отметить, что перевод как политических, так и других текстов требует того, чтобы переводчик, во-первых, ознакомился с важными и ключевыми положениями переводоведения, во-вторых, обладал высокой лингвистической компетенцией, в-третьих, располагал в достаточном количестве экстралингвистической информацией. Что касается общественно-политической терминологии, то она не появилась в один день, над ней стоит многолетняя упорная работа лингвистов, переводчиков, которые потратила массу времени на согласование тех или иных спорных терминов.

## ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. **Базылев В.Н.**, *К изучению политического дискурса в России и российского политического дискурса* // Политический дискурс в России – 2. Москва, 1998.

2. **Водак Р.,** *Язык. Дискурс. Политика [Текст]* / Р. Водак; пер. с англ. и нем. Карасика В.И., Трошиной Н.Н. – Волгоград: Перемена, 1997.
3. **Герасименко Н.А.,** *Информация и фасцинация в политическом дискурсе* // Политический дискурс в России – 2. Москва, 2002.
4. **Дейк Т.А. ван.,** *Язык. Познание. Коммуникация.* Москва, 1989.
5. **Макаров М.Л.,** *Основы теории дискурса.*– Москва, ИТДГК «Гнозис», 2003.
6. **Толпыгина О.А.,** *Дискурс и дискурс-анализ в политической науке* // Политическая наука, № 3. Москва, 2002.
7. **Van Dijk Т.А.,** *What is political discourse analysis?* // *Political linguistics*; ed. Jan Blommaert, Chris Bulcaen. – Amsterdam, 1998.
8. **Dijk Т.А. van.,** *Discursive Analysis of News.* – Jensen K.B. (ed.) *A Handbook of Qualitative Methodologies for Mass Media Research.* Vol. 5. L., 1999.
9. *Politically speaking: a worldwide examination of language used in the public sphere* / Ed. by **O.Feldman.** New York, 1998.

**ԼԻԼԻԹ ԶԱԲՈՅԱՆ – Քաղաքական դիսկուրսի թարգմանության առանձնահատկությունները.** Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել քաղաքական դիսկուրսի վերլուծության բնորոշ առանձնահատկություններն ու քաղաքական դիսկուրսի թարգմանության առանձնահատկությունները: Այստեղ ամփոփվում են քաղաքական դիսկուրսի հիմնական տեսական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրում գրավոր եւ բանավոր թարգմանության դերը քաղաքական դիսկուրսում:

**LILIT ZAQOYAN – Peculiarities of Translation of Political Discourse.** The goal of the present article is to explore characteristic features of political discourse analysis and peculiarities of political discourse translation. The study resumes the basic theoretical approaches of political discourse as well as considers the role of translation and interpreting in political discourse. The analysis indicates that the translation of political as well as other texts requires that the translator/interpreter must possess translation and interpretation strategies, have a high linguistic competence and be aware of extra-linguistic information.

## ՕՆ ԴԵՐԱՆՎԱՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*ԼԻԼԻ ՄԱՔԱՆՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

ՕՆ դերանունն իր ուրույն տեղը և նշանակությունն ունի ժամանակակից ֆրանսերենի դերանունների համակարգում: Քերականագետները այն դասում են թե՛ անորոշ, թե՛ անձնական դերանունների շարքին: Առաջին դեպքում հաշվի է առնվում *օն*-ի անորոշ արժեքը, իսկ երկրորդ դեպքում՝ գրեթե բոլոր դեմքերին համարժեք գործածվելու հնարավորությունը: Ըստ Ժ. Դյուբուայի՝ *օն*-ը չեզոքանում է անձնական դերանունների համակարգում և դիմային որոշակիություն չի կրում, սակայն բայը դրվում է երրորդ դեմքի եզակի թվով<sup>18</sup>: ՕՆ-ը լեզվում ունի գործածության երկու ձև: Խոսակցական լեզվում *օն*-ը գործածության միայն մեկ ձև ունի: Գրավոր խոսքում *օն*-ը կարող է գործածվել որոշյալ հոդով, ինչն էլ համարվում է նրա գործածության մյուս ձևը: Հենց այս ձևն էլ հաճախ իր գործածությունն է գտնում ֆրանսերեն գրական դասական լեզվում և կարող է գործածվել նախադասության սկզբում (*l'օն*): Ըստ Ռեֆերովսկայայի և Վասիլևայի *օն* դերանունը դասվում է անձնական դերանունների շարքին<sup>19</sup>: Ըստ այս լեզվաբանների՝ *օն*-ը գործածվում է միայն շնչավոր գոյականների փոխարեն, ինչը բխում է նրա ծագումնաբանությունից (*օն* -*հոմո*): Այն նախ և առաջ ցույց է տալիս անորոշ անձի կամ ընդհանրական որևէ մեկի, մարդկանց խմբի կամ էլ մարդուն առհասարակ: ՕՆ-ը հիմնականում անոնիմ է: Պարտադիր չէ, որ այն մատնանշի խոսողին կամ խոսակցին անհայտ մի անձի: Այն կարող է մատնանշել ցանկացած անձի, որի ինքնությունը չեն ցանկանում կամ խուսափում են բացահայտել: Ծնորհիվ իր անորոշ բնույթին՝ ժամանակակից ֆրանսերենում *օն*-ը կարող է փոխարինել բոլոր անձնական դերանուններին: Այն կարող է վերաբերել արական կամ

<sup>18</sup> Dubois Jean (1965) *Grammaire structurale du français: nom et pronom*. Paris, Librairie Larousse.

<sup>19</sup> Référovskaja E.A., Vassiliéva A.K. (1973) *Essai de grammaire française*. Ленинград, Издательство «Просвещение».

իգական, եզակի կամ հոգնակի շարույթներին, սակայն կարող է միայն գործածվել շնչավոր դասի փոխարեն<sup>20</sup>:

Ժամանակակից ֆրանսերենը հիմնականում բանավոր խոսքում *on*-ը *nous*-ով (մենք) փոխարինելու մեծ միտում է ցուցաբերում: Եվ միայն համատեքստն է մեզ օգնում զանազանելու նրա արժեքները: Կախված համատեքստից՝ *on* դերանունը կարող է ունենալ տարբեր արժեքներ: Ըստ այդմ էլ կատարվում է նրա թարգմանությունը:

Համատեքստը կարող է սահմանափակել *on*-ի անորոշությունը:

Սահմանափակությունը կարող է նաև կապված չլինել համատեքստի հետ, այլ պայմանավորված լինել իգական կամ արական սեռի կամ հոգնակի թվի գործածությամբ: Ըստ այդմ էլ՝ *on*-ի հետ դրված բայը համաձայնեցվում է թվով և սեռով՝ այսպիսով ցույց տալով թե տվյալ ասույթը ում է վերաբերում: *On*-ը, չնայած համարվում է երրորդ դեմքի դերանուն, կարող է նաև ցույց տալ խոսողին կամ խոսակցին:

Օրինակ՝ *Que servirait d'éveiller en Gertrude un espoir qu'on risque de devoir éteindre aussitôt ?*<sup>21</sup>

*Ինչ իմաստ ունեւր Գերթրուդի մեջ հույս արթնացնել, եթե ստիպված պիտի լինեիք իսկույն հանգցնել:*

Տվյալ օրինակում *on*-ը արտահայտում է մենք դերանվան իմաստ. համատեքստից ելնելով հայերենում այն թարգմանվել է առաջին դեմք, հոգնակի թվի իմաստով:

*On*-ը կարող է վերաբերել արական կամ իգական, եզակի կամ հոգնակի շարույթներին, սակայն կարող է միայն գործածվել շնչավոր դասի փոխարեն: Պատճառները, որոնք դրդում են խոսողին գործածել *on*-ը այլ անձնական դերանունների փոխարեն, կարող են լինել տարբեր՝ ցանկություն ընդգծելու հրամանը՝ ես-ին (առաջին դեմքին) հավաքական ձև տալով, արհամարհանք կամ հպարտություն: Ինչպես վերևում ասվեց՝ գոյություն ունեն *on* անորոշ դերանվան թարգմանության զանազան ձևեր, բայց հենց բառը ինքնին ճշգրիտ թարգմանություն չունի: Առավել հաճախ *on*-ը թարգմանվում է կրավորական սեռի միջոցով: Հիմնականում կրավորական սեռը ուղեկցվում է ուղիղ խնդիր դարձած ենթակայի հետ:

<sup>20</sup> Гак В. Г. *Теоритическая грамматика французского языка: синтаксис*. Москва: «Высшая школа». 1986, 156.

<sup>21</sup> Gide A., *La symphonie pastorale*, Gallimard, 1966, p. 57.



Ելնելով նախադասության իմաստից՝ օտ-ը կարող է թարգմանվել նաև մենք, նրանք, նա կամ դու դերանունների միջոցով:

Օրինակ հետևյալ նախադասության դեպքում՝

Une manière commode de faire connaissance d'une ville est de chercher comment on y travaille, comment on y aime et comment on y meurt.<sup>22</sup>

*Քաղաքին ծանոթանալու ամենահարմար ձևը իմանալն է՝ ինչպես են աշխատում այնտեղ, ինչպես են սիրում և ինչպես են մեռնում<sup>23</sup>:*

Տվյալ պարագայում ունենք օտ-ի գործածության հետևյալ ձևերը՝ comment on y travaille, comment on y aime et comment on y meurt, որոնք թարգմանված են հետևյալ կերպ՝ ինչպես են աշխատում այնտեղ, ինչպես են սիրում և ինչպես են մեռնում՝ մատնանշելով մարդկանց կամ անհատների խմբի, որոնց ինքնությունը կոնկրետացված չէ:

Օտ դերանունը ընդհանրական իմաստով հանդես է գալիս մաքսիմների, ասույթների և ասացվածքների մեջ:

Օտ-ի հետ օգտագործվող լրացյալները համաձայնեցվում են սեռով և թվով քերականական անձի կամ անձանց հետ, որին այն վերաբերում է: Եթե օտ-ը վերաբերում է իգական սեռի անձին նրա հետ օգտագործվող բայը և լրացումը դրվում է իգական սեռով: Այն դեպքում, երբ օտ-ը վերաբերում է հոգնակի թվին, լրացումը համաձայնեցվում է հոգնակի թվով:

Օտ դերանունը նախադասության մեջ մշտապես հանդես է գալիս ենթակայի պաշտոնում: Կարող է փոխարինել բոլոր քերականական ենթակա դերանուններին՝ ընդգծելով այն հեռավորությունը, որը բանախոսը ցանկանում է հաստատել իր և այլոց միջև կամ ցանկանում է արտահայտել ջերմության, արհամարհանքի կամ հպարտության զգացում:

---

<sup>22</sup> Camus, A., *La Peste*, Gallimard, 1947, p.11

<sup>23</sup> Կամյու, Ա., *Ժանտախոսք*, 2012, 6.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Гак В.Г.**, *Теоритическая грамматика французского языка: синтаксис*. Москва, «Высшая школа», 1986.
2. **Dubois J.**, *Grammaire structurale du français: nom et pronom*. Paris, Librairie Larousse, 1965.
3. **Référovskaia E.A., Vassiliéva A.K.**, *Essai de grammaire française*. Ленинград, Издательство «Просвещение», 1973.
4. **Gide A.**, *La Symphonie Pastorale*, Gallimard, 1996.
5. **Camus A.**, *La Peste*, Gallimard, 1947.
6. **Չափյու Ա.**, *Ժանտախտը*, քարգւ. Ա.Հալոբրյան, 2012.

**ЛИЛИ САКАНЯН – О некоторых трудностях перевода французского местоимения «ON».** Французское местоимение «он» занимает важную роль в системе местоимений французского языка. Местоимение «ON» на армянском языке в основном переводится с помощью контекста. В зависимости от контекста оно может заменить всех личных местоимений, а также включить в себя обобщенную личность, указать говорящего или его собеседника и переводиться на армянском как: я, ты, он/она, или же человек или люди.

**LILI SAQANYAN – On several difficulties in translating the French pronoun “On”.** Concluding the above mentioned, we come to the following conclusion: pronoun “On” has its unique role in the pronouns system of modern French. In spite of the fact that “On” is a pronoun of the third person, can also refer to a speaker or interlocutor. “On” can refer to male or female, singular or plural syntagma, but can be used only instead of proper name and be the subject of a sentence. So, each time speaker wants to conceal identity of a person, to give mysterious sense, either purposeful or for necessity, he/she uses indefinite personal pronoun.

The French pronoun “On” may be generally translated by the context being equivalent to almost all personal pronouns (I, you, he/she) and making general meaning of speaker, interlocutor or some other person in armenian translations.

## “TED TALK”-Ը ՈՐՊԵՍ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

*ԼՈՒՄԻՆԵ ՄԱՐԳՍՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Վերջին տասնամյակներում թարգմանիչների, մասնավորապես, բանավոր թարգմանիչների պատրաստումը մասնագիտական շրջանակներում քննարկման առարկա է դարձել ողջ աշխարհում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ստորաբաժանումներում բանավոր թարգմանիչների պատրաստումը, ներկայումս, ամենաարդիական խնդիրներից է:

Վերջին տարիներին ամբողջական ներկայացնել թարգմանչական բաժնում կատարվող աշխատանքը, համացանցի հասանելիությունը և տեսական ու գործնական գրականության առավել խոր ուսումնասիրությունը հնարավորություն են տվել համակողմանիորեն ընկալելու ամբիոնում դասավանդողների առջև դրված խնդիրները: Հռոլվածում ներկայացված են «Բանավոր թարգմանություն» առարկայի շրջանակներում կիրառվող մեթոդներն ու մոտեցումները:

Ուսումնական գործընթացն ուսանողների, հատկապես, մագիստրատուրայում սովորողների համար առավել հետաքրքիր, նորարարական և արդյունավետ դարձնելու համար, ինչպես նաև գիտակցելով, որ ապագա թարգմանիչներին ուսուցանելը, կախված նրանց մասնագիտական պահանջումներից, տարաբնույթ հմտություններ ու մոտեցումներ է պահանջում, որոշվեց միանալ համաշխարհային ճանաչում վայելող “TED Talks” նախագծին, որի համաժողովները կամավոր թարգմանիչների շնորհիվ առցանց թարգմանվում են շուրջ 77 լեզուներով:

Եվ այսպես... **ինչո՞ւ TED:**

**TED-Ը ՀԱՊԱՎՈՒՄ Է՝ ԲԱՂԿԱՅԱԾ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ, ԺԱՄԱՆՑ, ԴԻՉՍՅՆ ԲԱՌԵՐԻՑ: ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԽՈՍԸ՝ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԵՆ ՏԱՐԱԾՄԱՆ:**

TED-ն ամերիկյան հասարակական կազմակերպություն է, որի գործունեությունը միտված է համընդհանուր ճանաչման արժանի գաղափարներ սփռել: Ստեղծվել է 1984-ին՝ կոնֆերանսի ընթաց-

քում, որը մեկտեղում էր վերը հիշատակված երեք ոլորտները ներկայացնող մարդկանց: Այդ ժամանակից ի վեր թեմաների շրջանակը զգալիորեն ընդլայնվել է: Բացի իր երկու ամենամյա TED կոնֆերանսներից, ինչպես նաև յուրաքանչյուր ամառ Օքսֆորդում տեղի ունեցող TED Global-ից, TED-ն իր գաղափարները տարածում է նաև TEDTalks տեսանյութերի կայքի, Բաց թարգմանչական նախագծի, Բաց հեռուստատեսային նախագծի, TEDx ծրագրի և ամենամյա TED մրցանակաբաշխության միջոցով, որոնց մասնակցելը մեծ հաջողություն է համարվում (պահանջում է բավականին ջանք, գումար և գուցե՝ հաջողակություն), իսկ այնտեղ ելույթ ունենալը՝ մեծագույն պատիվ, ինչի շնորհիվ մարդը դասվում է Ալբերտ Գորի, Բիլ Գեյթսի և աշխարհահռչակ այլ մարդկանց շարքին:


Ինչպես նշվեց, TED-ը մեծ թափով տարածում է գտնում աշխարհի տարբեր ծագերում, որն իրականացնում է TEDx ծրագիրը՝ տարբեր երկրներում գործող կազմակերպություններին ու անհատներին հնարավորություն ընձեռելով ավելի տեղային մակարդակով կազմակերպել TED երկխոսություններ: TEDx միջոցառումների ժամանակ, յուրատեսակ ելույթների հետ մեկտեղ, ցուցադրվում են նաև TED ելույթների տեսանյութեր, որոնք խթանում են առավել խորը քննարկումներ:

Բացառություն չի կազմել նաև Հայաստանը: Առաջին TEDx Yerevan կոնֆերանսը տեղի է ունեցել սեպտեմբերի 25-ին: Իսկ դեկտեմբերին, առաջին գլոբալ TED Women-ին զուգահեռ, տեղի կունենա TEDxWomenYerevan-ը՝ նվիրված կանանց հիմնախնդիրներին: Իսկ պարբերաբար կազմակերպվող TEDxKids@Yerevan-ի նպատակն է հարթակ ծառայել հայաստանյան երիտասարդության համար, որպեսզի նրանք բարձրաձայնեն իրենց հուզող և հետաքրքրող հարցերը, պատմեն իրենց հաջողությունների, հայտնագործությունների և ուսումնասիրությունների մասին:

TED ծրագրի ընձեռած հնարավորությունները ներդրվում են մեր ուսումնական գործընթացում TED բաց թարգմանչական ծրագրի կամ, այսպես կոչված, **TED's Open Translation Project-ի** օգնությամբ, որի միջոցով TED ելույթները հասանելի են դառնում անգլերենին չտիրապետող լսարանին՝ առաջարկելով ենթագրերի, ինտերակտիվ սղագրության և աշխարհի տարբեր ծայրերում գտնվող կամավորների կողմից ցանկացած ելույթի թարգմանություններից օգտվելու հնարավորություններ: Ներկայումս նախագիծը ներառում է շուրջ

5000 կամավորի կողմից կատարված ավելի քան 10.000 թարգմանություն:

## TED-Ը ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ



Այս գծապատկերը ցույց է տալիս այն լեզուները, որոնցով ավելի հաճախ թարգմանվել են TED ելույթները: Ինչպես տեսնում եք, առաջին տեղում անգլերենն է, բայց ցանկում տեղ են գտել ոչ այնքան տարածված լեզուներ ևս, ինչը խոսում է TED ելույթների շուրջ գնալով ավելի մեծացող հետաքրքրության մասին: Հուրախություն մեզ, հայերենն արդեն տեղ է զբաղեցնում այն լեզուների շարքում, որոնցով թարգմանվել են TED ելույթները. դրանցից 37-ն ուղեկցվում է հայերեն ինտերակտիվ տղագրությամբ և ենթագրերով:

Եվ այս գործին իր մասնակցությունն է բերել ԵՊՀ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնը: Ամբիոնի ուսանողների կողմից թարգմանված նյութի մի մասն ընկալման և, հատկապես, թարգմանության առումով բավականին բարդ էր, սակայն չափազանց հետաքրքիր: Ինտերակտիվ նյութերի թարգմանությունն օգնում է է՛լ ավելի խորացնել լեզվի իմացությունը, ձեռք բերել նոր գիտելիքներ ու հմտություններ, որոնք պարզապես դիտելիս չես սովորի:

Նախ մեր ուսանողներն անդամակցեցին “TED’s Open Translation Project”-ին՝ որպես կամավոր թարգմանիչներ: Սկսեցինք աստիճանաբար խորամուխ լինել գործնական աշխատանքի մեջ: Ուսանող-

ները, նախ դիտում և իրենց նախասիրությամբ ընտրում են որևէ ելույթ (այս փուլի դժվարությունն այն է, որ ուսանողները տարբեր նախասիրություններ ունեն, քանի որ թեմաների շրջանակը լայն է. երաժշտությունից և հոգեբանությունից մինչև բնապահպանություն և այլն): Ապա յուրաքանչյուր ուսանող նախապես գրավոր թարգմանում է ելույթը (այս աշխատանքը նպաստում է համակարգչով աշխատելու հմտությունների կատարելագործմանը): Այնուհետև լսարանում միասին դիտում և թարգմանում ենք այն (այս փուլը նպաստում է ուսանողների՝ թիմային աշխատանք կատարելու ունակությունների զարգացմանը): Եվ վերջում աշխատանքն առցանց տեղադրվում է TED-ի կայքում և հասանելի է դառնում կայքի հայալեզու օգտատերերի:

Այն, ինչ նկարագրվեց, հետաքրքիր, ոգևորիչ և օգտակար փորձառություն է բոլորի համար, գործնական փորձ՝ խթանելու ուսանողների ակտիվ մասնակցությունն ուսման գործընթացին՝ զարգացնելով բառապաշարը և գործնական թարգմանչական հմտությունները: Բանախոսի խոսքի, դիմախաղի ու ժեստերի, ինչպես նաև՝ ենթագրերի ինտերակտիվ համադրությունն ուսանողներին հնարավորություն է տալիս ճիշտ ընկալել իրենց համար նոր արտահայտությունները, և ստուգել ընկալման ճշգրտության աստիճանը:

Նման նախաձեռնությունները նպաստում են ուսանողների թիմային աշխատանքին և մեկ գաղափարի շուրջ նրանց միավորելուն: Դրանց միջոցով ապահովվում է.

- Գրավոր և բանավոր խոսքի և հաղորդակցական հմտությունների զարգացում,
- Ինքնավստահության ձևավորում,
- Մտերմիկ ու հանգիստ միջավայր,
- Ինտերակտիվ, տրամադրող և ուսանողակենտրոն ուսուցում,
- Առաջին իսկ պահից օտար լեզվի միջավայրի առկայություն,
- Անհատական մոտեցում (ուսանողների անհատական հետաքրքրությունների բացահայտում),
- Դասավանդման արդի մեթոդներ:

Այս մեթոդը է՛լ ավելի է կարևորվում, քանի որ ժամանակակից աշխարհում զեկույցները, էլեկտրոնային հաղորդակցությունը, շնորհանդեսները, բանակցությունները, խորհրդակցություններն ու հան-

դիպումները ժամանակակից գործարար հաղորդակցման կարևորագույն բաղադրիչներ են, ինչը որոշ չափով երաշխավորում է սովորելու ընթացքում ձեռք բերած գիտելիքների հետագա գործնական կիրառությունը:

## INTERNET SOURCES

1. <http://www.ted.com/talks>
2. [www.tedxyerevan.com](http://www.tedxyerevan.com)
3. [Facebook.com/TEDxYerevan](https://www.facebook.com/TEDxYerevan)
4. Twitter hashtag [#tedxyerevan](https://twitter.com/tedxyerevan)
5. <http://kids.tedxyerevan.com>
6. [media@tedxyerevan.com](mailto:media@tedxyerevan.com)

**ЛУСИНЕ САРГСЯН – “TED Talk” – как средство обучения устному переводу.** За последнее десятилетие подготовка устных переводчиков, особенно в рамках профессионального обучения, стала предметом всемирного обсуждения. В соответствующих отделах высших учебных заведений подготовка устных переводчиков является наиболее актуальной задачей.

В статье представлены методы и подходы, применяемые в рамках предмета “Устный перевод”, а также их новизна.

**LUSINE SARGSYAN – "TED Talk" as a Means of Interpretation Training.** In recent decades, the problem of training professional interpreters has still been hotly debated worldwide. The instruction of interpreters in the corresponding departments of higher education institutions is one of the most topical issues currently.

The present article touches upon the methods and approaches implemented within the framework of "Interpretation" course.

«ԿԻՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

Ասացվածքները կարճ, բայց հեշտությամբ հիշվող արտահայտություններ են, որոնք արտացոլում են մարդկային փորձի կարևորագույն փաստերը և ընկալվում են որպես ճշմարիտ մարդկանց մեծամասնության կողմից: Սովորաբար, ասացվածքներին հատուկ է հումորը, որը կարող է լինել հեզնական, ծաղրական և անգամ վիրավորական, երբ ուղղված է լինում կնոջը:

Բացի տիպական ասացվածքներից գոյություն ունեն ասացվածքային համեմատություններ, ինչպես օրինակ՝ *“As fussy as an old maid”*, որն ունի ավանդական կայուն ձև և պարունակում է բարոյական խորհուրդ: ասացվածքային արտահայտություններ, ինչպես օրինակ՝ *“To smell like a whorehouse on Saturday night”*, որոնք թույլատրում են անձի, թվի և ժամանակաձևի փոփոխություն, ինչպես օրինակ՝ *“A man without a wife is like a fork without a knife”*; և ասացվածքային փոխաբերություններ, ինչպես օրինակ՝ *“A widow is a boat without a rudder”*.<sup>24</sup>

Յուրաքանչյուր ազգ իր պատմական զարգացման ընթացքում ձեռք է բերում միայն իր ազգին բնորոշ մեծ թվով առանձնահատկություններ, որոնք և արտացոլվում են առաձներում և ասացվածքներում<sup>25</sup>:

Մեր նպատակն է քննել անգլերենի և հայերենի այն ասացվածքները, որոնք պարունակում են «կին» բաղադրիչ: Ասացվածքների մեծամասնության իմաստը անսեռ է, բայց այն ասացվածքներն, որոնք կապված են «կին» հասկացության հետ միտում ունեն սահմանափակվել որոշակի կաղապարներով: Ընդհանուր

<sup>24</sup> Brown, Raymond Lamont. *A Book of Proverbs*. New York: Taplinger Publishing Company, 1970, p. 36.

<sup>25</sup> Lyons, John. *Linguistic Semantics: An Introduction*. Cambridge: Cambridge University Press. 1995.



առմամբ կանանց մասին ասացվածքները բնութագրվում են խայթող սրամտությամբ:

Չնայած նրան, որ կանանց մասին ասացվածքների մեծամասնությունը ունեն հաճոյախոսական բնույթ, ինչպես օրինակ՝ “*God couldn't be everywhere; therefore, He made mothers*”, սակայն կան ասացվածքներ, որոնք կանանց ներկայացնում են չարալեզու, անխելք և խաղալիքանման արարածներ, որոնք միշտ չէ, որ հավատարիմ են:

«Կին» բաղադրիչով ասացվածքների ճնշող մեծամասնությունը դիտարկում են կանանց որպես ընտանիքի կին, ինչպես նաև՝ ամուսնու սեփականություն՝

A wife is a young man's slave and an old man's darling  
կամ

Marriage is the supreme blunder that all women make.

Մի շարք ասացվածքների և առածների նշանակությունը ծագելով երկու լեզուների (անգլերեն և հայերեն) սկզբնաղբյուրներից՝ հնարավոր է, երբեմն, ունենա տարբեր համարժեքներ, ինչպես նաև բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի տարբերություն: Ուստի, նրանց պատկերների որակը նույնպես համարժեք չի կարող լինել, չնայած երկու լեզվում էլ նրանք ունեն արտահայտչականություն: Այսպես օրինակ՝

- *Having a sister is like having a best friend you can't get rid of. You know whatever you do, they'll still be there.*
- *Sister is probably the most competitive relationship within the family, but once the sisters are grown, it becomes the strongest relationship.*
- *A sister smiles when one tells one's stories – for she knows where the decoration has been added.*

Շայերենում քույրերի մասին այս ասացվածքները չունեն համարժեքներ: Ունենալով ծագման ընդհանուր սկզբնաղբյուր՝ առածներն ու ասացվածքները իրենց մասնակի կամ ամբողջական շարահյուսական առանձնահատկությամբ, բաղադրիչների փոխհարաբերություններով, գունագեղությամբ և արտահայտչականությամբ բնորոշ են և՛ անգլերենին, և՛ հայերենին: Նմանատիպ ասացվածքները երկու լեզվում կարող են հաճախ պահպանել նույնիսկ միանման շարադասություն՝

- *All brides are childe brides in their mother eyes.*
- *A rich bride goes young to the church.*
- *A sad bride makes a glad wife.*
- *Հարսի փեշն իրան դուշման ա:*
- *Հարսն եկավ, հարսնիքը պրծավ:*
- *Մենակ հարսը տղա չի բերի:*
- *Հարևանի հարսը գեղեցիկ է լինում:*
- *Միրուն աղջիկը սիրուն հարս կլինի, սիրուն հարսը սիրուն մանուկ կծնի:*

Մենք կարող ենք փաստել, որ անգլերենի ասացվածքները, ուրոնք պարունակում են “bride” բաղադրիչը չունեն այն երանգանգավորումը, որը հատուկ է հայերենի ասացվածքներին: Դա կարելի է բացատրել ազգային առանձնահատկություններով, ինչպես նաև հայերեն «հարս» բառի իմաստային լայն ընդգրկումով:

Երբ կինը դիտարկվում է որպես տղամարդու օգնական և ընտանիքի պահապան, ապա ն՛ անգլերենը, և՛ հայերենը ներկայացնում են նմանօրինակ ասացվածքներ՝

- *Behind every successful man is a woman.*
- *Man build houses; women build homes.*
- *The wise woman builds her house, but with her own hands the foolish one tears hers down.*
- *Կնիկ կա՝ գարին ցորեն կդարձնե, կնիկ էլ կա՝ ցորենը գարի:*
- *Տուն կառուցողը կինն է:*
- *Կնոջ սարքած տունը աստված չի քանդի, աստծու սարքածը՝ կինը կքանդի:*

Ինչպես արդեն գիտենք ասացվածքները հաճախ ունենում են ազգային հատկանշական կառուցվածքային արտահայտչականություն և կերպարավորություն: Վերջինս ներառում է որոշակի թաքնված իմաստ, որը, հիմնականում, օտարերկրացու համար բավականաչափ պարզ, հասկանալի և մատչելի չէ: Ուստի հնարավոր չէ ստեղծել միայն փոխանցվող իրականություններ, սոցիալական գույներ և այլն՝ ցուցադրելու համար ազգային նկարագիրը: Այն կարող է հասկացվել միայն, եթե հնարավոր լինի ստեղծել ազգային նկարագրի զանազան ձևերի միակցություն այս կամ այն գրողի ստեղծագործական աշխատանքներում:

Այսպիսով, բառային նշանակությունները կարող են արտահայտվել միայն մոտավոր նմանությամբ, բացատրություններով կամ նկարագրական ճանապարհով՝

- *Աղջիկը այլոց տան ճրագն է:*
- *Աղջիկն ինչքան պահես, դարձյալ ուրիշի բախտն է:*
- *Երեխան՝ պատճառ, մայրը՝ շահող:*
- *Լավ աղջիկը յոթ տղա արժե:*
- *Աղջիկը որ էշի վրա նստի՝ բախտը կբացվի:*

Սակայն կարող ենք հանդիպել նաև հարաբերական համար-ժեքներին՝

- *What the daughter does, the mother did.*
- *Մայրը տես, աղջկան առ:*
- *The beauty of a woman becomes useless if there is no one to admire it.*
- *Գեղեցիկ կնոջ երեսը համբուրիք, տգեղի՝ ձեռքը:*
- *A store-house of evil is a woman if she is deprived.*
- *Անտառի կնկա գլխին հարյուր լաչակ կա:*

Որպես ամփոփում կարող ենք ասել, որ չնայած նրան, որ «կին» բաղադրիչով ասացվածքները կարող են ունենալ բացասական իմաստ, այնուամենայնիվ, կինը եղել և մնում է նախ և առաջ ընտանիքի մայր և պահապան և դա չէր կարող չգտնել իր արտահայտությունը ասացվածքներում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Apperson G.L.**, *English Proverbs and Proverbial Phrases*, Lnd., 1929.
2. **Wilfrid B.**, *Proverb Literature: A Bibliography of Works Relating to Proverbs*. London: William Glasher, 1930. Reprint. Nendeln, Liechtenstein: Kraus Reprint, 1967.
3. **Brown R.L.**, *A Book of Proverbs*. New York: Taplinger Publishing Company, 1970.
4. **Brunvand J.H.**, *The Study of American Folklore: An Introduction*. 2<sup>nd</sup> ed. New York: W. W. Norton and Co., Inc., 1978.
5. **Cameron D.**, *Feminism and Linguistic Theory*. 1985; New York: St. Martin's Press, 1992.

6. Coffin T.P., *Our Living Traditions: An Introduction to American Folklore*. New York: Basic Books, 1968.
7. Kunin A., *English Phraseology*, M., 1970.
8. Lyons J., *Linguistic Semantics: An Introduction*. Cambridge: Cambridge University Press, 1995.
9. Ղանալանյան Ա.Տ., *Առածանի*, Եր., 1960:

**KRISTINE HARUTYUNYAN – The Concept “Woman” in English and Armenian Proverbs.** Proverbs are short, but memorable sayings, based on an important fact of experience which is considered true by many people. A proverb is a combination of words that has a meaning that is different from the meanings of the individual words themselves. It is a phrase which does not always follow the normal rules of meaning and grammar. It is a short homely statement that teaches a lesson or gives practical advice.

Our aim is to consider the proverbs with the component “woman” in two languages – English and Armenian.

While the majority of proverbs are sexless in subject, those that deal with women tend to fall into certain patterns, and the collection that follows will divide the proverbs into these categories. Generally speaking, proverbs about women are characterized by biting wit. While the majority of proverbs are the saccharine kind “*God couldn't be everywhere; therefore, He made mothers*”, some portray woman as a sharp-tongued, long-winded, empty-headed, toy like creature who is faithless to the man by whom she should be ruled and to whom she belongs like property or livestock.

**КРИСТИНЕ АРУТЮНЯН – Понятие “женщина” в английских и армянских пословицах.** Пословицы являются частью каждого языка, так же как и любой культуры.

Большинство пословиц не содержат компонентов связанных с понятием пола, но мы попытаемся представить те из них, которых пристствует концепт “женщина”. Мы проанализируем пословицы английского языка и их эквиваленты в армянском.

Вполне логично, что понятие “женщина” универсально в обоих языках, где женщина представлена как мать, жена, сестра, дочь, невеста, и т. д. Но несомненно также то, что данный концепт имеет различия в восприятии в данных языках. Пословицы содержащие концепт “женщина” могут быть связаны как с такими позитивными понятиями как красота, нежность и доброта, так и с негативными характеристиками, включающими изменчивость, зависть, болтливость.

**ԽՈՍՔԱՅՆԱՑՎԱԾ ԹԱՆԱՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ  
ԷԴԳԱՐ Ա.ՊՈՅԻ «ԿԱՐՄԻՐ ՄԱՀՎԱՆ ԴԻՄԱԿԸ»  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

***ԱՐՄԻՆԵ ԽԱՉՍԱՏՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան*

Մահվան երևույթը մշտապես հետաքրքրություն է ներկայացրել՝ սկսած անտիկ ժամանակներից մինչև մեր օրերը: Մահվան հիմնախնդրի լուծման համար ներկայումս դիմում են անգլո-ամերիկյան մշակույթին: Հենց այստեղ՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, տարբեր միջգիտաճյուղային հետազոտությունների շփման կետում առաջանում է թանատաբանություն գիտությունը: Թանատաբանական հասկացույթը (կամ «մահ» հասկացույթը) (Хачатурян А.А.,2013:25) դասվում է համընդհանուր էզոխստենցիոնալ հասկացույթների շարքին և իրենից ներկայացնում է բազմամակարդակ միավոր, որի միջուկն է կազմում «գոյության վերջ» հասկացությունը: Խոսքայնացված թանատաբանական հասկացույթը լեզվում արտահայտվում է ինչպես բացահայտ (էքսպլիցիտ) բառերի և արտահայտությունների նշանակությամբ, այնպես էլ ոչ բացահայտ (իմպլիցիտ)՝ գեղարվեստական արտահայտչամիջոցների օգնությամբ (փոխաբերություն, մակդիր, դարձվածաբանական միավորներ, խորհրդանիշներ և այլն): Հայտնվելով գեղարվեստական տեքստում՝ թանատաբանական հասկացույթը ձեռք է բերում լրացուցիչ հատկություններ, գտնում նոր առնչություններ, ընդլայնում իր նշանակությունը և վերածվում է գեղարվեստական հեղինակային հասկացույթի: Հեղինակային գեղարվեստական հասկացույթի առանձնահատկությունը նկարագրելիս ուսումնասիրողը հնարավորություն է ունենում ընդգծել տվյալ հասկացույթի զգացմունքային արտահայտությունները և սահմանելու վերջինիս արժեքային հայեցակերպը:

Ուսումնասիրելով խոսքայնացված գեղարվեստական հասկացույթը, հետազոտողը հնարավորություն է ունենում նկարագրել հեղինակի գեղարվեստական աշխարհը, ուսումնասիրել նրա ստեղծագործական լաբորատորիան, միավորել հեղինակի գեղարվեստական

մտածողության համակարգի իմաստային տարրերը՝ հասկացությունից դեպի գեղարվեստական պատկեր և նրանից էլ դեպի ստեղծագործության լեզուն: Այդ խնդիրը կրկնակի բարդ և պատասխանատու է դառնում, եթե նրա առջև դրված է թարգմանության խնդիրը:

Գեղարվեստական թարգմանությունը իրենից ներկայացնում է ստեղծագործության մի յուրահատուկ տեսակ, որտեղ պետք է հաշվի առնվեն տեքստի ոչ միայն լեզվաբանական, այլ նաև արտալեզվաբանական հայեցակերպերը: Թարգմանության համարժեքության պահանջները, ինչպես հայտնի է, ենթադրում են բնօրինակի բովանդակության ճշգրիտ փոխանցում, պահպանելով վերջինիս արտահայտչական պատկերավոր առանձնահատկությունները (Редкер Я.И.1974): Թարգմանության մեջ, պատկերավոր միջոցների փոխանցման դժվարությունը պայմանավորված է յուրաքանչյուր լեզվի պատկերային համակարգով, որը ձևավորվում է տվյալ լեզվի պատմության, մշակույթի, ժողովրդի կեցության ազդեցությամբ: Այնուամենայնիվ կարելի է ասել, որ պատկերավորության կատեգորիան թարգմանելի է և կարող է դասվել այսպես կոչված «միջլեզվական ունիվերսալիաների» շարքին: Այս դրույթները կիրառելի են նաև համընդհանուր խոսքայնացված հասկացությունները թարգմանելիս, որոնք արտահայտվում են լեզվի պատկերավոր միջոցների օգնությամբ:

Մեր կարծիքով թարգմանության համարժեքությունը, պետք է հիմնավորված լինի նաև գեղարվեստական տեքստի հասկացութալորտի ճշգրիտ փոխանցմամբ, որն իր մեջ ներառում է ստեղծագործության հիմնական հասկացույթը:

Որպես հետազոտության նյութ հանդիսանում են Է.Ա.Պոյի «Կարմիր մահվան դիմակը» ստեղծագործության բնօրինակը և Արտաշես Էմինի թարգմանությունը: Տեքստի մոդելավորման ժամանակ թարգմանիչը հանդիսանում է տեքստի բնօրինակում առկա հիմնական թանատաբանական հասկացույթի մեկնաբան և համահեղինակ: Թարգմանության ժամանակ թանատաբանական խոսքայնացված հասկացույթը նորավեպում փոխանցվում է բացահայտ նշանակություն արտահայտող բառերով:

**pestilence** – աղետաբեր համաճարակ, ժանտամահ

**fatal** – սուկալի, ճակատագրական

**dissolution** – կազմալուծում

**darkness and decay** – խավար և կործանում

**deadly** – մահացու

Պատմվածքում թանատաբանական հասկացության ոչ բացահայտ լեզվական միջոցների շարքում գերակշռում են խորհրդանիշները:

**ebony clock** – սևափայտ, երենոսափայտ ժամացույց

**masquerade** – պարահանդես, դիմակահանդես

**black carpet** – սև գորգ

**red death** – կարմիր մահ

**blood colored panes** – արնագույն ապակիներ, լուսամուտի շրջանակ

**black velvet** – սև կերպաս

Խորհրդանիշը՝ որպես խոսքայնացված թանատաբանական հասկացության բաղկացուցիչ մաս, դառնում է իմաստակիր միավոր, հեղինակային հասկացության հաղորդակցապատկերային համակարգում: Խորհրդանիշը՝ այլաբանություն է, խորհրդանիշի իմաստի արտահայտման անուղղակի միջոց, որը հարկավոր է հասցնել ընթերցողին: Է.Պոյի ստեղծագործություններում խորհրդանիշները բազմիմաստ են և ուղղված են այլաբանական անձնավորմանը:

Հաշվի առնելով խորհրդանիշների օբյեկտիվ և սուբյեկտիվ առանձնահատկությունները «Կարմիր մահվան դիմակը» ստեղծագործությունում, թարգմանչի խնդիրը՝ որպես խոսքայնացված թանատաբանական հասկացության մեկնաբան, առավել պատասխանատու է և դժվարին: Պատմվածքում բավականին շատ են փոխաբերությունները, խորհրդանիշներն ու ակնարկները, այդ իսկ պատճառով թարգմանության մեջ անհրաժեշտություն է առաջանում մեկնաբանության, որը կօգնի ընթերցողին ընկալել հեղինակի թանատաբանական խորհրդանշանությունը:

«Կարմիր մահվան դիմակը» ստեղծագործության անվանումը ակնարկ է հանդիսանում, որը վերաբերում է երեք հայտնի՝ Շեքսպիրի «Փոթորիկ», «Կորեոլան», (“red plague” «փոթորիկ» –ում, “red pestilence” «Կորիոլան»-ում) և Հյուգոյի «Էրնանի» պիեսներին (Stuart Levine and Susan Levine, 1976:469):

Պատմվածքում բոլոր գործողությունները և նկարագրությունները թատերականացված ներկայացում են հիշեցնում, որտեղ ամեն ինչ, սկսած՝ գույնից, լույսից և պատկերներից, հիմնված է խորհրդանիշների վրա:

Պատմվածքում արքայազն Պրոսպերոյի կազմակերպած ժանտախտով պաշարված դիմակահանդեսը դառնում է նորավեպի էպիկենտրոն: Մահը հայտնվում է որպես անկոչ հյուր՝ ժանտախտով տարածված պարահանդեսում: Պատմվածքում ժանտախտի նկարագրումը փոխաբերական իմաստ ունեցող բառերի միջոցով բացատրում է մի կողմից՝ հեղինակի սարսափը համաճարակի առջև, իսկ մյուս կողմից՝ Պոյի անձնական դժբախտությունների արդյունքն է: Միննույն ժամանակ անորոշ, անըմբռնելի կարմիր մահվան բնույթը վերջինիս տալիս է ծիսական բովանդակություն: Որոշ քննադատների կարծիքով՝ Պրոսպերոյի գոթական վանատունը, որը շրջապատված է քարե պատնեշներով և երկաթյա պարիսպներով, և որոնք ապահովում են հերոսի անվտանգությունը համաճարակից, համահունչ է մարդու մարմնի հետ, մարդու, որը համաճարակի ժամանակ ցանկանում է փակվել արտաքին աշխարհից: Ամբողջ, որը գուգորդվում է մարմնի հետ, հանդիսանում է արևմտյան մշակույթին բնորոշ խորհրդանիշ (Sontag S. P. 136): Թանատաբանական հասկացույթը իր մեջ ներառում է «մահացու հիվանդություն» հասկացությունը (deadly disease), որն էլ հենց հանդիսանում է ժանտախտը: Այդ իսկ պատճառով կարմիր ցանը հանդիսանում է այդ հիվանդության տեսողական խորհրդանիշ:

Պատմվածքում յոթերորդ սենյակի լուսամուտները, ինչպես և հիվանդի մարմնի և դեմքի վրայի ցանը, կարմիր գույնի են.

**The panes were scarlet – a deep blood color.**

**Ապակիները մուգ կարմիր էին՝ արյան գույնի:**

**Scarlet stains – բոսորագույն ցան**

Թանատաբանական հասկացույթը տեսանելի է այս օրինակում: Դիմակահանդեսի համար նախատեսված սենյակը կարծես թե զգեստավորվում է կարմիր մահվան հանդերձանքով:

**But in the western or black chamber the effect of the fire-light that streamed upon the dark hangings through the blood-tinted panes was ghastly in the extreme, and produced so wild a look upon the countenances of those who entered, that there were a few of the company bold enough to set foot within its precincts at all.**

Արևմտյան կամ սև դահլիճում արնագույն ապակիներից սփռվող լույսն այնքան չարագուշակ տպավորություն էր թողնում և մտնողների դեմքին այնքան վայրի արտահայտություն էր տալիս, որ քչերն էին համարձակվում այնտեղ ոտք դնել: (Ա. Էմին, 1983:3-8)



Մարմնի վրայի կարմիր ցանի խորհրդանշանային նկարագրումներին ավելանում է նաև սև պատանքի պատկերը: **“Shrouded in black velvet pasteries”**. **«Ամբողջովին պատած էր սև կերպասով»:** (3-8) Հանդիսանում է փոխանունություն «դիակ» իմաստով: Մահվան հասկացույթը նույապես նկատելի է այս թարգմանությունում:

Պատահական չէ Պրոսպերոյի ավարտական մենամարտը, որը տեղի է ունենում 7-րդ սենյակում, որտեղ հյուրի կերպարը շատ հեշտ ճանաչելի է, ինչպես տեսնում ենք էմիլի թարգմանությունում:

**His vesture was dabbled in blood – and his broad brow, with all the features of the face, was besprinkled with the scarlet horror.**

**Ճակատն ու դեմքը ծածկված էին զարհուրելի բոտրագույն ցաւով և հանդեձանքը թաթախված էր արյան մեջ:** (3-8)

Թանատաբանական հասկացույթը այստեղ խոսքայնացվում է տեսողական խորհրդանիշների օգնությամբ, դա մի կողմից սենյակի պատուհաններն են և ծանր վարագույրները, իսկ մյուս կողմից տեսիլքի՝ դիմակով «ուրվականի» հայտնվելն է:

Թանատաբանական հասկացույթը կամ մահ հասկացույթը, արտահայտված է փոխաբերություններով, որոնք գուգորդվում են ժանտախտով հիվանդ մարդու մարմնի զգացումներով՝ գլխապտույտ, դանդաղեցված զարկերակ, ծանր շնչառություն, զառանցանք և վերջում՝ արնահոսություն: Արքայագն Պրոսպերոյի կողմից դիմակահանդես հրավիրված հյուրերը պտտվում են, պարելով վալս, որը բնորոշ չէր պատմվածքում նկարագրված միջնադարին: Մինչդեռ պարի ընտրության հարցում Պոյին գրավել էին վալսին բնորոշ պտույտները և շրջապտույտները, քանի որ **“walzen”** գերմանական բառը նշանակում է պտտվել: Պալատականները պարում են վանատան սրահներում, որոնք լաբիրինթ են հիշեցնում (Ямпольский М. 1996:69,84):

**The apartments were so irregularly disposed that the vision embraced but little more than one at a time. There was a sharp turn at every twenty or thirty yards, and at each turn a novel effect.**

Դահլիճների դասավորությունն այնքան անկանոն էր, որ անհնար էր մի հայացքով մեկից ավելին տեսնել: Ամեն 20-30 քայլին մի կտրուկ շրջադարձ կար, իսկ ամեն շրջադարձին՝ ազդեցիկ մի նուրբ: (3-8)

Սենյակների լաբիրինթը կարծես թե կրկնում է վալս պարող մարմնի շարժումները, այդ ամբողջ պատկերը, որը բաղկացած է

սենյակների լաբիրինթաձև կառուցվածքից և վալս պարող հյուրերից, ստեղծում են գլխապտույտի տպավորության:

Ինչպես տեսնում ենք «լաբիրինթ» հասկացությունը բազմիմաստ է, որը մի կողմից ակնարկում է վանատանը գտնվող մարդկանց անելանելի վիճակը, իսկ մյուս կողմից համադրվելով պարի հետ՝ այն ստեղծում է գլխապտույտի տպավորություն, ակնարկելով մարդկանց մահացու հիվանդության մասին: Ջարմանալի չէ, որ սրահում տիրող խրախճանքը ուղղակիորեն շուրջպար է կազմում:

**“The revel went whirlingly” – “whirlingly”** բառը, որը նույնպես խորհրդանշական է, և այստեղ հեղինակը նմանեցնում է այն հողմապտույտի, որը կործանում է մարդկանց: **«Խնջույքն ընթանում էր ամբողջ թափով»: (3-8)** Այս օրինակի հայերեն թարգմանությունում բացակայում է մահվան հասկացության փոխանցումը:

Պարողները վալս են պտտվում մինչդեռ երենոսափայտ ժամացույցի սլաքը, շրջապտույտ է կատարում վերջին 7-րդ սենյակում, և արձակում է իր անսովոր կտրուկ ձայնը: Այդժամ մարդկանց շաժումները կանգ են առնում և գունատվում են նույնիսկ **«ամենաանհոգները»** (“**the giddiest grew pale**”): Այդ բառի իմաստը ավելի լայն է, քան պարզապես անհոգ իմաստը, քանի որ այն նաև նշանակում է «գլխապտույտից տառապողներ», մահվան հասկացությամբ աստեղ նույնպես արտահայտված չէ:

Ժամացույցի ռիթմը «Կարմիր մահվան դիմակը» ստեղծագործությունում հիշեցնում է մարդու սրտի բաբախը: Կյանքը սենյակներում նմանեցվում է սրտի բաբախյունի հետ (**“and in them beating feverishly the heart of life” – «անասելի եռուզեռ էր տիրում»:**) **“Feverishly”** բառի ընտրությունը ակնարկում է ոչ միայն կյանքի արագացված ռիթմը, այլ նաև հիվանդ մարմնի՝ սրտի արագացված բաբախյունը: Սակայն այստեղ թարգմանությունը չի արտահայտում **“feverishly”** անգլերեն բառի իմաստը, որը նշանակում է՝ տենդային:

**There stood against the western wall a gigantic clock of ebony. Its pendulum swung to and fro with a dull, heavy, monotonous clang.**

Պատին հենված էր հսկա սևափայտ մի ժամացույց, որի ճոճանակը, դանդաղ օրօրվելով, խուլ, միալար ու բթացնող ձայն էր հանում, որը դուրս է գալիս երենոսափայտ ժամացույցի պղնձյա թոքերից: (3-8)

Թարգմանիչն այստեղ չի թարգմանել **“western”** բառը, որը խորհրդանշանային է, և արտահայտում է մահվան հասկացությամբ: Այդ նկարագրումը ակնարկում է նաև թոքերը ախտահարող և շնչա-

ությունը ծանրացնող հիվանդության մասին: Մահը հայտնվում է վանատանը՝ փայտացած դիակի դիմակով (**corpse like mask**) որպես ուրվական (**spectral image**) այստեղ թարգմանիչը, կարծես թե ավելի է ընդգծել մահվան պատկերը: Արքայազն Պրոսպերոն անշնչացած ընկնում է յոթերորդ սենյակում, որտեղ ինչպես նշվում է հայերեն թարգմանությունում՝

**Մևաթույր պաստառներին ընկնող արնագույն լույսը սևարկու տպավորություն էր թողնում: (3-8)**

**And there flows a ruddier light through the blood –colored panes, and the blackness of the sable drapery appals...**

Այդ նկարագրումը ակնարկում է ժանտախտով հիվանդների արյունահոսությունը, որը ավարտվում է մահով: Այստեղ նույապես թարգմանչին հաջողվել է փոխանցել մահվան հասկացույթը: Այսպիսով թանատաբանական հասկացույթը, որը նախագծված է խորհրդանշանային փոխաբերական տարածությունում պահպանված է էմիլի թարգմանության մեջ: Որոշ հասկացութային բացերը թարգմանության մեջ կարող են կապված լինել անգուգադիպության և համատեղելիության տարբերություններով:

Մակայն ընդհանուր առմամբ թարգմանությունը փոխանցում է պատմվածքի կենտրոնական թանատաբանական հասկացույթը: Կասկածից վեր է, որ անտեղյակ ընթերցողի և ստեղծագործության համարժեք վերարտադրման համար, պատմվածքի թարգմանությունը կարիք ունի պատմամշակութային և կենսագրական մեկնաբանության, որը ցավոք բացակայում է տվյալ թարգմանության մեջ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Poe E.A.**, *Prose and Poetry*. M.: Raduga Publishers, 1983.
2. *The Short Fiction of Edgar Allan Poe*. Edited by **Stuart Levine** and **Susan Levine**. An Annotated Ed. Indianapolis, Indiana: Bobbs-Merrill Company, 1976.
3. **Sontag S.**, *AIDS and its Metaphors* // *Op. cit.* P. 136.
4. **Рецкер Я.И.**, *Теория перевода и переводческая практика*. Из-во «Международные отношения», М., 1974.
5. **Хачатрян А.А.**, *Вербализация художественного танатологического концепта в идиистике Эдгара По*. Автореф. дисс. канд. фил. Наук, 2013.

6. **Ямпольский М.**, Демон и Лабиринт. *Новое литературное обозрение* Москва, 1996.
7. **Պո Է.**, *Անտրոջներ և սղձափանջներ: Պատմվածքներ: Թարգ. ծանոթագր. Արտաշես Էմինը*, Եր.: «Սովետ. գրող»հրատ., 1983:

**АРМИНЕ ХАЧАТРЯН – Перевод вербализованного танатологического концепта в рассказе Э.А.По «Маска Красной Смерти».** Настоящая статья посвящена вербализации танатологического концепта в переводе новеллы Э.А.По «Маска Красной Смерти». Танатологический концепт как один из универсальных концептов вербализуется с помощью эксплицитных и имплицитных языковых средств в оригинале новеллы.

Одним из имплицитных языковых средств являются символы. Учитывая все объективные и субъективные особенности символов, задача переводчика, как интерпретатора вербализованного танатологического концепта особенно ответственна и сложна. Перевод Эмина «Маска Красной Смерти» Э.А.По, нуждается в комментариях, которые помогут обыкновенному читателю правильно интерпретировать метафорические танатологические образы новеллы.

**ARMINE KHACHATRYAN – The Transmission of the Verbalized Thanatological Concept in the Translation of E. A. Poe’s Novel “The Masque of the Red Death”.** The present article is devoted to the study of verbalization of the thanatological concept in the translation of E. A. Poe’s novel “The Masque of the Red Death”. The thanatological concept as one of the universal concepts, is verbalized with the help of the implicit and explicit language means in the original of the novel.

One of the implicit language means are symbols. Taking into consideration all the objective and subjective peculiarities of the symbols, the task of the translator as an interpreter of the verbalized thanatological concept is especially responsible and complicated. The translation of the novel “The Masque of the Red Death” by A. Emin needs comments which will help the ordinary reader to interpret metaphorical thanatological images of the novel.

**ԹԱՐԳՄԱՆԻՉԸ՝ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴ**

*ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏԳՅԱՆ  
Երևանի պետական համալսարան*

*Միջմշակութային հաղորդակցություն* հասկացության կարգավիճակն ամրագրել է ամերիկացի լեզվաբան Հոլը՝ Դ. Տրագերի հեղինակությամբ 1954 թ. լույս ընծայած «Մշակույթը որպես հաղորդակցություն» ("Culture as Communication") գրքում:

Թեև Հոլն իր հետազոտությամբ գործնական նպատակ էր հետապնդում՝ հիմքեր ստեղծելով արտասահմանում ամերիկյան դիվանագետների գրագետ ու դյուրին պաշտոնավարման և ներդրողների վստահության ու անկաշկանդ արարքների համար, այնուամենայնիվ նրա առանցքային դրույթները, նախնական և հետագա լրացուցիչ մեկնաբանություններով, այսօր էլ համարվում են ելակետային ու կողմնորոշիչ: Խոսքն ի մասնավորի վերաբերում է հետևյալ եզրակացությանը. յուրաքանչյուր մշակույթ ձևավորում է արժեքների առանձնահատուկ համակարգ, առաջնահերթություններ, վարքականոն: Այդ իսկ պատճառով նրա նկարագրությունը, գնահատականը և մեկնությունը պետք է իրագործվեն մշակութային հարաբերականության դիրքերից:

Դասակարգված են միջմշակութային հաղորդակցության մի քանի տեսակետներ, որոնք ցանկության դեպքում կարելի է վերախմբավորել կամ նորացնել: Մակայն այս խնդիրը մեր նպատակի շրջագծից դուրս է: Հողվածում, ինչպես հուշում է վերնագիրը, մենք կարևորել ենք միջմշակութային հաղորդակցության այն տարատեսակը, որ կոչվում է *թարգմանություն*: Թուուցիկ էքսկուրսն իսկ դեպի պատմություն վկայում է, որ թարգմանությունը նույնքան հին իրողություն է, որքան լեզուն: Ժողովուրդների, պետությունների և կայսրությունների ձևավորումն ու կազմավորումը անհնարին կլիներ առանց գերիշխողների և հպատակների լեզուների համագոյակցության՝ գոնե սկզբնական շրջանում: Այս համագոյակցությունը և սրանով պայմանավորված՝ լեզվական փոխառությունները մեծապես հարստացրել են այսպես ասած՝ կարգադրիչ լեզուները և ծայրահեղորեն, ի սպառումն աղքատացրել ստորադաս լեզուների բառամթերքը:

Դիտարկվող թեմայի տիրույթում պետք է ընկալել նաև հնդեվրոպական լեզվաընտանիքի ձևավորումը: Պարզից էլ պարզ է, որ դերանունների, նախածանցների, բայական վերջավորությունների ընդհանրությամբ խեթերենը, սանսկրիտը, հայերենը, պահլավերենը, կելտերենը *ազգակից* լեզուներ են: Բնականաբար, առանց շփման, ինչը ենթադրում է ըմբռնողություն, որն էլ կարող է կայանալ միմիայն թարգմանական ակտով, այդպիսին չէին լինի:

Թարգմանչի դերը տարբեր ժամանակներում տարբեր տեսանկյուններից է գնահատվել: Հնում այն դիտել են որպես ծառայողական պարտականության կատարում, հոգևոր առաքելություն: Միջնադարյան Հայաստանում, գրերի գյուտից հետո, թարգմանիչը համապետական և ազգապահպան գործառույթ իրականացնող էր: Դրա ցայտուն օրինակը «Աստվածաշունչ մատեանի» թարգմանությունն է հունական «Յոթանասնից» բնագրից: Այս փոխադրությունը, որ իրավամբ որակվել է որպես *Թագուհի թարգմանութեանց*, փաստում է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի՝ հրեական, ասորական և հունական մշակույթների համակողմանի, ընդգրկուն և փայլուն իմացությունը:

Հարկ է նկատել, որ նրանց գործը արգասավոր մտքի երևակմամբ ու բացառիկ ճարտարությամբ շարունակեցին աշակերտները, որոնք գերազանց կրթություն էին ստացել Հունաստանում: Ժամանակի չափանիշներով վերջիններս ստեղծեցին թարգմանական գրականության պատկառելի գրադարան, որտեղ պահվում էին Արիստոտելի, Պլատոնի, Եվսեբիոս Կեսարացու, Պորփյուրի, ուրիշ նշանավոր իմաստասերների ու եկեղեցական հայրերի մագաղաթյա երկերը:

Հունարենից կատարված թարգմանությունները էական ազդեցություն ունեցան գրական հայերենի՝ գրաբարի վրա, այն աստիճան, որ հինգերորդ դարի վերջերին արդեն արձանագրվեց հունաբան դպրոցի կայացման փաստը: Այդ դպրոցը, որ գոյատևեց երկու հարյուրամյակ՝ մինչև արաբական խալիֆայության հաստատումը Հայաստանում, լեզվական նոր ուղղություն սահմանեց գրաբարում:

Ինչ խոսք, նրա ներկայացուցիչները հունարենի առաջնայնության և առավելության դիրքերից էին դիտարկում գրաբարի քերականությունն ու բառապաշարը: Եվ այստեղ ընկնում էին ծայրահեղության մեջ՝ վերաբաղադրելով այնպիսի լեզու, որը հիմնական լեզվի գրեթե այլընտրանքն էր:

Բայց անգնահատելի է հունաբան դպրոցի ծառայությունը հայերենի բառակազմական հնարավորությունների ընդլայնման հարցում: Հայտնի է, որ գրաբարը, բացառությամբ ժխտականների, չուներ նախաձանցներ: Թարգմանության դժվարությունները վերացնելու համար նոր լեզվաշինարարները հայերենի նախդիրների, ինչպես նաև մի շարք արմատական բառերի օգտագործմամբ հունարենի հանգույն ստեղծեցին ավելի քան երկու տասնյակ ածանց, որոնք կայուն տեղ զբաղեցրին մեր լեզվի կառույցում: Այդ նախաձանցներն են՝ *առ, ապ, արտ, բաղ, բաց, փաղ, շար, շաղ, ջոկ, պատ, յար, տար, թափ, ներ, բակ, հակ, պար, ենթ, ստոր, մակ, վեր, նախ, գեր, դեր, փոխ, հում, համ* և այլն (Մ. Ղազարյան, *Հայոց լեզուի պատմություն*: Անթիլիաս, Լիբանան, 2007, էջ 224):

Հունաբան հայերենի ջատագովները կազմեցին նաև ամբողջական նոր բառեր՝ *առ-ոգանություն, ապ-ա-ցոյց, արտ-ա-բերել, բաց-ատրություն, բաղ-դասություն, գեր-ա-դրական, դեր-անուն, մակ-երեւոյթ, յար-անուն, յար-ա-դրել, նախ-ա-դասել, ներ-գործություն, ներկայ, շաղ-կապ, շար-ա-դրություն, պար-ունակություն, վեր-ծանություն, տար-բերել, տրամ-ա-բանել, տրամ-ա-դրություն* (Մ. Ղազարյան, *Հայոց լեզուի պատմություն*: Անթիլիաս, Լիբանան, 2007, էջ 227):

Այս բառերի առաջին բաղադրիչները, ինչպես տեսնում ենք, ածանցներ են: Դրանց հետ կապված բարդություն գրաբարը չունի: Իսկ չեղած բառերի իմաստը մատենագիրներն արտահայտել են կամ այլ բառերով ու բառակապակցություններով, կամ նկարագրությամբ. *ստորագրություն* բառի իմաստով գործածել են *ձեռագիր, նկարագիր*, վերձանել՝ *ընթեռնուլ*, շաղկապ՝ *գօր, յօղակապ*, բացատրել՝ *մեկնել, ներգործել, ազդել*, փոխարկել՝ *փոխել, յեղուլ*, փառաբանալ՝ *ի բաց դառնալ*, ներպարունակել՝ *բովանդակել*, ներհակ՝ *ընդդիմակաց*, հումանուն՝ *անուանակից*, դերանուն՝ *փոխանակ անուան*, փաղատություն՝ *վանկ*, տարալսութիւն՝ *անհնազանդություն* տարբերել՝ *որոշել, զանազանել*, շարունակ՝ *հանապազ*, մակերեւոյթ՝ *երեսք*, շարադրել՝ *կցել* ((Մ. Ղազարյան, *Հայոց լեզուի պատմություն*: Անթիլիաս, Լիբանան, 2007, էջ 228):

Այս անդրադարձը Հայաստանում հունաբան դպրոցի ներկայացուցիչների նորամուծություններին համոզիչ փաստարկ է այն բանի, որ թարգմանիչը, որպես մշակութային հաղորդակցության միջնորդ, կարող է փոխակերպվել բարեփոխիչի՝ լուրջ նպաստ բերելով բնագիրը վերարտադրող լեզվին և այդ լեզվով ձևավորվող մշակույթին:

Այժմ այն մասին, թե ինչ է պահանջվում թարգմանչից՝ երկու մշակույթների խաչմերուկում: Ամենից առաջ՝ այն լեզվի համակողմանի իմացությունը, որից կատարվում է թարգմանությունը:

Մա նշանակում է, որ նրան պիտի մատչելի լինեն դրա բոլոր տարրերակները՝ հին, միջին, ժամանակակից, ինչպես նաև բարբառները, առածներն ու ասացվածքները: Այլապես նա կարող է ձախողել գործը, ինչպես դա պատահել է Վ. Բրյուսովի հետ՝ Սայաթ-Նովա թարգմանելիս: Ահա մի նմուշ.

«Կրակ ծովմենն դուս եկած՝ ուշ, ջեյիրան իս ինձ ամա»:

"О, дочь огня! крылатый конь, степная лань ты для меня".

Ներկայացնենք Հովհաննես Թումանյանի դիտողությունը. «Մինչդեռ Սայաթ-Նովան ակնարկում է կովկասյան առասպելների, հեքիաթների հրեղեն ծովից դուրս եկած հրեղեն ձին ու հրեղեն ջեյրանը» (*Երկերի ժողովածու*, 4-րդ հատոր, "Հայաստան" հրատ., Երևան 1969, էջ 234):

Երկրորդ պահանջը թարգմանական մեթոդի ճիշտ ընտրությունն է՝ փոխակերպության և բաղադրամասային վերլուծության միջև: Որևէ ուղեցույց սրա համար չկա: Ընտրությունը պայմանավորված է տեքստի բնույթով, պատվիրատուի կամ հասցեատիրոջ ցանկությամբ, նրանով, թե տվյալ պարագայում որքան կարևոր են մշակութային առանձնահատուկ եզրույթները:

Բուն գործընթացում թարգմանիչը երբեք չպետք է, ինչպես ասում են՝ տեղավորվի ստեղծագործության մեջ, այլ լինի նրա հետ՝ իբրև ուղեկից: Ըստ որում՝ պետք է ձգտի այն թարգմանել ոչ թե ինչոր ընթերցողի, այլ որոշակի, թեպետև՝ ենթադրյալ ընթերցողի համար: Եվ որպեսզի կարողանա ստեղծել այնպիսի տեքստ, որն ընթերցողին հնարավորություն կընձեռի իրապես հասկանալու (ճանաչողական և զգայական տեսակետից) սկզբնաղբյուր տեքստի աշխարհը, նրան անհրաժեշտ է կրկնակի փոխակերպություն: Այս փոխակերպության միջոցով էլ նա ներքնայնացնում է ուրիշի ճանաչողական, զգայական աշխարհը, առանց որի չի կարող լինել իրական փոխըմբռնողություն:

Բմաստային ամբողջականությունն ապահովելու, մեկ լեզվից մյուս լեզու հնարավորինս համարժեք տեքստը փոխադրելու համար թարգմանիչը, բնականաբար, չի կարող խուսափել լեզվական որոշ տարրեր կրճատելուց կամ ավելացնելուց՝ մշտապես հիշելով, որ իր



գլխավոր գործը ոչ թե բնագիրը բառացի վերարտադրելն է, այլ ասելիքի համարժեքությունն ապահովելը. չէ՞ որ ոչ թե որևէ լեզու է փոխադրվում մեկ այլ լեզվի, այլ՝ ասելիք:

Անկարելի է չհամաձայնել ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Ռիկյորի հետ. «Ըստ իս,– ասում է նա,– թարգմանությունն առաջադրում է ոչ միայն մտավոր, տեսական կամ գործնական աշխատանք, այլ բարոյական խնդիր: Ընթերցողին տանել հեղինակի մոտ, հեղինակին բերել ընթերցողի մոտ՝ երկու տիրոջ ծառայելու կամ նրանց դավաճանելու վտանգով. դա զբաղվելն է այնպիսի բանով, որը սիրում եմ անվանել *լեզվական հյուրընկալություն*» (Paul Ricœur, *Sur la traduction*, Bayard, 2004, p. 44).

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում միջմշակութային հաղորդակցության չափանիշները թե՛ ծավալի, թե՛ բովանդակության առումով հիմնավորապես փոխվում են: Մի քանի լեզուներ՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը, գերմաներենը, իսպաներենը, դառնալով համացանցային տեղեկատվական դաշտի հիմնական տնօրինողներ, էկզոտիկ ձորերում ու հովիտներում են թողել մյուսներին: Առավել արտոնյալ դիրքում է անգլերենը՝ գործարար աշխարհի գլխավոր լեզուն, որի հետ ոչ մեկն ի վիճակի չէ մրցակցել: Եվ ասես ընդառաջ գնալով լեզվական ընդլայնմանը, էտնոպահ լեզուներով թարգմանիչները գրեթե անարձագանք եվրոպական կամ ամերիկյան մշակույթ են տեղայնացնում:

Միջմշակութային հաղորդակցության գործում թարգմանչի այսօրվա դերը սցենարներ է ենթադրում համաշխարհայնացման ֆոնին անապասելի:

**SUSANNA KHACHATRYAN – Le traducteur comme médiateur interculturel.** A l'époque où la mondialisation est vue comme un risque d'uniformisation et de perte culturelle, le rôle et la responsabilité du traducteur comme médiateur entre les cultures augmentent considérablement. En privilégiant le côté dialogique, interculturel de toute traduction, le traducteur a la tâche de rendre l'image de l'Autre avec son identité et sa marque spécifiques.

Il doit posséder des compétences linguistiques et des capacités créatives remarquables, tant dans la langue source que dans la langue cible. Mais cela ne suffit pas. En tant que médiateur entre les cultures, il doit également posséder la compétence interculturelle. Il s'agit de la capacité d'un individu d'établir une

entente authentique avec une communauté d'interlocuteurs qui expriment une « vision du monde», différente de la sienne.

**СУСАННА ХАЧАТРЯН – Переводчик как посредник межкультурной коммуникации.** Проблемы перевода находят разнообразные решения в свете современных лингвистических теорий. Основные вопросы лежат в плоскости прагматики: с какой целью и для кокого адресата реализуется перевод.

Очевидно, что первоначальной целью перевода является стремление соприкоснуться с культурными ценностями иноязычной языковой среды, ассимилировать их с целью обогащения своей национальной культуры.

Таким образом, роль переводчика в первую очередь сводится к осуществлению межкультурной коммуникативной функции, значение которой особенно возрастает в эпоху всеобъемлющей глобализации, нивелирующей самобытность культур. Перевод остается одним из основных способов сохранения и приумножения культурных ценностей.

**ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ**

***ՆԱԲԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան*

Մարդու կարևորագույն ցանկություններից մեկը շրջապատի կողմից հասկացված լինելն է: Պատճառները, հանուն որոնց մարդը ըմբռնում է փնտրում, կարող են լինել տարբեր՝ սերը, պատվասիրությունը, պարտքի զգացումը, գիտական, մշակութային կամ տնտեսական շահերը, սակայն բոլոր դեպքերում խնդիրը սեփական տեղեկատվությունը առավել լիարժեքորեն գրուցակցին հասցնելն է: Անհատները՝ որպես ճանաչողական կառուցվածքների կրողներ, ձգտում են էքսպլիցիտացնել դրանք, դարձնել հասու ուրիշներին՝ դա համարելով ինքնաարտահայտման ու ինքնահաստատման հիմք՝ որոշակի գործնական նպատակների հասնելու համար (Ճրճաթե T.M.1980, 110): Այդ ձգտումը հանգեցնում է այն բանին, որ անհատի մտքերն ու հույզերը դրսևորվում են խոսակցական հաղորդակցության մեջ:

Շփման արդյունավետությունը ուղիղ համեմատական է հաղորդակցվողների փոխըմբռնման մակարդակին: Փոխըմբռնում ասելով տվյալ դեպքում մենք նկատի ունենք տեղեկատվության ծավալների համընկնումը, որ գաղտնագրված է հասցեագրողի հաղորդագրության մեջ և ստույգ վերծանված հասցետիրոջ կողմից: Սակայն Ս. Ա. Մուխիլար և Վ. Վ. Ջելենսկայան տվյալներ են ներկայացնում այն մասին, որ հաղորդվող տեղեկատվության լոկ 30 տոկոսն է հասկացվում, դրա մնացած մասը անհետանում է հաղորդակցության գործընթացում (Сухих, Зеленская 1998, 52): Եթե այդ ապշեցուցիչ տվյալները ճիշտ են, ապա կարելի է ենթադրել, որ միջմշակութային հաղորդակցության գործընթացում՝ ապակոդավորման ժամանակ, լեզվամշակութային տարբերությունների պատճառով տեղեկատվության կորուստը կլինի էլ ավելի զգալի:

Փոխըմբռնման հասնելու համար անհրաժեշտ է չտարբերակված գիտելիքների որոշակի ամբողջություն, որն ընդհանուր է բոլոր հա-

դորդակցվողների համար, որը գիտնականների աշխատանքներում ստացել է տարբեր անվանումներ՝ «միասնական ամբողջատիրական հորիզոն», «կենսական աշխարհ» (Гуссель Э.), «նախարարություն» (Гадамер Х. Д.) «տարանջատ գիտելիք» (Hirsh E.D., Rosh E. և այլք):

Ըմբռնումը պարտադիր կերպով ենթադրում է անհասկացողության հնարավորությունը՝ որպես իր հակոտնյա: «Այնտեղ, որտեղ չի կարող լինել անհասկացողություն, չի կարող լինել նաև ըմբռնում», – գրում է Գ. Ի. Բոգինը (Богин 1986, 8): Համանման միտք է հայտնում նաև Մ. Բիրվիշը. «Անհասկացողության տարբեր տեսակները լրացուցիչ կերպով ներկայացնում են ըմբռնման մակարդակները»: Նա դիտարկում է անհասկացողությունը որպես ըմբռնման որոշակի տեսակ, որի դեպքում հասցեատերը նշանին վերագրում է ներքին ներկայություն, որը մեկ կամ մի քանի մակարդակներում տարբերվում է այն բանից, ինչը նկատի է ունենում հասցեագրողը (Бирвиш М. 1988, 97):

Այսպիսով, ըմբռնումը հարաբերական բնույթ ունի: Այն հիմնվում է գիտելիքի վրա, իսկ վերջինս արտացոլում է հարաբերական ու բացարձակ ճշմարտության դիալեկտիկան: «Մարդու մտածողությունը մշտապես շարժվում է անգիտությունից դեպի գիտելիքը, մակերեսայինից դեպի ավելի խորքային, բովանդակային ու համակողմանի գիտելիքը» (Философский энциклопедический словарь, 1983, 192): Ըմբռնումը կարելի է ներկայացնել որպես սանդղակ, որի բևեռներում են գտնվում լիակատար անհասկացողությունը և լիակատար ըմբռնումը որպես ներքին հակասություններ, որոնք, մի կողմից, բացառում են միմյանց, իսկ մյուս կողմից՝ չեն կարողանում գոյատևել առանց մեկմեկու: Ժխտելով միմյանց՝ դրանք միևնույն ժամանակ փոխներթափանցելի են և տեղեկատվական գործընթացի ինքնագարգացման ներքին աղբյուր են:

Ջ. Սթայները պարադոքսալ միտք է հնչեցնում այն մասին, որ իսկական ըմբռնումը հնարավոր է միայն լիակատար լռության պարագայում (Steiner 1975, 286): Նման դեպքում լռությունը պետք է հասկանալ որպես ցանկացած լեզվանշանային համակարգի գործածությունից հրաժարում: Իրականում բանավեճի ժամանակ լռությունը շատ երկիմաստ է և կարող է տարբեր կերպ մեկնաբանվել հաղորդակցվողների կողմից:

Ինչպես լիակատար անհասկացողությունը, այնպես էլ լիակատար ըմբռնումը իրենից ներկայացնում է կատարյալ կառույց, քանզի

անհատների հաղորդակցման ժամանակ ոչ մեկը և ոչ մյուսը չեն կարող լիարժեք գոյություն ունենալ: Նույնիսկ տարբեր քաղաքակրթություններին պատկանող և միմյանց լեզուն չհմացող մարդկանց փոխգործողության մեջ, շրջապատող աշխարհի վրա համընդհանուր (ունիվերսալ) մարդկային հատկությունների և հակազդումների շնորհիվ, հաղորդակցական ազդանշանների շատ փոքր մասը այնուամենայնիվ ճիշտ կապակողավորվի: Մյուս կողմից, լիակատար ըմբռնումը հասանելի կլիներ, եթե ապակողավորման գործընթացը հայելային արտացոլեր կողավորման գործընթացը: Սակայն դա նույնիսկ տեսականորեն մի շարք պատճառներով անհնարին է: Օրինակ՝ հաղորդակցվողների (հասցեագրողի և հասցեատիրոջ) անձնական տարբերությունները, տարբեր սոցիոմշակույթներին նրանց պատկանելը, հաղորդակցական գործընթացի դինամիկ (շարժական) բնույթը և այլն:

Ն. Ի. Ժինկինը ըմբռնումը բացատրում է որպես թարգմանություն համազգային լեզվից ինտելեկտի լեզվի (Жинкин Н. И., 1982): Լեզվի՝ որպես մտքի արտահայտման միջոցի պարադոքսներից մեկը անկանոն մտածողությունը լեզվականին համապատասխանող միավորների բաժանելն է, որոնց մասին Ֆ. դը Մոսյուրը գրել է. «Մտածողությունը, որ ի բնե անկանոն է, հարկադրաբար ճշգրտվում է տրոհվելիս»: Այնուհետև նա եզրակացնում է, որ մտքի ու նշանի խորհրդավոր փոխկախվածությունը «պահանջում է տրոհումների առկայություն, և որ լեզուն մշակում է իր միավորները՝ ձև ստանալով երկու անձև զանգվածների արանքում» (Соскюр 1933, 116): Ընդունելով այդ տեսակետի իրավացիությունը՝ մենք վերադառնում ենք ավանդական «կախարդական շղթային»՝ որն է նախնականը. լեզուն է տրոհում անկանոն մտածողությունը, թե՛ հակառակը, ազգային յուրահատուկ մտածողությունն է թելադրում լեզվին միավորների տրոհման ձևը:

Կարելի է ենթադրել, որ նախապես լեզվի տրոհումը տարբերի տեղի է ունեցել շրջապատող աշխարհի ազդեցությամբ: Մարդու մտածողության ու լեզվի՝ նրա արտահայտման միջոցի բարդացմանը համընթաց, այդ երկու գործընթացները սկսեցին իրականացվել որպես փոխադարձաբար իրար ուղղված ու փոխլրացնող: Այսօր քիչ չեն օրինակները, թե ինչպես է լեզուն սահմաններ գծում, որոնցում պետք է տեղավորվի մեր միտքը: Օրինակ՝ բազմաթիվ առարկաներ, որոնք հայերենում ունեն իրենց անվանումները՝ *կերակրակաթօս, գավաթ, ծաղկաման, կճուճ, տարա*, անզլերենում տեղավորվում են

*pot* հասկացության ծավալի մեջ: Մեկ այլ օրինակ. *գլխաշոր, վզարկու (շարֆ), պիռնեթական վզկապ, վզպատ թաշկինակ (կաշնե)*, տեղավորվում են *scarf* հասկացության ծավալի մեջ: Անգլերեն լեզվի կրողները *witness*-ը հասկանում են որպես ամբողջական գործողություն, հայերենում այն իմաստ է ձեռք բերում տարանջատ կապակցությամբ՝ *ներկա (ականատես) վկա լինել*:

Մակայն նույնիսկ այն դեպքերում, երբ միջլեզվական համադրությամբ լեզվական միավորները համարվում են համարժեք, դրանք, Վ. Հուսթոնի դասական կարծիքով, հանդես են գալիս «որպես մտածողության ոլորտի միևնույն տարածքի սահմանապահ նշաններ, որոնք, սակայն, երբեք ամբողջովին չեն փոխարինում իրար», ինչի արդյունքում՝ «որքան էլ հարուստ ու արգասավոր լինի հավերժ երիտասարդ ու հավերժ շարժական լեզուն, երբեք հնարավոր չէ իմանալ նմանօրինակ բառի՝ որպես որոշակի ու վերջնական մեծության իսկական իմաստը, միավորված բոլոր նշանների հանրագումարով հանդերձ» (Гумбольдт 1985, 364):

Ակնհայտորեն, մտքի տրոհումը բաղադրիչների տեղի է ունենում ներքին խոսքի ձևավորման փուլում: Եթե խոսքը ծնվում է ոչ մայրենի լեզվով, ապա մայրենի ու օտար լեզուների միջև կոնֆլիկտը կարող է սկիզբ առնել արդեն այս փուլում: Լեզվամշակութային իրավասության մակարդակից և օտար լեզվամշակութային տարածքի մեջ «ներգրավվածությունից» կախված՝ անկանոն մտածողությունը տրոհվելու է միավորների ըստ այն բանի, թե ինչպես է դա նախանշվելու մայրենի կամ օտար լեզվի կողմից: Արտահայտությունը կարող է ծնվել անմիջապես տվյալ լեզվով կամ մայրենի լեզվով՝ միջնորդավորված ներքին խոսքով: Նույնիսկ եթե խոսողը ի վիճակի է մտածել օտար (օրինակ՝ անգլերեն) լեզվով, դա դեռ չի նշանակում, թե նա կարող է զանազանել աշխարհը այնպես, ինչպես տվյալ լեզվի կրողը. օտար բառերի գործածումը չի երաշխավորում համապատասխան մտածելակերպը: Արդյունքում ծնվում են այսպես կոչված «հնդկական անգլերենը», «չինական անգլերենը», «իսպանական անգլերենը» և այլն: Այսպիսով, լեզվակրի ու արտասահմանցու «ներքին ծրագրավորման կողք» կարող է լինել տարբեր: Այնուհետև միջլեզվական տարբերություններն ի հայտ են գալիս «վերաիմաստանշման» փուլում (Օ. Դ. Կուզմենկո-Նաումովայի եզրույթն է), այսինքն՝ հաղորդագրության վերակողմորումը մի լեզվից մյուսին՝ միջնորդավորված աշխարհի ներքին սոցիոմենթալ պատկերով:

Գիտնականները հաղորդակցության գործընթացում ծնվող իմաստները դիտարկում են որպես կառույցներ, որոնք հասցեատիրոջ պատկերացումների ճշգրիտ պատճենը չեն: Անհատների գիտակցության մեջ շփման գործընթացում ծագող մենթալ կառույցն ունի արդյոք ազգային-մշակութային յուրահատկություն: Մենք հակված ենք դրական պատասխանելու այդ հարցին, որովհետև հաղորդակցվողները՝ տարբեր մշակույթների ներկայացուցիչները, իրենց պատկերացումները ձևավորում են տարբեր ֆիզիկական աշխարհների ու տարբեր լեզուների հիման վրա, որոնք տարբեր կերպ են արտապատկերում աշխարհը: Յուրահատուկ ազգամշակութային տեղեկատվության բնույթից կախված, այդ տեղեկատվությունը տարբեր կերպ է մտնում ապակողավորողի մենթալ բառապաշար: Թարգմանչական խոսքամտածական գործընթացը, որի նպատակն է՝ արդյունավետ միջնորդությունը, նույնպես տարբեր կերպ է բացվում և ընթանում:

Հաճախ ըմբռնման դժվարությունները կապված են ճանաչողական կառուցվածքի լեզվական բաղադրիչի և նրա իմաստային բովանդակության ոչ բացահայտ հակասության հետ. օրինակ 1992 թվականին ամերիկյան *Time* ամսագրում հրատարակված էր մի լուսանկար, որի վերնագիրն էր «*Running Mate*»: Ամսագրի տարեթիվը՝ 1992 թվականը, ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների տարեթիվն էր: Լուսանկարում Կապիտոլիումի ֆոնի վրա ներկայացված էին մանր քայլերով վազող Բիլլ Քլինտոնը և Ալբերտ Գորը: Խորագրի թարգմանության տարբերակներն էին՝ «*Վազքի ընկերակից*» և «*Վազքի ընկեր*»: Երկու տարբերակներն էլ քերականորեն ճիշտ են և լուսանկարի տեսողական պատկերին չեն հակասում, սակայն չեն փոխանցում նրանում առկա բովանդակությունը: Նշանակությունը (իմաստը)՝ որպես հաստատուն ճանաչողական կառուցվածքի ձև, գիտակցվում է, սակայն չի ըմռնվում թարգմանչի կողմից: Այսինքն, նշանակության մեջ «խորասուզվելը» և ճիշտ մեկնաբանություն կատարելը, որոնք անհրաժեշտ են թարգմանչի մտածողական գործունեության համար, չեն կարող իրագործվել: Ամենայն հավանականությամբ, լեզվական միավորները չեն ըմբռնվում թարգմանչի կողմից և չեն հարաբերակցվում փորձի անհրաժեշտ հատվածի հետ այն պատճառով, որ այդպիսի փորձը պարզապես բացակայում է թարգմանչի հասկացական համակարգում: Չեն իրագործվում նշանի այն հատկությունները, որոնք հարաբերակցում են թարգմանչի մշակութի համատեքստին: Հետևաբար, ճանաչողական կառուցվածքում

անկա ԱՄՆ-ի քաղաքական վարչակարգի հետ կապված հատկանիշը մնում է չբացահայտված ու չներկայացված: “*Running Mate*”-ը ոչ միայն նախագահի հետ ընդհանուր հորքի ունեցող ընկեր է, այլ նաև նրա հետ նույն ցուցակով ընտրվող և փոխնախագահի պաշտոնի հավակնորդ: Այսպիսի տեղեկատվություն ունեցող թարգմանչի մտածողական գործընթացի ժամանակ անհրաժեշտ է, որ սպորտային ու քաղաքական հայեցակերպերին վերաբերող երկու հատկանիշներն էլ միավորվեն՝ արդյունքում ստեղծելով իր բովանդակությամբ ավելի ամբողջական տեղեկատվություն:

Ցանկացած ըմբռնում մեկնողական է: Նոր փորձի մեկնաբանումը դիտարկվում է որպես ըմբռնման պարտադիր բաղադրատարր (տես, *op.*, Дежк 1985, Водак 1997): Իրականության միևնույն փաստերի մեկնաբանման անհամապատասխանությունները տարբեր անհատների կողմից օբյեկտիվորեն պայմանավորված են այն բանով, որ իրական առարկաների ու նրանց պատկերների միջև հարաբերությունը, որ դրոշմված է մարդկային գիտակցության մեջ, միշտ մոտավոր է ու թերի, և կարող է հավակնել միայն հումմոմորֆիզմի (Философский энциклопедический словарь, 1983: 215):

Մեկնաբանման տարբերությունները նաև պայմանավորված են այն բանով, որ հաղորդակցվողները տարբեր կերպ են մեկնաբանում մակերեսային ու խորիմաստ կառուցվածքների հարաբերակցությունը: Լեզվանշանի նյութական կողմը, ինքնըստինքյան, դեռ բովանդակության կրող չէ, այլ լոկ հաղորդակցվողի մտածողությունն ակտիվացնող ազդակ է: Հաճախ ամբողջի նշանակությունը չի բխեցվում առանձին լեզվական միավորների հանրագումարից, ինչպես, օրինակ, իդիոմներ, փոխաբերություններ, խոսակցական անուղղակի ձևեր օգտագործելիս՝ *թանր անփչել խմել; խաշիլ ուտող; գասպարյանի շարադրություն; play possum; Indian giver; sell somebody down the river; couch potato* և այլն: Բաղադրիչների վերաիմաստավորումից զատ լեզվաարտահայտչական նմանօրինակ ձևերը ուղեկցվում են իմաստային աճով, որը կարող է օժտված լինել իր լեզվամշակութային յուրահատկությամբ: Այդպիսի իմաստային կառույցների ըմբռնումը և ապակողավորումը ամենաբարդն է միջմշակութային շփման մասնակիցների համար:

Գիտնականների սևեռուն ուշադրությունը գրավող հարցերից մեկն էլ ըմբռնման հերմենևտիկ խորության տարբերությունն է, որը կարող է արտացոլել հետևյալ հարաբերակցությունները՝ հասցեագ-



րողի հաղորդագրության մեջ ծածկագրված ու հասցեատիրոջ կողմից վերծանված տեղեկատվության միջև՝ 1) ըմբռնում, 2) թերըմբռնում, 3) թյուրըմբռնում, այսինքն՝ ըմբռնման երևութականություն, 4) սխալ ըմբռնում, 5) չըմբռնում:

Բացի այդ, կարելի է դիտարկել ըմբռնման մակարդակների ավելի նուրբ սահմանաբաժանումը, ինչպես ներքևում տրված վերլուծության մեջ.

*Now, when I was a baby, Momma named me after the great Civil War hero, General Nathan Bedford Forrest. She said we were related to him in some way. And what he did was, he started up this club called the Ku Klux Klan. They'd all dress up in their robes and their bedsheets and act like a bunch of ghosts or spooks or something. They'd even put bedsheets on their horses and ride around. And anyway, that's how I got my name, Forrest Gump. Momma said that the Forrest part was to remind me that sometimes we all do things that, well, just don't make any sense* (<http://freepdfdb.org/pdf/forrest-gump-book>).

Նշյալ տեքստային հատվածի ըմբռնման *առաջին մակարդակը* մակերեսային լեզվական կառուցվածքի ըմբռնումն է: Ընդհանուր առմամբ այստեղ ոչ մի անհասկանալի բան չկա, նախադասության բոլոր բառերն ու շարահյուսական կառուցվածքը հասկանալի են հասցեատիրոջը: Այնուհանդերձ, տեղեկատվության մեծ մասը մնում է փակագծերից դուրս՝ ո՞վ է քաղաքացիական պատերազմի այդ հերոսը, ինչպիսի՞ կապ գոյություն ունի քաղաքացիական պատերազմի և «Կու-Կլուքս-Կլան» ակումբի միջև:

*Երկրորդ մակարդակ:* «Ku Klux Klan» անվանման մատնանշումը որոշ չափով հստակեցնում է իրավիճակն այն մարդկանց համար, ովքեր գոնե մի քիչ ծանոթ են ամերիկյան պատմությանը<sup>26</sup>: Սակայն տեղեկատվության զգալի մասը նախկինի պես մնում է «կադրից դուրս»:

*Երրորդ մակարդակ:* Ըմբռնման հաջորդ մակարդակը ենթադրում է ընթերցողների շրջանում ֆոնային գիտելիքների առկայություն և համապատասխան մշակութաբանական գույճորդություններ:

---

<sup>26</sup> «Կու-Կլուքս-Կլանը» որպես գաղտնի կազմակերպություն ստեղծվել է 1860-ական թվականներին: Շարժման անդամները պնդում են, թե սպիտակ ռասան առավելություն ունի մյուսների նկատմամբ, եւ իրենց հայացքները նախկինում տարածում էին բռնության, հաճախ նաեւ՝ սհաբեկչության միջոցով: (<http://www.ilur.am/news/view/1038.html>):

Լեզվակիր անձի զարգացման բարձրագույն մակարդակը պայմանավորում է մարդկային ամբողջ փորձի շուրջ խորհրդածելու նրա ընդունակությունը և դրանով ըմբռնումը դարձնում է ոչ միայն անհատական-անձնային, այլև հասարակական երևույթ (Богин Г. И. 1986, 11-12, 56-59):

Միջմշակութային հաղորդակցության մեջ ըմբռնումը կախված է հետևյալ գործոններից՝

- 1) հաղորդակցվող մշակույթների հարաբերակցությունից,
- 2) մոդալ լեզվակիր անձանց նմանությունից կամ տարբերությունից,
- 3) հասարակության հորիզոնական և ուղղահայաց շերտավորումից,
- 4) ժամանակի սանդղակում մշակույթների տեղորոշումից,
- 5) աշխարհի լեզվական պատկերների նմանությունից ու տարբերությունից,
- 6) լեզվամշակութային կոդերի հարաբերակցությունից,
- 7) հետադարձ կապի արդյունավետ օգտագործման կարողությունից:

Այսպիսով՝ պատասխանելով այն հարցին, թե որո՞նք են մարդկային հաղորդակցության մեջ համարժեք ըմբռնման չափանիշները, կարելի է ասել, որ, համարժեք են համարում այն ըմբռնումը, որը բավարար է տվյալ սոցիումի ներսում՝ կոնկրետ հաղորդակցային իրադրությունում անհատների գործողությունները համակարգելու համար: Քանի որ լիաբավությունը ևս հարաբերական հասկացություն է, ինչպես որ ըմբռնման լիակատարությունը, ապա կարելի է պնդել, որ համատեղ գործունեության արդյունավետությունը կարող է մեծանալ փոխըմբռնման խորացման հետ համամասնորեն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Барвиш М.,** *Насколько линейно упорядоченной является языковая обработка? // Новое в зарубежной лингвистике.* Выпуск XIII. Когнитивные аспекты языка. М.: Прогресс, 1988.
2. **Богин Г.,** *Типология понимания текста: Учеб. пособие/КГУ.* Калинин, 1986.

3. **Водак Р.**, *Язык. Дискурс. Политика*. Волгоград: Перемена, 1997.
4. **Гадамер Г.**, *Истина и метод: Основы философской герменевтики*/ Пер. с нем. М.: Прогресс, 1988.
5. **Гумбольдт В.**, *Язык и философия культуры*/Общ. Ред. А. В. Гулыги и Г. В. Рамишвили. М.: Прогресс, 1985.
6. **Дейк Т.**, *Язык. Познание. Коммуникация*/ Сост. В. В. Петрова; Под ред. В. И. Герасимова. М.: Прогресс, 1985.
7. **Дризде Т.**, *Язык и социальная психология*. М.: Высш. шк., 1980.
8. **Жинкин Н.**, *Речь как проводник информации*. М.: Наука, 1982.
9. Соссюр Ф, *Курс общей лингвистики*. М.: Соцэкгиз, 1933.
10. **Сухих С., Зеленская В.**, *Прагмалингвистическое измерение коммуникативного процесса*: Наук. Краснодар, 1998.
11. *Философский энциклопедический словарь*, М.: Наука, 1983.
12. **Hirsh E., Kett F., Trefl J.**, *Dictionary of Cultural Literacy*. Boston – NY, 1993
13. **Rosh E., Mervis C., Gray W., Johnson D., Boyes-Braem P.**, *Basic Objects in Natural Categories*// Cognitive Psychology, 8, 1976
14. **Steiner G.**, *After Babel: Aspects of Language and Translation*, Oxford University Press, USA, 1975
15. <http://freepdfdb.org/pdf/forrest-gump-book>

**НАРИНЕ АРУТЮНЯН – Понимание как цель межкультурной коммуникации и адекватного перевода.** Одним из важнейших желаний человека является – быть понятым окружающими. Причины, ради которых человек ищет понимания, могут быть различными, однако во всех случаях остается задача наиболее полно донести свою информацию до собеседника. Эффективность общения прямо пропорциональна уровню взаимопонимания между коммуникантами. Под взаимопониманием в данном случае мы имеем в виду совпадение объемов информации, зашифрованной в сообщении адресантом и верно расшифрованной адресатом. Всякое понимание интерпретативно. Несовпадения в трактовке одних и тех же фактов действительности со стороны разных индивидов, особенно представителей разных лингвокультур, объективно обусловлены тем, что отношение между реальными объектами и их образами, запечатленными в человеческом сознании, всегда приблизительное и неполное и может претендовать лишь на гомоморфизм

**NARINE HARUTYUNYAN – Understanding as an Aim of Cross-cultural Communication and Adequate Translation.** Wanting to be understood by others is one of the most important human desires. The effectiveness of communication is directly proportional to the level of mutual understanding between the communicants. The language barrier is undoubtedly the most obvious obstacle on the way to cross-cultural understanding. However, analysis shows that even within one ethnos and one culture a deep gap can separate representatives of different social groups from one another. At the same time for representatives of one and the same social group from different cultures, but with common professional interests, value reference points, level of intellectual and cultural development, it is sometimes easy to understand each other. Thus, the social-psychological type of the communicant influences the nature of CCC (Cross-cultural Communication). Linguistic and cultural misunderstanding between representatives of different linguocultures may partly be compensated by a professional and competent translator. During mediated communication the translator is the “re-translator” of the language and culture. The precision and effectiveness of communication depends on his/her linguistic and cultural competence. Despite the rapid development of computer industry, machine translation still cannot serve as an adequate means of conveying the nuances of cultural-linguistic information.

**ԽՈՍՔԻ ՄԱՍՏԿԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

**ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ  
ԱՆՆԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Մարդիկ բանական և հուզական էակներ են, որոնք, շփվելով արտաքին աշխարհի հետ, դատողություններ են անում իրենց շրջապատող մարդկանց ու առարկաների, վերացական երևույթների և այլևայլ իրավիճակների մասին, փորձում ինքնաճանաչողության միջոցով գտնել իրենց տեղն ու դերն աշխարհում: Կասկած չկա, որ անձի հույզերը մեծ ազդեցություն կարող են ունենալ նրա կենսագործունեության և մասնավորապես՝ խոսքային գործունեության վրա:

Ճանաչողական լեզվաբանության արդիական խնդիրներից մեկը՝ հույզերի լեզվաճանաչողական հայեցակերպի քննությունն է: Հույզերի ճանաչողականության տեսության մեջ քննարկվում է ճանաչողական և հուզական տարրերի փոխներթափանցման խնդիրը, լուսաբանվում ճանաչողության դերը մարդու հուզական ներաշխարհում: Մասնավորապես քննության են առնվում հուզական դատողության (կամ հուզական մտածողության) դրսևորումները խոսքում և փորձ է արվում բացահայտել, թե ինչպես են արտաքին աշխարհից ստացված ազդակները և դատողությունը համակցվում լեզվաճանաչողական ոլորտում (Murray 1964; Goleman 1995; Damasio 1994, 1999; Лурия 1979):

Իրականում ճանաչողական լեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, նյարդալեզվաբանության և մի շարք այլ հումանիտար գիտակարգերի շրջանակներում (սոցիալական հոգեբանություն, ճանաչողական հոգեբանություն, սոցիոլոգիա) բազմիցս խոսվել է հույզերի դերի մասին մարդկանց՝ հասարակական էակների, կյանքում: Բացասական հույզերի ազդեցության տակ «ձնված» խոսքային գործունեության քննությունից պարզվում է, որ հուզական մտածողությունը, որը պայմանավորված է խոսակիցների հույզերով, համոզմունքներով, ցանկություններով ու իղձերով, դրդապատճառներով ու մտադրություններով, իր ուրույն դերն ունի հաղորդակցական համատեքստում (Paronyan, Rostomyan 2011):

Չնայած մենք հաճախ չենք կարողանում գտնել ճիշտ բառեր՝ նկարագրելու մեր հույզերը, ինչը պայմանավորված է վերջիններիս բարդ, երբեմն խճճված ու մեկնաբանելու համար բավականին խրթին բնույթով, կա մի գործոն, որ հատուկ է բոլոր տեսակի հույզերին, այն է՝ դրական/բացասական սանդղակում քանակի կամ մեծության աստիճանը: Այլ կերպ ասած՝ այս երկու հակադիր բևեռներից պատկանող հույզերը մարդիկ զգում և արտահայտում են ուժգնության տարբեր աստիճաններով: Հույզերի եղանակավորման խնդիրը պայմանավորված է տվյալ պահին հույզի ուժգնության աստիճանով՝ ուժեղ, չեզոք, թույլ: Ըստ այդմ՝ դրական և բացասական հույզերը տարբեր կերպ են արտաձվում խոսքում՝ ըստ դրանց ուժգնության աստիճանի արտահայտման (Додонов 1977; Симонов 1966): Դրա շնորհիվ որոշ հույզեր ձեռք են բերում տարբերակիչ որակական հատկանիշներ. օրինակ՝ հույզերի հետևյալ շարքը դասավորված է ըստ հույզի ուժգնության աստիճանի սաստկացման՝

դժգոհություն – բարկություն – զայրույթ – կատաղություն – մոլեգնություն

displeasure – anger – annoyance – irritation – fury – rage – resentment, etc.

Պետք է ասել, որ խոսքի սաստկացման միջոցներն առկա են բոլոր լեզուներում, սակայն դրանք հաճախ պայմանավորված են լեզվամշակութային առանձնահատկություններով, գործաբանական կարծրատիպերով և այդ պատճառով հաճախ լրացուցիչ դժվարություն են ստեղծում թարգմանիչների համար: Ինչպես արդեն նշվեց, բոլոր լեզուներում կան, այսպես կոչված, սաստկացնող բառեր, որոնք, դրվելով այս կամ այն ածականից առաջ, սաստկացնում են դրա դրական կամ բացասական իմաստը կամ սահմանափակում քանակական հատկանիշը՝ արտահայտելով հույզի ուժգնության աստիճանը, օրինակ՝ “I feel good – I feel **very** good – I feel **absolutely** good”: Ընդգծված բառերը աստիճանաբար ուժգնացնում են լավ զգալու դրական հատկանիշը: Նույն բառերը կարող են գործածվել այս կամ այն հուզական վիճակի բացասական հատկանիշը սաստկացնելու նպատակով. “I feel bad – I feel **very** bad – I feel **absolutely** bad”:

Այսպիսով, հույզեր արտահայտելու համար գոյություն ունեն քանակական և որակական հատկանիշներ: Քանակական հատկանիշները դրսևորվում են հույզի ուժգնությունն արտահայտող բառերի միջոցով, օրինակ՝ շատ, բավականին, լիովին, չափազանց, բա-

ցարձակապես և այլն (a lot, very, little, enough, greatly, much, somewhat, quite, absolutely, etc.), իսկ որակական դրական կամ բացասական հատկանիշները՝ այնպիսի բառերի միջոցով ինչպիսիք են՝ սեր, աստելություն, ուրախություն, տխրություն և այլն (friendship, love, fear, insecurity, affection, delight, disgust, sympathy, apathy, etc.): Պետք է ասել, որ որակական հատկանիշներով օժտված բառերը առանձնապես մեծ դժվարություն չեն առաջացնում թարգմանելիս, մինչդեռ քանակական հատկանիշների ճշգրիտ թարգմանությունը հաճախ մտորումների տեղիք է տալիս:

Օրինակ՝

"I have always been *tremendously* fascinated by the place in La Tentation

where the Queen of Sheba visited Antoine, that's all," said Andrews gruffly.

(D. P., Th. S., 364-365)

Ինչպես գիտենք անգլերենում “tremendously” մակբայը նշանակում է «ահավոր, սարսափազդու», որին հոմանիշ կարող են համարվել “dreadfully, awfully, terribly” մակբայները, սակայն գործածվելով որպես սաստկական մակբայ՝ ինչպես իր հոմանիշ մակբայները, այն ձեռք է բերում հույզերի դրսևորման քանակական հատկանիշներ, ուստի “I have always been *tremendously* fascinated” անգլերեն արտահայտությունը հայերենում կարող ենք թարգմանել օրինակ այսպես՝ «ես միշտ չափազանց հիացել եմ»:

Բոլոր լեզուներում այսպես կոչված սաստկացնող բառերը, դրվելով այս կամ այն ածականից առաջ, սաստկացնում են դրա արտահայտած դրական կամ բացասական իմաստը՝ միաժամանակ ցույց տալով հույզի ուժգնության աստիճանը, օրինակ՝ “I feel good. – I feel *very* good. – I feel *absolutely* good.” (անգլերեն), “Je me sens bien – Je me sens *très* bien. – Je me sens *absolument* bien.” (ֆրանսերեն), “Ich fühle mich gut. – Ich fühle mich *sehr* gut. – Ich fühle mich *völlig* gut.” (գերմաներեն), «Ես ինձ լավ եմ զգում: – Ես ինձ *շատ* լավ եմ զգում: – Ես ինձ *բացարձակապես* լավ եմ զգում:» (հայերեն), “Я себя чувствую хорошо. Я себя чувствую *очень* хорошо. – Я себя чувствую *абсолютно* хорошо.” (ռուսերեն): Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում վերոհիշյալ լեզուներում ընդգծված բառերը աստիճանաբար ուժգնացնում են լավ զգալու դրական հուզական հատկանիշը:

Նույն բառերը կարող են գործածվել՝ այս կամ այն հուզական վիճակի բացասական հատկանիշը սաստկացնելու նպատակով: “I feel bad. – I feel **very** bad. – I feel **absolutely** bad.” (անգլերեն), “Je me sens mal – Je me sens **très** mal. – Je me sens **absolument** mal.” (ֆրանսերեն), “Ich fühle mich schlecht. – Ich fühle mich **sehr** schlecht. – Ich fühle mich **völlig** schlecht.” (գերմաներեն), «Ես ինձ վատ եմ զգում: – Ես ինձ **շատ** վատ եմ զգում: – Ես ինձ **բացարձակապես** վատ եմ զգում» (հայերեն), “Я себя плохо чувствую. – Я себя чувствую **очень** плохо. – Я себя чувствую **абсолютно** плохо.” (ռուսերեն):

Ներասույթային մակարդակում խոսքին հուզական նրբերանգ հաղորդող բառային միջոցները կարելի է բաժանել երեք խմբի՝

1) դրական՝ ասույթին դրական հուզական ներիմաստ հաղորդող սաստկական բառեր՝ *marvelously, wondrously, fabulously, fantastically* և այլն.

2) բացասական՝ ասույթին բացասական հուզական ներիմաստ հաղորդող սաստկական բառեր՝ *who/what/why/where/ what the hell, (in) the hell, darn(ed)/durn(ed)/damn(ed) if* և այլն.

3) դրական կամ բացասական՝ սաստկական բառեր, որոնց հաղորդած հուզական իմաստի բնույթը կախված է համատեքստից՝ *crazily, dreadfully, awfully, terribly, terrifically, wizardly, incredibly, damn, right, pretty, too, at all* և այլն:

Ասույթային մակարդակում դրանք հիմնականում դրսևորվում են հուզաարտահայտչական խոսքային ակտերով, որոնք ցույց են տալիս, թե խոսքաստեղծման պահին խոսողն ինչ է զգում, օրինակ՝ շնորհակալություն հայտնելը, ներողություն հայցելը, շնորհավորելը, ողջունելը, ցավակցելը և այլն, ինչպես օրինակ՝ անգլ.՝ “I love you **very much**”, ռուս.՝ “Я тебя **очень люблю**”, ֆրանս.՝ “Je t’aime **trop**”, գերմ.՝ “Ich liebe dich **sehr**”: Իսկ վերասույթային մակարդակում ակնհայտ են դառնում համատեքստի և հարատեքստի քննությամբ:

Հարկ է նշել, որ սաստկական մակբայները կարող են գործածվել թե՛ դրական, թե՛ բացասական իմաստներով: Օրինակ՝ “Thanks awfully” արտահայտությունում կարող ենք դիտարկել դրական հուզական սաստկացում, որտեղ “thanks awfully” արտահայտությունը հավասարազոր է “thank you very/so much” կամ “thanks a lot” արտահայտություններին: Մինչդեռ “I’m awfully hungry” արտահայտության մեջ դիտարկվում է բացասական հուզական սաստկացում, քանի որ խոսող անհատն ապրում է բացասական հույզեր խոսքաստեղծման պահին:



Սաստկական մակբայներ թարգմանելիս հարկ է ոչ թե բառա-  
ցիորեն թարգմանել տվյալ սաստկական մակբայի իմաստը, այլ փոր-  
ձել տվյալ լեզվում գտնել այս կամ այն մակբային հավասարագոր  
սաստկական մակբայ, ինչպես օրինակ՝ “thanks *awfully*”, արտահայ-  
տությունը ռուսերենում կթարգմանենք “*огромное* спасибо”, այլ ոչ թե  
“ужасное спасибо”: Սակայն մեկ այլ դեպքում ռուսերենում “ужасно”  
սաստկական մակբայը կարող է տեղին լինել, ինչպես օրինակ՝  
անգլ.՝ “She is *terribly* beautiful”, հայ.՝ «նա սհավոր գեղեցիկ է»,  
ռուս.՝ “она *ужасно* красива”, գերմ.՝ “Sie ist *schrecklich* schön” և այլն:

Կան սաստկական մակբայներ, որոնք ունեն իրենց հավասարա-  
գոր համարժեք սաստկական մակբայները միևնույն բառացի իմաս-  
տով մի շարք լեզուներում, ինչպես օրինակ “unbelievably” մակբայը,  
օրինակ՝ անգլ.՝ “She is *unbelievably* beautiful”, ռուս.՝ “Она *неве-  
роятно* красиво”, գերմ.՝ “Sie ist *unglaublich* schön”, ֆրանս.՝ “Elle est  
*incroyablement* belle”, սակայն հայերենում գուցե չասենք «նա անհա-  
վանական գեղեցիկ է», այլ դրական հուզական սաստկական իմաս-  
տը պահպանելու համար թարգմանենք «նա հեքիաթային գեղեց-  
կություն ունի» կամ ուղղակի «նա շատ/անսահման գեղեցիկ է» կամ  
«նա աննման է»:

Ակնհայտ է, որ թեն «հույզեր» և «գնահատականներ» կացույթ-  
յունները սերտորեն շաղկապված են, դրանք մեկը մյուսին չեն կարող  
փոխարինել: Կարծում ենք, որ մեր հոգեկան ներաշխարհում հույզե-  
րի զգացումն անպայմանորեն չի կապվում արտաքին աշխարհում  
սուբյեկտի հանդեպ ձևավորված դրական կամ բացասական գնահա-  
տականների հետ: Գնահատողականության պատկերացումները,  
ինչպես նաև գնահատական կատեգորիան, ընդհանրապես, սոցիա-  
լական պայմանավորվածություն ունեն, քանի որ դրանք պատմա-  
կանորեն ձևավորվել են հասարակության մեջ: Ակնհայտ է, որ գնա-  
հատականի մեջ արտացոլվում են տվյալ սոցիումի պատկերացում-  
ներն արժեքային համակարգի վերաբերյալ, հետևաբար այն ունի  
մտային, ճանաչողական էություն: Սակայն միևնույն ժամանակ գնա-  
հատականը նաև սուբյեկտիվ է, անհատական, քանի որ այն տրվում  
է հենց խոսողի կողմից՝ նրա անձնական և անհատական մտապատ-  
կերների և աշխարհընկալման համաձայն: Խոսքի հուզական և գնա-  
հատողական մեխանիզմների վերլուծությունը ցույց է տալիս, որ ի-  
րականության արքիտոլոգիական մշակումը, որը նախորդում է տար-

բեր հույզերի առաջացմանը, տարբերվում է ճանաչողության մեծ կամ փոքր աստիճանով ու անհատի ըմբռնողականությամբ և տարափոխվում է կարևորագույնից մինչև անկարևորը (Трипольская 2000: 14):

Հարկ ենք համարում նշել, որ, գնահատելով իրականությունը և դրա բաղկացուցիչ տարրերը, մարդն անպայմանորեն դրանք անցկացնում է իր գիտակցության միջով, հետևաբար գնահատականը զուտ հուզական չի կարող լինել, այլ նաև ռացիոնալ հիմք ունի: Միևնույն ժամանակ չենք կարող ժխտել, որ սեփական «ես»-ի արտահայտությունը գնահատականի մեջ այն, բնականաբար, դարձնում է սուբյեկտիվ, անհատական, բայց ոչ անպայմանորեն հուզական. գնահատականի հուզական լինելը կամ չլինելը կապված է խոսողի հոգևոր ներաշխարհի հետ: Եթե խոսքաստեղծման պահին խոսողը գտնվում է դրական կամ բացասական հույզերի ազդեցության տակ կամ նախկինում զգացել է որոշակի հույզեր՝ կապված գնահատվող օբյեկտի հետ, ապա գնահատականը հուզական կլինի, իսկ եթե գտնվում է հանդարտ վիճակում և ի վիճակի է միմիայն բնական վերլուծության հիման վրա գնահատական ձևավորելու, ապա գնահատականը բանական կլինի: Հուզական գնահատականը կապված է մարդու հույզերի հետ, սակայն այս դեպքում ևս մարդ չի կարող արտահայտել զուտ հուզական գնահատական՝ առանց նկարագրողական գնահատական տալու գնահատվող օբյեկտին, և այս դեպքում այդ գործընթացը զերծ չի լինի հուզական տարրերից: Ուստի գնահատականները չեն կարող լինել միայն հուզական կամ միայն բանական, դրանք հուզական-բանական են, սակայն յուրաքանչյուր գնահատականի դեպքում կարող է գերակշռել կամ հուզականը, կամ բանականը՝ կախված խոսողի հոգևոր ներաշխարհից և արտաքին աշխարհի մասին նրա պատկերացումներից:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ գրեթե բոլոր լեզուներում գոյություն ունեն սաստկական բառեր, որոնց միջոցով խոսողը փորձում է առավել հուզականություն հաղորդել իր խոսքին, տվյալ սաստկական միջոցների գործածումը կարող է ավելի բարձրացնել մեր՝ խոսընկերոջ վրա դրական կամ բացասական հուզական ազդեցություն ունենալու հավանականությունը, ուստի թարգմանելիս առավել ևս անհրաժեշտություն է ծագում ճշգրիտ կերպով պահպանել հաղորդված հուզականությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Austin J.L.**, *How to Do Things with Words*, Oxford: Oxford University Press, 1962.
2. **Bach K. & Harnish R. M.**, *Linguistic Communication and Speech Acts*, Cambridge, MA: MIT Press, 1979.
3. **Damasio A.R.**, *Descartes' Error: Emotion, Reason and the Human Brain*, New York: G. P. Putnam's Sons, 1994.
4. **Damasio A.R.**, *The Feeling of What Happens: Body and Emotion in the Making of Consciousness*, New York: Harcourt, Inc, 1999.
5. **Dos Passos J.**, *Three Soldiers*, New York: Modern Library, 1921.
6. **Goleman D.**, *Emotional Intelligence*, New York, Toronto, London, Sydney, Auckland: Bantam Book, 1995.
7. **Murray E.J.**, *Motivation and Emotion*, New Jersey: Prentice-Hall, Inc., 1964.
8. **Paronyan Sh., Rostomyan A.**, *The Pragmatic Impact of Background Emotional Memory on Interpersonal Relations // Armenian Folia Anglistika: International Journal of English Studies*, vol. 2(9). Ed. S. Gasparyan et al. – Yerevan: Lezvakan horizon, 2011.
9. **Додонов Б.И.**, *Эмоция как ценность*, Москва: Политиздат, 1977.
10. **Лурия А.Р.**, *Язык и сознание*, Москва: Издательство Московского университета, 1979.
11. **Симонов П.В.**, *Что такое эмоция?*, Москва: Наука, 1966.
12. **Телия В.Н.**, *Коннотативный аспект семантики номинативных единиц*, Москва: Наука, 1986.
13. **Трипольская Т.А.**, *Эмотивно-оценочный дискурс: когнитивный и прагматический аспекты*, Новосибирск: изд-во НГУ, 1999.
14. **Трипольская Т.А.**, *Языковые механизмы эмоциональной и оценочной интерпретации действительности. Проблемы интерпретационной лингвистики: межвуз. Сб. Науч. Тр*, Новосибирск: изд-во НГУ, 2000.
15. **Պարոնյան Շ.**, *Լեզվաճանաչողություն և դիսկուրս*, Երևան, ԵՊՀ հրատ., 2011:

**SHUSHANIK PARONYAN, ANNA ROSTOMYAN – On Some Problems of Translation of Verbal Intensifiers.** The present paper is aimed at discussing certain tricky issues connected with the problem of translation of intensifiers. The authors assume that in everyday speech the communicative capacities of the interlocutors are mainly based on the cognitive structures according to which they manage the verbal displays of their positive or negative emotions. In the process of verbal interaction the speakers usually tend to give the appearance that the emotions that they feel at the moment of communication are stronger than they actually feel it. The verbalization of emotions can be manifested through verbal tokens: in every language there exist certain function words, called intensifiers, which amplify the positive or negative emotional degree of the word they are attached to.

**ШУШАНИК ПАРОНИЯН, АННА РОСТОМЯН – Проблемы перевода вербальных интенсификаторов.** В данной статье обсуждаются определенные сложности, связанные с проблемой перевода интенсификаторов. По мнению авторов, в повседневной речи коммуникативные способности собеседников в основном базируются на когнитивных структурах, в соответствии с которыми они управляют выражением положительных или негативных эмоций. Собеседники обычно создают видимость того, что эмоции, которые они чувствуют в момент коммуникации, сильнее чем они на самом деле есть. Вербализация эмоций может проявляться через словесные маркеры: в каждом языке существуют определенные слова, интенсификаторы, которые усиливают положительную/отрицательную эмоциональную степень слова, к которому они прикреплены.

## ԱՆԹԱՐԳՄԱՆԵԼԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### *ԱՐՄԵՆՈՒԶԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Լեզուն համարվում է մշակույթի մի մասը և տվյալ հասարակության իրական կամ հոգևոր աշխարհում նոր առարկայի կամ երևույթի ի հայտ գալը բերում է նոր բառի՝ իրույթի առաջացմանը, որը մատնանշում է տվյալ առարկան տվյալ լեզվում: Ոչ մի հասարակություն չի կարող մնալ մշակութային և լեզվաբանական մեկուսացման մեջ և տարբեր առիթներով շփվում է այլ մշակույթների հետ: Դա կարող է լինել հեռահաղորդակցումը, առևտուրը, լրատվամիջոցները, պատմությունը և այս միջմշակութային շփման ոլորտները անընդհատ ավելանում են: Յուրաքանչյուր իրույթ իր մեջ ներառում է տվյալ մշակույթից մի մասնիկ և արտահայտում է տվյալ երկրի առանձնահատկությունները: Իրույթի կամ, ավելի հստակ ասած, տվյալ առարկայի կամ երևույթի բացակայությունը այդ երկրի սահմաններից դուրս արդեն դժվարություն է ներկայացնում թարգմանելու, նկարագրելու, բացատրելու համար: Ներկայացնեմ մի քանի օրինակ, ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն իրականություններ, որոնք չունեն անգլերեն համարժեքներ, օրինակ՝ **դուդուկ**, **լավաշ** կամ **дума**, **Кремлин**, **избушка** և մի շարք նման բառեր, որոնք արտահայտում են տվյալ երկրի մշակույթը, մշակութային բառապաշարը:

Մշակութաբանական լեզվաբանության հիմնական խնդիրն է ուսումնասիրել այն լեզվաբանական միավորները, որոնք ակնհայտորեն ցույց են տալիս տվյալ մշակույթի ազգային առանձնահատկությունները, ինչպես օրինակ իրույթները, հիմնական և հարանշանակային բառապաշարները:

Յուրաքանչյուր թարգմանիչ իրույթների թարգմանությունը համարում է և՛ հետաքրքիր, և՛ միաժամանակ դժվար աշխատանք, որովհետև տվյալ ազգի պատմության, մշակույթի, ավանդույթների, սոցիալական վիճակի, քաղաքական կյանքի ոչ լիարժեք իմացությունը կարող է սխալ և անհամապատասխան թարգմանության պատճառ դառնալ, որի արդյունքում ընթերցողը կարող է կամ սխալ հասկանալ իմաստը, կամ էլ ընդհանրապես չհասկանալ: Դա առաջին հեր-

թին վերաբերում է այն հասկացություններին, որոնք Արևելքում գոյություն չունեն, օրինակ՝ *субботник, застолье*՝ առաջինը ունի իր հայերեն համարժեքը՝ շաբաթօրյակ, իսկ երկրորդը՝ ոչ:

Մեկ ազգի մշակույթի իրողության փոխանցումը և պահպանումը մեկ այլ մշակույթ լեզվի միջոցով շատ հաճախ նույնիսկ լավ թարգմանիչին փակուղու մեջ է դնում, և շատ հաճախ թարգմանիչը պետք է տեղեկացված լինի տվյալ մշակույթի մանրուքներից մինչև գործունեության բարձրագույն ոլորտները: Պարզվում է հայերեն նաև ռուսերեն **լիմոնադ** բառը նույնը չէ ինչ **lemonade** բառը անգլերենում, որտեղ այն գազավորված չէ, այլ սովորական ջուր, որում ավելացված է լիմոնի հյութ և շաքարավազ (իսկ ահա ռուսերենում այս բառը երկխմաստ է՝ նշանակում է և՛ լիմոնաջուր, և՛ գազավորված ըմպելիք): Նույնը կարելի է ասել նաև **квас**-ի մասին, որը հացից պատրաստված ավանդական սլավոնական ըմպելիք է՝ տարածված նաև նախկին սովետական բոլոր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում՝ կվաս, մինչդեռ Արևելքի մշակույթին կվասը անհայտ ըմպելիք է, ուստիև չունի համապատասխան թարգմանություն և երբեմն այն կոչում են **ռուսական կոլա**:

Քննարկենք այսպիսի մի քանի օրինակ ևս՝ հայերեն **տրեխ** կամ ռուսերեն **галoши, валецьки** բառերը, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է ազգային կոշիկի տեսակ, անգլերենում իրակություն է: Հարկ է նշել նաև, որ իրակությունների մի խումբ պատկանում է սննդակարգին և ազգային սննդին: Հայկական ազգային սննդատեսակներից իրոյթ են՝ **լավաշ, տոլմա, խաշ, բաստուրմա, սուջուխ, հարխաա, նարինե**, ռուսական սննդի իրոյթներն են՝ **кефир, борш, блины, оладушки, коркот, пельмени, компот, винегрет, водка** և այլն: Ռուսերեն և հայերեն լեզուների երկար շփումից շատ բառեր փոխառվել են մեր լեզվին, բայց առհասարակ ունեն ռուսական ծագում, որոշներն էլ թարգմանվել են և մտել բառապաշար, բայց անհայտ են անգլերենում: Օրինակ վերջերս, որպես արդեն օրինական բառ, բառարաններում հայտնվել է **quiqu** բառը, որը նշանակում է օրենքով ամուսնության օրինականացում, իսկ ահա որպեսզի անգլերենով արտահայտենք **Они решили пожениться и пошли в ЗАГС** նախադասությունը կարելի է **Registration Bureau** կամ **Palace of Weddings** կապակցությունների փոխարեն ձևակերպել ավելի պրակտիկ թարգմանություն՝ **they took out a marriage license, they signed the register**, կամ ուղղակի՝ **they got married**.

Ռուսերեն **коллектив** բառը, որն իր հերթին փոխառվել է նաև հայերեն, անգլերենում ունի լուսաբանման կարիք: Երբ ասում են՝ коллектив нашей школы ըստ ենթատեքստի այն կարող է թարգմանվել class or a sports team; коллектив нашего института – the staff, իսկ коллектив нашего завода – the employees. Այլ կերպ ասած, коллектив բառը, այնքան բազմիմաստ է, որ կարող է նշանակել group, personnel, staff, colleagues, co-workers կամ associates.

Ահա մի քանի այսպիսի իրականությունների օրինակ՝

рабочий поселок – industrial settlement, workers' community
Стаж – seniority, period of service
детская консультация – child welfare center
Медалист – honor student
вредная профессия – hazardous occupation
Поликлиника – health center, outpatient clinic
ЗАГС – civil registry office
курсы повышения квалификация refresher courses, advanced training courses
субботник – an unpaid/weekend/stint/volunteer effort/ community effort/donation of a day's work

Բնականաբար, վերը նշված բառերի թարգմանությունը իսկ ենթադրում է, որ դրանք անգլերենում կամ վերաիմաստավորված են, կամ արտահայտված բացատրական ձևով:

Իրոյթների թարգմանության ժամանակ առաջացած դժվարություններից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- 1) տվյալ երևույթի կամ իրի բացակայությունը թարգմանվող լեզվում
- 2) կամ տվյալ բառի միջոցով արտահայտվող երկրորդական՝ փոխաբերական իմաստի բացակայությունը թարգմանվող լեզվում, որը հանդիսանում է այդ մշակույթի առանձնահատկությունը

Թարգմանիչը իրականության թարգմանության ժամանակ պետք է ընտրի հնարավորինս մոտ տարբերակ, որպեսզի վերարտադրի ճիշտ իմաստը: Իրականությունների թարգմանության մեթոդները կարող են դասակարգվել հետևյալ խմբերի՝

## 1. Տառադարձություն և գրադարձություն

**Տառադարձությունը** մի լեզվի հնչյունների փոխակերպումն է կամ վերարտադրումը՝ օգտագործելով մեկ այլ լեզվի այբուբեն: Այսպիսով, **լավաշ** բառը կտառադարձվի որպես **lavash**, բայց փակագծերում պետք է տրվի տվյալ բառի բացատրությունը, այսինքն՝ **a kind of traditional Armenian bread, which is very thin and large**:

Իսկ ահա **գրադարձությունը** մի լեզվի տառերի փոխակերպումն է կամ վերարտադրումը՝ օգտագործելով մեկ այլ լեզվի այբուբեն: Ահա այս դեպքում ավելի ճիշտ կլինի օրինակներ բերել ռուսերենից, քանի որ ռուսերենում բառի արտասանությունը և ուղղագրությունը կարող են չհամապատասխանել: Օրինակ՝ **самовар** բառը անգլերենում համարժեք չունի և կարող է և՛ տառադարձվել որպես **samavar**, և՛ գրադարձվել որպես **samovar**: Կարելի է ասել տառադարձման մեթոդը ավելի օգտակար է ուղիղ ամենօրյա միջանձնային հարաբերությունների ժամանակ, մինչդեռ գրադարձությունը ավելի նախընտրելի է ինտելեկտուալ շփման ժամանակ:

## 2. Պատճեններ և կիսապատճեններ

**Պատճենները** տառադարձությունից հետո համարվում են իրոյթի թարգմանության լավագույն տարբերակներից մեկը, որի միջոցով հնարավոր է պահպանել իրոյթի իմաստն ու կոլորիտը: Պատճենները այսպես ասած իրակությունների հենց տառացի, մաս առ մաս թարգմանությունն է (Ахманова О.С. 1966): Սա թույլ է տալիս թարգմանել իրոյթը՝ մաքսիմալ կերպով պահպանելով իմաստը: Պատճենները շատ հաճախ լինում են բարդ բառեր կամ բառակապակցություններ, օրինակ՝ **skyscraper – небоскреб – երկնաքեր**:

Կիսապատճեններն, այսպես ասած, իրոյթի մասնակի թարգմանությունն է: Այս մեթոդը ավելի շատ գործածվում է բառակապակցությունների դեպքում, օրինակ՝ **Театр Современник – the Sovremennik theater**, որտեղ **Современник** բառը տառադարձվել է, իսկ **Театр** բառը թարգմանվել:

Բացի պատճեններից և կիսապատճեններից կան նաև կեղծ պատճեններ: Օրինակ ամերիկյան անգլերենում իտալերեն **latte** բառը չունի այն նույն իմաստը ինչ իտալերենում՝ **կաֆե**, այլ նշանակում է **espresso coffee mixed with steamed milk**, մինչդեռ մեկ այլ իրակություն **cappuccino** բառը անգլիախոս մշակույթ անցել է առանց իմաստային փոփոխության:



### 3. Յուրացում

**Յուրացումը** թարգմանության մի ձև է, երբ իրույթը վերցվում է մի լեզվից և յուրացվում մեկ այլ լեզվի կողմից և սրվում է թարգմանվող լեզվին հատուկ նրբերանգ, օրինակ՝ **concierge – консьержка**:

### 4. Նկարագրական թարգմանություն

Իրույթի **նկարագրական թարգմանությունը** հաճախ հանդիպող մեթոդներից է: Այս մեթոդը սովորաբար գործածվում է այն դեպքերում, երբ այլ մեթոդների միջոցով հնարավոր չէ արտահայտել իրականության իմաստը: Օրինակ՝ **портянки** ռուսերեն բառը կարելի է անգլերեն թարգմանել տառադարձման միջոցով: Սակայն **portyanki** բառը դժվար թե անգլիախոս ընթերցողին ինչ որ բան ասի, դրա համար ավելի նպատակահարմար կլինի հետևյալ տարբերակը՝ **portyanki, the footcloths that Russian soldiers have wrapped their feet with since the days of Peter the Great**: Կարելի է ասել, շատ հաճախ սառչ թե հենց բառի, այլ բառի բացատրության թարգմանությունն է՝ **портянки – это кусок ткани для обмотки ноги под сапог вместо или поверх носка** և թարգմանիչը հենց այսպես էլ գրում է:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ այս մեթոդը թույլ է տալիս հնարավորինս մոտ փոխանցել իրականության բովանդակությունն ու իմաստը, սակայն, համարյա միշտ, այն ջնջում է ազգային կոլորիտը, քանի որ հարանշանակային իմաստը կորչում է և փոխարինման է գալիս ոճաբանորեն չեզոք բառ: Միակ առավելությունն այն է, որ լավ բացատրության դեպքում, ընթերցողին անհասկանալի չի լինի իրույթի իմաստը:

### 5. Ենթատեքստային թարգմանությունը

Ենթատեքստային թարգմանությունը իրականության թարգմանության այլ մեթոդներից տարբերվում է նրանով, որ սովյալ բառի թարգմանությունը որպես այդպիսին չկա, նրա բովանդակությունը սրվում է ենթատեքստի փոխակերպման միջոցով: Այս դեպքում առավել ևս ազգային կոլորիտը անհետանում է (*Латышев Л.К.* 2000):

Մրանք համարվում են իրույթի թարգմանության հիմնական մեթոդները, և ամեն անգամ՝ այս բառերին հանդիպելիս թարգմանիչը ընտրության առջև է կանգնած՝ փորձել թարգմանել, տառադարձել թե՛ պատճենել: Ընտրությունը պետք է արվի հաշվի առնելով ենթատեքստը, թարգմանության ոլորտն ու նպատակը:

Հաճախ թարգմանության այս մեթոդները կյանքի են կոչվում աստիճանաբար, այսինքն՝ իրույթը սկզբում տառադարձվում է, բացատրվում, և ժամանակի ընթացքում յուրացվում է տվյալ լեզվի և լեզվամտածողությունը կրող ժողովրդի կողմից, օրինակ՝ *водка*, որն արդեն հիմա միջազգային բառ է և ունի միջազգային ճանաչում:

Ընդհանրացնելով այս ամենը նշենք հետևյալը, որ իրույթը բառերի հատուկ խումբ է, որը մատնանշում է որևէ ազգային մշակույթին հարիր և առանձնահատուկ առարկաներ և հասկացություններ: Հետևաբար, գրագետ թարգմանության հասնելու համար թարգմանիչը պետք է հասկանա յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր նախադասություն վերադասավորի տվյալ լեզվին համապատասխան շարահյուսությամբ և պետք է ենթարկի բառաքերականական ձևափոխման՝ միաժամանակ պահպանելով տվյալ տեքստի կապակցումը: Այս ամենի հետ մեկտեղ շատ կարևոր է նաև ուսումնասիրել տվյալ լեզվի մշակույթն իր բոլոր առանձնահատկություններով քանի որ իրույթները ազգային կոլորիտը կրողներ են:

## REFERENCES

1. **Alexeyeva L.M.**, *Professional training of a translator*. – St.P., 2002.
2. **Sorokin Yu.A.**, *Translation studies: a translator's status and psychohermeneutic procedures*.–M., 2003.
3. **Ахманова О.С.**, *Словарь лингвистических терминов*. – М.: Советская энциклопедия, 1966.
4. **Влахов С., Флорин С.**, *Непереводимое в переводе*./Монография. – М.: Валент, 2006.
5. **Казакова Т.А.**, *Практические основы перевода*. – СПб: Союз, 2002.
6. **Комиссаров В.Н.**, *Лингвистика перевода* / В.Н. Комиссаров. – М.: Международные отношения, 1980.
7. **Латышев Л.К.**, *Технология перевода*. – М.: НВИ-Тезаурус, 2000.
8. **Федоров А.В.**, *Основы общей теории перевода* / А.В. Федоров. – М.: ООО Филология три, 2002.

**АРМЕНИИ МУРАДЯН – Непереводимое в переводе.** В своей статье я затронул одну из главных проблем в переводоведении, т.е. реалии и проблемы и пути его перевода. Любой переводчик считает перевод реалии интересной,

и одновременно трудной работой, потому что недостаточное знание истории, культуры, традиций, может привести к неадекватному переводу, который может не быть воспринят читателям или восприниматься неправильно. Вот почему переводчик должен выбрать правильный способ перевода реалий.

**ARMENUHI MURADYAN – Untranslatability in Translation.** In my article I've touched upon one of the main issues in translation studies i.e. realias and the problems and ways of its translation. Any translator considers the translation of realias to be an interesting as well as a difficult work, because insufficient awareness of history, culture, traditions, social order, political life can result in inadequate translation which can fail to be perceived by the recipient or be perceived in a wrong way. That's why the translator must choose proper way of translating realias.

**ՏՐԱՆՍԵՐԵՆԻ ԱՌԱՇՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***ԱՒՂԱ ՄԱՐԴԱՆՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան,  
Իջևանի մասնաճյուղ*

Հայտնի է, որ առածներն ու ասացվածքները պատկերավոր և սեղմ ասույթներ են ժողովուրդների պատմության, նրանց կենսաձևի, բարքերի ու լեզվամտածողության վերաբերյալ և ունեն դաստիարակչական մեծ նշանակություն, ճանաչողական և իմացական մեծ արժեք: Առածների և ասացվածքների բնորոշ առանձնահատկություններից են քիչ բառերով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, դյուրընկալելիությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը:

Առածներն ու ասացվածքները՝ որպես գույտ ժողովրդական ծագում ունեցող, տվյալ ժողովրդի կենսափիլիսոփայությունն ու մտածողությունն արտահայտող միավորներ, հաճախ ներկայացվում են իբրև անթարգմանելի արտահայտություններ:

Առածների, ասացվածքների, ընդհանրապես դարձվածքների թարգմանությունը լուրջ խնդիր է հանդիսանում լեզվաբանության մեջ, քանի որ նրա լուծումը կապված է մի շարք լեզվական և արտալեզվական գործոնների հետ: Դրանց թարգմանության ժամանակ կարևորվում և առաջնային է համարվում բովանդակության պլանը և նույնական թարգմանության ապահովումը: Որոշ լեզվաբաններ գտնում են, որ թարգմանության մեջ անհնար է հասնել նույնականության, վկայակոչելով “Traduttore traditore” (թարգմանիչը դավաճան է) աֆորիզմը: Նրանք գտնում են, որ յուրաքանչյուր լեզու ունի իրեն հատուկ, անկրկնելի և այլ լեզուների համար անթափանցելի ներքին ձև, որը սկզբունքորեն հնարավոր չէ թարգմանել:

Լեզվաբաններն այն կարծիքին են, որ թարգմանիչը պետք է այնքան խոր և հիմնավոր գիտելիքներ ունենա ելակետային լեզվի դարձվածաբանական միավորների վերաբերյալ, որպեսզի կարողանա առանց դժվարության դրանք թարգմանել մի լեզվից մյուսը՝ տալով տվյալ միավորի ամբողջական թարգմանությունը:

Թարգմանագիտական գրականության մեջ նշվում է, որ դարձվածաբանական միավորները թարգմանվում են թարգմանության տեսության մեջ լայն տարածում գտած եղանակների միջոցով:

Արտահայտման առումով (ըստ պատկերավոր հիմքի) առածներին և ասացվածքների գերակշիռ մասը հաստուկ է միայն տվյալ լեզվին, մինչդեռ բովանդակության առումով (ըստ արտահայտման հասկացության) նրանք կարող են համարժեքներ ունենալ այլ լեզուներում ևս: Թարգմանության նպատակն է՝ արտահայտել լեզուների միջև առկա ամենասերտ կապը:

Թարգմանության տեսանկյունից, առած-ասացվածքային միավորները մեծ դժվարություն են առաջացնում, հատկապես այն դեպքերում, երբ թարգմանվող լեզվում բացակայում են համարժեք առածասացվածքային միավորները: Դրանց չգործածելը տեքստը դարձնում է ռճապես աղքատ, գաղափարապես թերի:

Առածների և ասացվածքների թարգմանության խնդիրը նախ և առաջ առնչվում է թարգմանության տեսության այնպիսի հիմնարար և զլխավոր հասկացությանը, ինչպիսին նույնականությունն է:

Համաձայն Ա. Նազարյանի՝ նույնականությունը բնագրի և թարգմանվածի ճշգրիտ համապատասխանությունն է, լիակատար համընկնումը եռաբաղադրիչ պայմանով, այն է՝ երկու տեքստերի համարժեքությունը ըստ

- 1) արտահայտված մտքի (կամ հույզի իմաստի),
- 2) գործադրված լեզվառճական միջոցների յուրահատկությունների,
- 3) գործաբանական նշանակության, (Նազարյան, Բաղդասարյան, 2000թ.):

Հոդվածում փորձ ենք արել ուսումնասիրել ֆրանսերենի առածների և ասացվածքների հայերենի, ռուսերենի թարգմանությունների առնչվող որոշ խնդիրներ:

Համաձայն Ա.Նազարյանի բազմաթիվ ուսումնասիրությունները՝ ֆրանսերենի առածները և ասացվածքները թարգմանվում են՝

- 1) զուգահեռ համարժեքով, այսինքն՝ իմաստը նույն ձևն է, հատկապես նույն է բառային կազմը,
- 2) ոչ զուգահեռ համարժեքով, այսինքն՝ իմաստը նույն է, բայց տարբեր է բառային կազմը,
- 3) հաճախ ֆրանսերենի առածները և ասացվածքները հայերենում և ռուսերենում համարժեք չունեն: Այդ դեպքում դրանց

իմաստը վերարտադրվում է բառացի կամ ազատ թարգմանությամբ:

Քննարկենք ասացվածքների և առածների թարգմանության առաջին ձևը:

***L'appetit vient en mangeant.***

***Ախորժակն ուտելիս է բացվում:***

***Аппетит приходит во время еды.***

Այս ասացվածքի թարգմանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերեն և ռուսերեն թարգմանությունը ասացվածքի ճշգրիտ վերարտադրությունն է, որում պահպանվում է նույն բառային կազմը և ձևը: Հետազոտողների մեծ մասը գտնում են, որ զուգահեռ վերարտադրության պատճառները կարող են տարբեր լինել: Դրանց հիմնական ընդհանուր աղբյուրն է (հունական կամ հռոմեական դիցաբանությունը, Աստվածաշունչը և այլն): Հաճախ դրա պատճառը փոխառությունն է մեկ ուրիշ լեզվից:

Քննարկենք մեկ ուրիշ ասացվածք, որտեղ թարգմանության ժամանակ պահպանված է նույն բառային կազմը:

***A la guerre comme à la guerre.***

***Պատերազմում՝ ինչպես պատերազմում:***

***На войне как на войне.***

Այս ասացվածքը հայերենում ունի ևս մեկ համարժեք՝

***Աղոթքն իր տեղը, թուրն իր տեղը:***

Նույն կարգին կարելի է դասել հետևյալ ասացվածքը՝

***Au besoin on connaît l'ami.***

***Ընկերը նեղ օրն է ճանաչվում:***

***Друзья познаются в беде.***

Հայերենում կա ևս մեկ տարբերակ՝

***Բարեկամը նեղ օրվա համար է:***

Նշենք ուսումնասիրված այն ասացվածքները, որոնք նշված լեզուներում պահպանում են նույն բառային կազմը և ձևը:

***Au royaume des aveugles les bornes sont rois.***

***Կույրերի թագավորության մեջ միայրանին թագավոր է:***

***В слепом царстве кривой-кароль.***

***Comparaison n'est pas raison.***

*Համեմատությունն ապացույց չէ:*

*Сравнение не доказательство.*

*Chacun porte sa croix.*

*Ամեն մարդ իր խաչն է կրում:*

*Каждый несет свой кресть.*

*Il n'y a pas de roses sans épines.*

*Առանց փշի վարդ չկա:*

*Нет розы без шипов.*

*La parole est d'argent, le silence est d'or.*

*Խոսքն արծաթ է, լռությունը՝ ոսկի:*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձևի, պատկերի և իմաստի զուգադիպության դեպքերը համեմատաբար սակավաթիվ են: Ամենից հաճախ դրանք ռուսերեն և հայերեն թարգմանվում են ոչ զուգահեռ համարժեքով, այսինքն իմաստը նույն է, սակայն տարբեր է կազմը: Կարծում ենք, որ այս դեպքում մեծ դեր է խաղում տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը:

*Chat échaudé craint l'eau froide.*

Բառացի թարգմանությունն է՝ «Բերանն այրված կատուն սառը ջրին էլ է փշում»: Ասացվածքի հայերեն համարժեքը հետևյալն է՝

*Աչքը տեսածից է վախենում:*

Ռուսերեն թարգմանությունը նույն իմաստը տարբեր բառային կազմով է տալիս՝

*Пуганная ворона куста боится.*

Հետաքրքիր է դիտարկել մեկ ուրիշ ասացվածք.

*A chaque oiseau son nid est beau.*

Բառացի թարգմանվում է՝ «Յուրաքանչյուր թռչունի համար իր բունը գեղեցիկ է»: Մինչդեռ հայերենը և ռուսերենն ունեն հետևյալ համարժեքները՝

*Ոչ ոք իր թանին թթու չի ափ:*

*Всякий купец свой товар хвалит.*

Հայերենում գոյություն ունեն նաև հետևյալ տարբերակները՝

*Ամեն մարդ կապի՝ իմ այտուրը ճերմակ է,*

*Ամեն մարդ իր լավաշին է տեղ անում:*

Հետաքրքիր լեզվամտածողություն են հանդես բերել հայ և ռուս ժողովուրդները “*En sa peau mourra le renard*” ասացվածքները թարգմանության ժամանակ:

***Մապատավորին գերեզմանը կուղղի:  
Горбатого могила исправит.***

Բառարանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս ասացվածքը հայերենը փոխ է առել ռուսերենից: Հայերենում կա նաև «*Կարմի կովն իր կաշվից դուրս չի գա*» տարբերակը:

Բերենք մեկ ուրիշ օրինակ

***Il n'est pire que l'eau qui dort.  
В тихом омуте черти водятся.***

***Վախեցիր այն ջրից, որ ոչ վշշում է, ոչ խշշում:***

Հետաքրքիր է, որ երեք լեզուներում էլ իմաստը նույն է և կապված է ջրի հետ:

Հաճախ ֆրանսերեն ասացվածքը մյուս լեզուներում համարժեք չի ունենում: Այս պարագայում նրանց իմաստը վերարտադրվում է բառացի կամ ազատ թարգմանության միջոցով: Բնականաբար այդ թարգմանությունները հայերենում և ռուսերենում ասացվածքի կայուն կարգավիճակ չունեն:

***Pas de nouvelles, bonnes nouvelles.***

Հայերեն՝ լուր չունենալն էլ լավ լուր է, բառացի թարգմանությունը, անշուշտ, ասացվածք չէ: Նույն է նաև ռուսերենում՝

***Отсутствие вестей-хорошая весть.***

Բերենք ևս մի քանի օրինակ, երբ հայերն և ռուսերեն թարգմանությունները ասացվածքի կարգավիճակ չունեն:

Օրինակ՝

***Les fous inventent les modes, et les sages les suivent.***

***Հիմարները նորաձևություն են հորինում,***

***իսկ խելացիները դրանց հետևում են:***

***Дураки придумывают моду, а умные следуют ей.***

Պակաս հետաքրքիր չէ դիտարկել այն ասացվածքները, որոնք մի լեզվում ունեն համարժեք, իսկ մյուսում՝ ոչ:

***Qui donne aux pauvres prête à Dieux.***



Այս ասացվածքը ռուսերենում իր համարժեքն ունի՝  
*Кто бедному дает, тому бог вернет.*

Հայերենում այն թարգմանվում է բառացի՝

*Աղքատներին տվողը Աստծուն է պարտք տալիս:*

Մեկ ուրիշ օրինակ՝

*Le jeu n'en vaut pas la chandelle.*

Ռուսերենում կա համարժեք ասացվածքը՝ Игра не стоит свеч: Հայերենում թարգմանությունը բառացի է՝ նման խաղի համար մոմ վատնել չարժե:

Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները՝ առաձաձասացվածքային միավորները, լինելով պատրաստի լեզվական կադապարներ, հաճախ ենթարկվում են փոխակերպումների: Ֆրանսիացի ժողովրդի հավաքական իմաստության վկայությունը համարվող՝ այս և բազմաթիվ այլ ասացվածքները անսպառ աղբյուր են հետազոտությունների համար: Իզուր չի ասված՝ «Ասացվածքը մեկի միտքն է, բոլորի իմաստությունը» (Ջ.Ռասել):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Карапетян Г.**, *Армянские пословицы и поговорки*, Москва, 1973.
2. **Рецкера Я.**, *Французско-русский фразеологический словарь*, Москва, 1963.
3. **Dournon J.**, *Mini-encyclopedia des proverbes et des dictons de France*, Paris, 1984.
4. **Maloux M.**, *Dictionnaire des proverbes*, Larousse, 2002.
5. **Nazarian A.**, *Proverbes et dictons francais*, Erevan, 1967.
6. **Pinaux J.**, *Proverbes et dictons francais*, Paris, 1967.

**АИДА МАРДАНЯН – Некоторые особенности перевода французских пословиц и поговорок.** Перевод пословиц, поговорок вообще фразеологических единиц является серьёзной задачей в лингвистике, так его выполнение связано с рядом лингвистических и экстралингвистических факторов. При их переводе важным и первостепенным считается обеспечение содержательного плана тождественного перевода. С точки зрения перевода пословицы поговорки создают трудности в тех случаях, когда в языке перевода отсутствуют

эквивалентные единицы. Согласно многочисленными исследованиям А.Назаряна перевод французских пословиц и поговорок выполняется тремя способами:

- 1) параллельными единицами, то есть смысл тот же, и тот же лексический набор
- 2) непараллельными аналогами, то есть смысл тот же, но разный лексический набор
- 3) часто французские пословицы и поговорки не имеют аналогов в армянском и русском языках. В этих случаях их смысл передаётся дословно или путём свободного перевода.

Как показывают исследования, фразеологические единицы, будучи готовыми языковыми моделями, часто подвергаются изменениям. Они пока ещё мало изучены и являются неиссякаемым источником для исследований.

**AIDA MARDANYAN – Some Translational Peculiarities of French Proverbs and Sayings.** The translation of proverbs and sayings, generally the translation of phraseological units, is a serious problem in linguistics, as its solution is connected with a number of linguistic and metalinguistic factors. While translating proverbs and sayings, first and foremost is considered the providing of content plans and identical translation. The translation of proverbs is difficult especially when there is lack of equivalent units.

According to A. Nazaryan a number of researches, French translation of proverbs and sayings is done in three ways:

- 1) by parallel equivalent, that is the meaning is the same, the lexical structure is also the same.
- 2) by non-parallel equivalent, that is, the meaning is the same but the lexical structure is different.
- 3) Sometimes French proverbs and sayings have no Armenian and Russian equivalents. In this case their meaning is represented by word for word translation or free translation.

As the researches show, proverb and saying units, being ready linguistic limits, sometimes go to transformation. They are still little studied and are inexhaustible source for researches.

**ԱՆՂԵՐԵՆԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

***ՄՈՒՄԱՆԱ ԲԱՂՂԱՄԱՐՑԱՆ***

*Հայաստանի պետական մանկավարժական  
համալսարան*

Նախկինում լեզվի իմացությունը հավասարեցվում էր կարդալու և գրելու կարողության հետ, իսկ առօրյա բանավոր խոսքին տիրապետելը համարվում էր հարաբերականորեն ցածրարժեք գիտելիք և անհամեմատելի էր գրավոր խոսքի հետ: Անգլերենի քերականությունը ուսուցանվում էր բացառապես գրավոր խոսքի հիման վրա: Ավելին, խոսակցական լեզուն շատ հաճախ դիտարկվում էր որպես քերականական նորմից շեղում: Լեզվաբանները գրեթե չէին կարևորում բանավոր հաղորդակցությանը բնորոշ ձևերն ու կառուցվածքները և, բնականաբար, այդ կառույցները չէին առանձնացվում վերլուծության համար:

Բանավոր հաղորդակցությունը ինտերակտիվ, կենդանի գործընթաց է: Այն էապես տարբերվում է գրավոր խոսքից: Բանավոր խոսքն իր բազմազանությամբ ընդգրկում է մտերմիկ, խոսակցական գրույցից մինչև պաշտոնականը: Զրուցակիցների միջև եղած հեռավորությունը հաճախ պայմանավորված է սոցիալական գործոններով՝ միջանձնային հարաբերություններով, հարգանքի աստիճանով, հասարակության մեջ նրանց զբաղեցրած տեղով, դիրքով և այլն:

Զրուցակիցները սովորաբար տեղյակ են խոսակցության նյութից, այսինքն՝ խոսում են իրենց ծանոթ թեմաներից, որոնց մասին կամ նախապես գիտեն, կամ էլ այդ պահին ֆիզիկապես տեսնում են:

Այդ է պատճառը, որ իրադրային զեղչումները, ցուցայնությունը՝ դեիքսիսը (Finished? in here, over there, that one, this here, right now, then) բանավոր հաղորդակցության անբաժանելի մաս են կազմում:

Զրուցակիցները պարբերաբար ստուգում են իրենց լսածն ու հասկացածը՝ օգտագործելով իրադրային քերականական զանազան կադապարներ, որոնք ընդգրկված չեն ստանդարտ քերականության շրջանակներում: Երբեմն անհրաժեշտություն է առաջանում ստեղ-

ծել համապատասխան եզրույթներ, որոնք կամ չեն եղել կամ հանդես են եկել այլ անվանումներով: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում *headers* կամ *ձախ տեղակայում* և *tails* կամ *աջ տեղակայում* կոչվող գոյականական բայառակապակցությունները, որոնց դերը գրուցակցին ճիշտ կողմնորոշելն է տվյալ իրավիճակում:

օր. Ann, our laboratory assistant, her daughter got married last week. (Աննա՝ մեր լաբորանտը, նրա դուստրն էր ամուսնացել անցյալ շաբաթ:)

օր. My friend, Tigran, his sister has just immigrated into Armenia. (Իմ ընկերը՝ Տիգրանը, նրա քույրն է վերադարձել Հայաստան:)

Ինչպես header-ները, այնպես էլ tail-երը հազվադեպ են հանդիպում գրավոր խոսքում:

օր. They're incredibly nice, our neighbours. (Նրանք հրաշալի մարդիկ են, մեր հարևանները:)

օր. I put it there, on the desk. (Դրել եմ այնտեղ, գրասեղանին:)

Ի տարբերություն գրավոր խոսքի, անգլերենի բանավոր խոսքն իր ճկունությամբ նմանվում է հայերենին: Ինքնաբերա խոսքը, կախված խոսողի մտքերը հաղորդելու ձևից, կարող է արտաբերվել բառերի ոչ սովորական շարադասությամբ: Օրինակ, տեղի պարագան կարող է դրվել անջատական հարցից հետո, ինչպես *Spanish is more widely used, isn't it in South America?* նախադասության մեջ, *Spanish is more widely used in South America, isn't it?*-ի փոխարեն:

Անորոշ, մոտավոր լեզուն բնորոշ է առօրյա գրույցներին: Բանավոր հաղորդակցության ժամանակ խոսակիցները հաճախ զգույշ են խոսում միմյանց հետ՝ խուսափելով անհարկի հեղինակավոր, հաստատական, ճշգրիտ կամ անքաղաքավարի հնչելուց: Դա նույնպես բանավոր խոսքի առանձնակատկություններից մեկն է: Խոսքի մեջ հաճախ են կրկնվում *thing, stuff, or so, like, or something, or anything, and so on, or whatever, kind of, sort of, more or less* (բանը, մոտավորապես, նման, ոնց-որ, ինչ-որ, ինչ էլ որ, մի տեսակ, քիչ թե շատ) բառերն ու բառակապակցությունները: Ածականակերտ վերջածանց – *ish*-ը խոսակցական անգլերենում թվերի հետ միանալիս նշանակում է մոտավորապես, իսկ թիվ գումարած *odd* բառը՝ ավելի քան:

Օր՝ *So, er, we're meeting seven-ish or maybe a bit later.* (Կհանդիպենք 7-ի կողմերը, կամ մի փոքր ուշ:)  
Կամ՝ *We were charged 30-odd dollars.* (Մեզանից գանձեցին ավելի քան երեսուն դոլար):

Այնուամենայնիվ, բանավոր և գրավոր խոսքը դժվար է իրարից տարանջատելը, որովհետև դրանք հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն: Նախկինում միայն բանավոր խոսքում տեղ գտած իրադրային բառերը, արտահայտությունները, քերականական կառույցները ավելի հաճախ են հանդիպում ոչ պաշտոնական գրավոր խոսքում: Էլեկտրոնային հաղորդագրություններում հաճախ զեղչվում է «I» (ես) դերանունը՝ Just got back from work. Will write soon. (Նոր եմ եկել գործից: Կգրեմ:), ոչ պաշտոնական նամակների վերջում՝ նախադիրը Best wishes առանց with-ի կամ դերանունը՝ Sincerely առանց yours-ի:

Այդպիսի օրինակներից են նաև տրոհված ինֆինիտիվը, ինչպես՝ “We decided to immediately sell it”, կրկնակի ժխտումը՝ They won’t be late I don’t think, եզակի գոյականը հոգնակի թվով դրված շփման միավորի հետ՝ “The girl was five foot tall” և այլն:

Իրադրային կառույցների թարգմանությունը պահանջում է լեզվի իմացության համապատասխան մակարդակ, որը ձեռք է բերվում հիմնականում բանավոր հաղորդակցության, լեզվակրի հետ շփման, ֆիլմեր դիտելու միջոցով: Շատ բառեր խոսակցական լեզվում ստացել են բոլորովին տարբեր իմաստներ: Օրինակ՝ pretty-ն նշանակում է բավականին, thing-ը՝ աղջիկ. wow, boy և man բառերը ձայնարկություններ են, որոնցից հետո նախադասությունը հանդես է գալիս շրջված շարադասությամբ:

օր. I’m absolutely exhausted. Man, do I need to get some sleep!  
(Մարսափելի հոգնած եմ: Ինչ կարիք ունեմ քնելու:)

օր. Boy, is it hot today!(Աստված իմ, ինչ շոգ է այսօր:)

օր. I love Adele. Wow, can that girl sing! (Միքում եմ Ադելին: Ոնց է այդ աղջիկը երգում:)

Օրինակները բազմաթիվ են: Ակնհայտ է, որ իրադրություններում քերականական գիտելիքների և խոսակցական բառապաշարի պակասը խստորեն կսահմանափակի և կխոչընդոտի լեզու սովորողների առաջընթացը: Այնուհանդերձ, ժամանակի ընթացքում փոխվել և շարունակում է փոխվել վերաբերմունքը լեզվաբանության քերականական հասկացությունների, դրանց սահմանումների, քերականական գիտելիքների նկատմամբ:

Քերականական հիմնարար գիտելիքներ ունենալը և այն գործնական հաղորդակցական նպատակներով չօգտագործելը նույնպես անընդունելի է: Այսպիսով, քերականության ո՞ր մասն է առավել պիտանի սովորողներին: Ինչպես է հնարավոր արդյոք արդյունավետ

կերպով մեկտեղել քերականական և գործարանական ոլորտները լեզվի ուսուցման գործընթացում: Այս հարցերի պասասխասները տեղ են գտել տարբեր մեթոդաբանների կողմից առաջադրված տարբեր մոտեցումներում: Օրինակ, առաջարկվեց (Մ. Մուան) օտար լեզվի քերականության ուսուցումը կազմակերպել ոչ թե մեխանիկորեն օրենքներ սովորեցնելով կամ նախապես այս կամ այն քերականական նյութը բացատրելով, այլ դրանք համատեքստի կամ իրադրության մեջ ներկայացնելով, բացատրելով, հասկացնելով և ի վերջո ամրապնդելով:

Պրոֆ. Ջ.Ս. Ռիչարդսը այս մեթոդի կիրառման արդյունքում նկատեց, որ առաջադրանքի հիման վրա քերականություն սովորեցնելը լիարժեք չի կարող լինել, որովհետև ուշադրություն դարձնելով որոշակի ուսուցանվելիք քերականական նյութի վրա կարող են անտեսվել մյուս, ոչ պակաս կարևոր քերականական կողմերը:

Մյուս կողմից լեզվաբան Սկեհանն առաջարկեց ավելացնել լեզվական իրազեկությանն ուղղված առաջադրանքը ներկայացնելուց առաջ, ընթացքում և հետո:

Մեթոդաբան Ռ. Էլլիսը, հետազոտելով պրակտիկայի և գիտակցության բարձրացման դերը քերականության ուսուցման մեջ, նշեց դրանց դրական կողմերի և մի քանի թերությունների մասին:

Դժվար է ասել, թե որ մեթոդն է ավելի արդյունավետ իրադրային քերականության և գործարանական իրազեկության ուսուցման գործընթացում: Հետազոտությունները շարունակվում են: Մեթոդի ընտրությունը և արդյունավետությունը կախված է լեզուն սովորելու իրական նպատակից (ամենօրյա, թե գործարար հաղորդակցություն, ուսումնական նպատակներ և այլն), մշակութային համատեքստից և իրավիճակից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Carter R., McCarthy M.,** *Cambridge Grammar of English, A Comprehensive Guide*, Cambridge University Press, 2010.
2. **Rose K., Kasper G.,** *Pragmatics in Language teaching*, Cambridge: Cambridge University Press, 2001.
3. **Bachman L. & Palmer A.,** *Language testing in practice*, Oxford: Oxford University, 1996.
4. **Richards J., Renandya W.,** *Methodology in Language Teaching, An Anthology of Current Practice*, Cambridge University Press, 2002.

5. **Larsen-Freeman D.**, *Techniques and Principles in Language Teaching*, Oxford University Press, 2003.
6. **Allen P., Cummins J. & Swain M.** (Eds.), *The development of second language proficiency*, Cambridge: Cambridge University Press.
7. **Brumfit C. & Johnson K.** (Eds.), *The communicative approach to language teaching*. Oxford: Oxford University Press.
8. **Ellis R.**, *The study of second language acquisition*. Oxford: Oxford University Press, 1994.
9. **Foster P.**, *A classroom perspective on the negotiation of meaning*. *Applied Linguistics*, 1998.
10. **Skehan P.**, *A framework for the implementation of task-based instruction*. *Applied Linguistics*, 1996.
11. **Richards, J.**, *Conversational competence through role-play activities*, *RELC Journal*, 16 (1), 1985.
12. **Swan M.**, *Thinking about Language Teaching*. Oxford University Press 2012.

**SUSANNA BAGHDASARYAN – On Some Peculiarities of Translating and Teaching Situational Grammar Patterns.** In the past grammar was exclusively taught on written speech. Moreover, spoken language was observed as a deviation from grammar norms. However, nowadays we very often come across situational grammar and spoken structures in written informal speech. The translation and teaching of these patterns are of considerable interest to linguists, translators and methodologists. More research is being done to investigate the effectiveness of the many different techniques advocated by methodologists. We believe that the choice and efficiency of the method depends on the actual purpose of language acquisition, cultural context, situation and many other factors.

**СУСАННА БАГДАСАРЯН – О некоторых особенностях перевода и обучения ситуативным грамматическим структурам.** Очевидно, что в прошлом обучение основам грамматики полностью ориентировалось на письменную речь. Более того, разговорная речь рассматривалась как отклонение от грамматических норм. Тем не менее, в настоящее время мы часто сталкиваемся с ситуативной грамматикой и разговорными структурами в письменной неформальной речи. Перевод и обучение этим структурам вызывают огромный интерес не только у переводчиков и методистов, но и у лингвистов. Несмотря на методическую разработку и обоснование методов и приемов перевода и обучения этим структурам, их отбор и эффективность зависят от цели изучения языка, равно как и от ситуации и других немаловажных факторов.

**ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՄԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

*ՄԱՐԿՈՒՇԻ ՈՍԿԱՆՅԱՆ  
ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Համաշխարհայնացման մեր դարաշրջանը բնութագրվում է տարբեր երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային համակարգերի ինտեգրմամբ: Տարածությունը և ազգային սահմանները հետզհետե անհետանում են, իսկ լեզուների բազմազանությունը էլ ավելի է խորանում: Զանազան բարդ կողմերի թվում միջլեզվական հաղորդակցման ամենատարբեր կողմերի ուսումնասիրությունը ժամանակակից հաղորդակցության կարևորագույն բաղկացուցիչներից է: Այս առումով թարգմանությունն ունի իր ուրույն տեղը:

Մի կողմից օտար լեզուների տիրապետող մարդկանց թիվն այսօր ավելին է քան նախկինում, սակայն նրանցից ոչ բոլորը կարող են աշխատել որպես թարգմանիչներ: Բացի լեզվական և ակադեմիական գիտելիքներից թարգմանչին անհրաժեշտ է տիրապետել այն «գաղտնիքներին», որոնք կարող են փոխանցվել միայն հմուտ և փորձառու թարգմանչի կողմից:

Համաժամանակյա թարգմանությունը սահմանվում է որպես բանավոր հաղորդագրության հիմնական բովանդակության փոխանցում մի լեզվից մյուսը՝ հենց խոսելու ընթացքում: Թարգմանիչը նստում է հատուկ առանձնախցում, իսկ ողջ գործընթացն իրականացվում է բարձրախոսների և ականջակալների միջոցով: Համաժամանակյա թարգմանության ընթացքում տեքստը թարգմանվում է դրա արտաբերման հետ գրեթե միաժամանակ, մի փոքր հետ ընկնելով: Քանի որ թարգմանչից պահանջվում է միաժամանակ լսելու, հասկանալու, թարգմանելու և խոսելու հմտություններ, թարգմանության այս տեսակը համարվում է ամենաբարդը: Հայտնի թարգմանիչ Գ. Է. Միրամը այս մասնագիտությունն անվանել է «հոգեֆիզիոլոգիական անոմալիա»: Իհարկե պետք չէ չափազանցնել այն ա-



նումայիա համարելով, սակայն անժխտելի է, որ այն պահանջում է ուժերի գերլարում:

Համաժամանակյա թարգմանությունը իրականացվում է տեքստը բաժանելով շատ փոքր մասերի, որոնք էլ այս պարագայում համարվում են թարգմանության ամենափոքր միավորները: Առավելագույն համարժեքությունը ապահովելու համար թարգմանչի կարևորագույն հմտություններից է կանխորոշելու կարողությունը: Բայց անգամ կանխատեսման հմտության առկայության դեպքում սխալներից խուսափելն անհնար է: Թարգմանիչը սխալները փորձում է ուղղել՝ կատարելով խմբագրական լրացումներ, միաժամանակ շարունակելով խոսքը: Մինևույն ժամանակ թարգմանիչը չի կարող հետ ընկնել խոսողից, հակառակ դեպքում կկորցնի մտքի թելը: Այսպիսի ժամանակային ճնշման դեպքում համաժամանակյա թարգմանիչը ստիպված է լինում խտացնել խոսքը՝ ընտրելով ավելի կարճ բառեր և դարձվածքներ, ինչպես նաև՝ բաց թողնել իր կարծիքով երկրորդական տեղեկությունը: Այսպիսով համաժամանակյա թարգմանության ժամանակ գործի են դրվում ավելի շատ վերլուծական և լեզվական հմտությունները, քան հիշողությունը: Ինչպես հաջորդական, այնպես էլ համաժամանակյա թարգմանության դեպքում թարգմանչին անհրաժեշտ է հսկայաձավալ ակտիվ բառապաշար:

Համաժամանակյա թարգմանչին անհրաժեշտ որակավորումները բազմազան են: Առաջին հերթին անհրաժեշտ է թե՛ մայրենի, և թե՛ օտար լեզվի գերազանց իմացություն: Մինևույն ժամանակ հույժ կարևոր են այնպիսի հմտություններ, իչպիսիք են՝ մտքի ճկունությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը, ինքնավստահությունը և այլն:

Որակյալ թարգմանություն ապահովելու համար լեզվի վարժիմացությանը զուգահեռ անհրաժեշտ է ունենալ հետևյալ ունակություններ ու կարողություններ

- ուշադիր լսել և արագ վերլուծել,
- լսել և միաժամանակ խոսել,
- լավ հիշողություն,
- տարբեր առոգանություններ ու արտասանություններ ընկալել,
- արագ արձագանքել:

Անհրաժեշտ է նաև լինել պերճախոս և ինքնավստահ, ունենալ հաճելի ձայն ու հետաքրքրությունների լայն շրջանակ, ինչպես նաև բազմակողմանի զարգացվածություն (Gerver, D. 1971):

Վերը նշված հմտությունները զարգացնելու համար կիրառվում են տարբեր մեթոդներ և սկզբունքներ: Շեշտը դրվում է ուսուցման համընդհանուր հոգեբանական սկզբունքների վրա, մասնավորապես՝ բարդության աստիճանի հետզհետե ավելացման սկզբունքի, նյութի փուլային ամրապնդման և հմտությունների ավտոմատացման, ինչպես նաև վարժությունների նպատակային համադրման սկզբունքների վրա:

Ուսուցման առաջին փուլում շեշտը դրվում է ոչ թե թարգմանության, այլ տեքստի համաժամանակյա կրկնության վրա հենց մայրենի լեզվով: Առաջարկվում են մի շարք գործնական վարժություններ, որոնք հնարավորություն են տալիս զարգացնել հիմնային հմտությունները՝ համաժամանակյա ռեժիմով աշխատելու համար: Այս երևույթը հայտնի է որպես “shadowing” (բանավոր խոսքի համաժամանակյա կրկնություն): Նման վարժությունները ստեղծում են համանաժամանակյա թարգմանության մթնոլորտ, թողնում են խաղի տպավորություն, ստեղծում են մոտիվացիա՝ արդյունքում ունենալով հաղորդակցական ուսուցում: Խոսքի ձևավորման տեսանկյունից այս փուլն իրենից մեծ բարդություն չի ներկայացնում, քանի որ չի կատարվում համաժամանակյա թարգմանություն, այլ ընդամենը կրկնություն մայրենի լեզվով: Միաժամակ ստեղծվում են բարենպաստ պայմաններ համապատասխան լսողական, հիշողության, կանխատեսման և ուշադրության բաշխման հմտությունների զարգացման համար: Այսպիսով այս փուլը համարվում է վարժեցման փուլ՝ բուն համաժամանակյա ռեժիմով աշխատելու համար:

Ուսուցման երկրորդ փուլն իրենից ներկայացնում է տեքստի կրկնություն օտար լեզվով: Այս փուլը հոգեբանական ավելի բարդ մակարդակ է, որի ընթացքում միաժամանակ մի քանի հմտություններ են մշակվում՝ լսելու ունակություն, օտար լեզվով տեքստի քերականական և լեզվական առանձնահատկությունների վերաբրտադրում, ինչպես նաև օտար լեզվով վարժ խոսելու ունակություն: Հարկ է նշել, որ նմանատիպ վարժությունները կատարելիս ապագա թարգմանիչները կրկնօրինակում են պրոֆեսիոնալ հաղորդավարների և հռետորների խոսելաձևը: Որպես ուսումնական նյութ կարելի է օգտագործել հասարակական տնտեսական ոլորտի տեքստեր, ուսումնական տեսաֆիլմեր, հատվածներ գեղարվեստական ֆիլմերից, պարզեցված գրական ստեղծագործությունների ձայնագրություններ, որոնք ձայնագրվել են լեզվակրի կողմից:

Ուսուցման երրորդ փուլում առաջարկվում է տեքստի համա-  
ժամանակյա ընթերցում: Այս փուլում թարգմանիչներին տրվում է  
լրացուցիչ տեսողական նյութ հնչող տեքստի գրավոր տարբերակի  
տեսքով: Նախնական փուլում խորհուրդ է տրվում վարժվել բանա-  
վոր խոսքի հետ ամբողջապես համընկնող գրավոր տեքստի վրա: Ա-  
ռաջին ընթերցման ժամանակ հարկ է հետ ընկնել խոսողից 3-4  
վայրկյան, այնուհետև ամեն հաջորդ ընթերցման հետ միասին՝ ավե-  
լացնել այդ տարբերությունը:

Հաջորդ փուլում այլևս չի տրվում տեսողական նյութ, այլ շեշտը  
դրվում է օտար լեզվից մայրենի լեզու թարգմանության վրա: Սա էլ  
իր հերթին իրականացվում է հետևյալ հերթականությամբ՝

- անձանոթ տեքստի ունկնդրում,
- նույն տեքստի ունկնդրում՝ գրառելով թվեր և հատուկ անուններ,
- օտար լեզվով տեքստի համաժամանակյա կրկնություն,
- առանձին բառակապակցությունների, աշխարհագրական  
անունների, թվերի համաժամանակյա թարգմանություն,
- առանձին նախադասությունների համաժամանակյա թարգմա-  
նություն,
- իմաստային կապակցված նախադասությունների թարգմանությու-  
ն,
- տեքստի մասնակի համաժամանակյա թարգմանություն,
- ամբողջ տեքստի համաժամանակյա թարգմանություն:

Այնուհետև կատարվում է տեքստի վերլուծություն լեզվական,  
քերականական և ռճական տեսանկյուններից: Խորհուրդ է տրվում  
ուսուցանվող տեքստերի նախնական տևողությունը սահմանել 5-7  
րոպե, ապա հասցնել 15-20 րոպեի:

Վերջին փուլում կրկնվում է ուսուցման նախորդ փուլը նույն  
հերթականությամբ, սակայն թարգմանությունները կատարվում են  
մայրենի լեզվից օտար լեզու:

Այս բոլոր վարժանքները ապագա թարգմանիչի մեջ զարգացնում  
են հետևյալ կարողություններն ու հմտությունները՝

- 1) կրկնել խոսողի խոսքը տեքստային տարբերակի առկայությու-  
յան և բացակայության դեպքում՝ խոսողից մի քանի վայրկյ-  
ան հետ ընկնելով,
- 2) մասնատել բանավոր տեքստը՝ որոշելով տեքստի իմաս-  
տային նվազագույն միավորը, որից կարելի է սկսել թարգ-  
մանությունը՝ խոսողից մի փոքր հետ ընկնելով,

- 3) միաժամանակ կարողալ նախօրոք տրամադրված տեքստը,
- 4) իրականացնել տեքստի նախաթարգմանչական վերլուծություն՝ հիմնվելով տեքստի տեսողական ընկալման վրա, կարողանալ համակարգել տեքստում ընդգրկված տեղեկությունը՝ թարգմանաբար փոխանցելու համար,
- 5) թարգմանել տեքստը՝ հիմնվելով տեքստի տեսողական ընկալման վրա,
- 6) թարգմանել տեքստը՝ առանց տեքստի տեսողական հիմքի,
- 7) ընկալել օտար լեզվով հնչող տարբեր առոգանությունները,
- 8) ընկալել խոսքի ողջ էությունը՝ տարանջատելով կարևոր տեղեկությունը երկրորդականից,
- 9) տիրապետել ձայնին, շնչառությանը, առոգանությանը և բանավոր խոսքի մշակույթին,
- 10) կատարել նախապես տրամադրված տեքստի վերլուծություն՝ վեր հանելով տեքստի խորքային իմաստային կառուցվածքները, որոնք կարևոր են իմաստի առավել ճիշտ փոխանցման համար:

Վերը նշված փուլերը հաջողությամբ իրականացնելու համար կարևորվում են հետևյալ սկզբունքները.

**Սկզբունք 1.** Յուրաքանչյուր նոր վարժություն սկսելուց առաջ հարկավոր է բացատրել տվյալ վարժության հոգելեզվաբանական արժեքը և դրա գործոնը բանավոր թարգմանության ընթացքում:

**Սկզբունք 2.** Զարգացնել ուսանողների հիշողությունը, քանի որ նրանք դժվարանում են մտապահել նոր տեղեկությունը և կարևոր փաստերն ու թվերը:

**Սկզբունք 3.** Հենց սկզբից զարգացնել ուսանողի կենտրոնանալու կարողությունը: Սրան կարելի է հասնել՝ ուշադրությունը շեղելով տարբեր ձայներով, ժեստերով և այլն:

**Սկզբունք 4.** Պետք է սկսել պարզ և հասկանալի նյութից, հետո անցնել բնագիր կամ խոսակցական լեզվին մոտ տեքստերի, մասնագիտական բառապաշար ունեցող նյութերի, ապա՝ հաղթահարել խոսքի արագությունը և բարդությունը:

**Սկզբունք 5.** Համաժամանակյա թարգմանության մեջ մասնագիտացող ուսանողներն արդեն պետք է ունենան բավականին հարուստ բառապաշար, որպեսզի շեշտը դրվի ոչ թե բառապաշարի հարստացման, այլ թարգմանության մեջ հմտանալու վրա (Մ.Ի. Կիրкина, 2011):

Ամփոփելով վերը ասվածը՝ հարկ է նշել, որ ապագա թարգմանիչները պետք է անցնեն հոգելեզվաբանության դասընթաց՝ մեծապես աշխատելով իրենց վրա: Իսկ դասախոսի դերը պետք է լինի ուսանողին ուղղորդել և սովորեցնել հմտություններ, որոնք կարող են կիրառվել լսարանից դուրս:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Чиркина М.**, *Практикум по синхронному переводу*, Р. Валент, Москва 2011.
2. **Чернов Г.**, *Теория и практика синхронного перевода*, Либрокам, 2012.
3. **Чужакин А.**, *Основы последовательного перевода и переводческой скорости*, Москва, 2007.
4. **Bassnett S.**, *Translation Studies*, Methuen Ltd., 1980.
5. **Munday J.**, *Introducing Translation Studies*, Routledge, 2001.
6. **Berman A.**, *The Experience of the Foreign: Culture and Translation*, 1992.
7. **Tytler A.**, *The Translation Studies Reader*, 2007.
8. **Gerver D.**, *Simultaneous Interpretation and Human Information Processing*, Oxford University, 1971.

**МАРКУИ ВОСКАНЯН, АННА КАРАПЕТЯН – К проблеме развития основных навыков перевода у синхронистов-переводчиков.** В статье делается попытка рассмотреть и классифицировать базовые принципы организации и проведения практических занятий по развитию у студентов навыков синхронного перевода. В частности, обращается внимание на поэтапное овладение материалом, в основе которого лежит принцип от “простого к сложному”, а также учитывается психологическое состояние переводчика во время осуществления перевода.

**MARKUHI VOSKANYAN, ANNA KARAPETYAN – Developing Fundamental Skills at Simultaneous Interpreters.** This article attempts to examine and classify the basic skills and qualifications required for the simultaneous interpreters. Basic principles of teaching interpretation are also in the centre of attention of the article.

The whole process is divided into several phases, which gradually pass from simple to complex. The most important and decisive factor is what goes on in the interpreter's mind while doing the interpretation.

**ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ**

**ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Ցանկացած գիտակարգի ծագումն ու զարգացումը պարզաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու հիմնական հանգամանքներ՝ (1) էմպիրիկ տվյալները, որոնք հավաքագրվել են իրական փորձառության միջոցով և (2) դրանք վերլուծական հայեցակետից ամփոփելու անհրաժեշտությունը: Եթե դիտարկենք բանավոր թարգմանության պատմության ժամանակակից փուլը (առանց անդրադարձ կատարելու հին ժամանակներից, երբ պետությունների առաջնորդներն ունեին իրենց թարգմանիչները կամ բազմալեզու օգնականները), ապա կտեսնենք, որ բանավոր թարգմանության դիդակտիկ խնդիրների ուսումնասիրությունը սկսվել է անցյալ դարում տեղի ունեցած և աշխարհաքաղաքական տեսանկյունից նշանակալի զինված բախումներից հետո՝ հաշտեցման գործընթացների մաս կազմող պաշտոնական հանդիպումների, զագաթաժողովների և խաղաղարարական այլ միջոցառումների տեսական գիտելիքների զարգացման շրջանակներում:

Անցած դարի երկրորդ կեսին գիտաժողովների բանավոր թարգմանությունը թարգմանաբանության մեջ դեռևս սաղմնային վիճակում գտնվող ուսումնասիրությունների մի փոքրիկ բնագավառ էր: Այնուամենայնիվ, հետպատերազմյան տարիներին հավաքագրված լայնածավալ էմպիրիկ նյութը, որը ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով կատարված բանավոր՝ հաջորդական թարգմանությունների արդյունք էր, արդեն իսկ թույլ էր տալիս թարգմանաբանության ոլորտի տեսաբաններին՝ կատարելու նշված բնագավառի տարաբնույթ հետազոտություններ և իրենց դիտարկումները ներկայացնելու գիտական հոդվածների տեսքով, որոնք հետագայում պետք է հիմք ծառայեին բանավոր թարգմանության մասնագիտացված դասընթացների դիդակտիկ ձևաչափերի մշակման համար: Պետք է նշել, որ հաջորդական թարգմանության ուսումնասիրության համար էմպիրիկ նյութը ձևավորվել է ավելի վաղ,

քան համաժամանակյա թարգմանության ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութը, քանի որ վերջինիս կիրառական կողմի զարգացումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ թարգմանչի համար նախատեսված հատուկ խցիկների և անհրաժեշտ տեխնիկական այլ նորամուծություններից հետո:

Բանավոր թարգմանություն կատարող առաջին մասնագետների համար կրթական կամ վերապատրաստման ծրագիր գոյություն չի ունեցել, ուստի հիմնականում սկզբնաղբյուր և թիրախ լեզուների տիրապետման բարձր մակարդակը, ինչպես նաև հիշողության հետ կապված ունակություններն ու հմտությունները միասին վերցված կազմում էին այն նախադրյալները, որոնք թույլ էին տալիս գործնականում հաջողության հասնել և հմտանալ բանավոր թարգմանության ասպարեզում: Հետագայում միջազգային կառույցների զարգացմանը զուգընթաց բանավոր թարգմանիչների մասնագիտական կրթության անհրաժեշտությունը զգալիորեն մեծացավ:

Համապատասխան տեսությունների մշակումը՝ ի լրումն ամենատարբեր գործնական վարժությունների և դիդակտիկ նյութերի, հասցրեց ոլորտում գրանցվող մերօրյա նվաճումներին, որոնք թույլ են տալիս իրականացնել բանավոր թարգմանիչների մասնագիտական կրթություն և վերապատրաստում՝ բանավոր հաղորդակցական իրավիճակը նմանակող համակարգչային ծրագրային և մուլտիմեդիոն համակարգերի կիրառմամբ:

Հայտնի է, որ բանավոր կամ գրավոր տեղեկույթն անմիջականորեն՝ տեղում թարգմանելու համար պահանջվում է թե՛ սկզբնաղբյուր և թե՛ թիրախ լեզվի տիրապետման բարձր մակարդակ: Եթե ժամանակային սահմանափակումների առումով հաջորդական թարգմանությունն այնքան էլ մեծ խնդիր չէ (քանի որ թարգմանիչը մտածելու համար առնվազն մի քանի վայրկյան ժամանակ ունի), ապա համաժամանակյա թարգմանությունը կապված է հոգեբանական զգալի ճնշումների և ջանքերի հետ, որոնց հետևանքով թարգմանիչների մոտ հաճախ սթրեսային երևույթներ են արձանագրվում: Հավելենք, որ ժամանակակից աշխարհի պրագմատիկ ձևաչափերում կազմակերպվող գիտաժողովների և պաշտոնական այլ արարողությունների պարագայում համաժամանակյա թարգմանությունը հնարավոր չէ կատարել առանց համապատասխան սարքավորումների, քանի որ թարգմանիչը ստիպված է լինում միավոր ծավալի տեղեկատվությունը փոխանցել խիստ սահմանափակ տարածաժամանակային պայմաններում:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում լեզվաբանության՝ մասնավորապես հոգելեզվաբանության ոլորտի մասնագետները զգալի ջանքեր են գործադրել ուսումնասիրելու մարդկային հիշողության և ընկալման փոխգործակցությունը, ուշադրության և մտքի, ինչպես նաև ընթացիկ (կարճաժամկետ) և հիմնական (երկարաժամկետ) հիշողության հարաբերակցությունը:

Կամավորների հետ անցկացված գործնական փորձարարական աշխատանքները թույլ են տվել եզրակացնել, որ տեղեկությո՞ւնը ընկալելու, մտապահելու և կրկնելու գործընթացը կապված է հիշողության մեջ դրա ժամանակավոր պահպանման (storage), կրկնողության (rehearsal) և ենթաձայնային մակարդակի խոսքային գործունեության հետ (sub-vocal speech):

Որքան էլ տարբեր լինեն տարբեր տեսաբանների կողմից առաջարկված՝ ընթացիկ հիշողությունը բնութագրող մոդելները, դրանք բոլորն էլ ենթադրում են, որ ընթացիկ հիշողությունը կարող է տեղավորել սահմանափակ քանակությամբ նիշեր, ինչով էլ բնորոշվում է ընթացիկ հիշողության տևողության հարացույցը (Baddeley 1998):

Վերոհիշյալ փաստերը անհրաժեշտություն են առաջացնում՝ անընդհատ ձգտելու մշակել բանավոր թարգմանության արդյունավետ մոդելներ, որոնք հիմնված կլինեն որոշակի գործելակերպերի և ընթացակարգերի ուսուցման տրամաբանության վրա և ավելի արդյունավետ կդարձնեն թարգմանչի կատարած աշխատանքը համապատասխան իրադրության մեջ: Ուստի, դիտարկենք հաջորդական թարգմանության ընդհանուր ռազմավարությանն առնչվող մի քանի մարտավարական, ընթացակարգային մոտեցումներ, որոնք թեև մեծ մասամբ սնվել են անձնական փորձից, սակայն դրանց տեսական հիմնավորումը կարելի է գտնել թարգմանաբանության ոլորտի բազմաթիվ տեսաբանների աշխատություններում: Հետևյալ մարտավարական նկատառումները բխում են սեմինարների, քննարկումների, գիտաժողովների և դասախոսությունների բանավոր-հաջորդական թարգմանության ձևաչափերից: Նշված ձևաչափերում դրանք կիրառելի են որոշ վերապահումներով, որոնք կարող են կապված լինել թիրախ լեզվամշակույթում առկա որոշակի պայմանականությունների, հասարակական նորմերի՝ մասնավորապես թիրախ մշակույթում ստորակարգության արտահայտվածության մակարդակի հետ: Այնուամենայնիվ, տվյալ տեսակի բանավոր թարգմանության արդյունավետության համար թարգմանիչը պետք է՝



**I. Լինի գործընթացի առաջնորդը՝** մտապահելով, որ ինքը իր կողմից թարգմանվող հաղորդակցական արարի մասնակիցը չէ (Dressler 1994: 104-105): Նա պետք է լինի չեզոք, սակայն միաժամանակ աչալուրջ հետևի տեղեկույթների հաջորդականության տրամաբանությանը և պահպանի ակտիվության որոշակի մակարդակ, այլապես երկխոսող կողմերը կարող են ծանրաբեռնել նրան կուտակված տեղեկատվությամբ, որը վայրկյաններ անց ավելի դժվար կլինի փոխանցել հասցեատիրոջը:

Ակտիվության մակարդակը պահպանելու համար կարևոր է խոսքի ընթացքում բացատել ձայնի տոնայնության միօրինակությունը, դուրս չմնալ երկխոսող կողմերի ուշադրությունից, ինչպես նաև նրանցից ընդունել վերլեզվական մակարդակի հնարավոր դիտարկումները՝ թարգմանության գործընթացի և արդյունքի կամ, եթե փորձենք ավելի մասնավոր օրինակ բերել, համապատասխան մասնագիտական տերմինաբանության վերաբերյալ: Որոշ իրավիճակներում թարգմանիչը կարող է նույնիսկ հարց ուղղել, եթե երկխոսող կողմերից մեկի խոսքում առկա է անհստակություն կամ եթե տեղեկույթը թերի է: Երկխոսող կողմերի հետ փոխգործակցությունը կարող է օգնել թարգմանչին՝ թեթևացնել երկկողմանի և երկլեզու տեղեկատվության գործընթացը և նվազագույն ջանքերի գնով ապահովել առավելագույն արդյունք: Նշված գաղափարն է ընկած Իրժի Լեվիի *Minimax* կոչվող ռազմավարության հիմքում:

Որպես իրադրության առաջնորդ՝ թարգմանիչը պետք է փորձի կողմերի ուշադրությունը որոշ չափով սևեռված պահել գործընթացին, որպեսզի կարողանա թե՛ հետևել, և թե՛ կողմերից ստանալ անհրաժեշտ դադարներ՝ թարգմանված խոսքի կառուցման և արտաբերման համար: Նրա հաջողությունն այստեղ կարող է կապված լինել, օրինակ, թարգմանչի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի հետ, ինչը գուտ մշակույթում ընդունված նորմերի և պայմանակալությունների խնդիր է: Այսպես, օրինակ, եթե թիրախ մշակույթում ստորակարգության ընկալումներն ուժեղ են արտահայտված, ապա թարգմանչի ժամանակի և միջոցների սահմանափակ լինելը ոչ միշտ է հարգվում խոսակիցների կողմից:

**II. Իրազեկված լինի համատեքստի մասին՝** հասկանալով հաղորդակցական արարի ետնապատկերը: Սկզբնաղբյուր և թիրախ մշակույթները ճանաչելն ու հանրամշակութային համատեքստը զգա-

լը թարգմանչի համար կարևորագույն առավելություններ են ապահովում: (Խոշոր հաշվով այդ առավելություններից է բխում նաև կանխատեսման հնարավորությունը, որին կանդրադառնանք ստորև): Երկու տարբեր մշակութային հենքեր ներկայացնող կողմերի երկխոսությունը միջմշակութային հաղորդակցության դաշտում կայացող հաղորդակցական արար է, որի բոլոր առանձնահատկությունները դիտարկելի են միջմշակութային հաղորդակցության տեսական դրույթների շրջանակներում: Այստեղ կարելի է հիշել ինչպես մշակութային արժեհամակարգերի տարբերություններն ու արժեբանական չափումները, այնպես էլ մշակութային հարաբերականությունը առնչվող գաղափարները:

**III. ՄԼ-ով արտահայտված մտքերը որսա ԹԼ-ի զենքերով՝** բանավոր թարգմանության բոլոր ձևերը բնութագրվում են թարգմանչի մի առանձնակի հակումով. վերջինս սովորաբար փորձում է հասկանալ սկզբնաղբյուր տեքստի իմաստը՝ վերլուծելով դրա հասկացական, այլ ոչ թե բառային կողմը (Albi-Mikasa 2008): Այս գործելակերպը նպատակահարմար է այնքանով, որ թարգմանչին օգնում է հասնել համարժեքության հնարավորինս բարձր մակարդակի: Բանավոր թարգմանության համընդհանուր ռազմավարության մեջ կան շարակարգային մակարդակին առնչվող մարտավարություններ, որոնք կարող են օգնել թարգմանչին՝ տեղեկույթը ավելի արդյունավետ կերպով փոխանցել հասցեատիրոջը.

ա. Արտահայտված յուրաքանչյուր միտքը հատույթավորել այնպես, որ ավելի հեշտ լինի թիրախ լեզվի շարահյուսական կառույցում դրանք վերամիավորելն ու հոդաբաշխ խոսքի վերածելը: Տեսաբան Էնդրյու Գիլլիսն այս խնդրին է անդրադառնում բանավոր թարգմանության գործընթացում նշումների և սղագրության կիրառման ձևերը քննարկելիս և մասնավորապես առաջարկում է տեղեկույթի բաշխումն իրականացնել գաղափարի վերաբերյալ իր տված «ենթակա-ստորոցյալ-լրացումների խումբ» ձևակերպումից ելնելով: Ենթակայի, գործողության և խնդրի միասնությունն ընդհանուր հասկացական առումով նա դիտարկում է որպես գաղափարական միավոր (Gillies 2005: 37):

բ. ՄԼ-ով հնչեցվող մտքերն ուշադրության կենտրոնում պահելով՝ ԹԼ-ում շարադասել դրանք թիրախ լեզվամշակույթի նորմերին համապատասխան՝ հնարավորինս խուսափելով շարահյուսական

առնմանումներից ու բառապատճենումներից, որոնց հետևանքով ԹԼ-ով «թարգմանված արդյունքը» – Վերմերի տերմինաբանությամբ՝ *translatum*-ը – կարող է արհեստական հնչել: Քանի որ, ինչպես վերը նշվեց, սկզբնաղբյուր տեքստի հասկացական կողմը, որպես կանոն, վերլուծության է ենթարկվում առաջին հերթին, ապա հասկացական պատկերի հնարավորինս արագ ընկալումը թարգմանչին առավելություն է ընձեռում: Այստեղից կարելի է բխեցնել հաջորդ կետը.

գ. Զարգացնել արտահայտվող մտքերի «կարճաժամկետ կանխատեսման» հմտություններ, այն է՝ փորձել լեզվական կառույցների և խոսքի տրամաբանության շրջանակներում կանխագուշակել բանախոսի հաջորդ միտքը: Թարգմանիչը պետք է կարողանա մտածել բանախոսին գուցահեռ, սակայն բացառապես ԹԼ լեզվական նշանային համակարգով: Տեսականորեն առանձնացվում են կանխատեսման երկու հիմնական տեսակներ՝ ըստ բնույթի և արտահայտված մտքի համեմատ ժամանակային դիրքի: Կանխատեսումը կարող է հենվել բանախոսի կողմից կառուցվող խոսքի լեզվական կողմի (որը հետագայում անվանվեց «լեզվական կանխատեսում» (օր՝ Setton 1999: 52)) և զգացողության վրա («արտալեզվական կանխատեսում» *ibid.*): Նշված հմտությունների կարևորությունը բանավոր թարգմանության գործընթացում բազմիցս նշվել է թարգմանական ընթացակարգերի և տեխնիկական հնարների ուսումնասիրության համատեքստում (Տե՛ս նաև Vandepitte 2001):

**IV. Տեղեկատվական հոսքն իրենից պահի որոշակի հեռավորության վրա՝** միաժամանակ հետևելով ենթատեքստին: Այլաբանորեն ասած՝ թարգմանիչը պետք է բանավոր թարգմանության առարկային և նյութին վերաբերվի՝ ինչպես բժիշկը հիվանդին: Օբյեկտի խնդիրները հասկանալու հետ մեկտեղ նա չպետք է ձուլվի և մաս կազմի դրանց՝ ընդհանուր հասկացական կամ հուզական մակարդակներում: Խորհուրդ չի տրվում նաև չափից ավելի շատ կենտրոնանալ տեղեկույթի մանրամասների վրա, որպեսզի չստեղծվի հայտնի առածի իրավիճակը՝ "not see the wood for the trees", երբ անձը չի կարողանում հասկանալ ընդհանուր պատկերը՝ մանրուքների վրա չափազանց մեծ ուշադրություն դարձնելու հետևանքով: Անուղղակի իմաստով՝ սղագրության մեթոդը թույլ է տալիս ընթացիկ տեղեկությունը «ժամանակավորապես մի կողմ դնել» և ապա նոր վերածել այն խոսքի ԹԼ նշանային համակարգի միջոցով: Բանավոր թարգմանությո-

յան ժամանակ երկխոսող կողմերի խոսքի սղագրման համար առաջարկվող բազմաթիվ մեթոդների հիմքում ընկած է թարգմանության գործընթացում ժամանակ շահելու և տեխնիկական, ինչպես նաև նպատակային առումներով հաջողության հասնելու գաղափարները:

Հավելենք, որ միջմշակութային համատեքստում և քննարկված ձևաչափերում կիրառվելիս վերոհիշյալ մարտավարական նկատառումները կարող են օգտակար լինել բանավոր թարգմանության որակական փոփոխության առումով: Այնուամենայնիվ, թարգմանաբանական տեսությունները և էմպիրիկ նյութը չեն կարող արժեք ունենալ մեկն առանց մյուսի, ինչը տրամաբանական է դարձնում արդեն մշակված տեսությունները գործնականում կիրառելու և ստացված արդյունքների հիման վրա տեսական ձևաչափերը լրամշակելու և զարգացնելու շարունակական աշխատանքը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Dressler W.U.**, *The Text Pragmatics of Participant Roles in Oral Interpretation and Written Translation*, // CLUEB: pp. 97-110, Bologna, 1994.
2. **Vandepitte S.**, *Anticipation in Conference Interpreting: A cognitive Process*// Revista Alicantina de Estudios Ingleses 14, 2001. [http://rua.ua.es/dspace/bitstream/10045/5325/1/RAEI\\_14\\_18.pdf](http://rua.ua.es/dspace/bitstream/10045/5325/1/RAEI_14_18.pdf)
3. **Chernov G.V.**, *Inference and Anticipation in Simultaneous Interpreting: A probability-prediction model*, Amsterdam/Phil: John Benjamins publishing Co. 2004.
4. **Baddeley A.**, *Working memory, Sciences de La Vie // Life Sciences*, 321, pp. 167-173 Academie des sciences / Elsevier, Paris, 1998.
5. **Setton R.**, *Meaning assembly in simultaneous interpretation.* // Interpreting. International Journal of Research and Practice in Interpreting 3(2), 1998.
6. Topics in Signed Language Interpreting: Theory and Practice, ed by **Terry Janzen, John Benjamins** Publishing 2005, Amsterdam [http://books.google.am/books?id=y1fjtF3vQUwC&pg=PA136&lpg=PA135&ots=QeuX7PK6kS&focus=viewport&dq=consecutive+interpretation+theory&lr=&output=html\\_text](http://books.google.am/books?id=y1fjtF3vQUwC&pg=PA136&lpg=PA135&ots=QeuX7PK6kS&focus=viewport&dq=consecutive+interpretation+theory&lr=&output=html_text)

7. **Abi-Mikasa M.**, *(Non-)Sense in note-taking for consecutive interpreting*, University of Tübingen //Interpreting 10:2, pp. 197–231, John Benjamins Publishing Company 2008. [http://www.someya-net.com/01-Tsuyaku/Reading/NonSense\\_in\\_Notetaking.pdf](http://www.someya-net.com/01-Tsuyaku/Reading/NonSense_in_Notetaking.pdf)
8. **Gillies A.**, *Note-Taking for Consecutive Interpreting - A Short Course*. Manchester, St. Jerome Publishing, 2005.

**ГРИГОР КАЗАРЯН – О проблемах тактики в последовательном переводе.**

В статье рассматривается проблема последовательного перевода в свете соответствующих теорий о взаимодействии памяти и восприятия, внимания и мышления, долговременной и кратковременной ("оперативной") памяти, развивающихся начиная со второй половины двадцатого столетия в рамках психолингвистики и переводоведения. Обсуждаются практические советы, касающиеся тактики переводчика для достижения результата в процессе устного перевода. Особое внимание уделяется оптимальному ходу мысли переводчика на синтагматическом уровне, рассчитывая ограничения оперативной памяти человеческого мозга.

**GRIGOR GHAZARYAN – Problems of Tactics in Consecutive Interpreting.**

The article is dedicated to the study of consecutive interpretation against the backdrop of respective theories on the interaction of memory and thought, attention and perception, long-term and short-term memory – that have been developed in the spheres of psycholinguistics and translation studies starting from the second half of the 20<sup>th</sup> century.

Practical advice for the attainment of high-quality results are discussed with special reference to the problems of the optimal thought process on the syntagmatic level, taking into consideration the limitations of the working memory of the human brain.

## ПРАГМАТИЧЕСКИЙ АСПЕКТ ОБУЧЕНИЯ ПЕРЕВОДУ УСТНОЙ РЕЧИ НА ФАКУЛЬТЕТЕ ЖУРНАЛИСТИКИ

**КАРО КАРАПЕТЯН**

*Ереванский государственный университет*

**АЛЛА МКРТЧЯН**

*Российско-армянский (славянский) университет*

При переводе иноязычной устной спонтанной речи переводчики учитывают тему сообщения, ситуацию порождения речи и участников речевого акта. Здесь важны не только лингвистические, но и экстралингвистические знания переводчика. По сути, переводчик должен иметь определенные знания о речевом поведении, вербальных и невербальных средствах носителей языка. В этом отношении на первый план выступает понятие “прагматика перевода”. Прагматика перевода определяется В.Н. Комиссаровым как “влияние на ход и результат переводческого процесса необходимости воспроизвести прагматический потенциал оригинала и стремление обеспечить желаемое воздействие на рецептора перевода” [Комиссаров 1990: 210].

Значение экстралингвистических знаний переводчика подчеркивается особенно при переводе устной спонтанной речи. С одной стороны, как отмечает Д. Жабин: “Сложность перевода устной речи заключается в записи и точности передачи всех особенностей этого вида речи (фальшь-старты, самоисправления говорящего, сбои в употреблении грамматических форм и порядка слов, множество “оборванных” отдельных слов/фраз, повторы и т. д.), с целью выявления механизма, при помощи которого можно описать систему, заключающую в себе объем и специфику спонтанного высказывания говорящего” [Жабин 2006: 4].

С другой стороны, только последовательное, продолжительное развитие фоновых знаний будущих журналистов, позволит им быстро и правильно ориентироваться при переводе отдельных отрывков иноязычной устной речи. В этой связи на первый план выступает развитие прагматической компетенции, которая касается, прежде всего, умения вести дискурс, связывать и состыковывать (cohesion and coherence) отдельные фрагменты речи, опознавать типы медиатекстов, медиадискурсов. Согласно прагматической компетенции, большое

значение придается взаимодействию с культурной средой [Common European Framework 2001: 13].

Студенты факультета журналистики должны знать, что спонтанная и экспромтная речи имеют одинаковые характеристики, и они являются более высоким уровнем развития неподготовленной речи. Как известно, в специальной лингводидактической и методической литературе под устным видом неподготовленного диалогического текста понимается спонтанная речь.

В процессе обучения переводу иноязычной устной речи используются разные тексты. Особенно продуктивными представляются те монологические и диалогические тексты, которые представляют живую разговорную речь. Очень часто они называются спонтанными текстами, в виде монолога, диалога и полилога, они функционируют в основном в устной разговорной речи. Спонтанные тексты и содержательно, и функционально дискурсивны. Как известно, в отличие от спонтанного текста, текст в своей традиционной трактовке является высшим образованием речи, законченным речевым произведением, имеющим композицию и завершённую семантику. Важно учесть, что, как и художественные тексты, спонтанные тексты имеют прагматическую установку. Однако они в основном не обладают завершённостью. Теоретики перевода и методисты, вслед за И.Р.Гальпериным, трактуют текст как “произведение речетворческого процесса, обладающее завершённостью, объективированное в виде письменного документа, литературно обработанное в соответствии с типом этого документа, произведение, состоящее из названия (заголовка) и ряда особых единиц, объединённых разными типами лексической, грамматической, логической, стилистической связи, имеющее определённую направленность и прагматическую установку” [Гальперин 1981: 18].

По сути, важной стратегией перевода устной, в основном диалогической речи является прогнозирование прагматической установки переводимого текста или спонтанного текста. Что касается монологической речи, то для нее характерны такие качества, как ясность (точность мысли), логическая стройность и достаточная информативность, доказательность, а также выражение собственного отношения и оценки.

При подготовке к переводу устной, спонтанной речи студенты должны изучать различные стратегии и приёмы письменного и устного перевода. Анализ основных стратегий обучения иноязычной

устной речи показывает, что существенную роль играет прагматическая компетенция студентов переводчиков. Более того, нет ни одной стратегии, использование которой непосредственно не зависело бы от прагматической компетенции. В данном контексте имеется в виду стратегия проб и ошибок, ожидания, столлинга или стратегия выигрыша времени, сохранение линейности в тексте, вероятностного прогнозирования, компрессии и декомпрессии. Анализ данных стратегий показывает, что невозможно осуществить полноценный перевод устной речи без учета прагматики перевода.

Следует отметить, что с точки зрения прагмалингвистики подчёркивается значение изучения невербальных средств общения, а интересы и мотивы обучения языку рассматриваются с точки зрения психологии и психологии речи. Традиционно, в переводческих курсах невербальные средства общения не изучаются в должной мере.

Немаловажным представляется изучение речевого этикета, так как невозможно последовательно развивать прагматическую компетенцию студентов без усвоения основных разговорных клише и моделей коммуникативного поведения носителей языка. Основные слова и выражения речевого этикета должны изучать студенты на уровне продуктивных умений. Очевидно, что только на перформативном уровне, на уровне реализации речевых навыков и умений становится возможным в должной мере усвоить речевой этикет. Знание правил речевого этикета, их соблюдение позволяет переводчику общаться уверенно и непринужденно, не испытывать неловкости и затруднений в процессе общения с иностранцами.

При общении с иностранцами журналисты должны знать, что речевой этикет имеет национальную специфику. Каждый народ создал свою систему правил речевого поведения. Это обстоятельство учитывается, прежде всего, при преодолении прагматической интерференции. Без техники реализации этикетных форм невозможно перевести устную речь иностранцев и в конкретных ситуациях преодолеть прагматическую интерференцию. Как утверждает В.Н. Василлина: "...в области речевых актов между языками существуют различия, которые определяются языковыми различиями и различиями культур. Поэтому, при изучении иностранных языков часто появляются трудности, связанные с прагматической интерференцией. Она возникает, когда одна и та же языковая форма, обладая в разных язы-



ках разным прагматическим потенциалом, используется иностранцем в соответствии с нормами его родного языка” [Василина 2005: 91].

При переводе устной речи, журналисты должны преодолеть прагматическую интерференцию, при этом особое внимание следует обращать на особенности фатической коммуникации носителей языка. Ученые рассматривают фатическую коммуникацию на разных уровнях. Очевидно, что журналисты должны учесть все компоненты фатической коммуникации на грамматическом, лексическом и фонетическом уровнях [Зайцева 2010: 231–241].

Более того, обучению речевому этикету должно сопутствовать обучение поведенческому этикету. Не менее важным представляется вопрос о взаимодействии речевого и поведенческого этикета в том плане, что журналисты должны иметь четкое представление не только о поведенческом этикете англичан вообще, но и о поведенческом этикете англоязычных журналистов. “Речевой этикет представляет собой доминанту коммуникативной культуры, которая поддерживает статусный баланс между коммуникантами в соответствии с принятыми в обществе нормами и традициями межличностного общения” [Чаушев 2008: 16].

Умение правильного использования речевого этикета английского языка важно тем, что студенты-журналисты должны понять чувства юмора, слова табу, критические выражения собеседников.

Студенты с трудом входят в диалог только из-за того, что они еще не усвоили соответствующие эпитеты и мимику носителей языка, что влияет на правильный перевод высказываний. Сравнительный анализ слов речевого этикета армянского, русского и английского языков показывает, что они, в основном, выступают как устойчивые словосочетания и дословному переводу не подлежат. Следовательно, необходимо разработать соответствующие процедуры для эффективного обучения словам речевого этикета.

Речевой этикет предписывает говорящим использование определенных формул в зависимости от ситуации общения. Микросистема единиц речевого этикета отражает национально-культурную специфику общения в данном социуме, так как она непосредственно связана с принятыми в обществе правилами невербального поведения, обычаями, привычками носителей языка [Гришенкова 1995: 34].

Прагматизм изучения английского языка для специальных целей проявляется в том, что студенты факультета журналистики должны

адекватно и своевременно реагировать на последние достижения в сфере масс-медиа. На основании проведенного анализа можно сделать вывод о том, что есть большие возможности повышения эффективности учебного процесса на факультете журналистики, если:

- 1) использовать не только коммуникативный, но и прагматический, когнитивный подходы к анализу медиатекста и медиадискурсов, что влияет на содержательную сторону переводимого текста;
- 2) отобрать профессионально-ориентированные учебные медиатексты, медиадискурсы;
- 3) разработать адекватную методическую систему упражнений;
- 4) определить принципы отбора медиатекстов и медиадискурсов с учетом развития иноязычной спонтанной речи в учебных условиях, с использованием упражнений на развитие навыков перевода.

Таким образом, можно сделать вывод о том, что журналисты в сфере профессиональной деятельности переводят письменные и устные тексты, общаются с носителями языка, используя вербальные и невербальные средства общения. При переводе иноязычной устной речи они должны уметь использовать разные переводческие стратегии, в основе которых лежит не только лингвистическая, но и прагматическая компетенция. Знания норм речевого и поведенческого этикета способствует быстрому и правильному отбору тех или иных стратегий при переводе текстов.

## ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. **Василина В.Н.**, *Фактор культуры при определении значения речевого акта* / В.Н. Василина // Национально-культурный компонент в тексте и языке: Материалы докл. III Междунар. науч. конф. под эгидой МАПРЯЛ, Минск, 7–9 апр. 2005 г.: В 3 ч. Ч. 1 / МГЛУ; отв. ред. А.В. Зубов, С.М. Прохорова. – Мн., 2005.
2. **Гальперин И.Р.**, *Текст как объект лингвистического исследования*. – М.: Наука, 1981.
3. **Грищенко Г.А.**, *Методика использования деловых игр при обучении менеджеров иностранному языку: интенсивный курс немецкого языка*: дис. канд. пед. наук/Г.А. Грищенко. – М., 1995.

4. **Жабин Д.В.**, Формальные признаки спонтанной речи говорящего в ситуации стресса: дис. ... канд. филол. наук: 10.02.19 / Д.В. Жабин. – Воронеж, 2006.
5. **Зайцева Е.В.**, *Прагматическая интерференция в фатической коммуникации: результаты лингвистического эксперимента* / Е.В. Зайцева // Теоретические и прикладные аспекты описания языка и межкультурной коммуникации: сб. научных трудов / [отв. ред. Л.В. Цурикова] – Вып. 4. – Воронеж: Издательско-полиграфический центр Воронежского госуниверситета, 2010.
6. **Комиссаров В.Н.**, *Теория перевода (лингвистические аспекты)*. М.: Высшая школа, 1990.
7. **Чаушев А.С.**, *Коммуникативно-прагматические особенности речевого этикета в различных лингвокультурах: на материале карачаево-балкарского, русского и английского языков: диссертация ... кандидата филологических наук: 10.02.20 / Чаушев Ахмат Сапарбиевич; – Волгоград, 2008. – 194 с.*
8. *Council of Europe (2001a). Common European Framework of Reference for Languages: Learning, teaching, assessment.* Cambridge. Cambridge University Press.

**ԿԱՐՈ ԿԱՐՄԴԵՏՅԱՆ, ԱԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆ – Բանվոր խոսքի թարգմանության ուսուցման գործարանական ռազմավարությունը ժուռնալիստիկայի ֆակուլտետում.** Հոդվածում քննարկվում են լրագրողների մասնագիտական գործունեության ոլորտում գրավոր և բանավոր տեքստերի թարգմանությունը՝ օգտագործելով խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցներ: Շեշտվում է այն փաստը, որ ապագա լրագրողները օտարալեզու բանավոր խոսքը թարգմանելիս պետք է կարողանան օգտվել տարբեր թարգմանական ռազմավարություններից, որոնք հիմնված են ոչ միայն լեզվաբանական, այլև գործարանական իրազեկության վրա: Խոսքային վարքագծի մասին գիտելիքների և կանոնների իմացությունը օգնում է լրագրողներին արագ և ճիշտ ընտրել թարգմանության եղանակները:

**KARO KARAPETYAN, ALLA MKRTCHYAN – Pragmatic Aspect of Teaching Oral Speech to Students of the Faculty of Journalism.** The article is dedicated to consideration of some problems connected with the development of oral and written translation skills in the field of professional activities of future journalists. Special attention is paid to using verbal and non-verbal means of communication, linguistic and pragmatic competence of students.

# ԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*ՇՈՒՇԱՆԻ Գ ԹԱՄՐԱԶՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

## **Գիտական տեքստերի թարգմանության խնդիրներն ու դժվարությունները**

«Մենք բոլորս գրում ենք օտար լեզվով», – գրում է XX դարի վիպագրության անշրջանցելի կոթողի հեղինակ Մարսել Պրուստը<sup>27</sup>: Պրուստն այստեղ թերևս ամենաճշգրիտ արտահայտությունն է տալիս լեզվի դիմադրող, չկախարդվող հատակը որոնողների՝ գրողների աշխատանքին: Նրանք, ովքեր լեզվի ներսում լեզու արարողներն են՝ հետամուտ «լեզվի այն լեզվին», որը, վեր լինելով լեզվի առօրյա կիրառման կաղապարներից, մնում է միշտ «օտար»: Հետաքրքիր է թարգմանությանը՝ օտարի հետ ամենաուղղակի այդ շփմանը, մոտենալ այս տեսանկյունից. դիտարկել այն որպես լեզվակերտման թրթռուն երակ:

Պատահական չէ, որ ամենատարբեր բանաստեղծական ճակատագրեր՝ Հյուդերլինից<sup>28</sup> մինչև Իվ Բոնֆուա<sup>29</sup> և Ֆիլիպ Ժակոտե<sup>30</sup>, իրենց կենսագրության որոշակի պահի դիմել են թարգմանության փորձին: Փաստ է նաև, որ մինչ երևան կգար «թարգմանաբանություն» ժամանակակից եզրույթը, թարգմանական միտքը սկիզբ է առել հենց այս բանաստեղծ-մտածողների գրչի տակ. և իհարկե այստեղ

<sup>27</sup> Մարսել Պրուստ, «Ընդդեմ Սենտ-Բյովի», էջ 56, Gallimard, 1957

<sup>28</sup> Ժամանակակից գրականագիտության և թարգմանաբանության մեջ մասնավորապես հայտնի են Հյուդերլինի՝ Սոֆոկլեսի «Էդիպ արքա» և «Անտիգոնե» ողբերգությունների թարգմանությունները: Այս թարգմանություններից գատ՝ Հյուդերլինի ողջ ստեղծագործությունը ներթափանցված է հին հունական աշխարհի ներքին փորձով:

<sup>29</sup> Իվ Բոնֆուան ֆրանսիացի խոշորագույն բանաստեղծ և մտածող է: Նա հայտնի է Շեքսպիրի թատերգության, Լեոպարդիի, Կիթսի, Յաթսի պոեզիայի և Պետրարկայի սոնետների իր թարգմանություններով: Թարգմանական պոետիկային նվիրված տասնյակ խոհագրությունների և հոդվածների հեղինակ է:

<sup>30</sup> Ֆիլիպ Ժակոտեն շվեյցարացի բանաստեղծ է, հայտնի է հյուդերլինյան պոեզիայի իր թարգմանություններով:

առանձնահատուկ նշանակալից է գերմանական ռոմանտիզմի ավանդը<sup>31</sup>: Թարգմանությունը՝ որպես աշխարհընկալում, շարժման ուրույն դինամիկա, ամենախոր և ամբողջական ձևով արտացոլվում է հենց թարգմանական մտքի այդ պոետիկայի մեջ, որտեղ ներհյուսված են մնում փիլիսոփայությունն ու պոեզիան՝ հավատարիմ մնալով գերմանական ռոմանտիզմի ավանդույթին: Եվ տրոհումներն առաջին հայացքից անհեթեթ են. թե՛ բանավոր, թե՛ գրական թարգմանության դեպքում մենք խոսում ենք միևնույն ներընկալման, միևնույն անհրաժեշտության մասին<sup>32</sup>:

Բայց և ակնհայտ է, որ թարգմանության մի բնագավառից մյուսին անցնելիս առաջադրվող խնդիրները եթե ոչ փոխվում, ապա հանդես են գալիս տարբեր շեշտադրմամբ, փոխվում են առաջնահերթությունները:

Սույն ուսումնասիրությամբ կուզեի առանձնապես անդրադառնալ գիտական տեքստերի թարգմանությանը: Եթե գրական որևէ ժանրի պատկանող տեքստի դեպքում՝ արձակ կամ բանաստեղծություն, նվազագույն ստորակետը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ, ապա գիտական տեքստերի թարգմանության մեջ, անկախ բնագավառից, առաջնահերթ է թվում ուղերձի ճշգրիտ և ընկալելի թարգմանությունը: Բայց արդյո՞ք այս աքսիոմը միանշանակորեն լուծում է բոլոր այն խնդիրները, որոնք գրական տեքստի դեպքում որոշակի ինքնության և լեզվամտածողության դրսևորումն են ոճը, շարահյուսությունը, օգտագործված բառապաշարի առանձնահատկությունները: Արդյո՞ք գիտական տեքստերի թարգմանության դեպքում ոչ մի տեղ չկա լարախաղացի դժվարին, անսայթաք քայլերի համար, որոնք կոչված են Անտուան Բեռմանի ուրվագծած «օտարի» և «իմի»<sup>33</sup> երբերոն սահմաններն իրար ընձյուղելու: Արվող դիտարկումներն ու օրինակներն իմ անձնական թարգմանական փորձից են: Վերջինս ստիպեց ինձ վերանայել գիտական տեքստերի

<sup>31</sup> Տե՛ս «Թարգմանություն և Պատմություն», Ֆիլիպ-Լակու Լաբարթ, Traduire-poésie, գիտական ժողովածու՝ նվիրված Անտուան Բեռմանին, Presses Universitaires de Strasbourg, 1990, էջ 190-192

<sup>32</sup> Տե՛ս Անտուան Բեռման, «Օտարի փորձությունը», էջ 290

<sup>33</sup> «./.../ «Իմ»-ին և «Օտար»-ին ուղղված շարժումներն իրար գծայնորեն հաջորդող գործողություններ չեն, որի արդյունքում երկրորդը սուկ առաջինի պայմանը կլինեք: Թերևս «Չու» բանաստեղծությունը միաժամանակ երգում է օտարի փորձությունը և կապվածությունը «իմ»-ին՝ իրար համընթաց», Անտուան Բեռման, «Օտարի փորձությունը», էջ 256

թարգմանության շուրջ նախապես իմ մեջ ձևավորված կաղապարը. այն անմարմին, անդեմ փոխադրում չէ: Դիտարկումները միագիծ են, քանզի էապես անդրադառնում են Միշել ժարտիի «Կամյու և Ռոբ-Գրիյե»<sup>34</sup> և Գի Սկարպետայի «Ցաքուցրիվ նշումներ ծուղակն ընկած պատումի մասին»<sup>35</sup> հոդվածներին՝ նվիրված Ալեն Ռոբ-Գրիյեի երկարվեստին<sup>36</sup>: Իրարից բավական տարբեր լինելով իրենց արծարծած հիմնախնդիրներով և լեզվառճական առանձնահատկություններով՝ երկուսն էլ վերաբերում են գրականագիտության տիրույթին: Կարևոր մի ճշգրտում. ուսումնասիրության առարկա առաջին նյութը՝ «Կամյու և Ռոբ-Գրիյե» նախապես գրվել է որպես էլույթի տեքստ՝ Ալեն-Ռոբ Գրիյեին նվիրված ֆրանսիական գրականության օրերի շրջանակներում: Ուսումնասիրությանս ընթացքում առիթ կունենամ ցույց տալու, թե որքանով է կարևորվում այս փաստը Միշել ժարտիի հոդվածի թարգմանության ժամանակ:

### Եզրաբանություն

Էական է եզրույթների ճշգրիտ թարգմանությունը: Սակայն լուծումներն առավել բարդ են, երբ վերոհիշյալ եզրույթները արևմտաեվրոպական գիտական դաշտում վաղուց արդեն շրջանառության մեջ եղող բառեր են, որոնք ցայսօր չունեն իրենց համարժեքը հայոց լեզվում: Իսկ այդպիսիք բազմաթիվ են, հատկապես՝ գրականագիտության դաշտում: Անշուշտ, այս հարցերի սպառնիչ պատասխանը ոչ թե թարգմանչի լուծումները, այլ տերմինաբանական կոմիտեի որոշումն է: Բայց մինչ այդ՝ ինչպե՞ս հասկանալի դարձնել, օրինակ, ոչ ֆրանսախոս ընթերցողին այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «Littérature littéraire»-ը, «Ecriture privative»-ը, «L'anecdote»-ը: Որո՞նք են հնարավոր լուծումները.

Ա) Հնարավոր է եզրույթի բառացի թարգմանություն, ինչպես, օրինակ, «Littérature littéraire»-ի դեպքում՝ «Տառացի գրականություն»: Լիտերալիզմը՝ «տառացիությունը», մի միտում է, որ ծայր առնելով ֆրանսիական գրականության մեջ հիսունական թվականներին՝ նոր թափ է ստանում սյուրռեալիզմին հաջորդած ֆրանսիական բանաս-

<sup>34</sup> Michel Jarrety, « Camus et Robbe-Grillet »

<sup>35</sup> Guy Scarpetta, « Notes éparses sur un récit piégé »

<sup>36</sup> Հոդվածները կտպագրվեն Ալեն Ռոբ-Գրիյեին նվիրված երկլեզվյա ժողովածուում:

տեղծական սերնդի մեջ: Այս դպրոցի հետևորդները մերժում են իմաստային որոնումները՝ տեքստը դարձնելով դեպի իր շոշափելի նյութականությունը՝ տառը: Կարծում ենք՝ «Տառացի»-ն լիովին արտահայտում է ֆրանսերեն եզրույթի բովանդակությունը:

Բ) Առավել վիճելի մի դեպք, երբ եզրույթը թարգմանելիս ստիպված ենք շրջանցել ճշգրիտ համարժեքը՝ ելնելով գրական համատեքստից: Այսպես, անդրադառնալով Նոր վեպի հիմնարար առանձնահատկությանը՝ Միշել ժարտին խոսում է «*formule privative*»-ի մասին, որին մի քանի էջ անց կփոխարինեն «*approche privative*», «*dimension privative*», «*littérature privative*» արտահայտությունները: Բառացի թարգմանելու դեպքում կատանաք «գրկող բանաձև» և համապատասխանաբար՝ «գրկող մոտեցում», «գրկող չափում», «գրկող գրականություն»: Բայց արդյո՞ք «գրկող» բառն ի գորու է փոխանցելու բնագրի ենթադրած իմաստը, այն է՝ վիպական արվեստի ավանդական բնորոշումների մերժումը, որը հատուկ է Նոր վեպին: Արդյո՞ք «բացառող» բառն առավել տեղին չէ.

«Ինչևէ, այս արտահայտությունն արժեքավոր է, որովհետև նշանավորում է այն մի շարք բաների անհետացումը, որ ավանդական վեպն էր պարզևուր ընթերցողին. թերևս **բացառող մի բանաձև**, քանի որ խոսքը ոչ միայն նախորդած վեպի դեմ դուրս գալու, այլ վերջինս իր ավանդական բնորոշումներից մի քանիսից զրկելու մասին է – և հենց այստեղ է, որ կուզեի մի ճշգրտում մտցնել»<sup>37</sup>:

Դ) Եվ վերջապես երրորդ դեպքը, երբ զուգահեռ կարող են ներկայացվել օտարալեզու տառադարձված և հայերեն եզրույթները: Խոսքը ֆրանսերեն «*anecdote*» եզրույթի մասին է: Թարգմանչի խնդիրն այս դեպքում պարզ չէ. «*anecdote*»-ը հայերենի լեզվական տիրույթում արմատացած է որոշակի իմաստով՝ «զվարճապատում»: Ու թեև դժվար չէ ըմբռնել իմաստային զարգացումը, տարբերությունն էական է: «*Anecdote*»-ը, որը գալիս է հունարեն «*anekdota*»-ից, այսինքն՝ «չսլված բաներ», ֆրանսերեն նշանակում է «հետաքրքրաշարժ պատմություններ» կամ փոխաբերական իմաստով, որն առավել գործածական է արվեստաբանական կամ գրականագիտական

---

<sup>37</sup> Բնագրում՝ «Or tout le prix de cette expression, c'est qu'elle signifie la disparition de ce que le roman traditionnel offrait et c'est, si vous voulez, une formule privative: il ne s'agit pas seulement d'aller contre le roman antérieur ; il s'agit également de lui ôter certaines de ses caractéristiques traditionnelles – et c'est ce que je voudrais préciser».

եզրաբանության մեջ՝ «հետաքրքրաշարժ, բայց անկարևոր, երկրորդական որևէ մանրամասն, որևէ գիծ», օրինակ՝ արվեստի որևէ գործի կամ որևէ երկի մեջ (Տե՛ս «Le Robert», «Le Larousse» բառարանները): Գի՛ Սկարպետայի ծավալուն հողվածում «անեկդոտ»-ն օգտագործվում է Ալեն Ռոբ-Գրիյեի «Կորնթոսի վերջին օրերը»<sup>38</sup> գործի չափումներից մեկը վերհանելու նպատակով: Այն ոչ մի կերպ չի առնչվում զվարճապատումների հետ: Խոսքը հետաքրքրաշարժ պատմությունների մասին է: Իմ ընտրությունն էր՝ թողնել «անեկդոտ» բառը՝ զուգահեռաբար հայերեն վերասահմանելով նրա իմաստը. «**անեկդոտը. հետաքրքրաշարժ պատմություններ**»:

### Լեզվառճական առանձնահատկություններ. շարահյուսություն

Չնայած բովանդակությանը տրված առաջնությանը՝ նույնիսկ գիտական հողվածներում դրսևորվում է հեղինակի լեզվամտածողությունը, ինքնությունը: Ոճական առանձնահատկությունները, շարադրանքի կառուցվածքը, շարահյուսությունը որոշակի դրսևորում են ստանում գիտական տեքստերում, և բավական դժվար է, նույնիսկ ցանկության դեպքում, դրանք շրջանցել:

Անդրադառնամ շարահյուսությանը: Եթե գեղարվեստական թարգմանության դեպքում շարահյուսության մեջ արվող փոփոխությունները երբեմն իսկական ոտնձգություն են բնագրի ուրույն «աշխարհագրության» նկատմամբ, ապա գիտական տեքստերի թարգմանության դեպքում այս հարցը նույնքան ցավոտ չէ: Իսկապես, անպատկերացնելի է, օրինակ, մասնատել պրոստյան նախադասության հոսուն, ներդաշնակ միջանցքները: Մինչդեռ գիտական տեքստի թարգմանության դեպքում դա երբեմն բխում է հենց իր բնագրի շահերից:

Բայց մի թե սրանով լուծված են շարահյուսության հետ կապված բոլոր խնդիրները: Այս խորհրդածության շրջանակներում ուսումնասիրված երկու հողվածները՝ այնքան տարբեր իրենց լեզվառճական առանձնահատկություններով, դրա լավագույն հերքումն են: Միշել Ժարտիի տեքստը դասական համալսարանական հողված է:

<sup>38</sup> Ալեն Ռոբ-Գրիյե, Les Derniers jours de Corinthe, Minuit, 1984



Գի Սկարպետայի հողվածը՝ թե՛ ոճական, թե՛ կառուցվածքային ազատությամբ, խոհագրություն է հիշեցնում: Բնականաբար, այս դեպքում երկարաշունչ նախադասության մասնատումը կամ հեղինակային կետադրության փոփոխումը շատ ավելի լուրջ հետևանքներ կարող են ունենալ տեքստի իմաստային և ոճական ամբողջականության վրա: Ուշագրավ մի օրինակ Գի Սկարպետայի հողվածից. «Ես գնահատում եմ, երբ հակադրվելով ինքնասիրահարված կամ իդեալականացնող այն հայացքին (որոնք այնքան ինքնակենսագրություններ են արժեզրկել այն պարզ պատճառով, որ մեզ թվում է, թե հեղինակն այստեղ «կեցվածք է ընդունել»), Ռոբ-Գրիյեն չի սքողում ոչ մի անսխառթ կամ իրեն մեղադրող փաստ. ո՛չ այն փաստը, որ իր ընտանիքը Պետենին էր հարում, ո՛չ էլ նրա անտիսեմիտիզմը, ո՛չ էլ այն, թե ինչպես ինքը երկար ժամանակ (և արդյոք դա չափազանց երկար տևեց) դրա ազդեցության տակ է եղել (Ռոբ-Գրիյեն խոստովանում է, օրինակ, որ ոչ սովոր այն խումբը՝ Գյուդատնտեսության բարձրագույն դպրոցում, որին հարում էր պատերազմի առաջին տարիներին ապագա նկարիչ Բեռնար Դյուֆուրի հետ միասին, համակուրսեցիները «K. խումբ» էին հռչակել. իրենց անթաքույց պետենականության պատճառով՝ նրանց կոլլաբորասիոնիստների՝ ֆաշիստական ռեժիմի հետ համագործակցողների տեղ էին դնում)»<sup>39</sup>:

Անշուշտ, իր երկարության, ինչպես և փակագծերում ամփոփված ծավալուն ֆրազի պատճառով նախադասությունն անսովոր տպավորություն է թողնում. և թարգմանչի առաջին մղումը կլինե՛ր այն մի քանի անկախ նախադասությունների տրոհել: Բայց հողվածը հեղեղված է փակագծերով, որոնց վստահված են կարևորագույն, երբեմն՝ գլխավոր մտքերը: Այս դեպքում փակագծերն ընդամենը կետադրական նշան չեն, այլ՝ տվյալ գրվածքի կարևոր դիմագծերից մեկը: Իմ ընտրությունն էր՝ ողջ հողվածի մեջ անփոփոխ թողնել ինչպես փակագծերն ու անհատական կետադրության մյուս դեպքերը, այնպես էլ ծավալուն այդ նախադասությունները, որոնք ասես ի միջիայլոց դուրս են եկել զբոսանքի:

Փոխարենը՝ Միշել Ժարտիի հողվածում նախադասությունների կառուցվածքն առավել պարզ է: Նկատելի է միջանկյալ նախադասությունների առկայությունը, որ փորձել եմ հնարավորինս պահ-

<sup>39</sup> Գի Սկարպետա, «Ցաքուցրիվ նշումներ ծուղակն ընկած պատումի մասին»

պանել: Ոճը նրբագեղ է, գուսպ: Ի տարբերություն նախորդ հոդվածի՝ բազմաբարդ նախադասությունների առանձնահատկությունները չեն բխում տվյալ գրվածքի նկարագրից: Բնականաբար, թարգմանչի ընտրությունը շարահյուսության ցանկալի փոփոխությունների առումով այս դեպքում առավել դյուրին է: Վերցնենք հոդվածի պատահական նախադասություններից մեկը. «En premier lieu, Robbe-Grillet a assez souvent évoqué Camus, et en particulier en juin 1982, durant la décade de Cerisy-la-Salle qui était consacrée à l’auteur de *L’Étranger*, et cette décade a été pour lui l’occasion de rappeler la lecture qu’il avait pu faire du roman»<sup>40</sup>:

Հայերեն տարբերակում ֆրանսերենի բարդ համադասական նախադասությունը փոխարինվել է բարդ ստորադասականով՝ առանց իմաստային որևէ կորստի. «Առաջին հերթին՝ Ռոբ-Գրիլյեն բավական հաճախ է հիշատակել Կամյուին, առանձնապես 1982-ի հունիսին «Օտարի» հեղինակին նվիրված Մերիզի-լա-Սալի տասնօրյակի շրջանակներում, որ Ռոբ-Գրիլյեի համար վեպի սեփական մեկնաբանությունը հիշեցնելու առիթ էր»՝ «և այդ տասնօրյակը Ռոբ-Գրիլյեի համար վեպի սեփական մեկնաբանությունը հիշեցնելու առիթ էր» կառույցի փոխարեն: Ի դեպ, ֆրանսերեն տարբերակում երկրորդ նախադասությունն իր հերթին ստորադաս անդամ է պարունակում. «այն մեկնաբանությունը, որ նա տվել էր վեպին», շարահյուսական կառույց, որ մեկ անգամ ևս կարելի է փոխել՝ առանց իմաստային փոխզիջումների:

Փոխարենը՝ իմաստակիր է, օրինակ, հենց առաջին նախադասության պրոնոմինալ (կրավորական) բայական կառույցը. «Je commencerai d’abord par une question que vous pouvez légitimement vous poser: pourquoi Camus et Robbe-Grillet ?»: «Նախ կսկսեմ մի հարցով, որ իրավացիորեն կարող եք ուղղել ինքերդ ձեզ. ինչու՞ Կամյու և Ռոբ-Գրիլյե»: Տեքստի վրա լսարանային աշխատանքի ժամանակ թարգմանիչ ուսանողների առաջարկներից մեկն էր՝ «մի հարցով, որ իրավացիորեն կարող եք **տալ**» պարզեցված տարբերակը: Բայց արդյո՞ք սա միայն պարզեցում է, թե՞ իմաստային նրբերանգի կորուստ: Վերը նշեցի, որ տեքստերը նախապես գրվել են գիտական ելույթի նպատակով: «Ձեզ»-ը, այսպիսով, ունկնդիրն է, որ այստեղ դարձել է

<sup>40</sup> Միշել Ժարտի, «Կամյու և Ռոբ-Գրիլյե»

ընթերցող: Ունկնդրի (կամ ընթերցողի) **ինքն իրեն ուղղվող** հարցը ենթադրում է ունկնդրման որոշակի՝ նախապատրաստական փուլը: Հանդիպելով անսովոր վերնագրին՝ ունկնդիրը վարանում է, ինքն իրեն հարց տալիս: Եվ դա դեռ այն լիիրավ հարցադրումը չէ, որ նա պատրաստ է բարձրաձայնել: Ընդառաջ գնալով չհնչած հարցին՝ բանախոսը (կամ հեղինակը) հաստատում է վերջինիս «իրավացիությունը»:

Ակնհայտ է, որ մի շարք իմաստային, ոճական և հաղորդակցական նրբերանգներ են խաղարկվում այս նախադասության մեջ, որոնք էական են: Ոճական առումով՝ այս բանաձևը դառնում է ողջ ելույթի երաժշտական բանալին՝ նախանշելով խոսքի նրբակիրթ և գուսպ ոճը: Հաստատվում է նաև ունկնդրի հետ հոգեբանական դաշինքը, այս դեպքում՝ անուղղակի և հարգալից մի քաղաքավարություն, որն անմիջապես որոշակի հեռավորություն է սահմանում՝ ավելի շուտ նրբանկատ, քան զգուշավոր. խոսքն ուղղագիծ հաղորդակցական համակարգի մասին չէ, որովհետև ունկնդիրը (կամ ընթերցողը) իր հարցն ուղղում է ինքն իրեն՝ ուղղակիորեն բանախոսին հղելու փոխարեն: Բայցնայնպես ունկնդրի ներքին հարցադրումները, կասկածը ավելի քան էական են բանախոսի համար, և դա ասվում է նրբորեն: Բոլոր այս առումներով թարգմանչի համար ցավալի կլինեք պրոնոմինալ կառույցի կորուստը:

Ցավոք, միշտ չէ, որ հաջողվում է խուսափել կորուստներից, երբ իրար են բախվում գիտական տեքստի ընթեռնելիության և նրա առանձնահատկությունների պահպանման անհրաժեշտությունները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Berman A.**, *L'épreuve de l'étranger*, Gallimard, 1984.
2. **Lacoue-Labarthe Ph.**, *Poésie comme expérience*, Christian Bourgeois, 1987.
3. **Lacoue-Labarthe Ph.**, *Histoire et Traduction, Le Traduire-Poésie*, Presses Universitaires de Strasbourg, 1990.
4. **Lacoue-Labarthe Ph.** et Jean-Luc Nancy, *L'absolu littéraire*, Le Seuil, 1978.
5. **Yves Bonnefoy**, *La communauté des traducteurs*, Presses Universitaires de Strasbourg, 2000.

6. **Bonnefoy Y.**, *L'autre langue à portée de voix*, Le Seuil, 2013.
7. **Proust M.**, *De la lecture*, Actes Sud, 1988.
8. **Proust M.**, *Contre Sainte-Beuve*, Gallimard, 1954.

**ШУШАНИК ТАМРАЗЯН – Трудности и вопросы при переводе научных текстов.** Если работа писателя заключается в поисках несказанного, „другого языка, о котором говорит Пруст, в чём суть перевода если не в нескончаемом языковтвении?

Перевод не только лингвистический, коммуникационный акт, это восприятие мира, в центре которого познание «Другого» (см. Антуан Берма).

Несмотря на разные типы переводов – художественный перевод, устный перевод, перевод технических, научных текстов – её суть остаётся одной и той же.

Эта статья изучает особенности перевода научных текстов. Конечно, при переводе научных текстов приоритет переводчика: передать точное и ясное содержание. Особенности стиля, языка, синтаксиса кажутся второстепенными.

Ни обманчиво ли это? На конкретных примерах (Michel Jarrety, “Camus et Robbe-Grillet”, Guy Scarpetta, “Notes éparses sur un récit piégé”) статья показывает какие вопросы могут возникать при переводе научных текстов.

**CHOUCHANIK TAMRAZIAN – La traduction d’articles scientifiques; questions, difficultés.** Si le travail de l’écrivain est la recherche de la «langue étrangère» si convoitée par Proust, qu’est-ce que la traduction sinon une inlassable récréation du langage?

Plutôt qu’une activité linguistique, simple acte de communication, la traduction est une perception du monde et de la réalité, un rapport fondamental à l’autre, quels que soient son objet et sa nature spécifiques: traduction littéraire, interprétariat, traduction de textes spécialisés, etc.

La présente étude s’attache à quelques particularités de la traduction des textes théoriques, des articles plus précisément. Contrairement aux textes poétiques ou littéraires, la traduction d’articles théoriques vise en priorité la transmission d’un contenu, aussi clair que fidèle à l’original. Les questions relatives à l’énonciation, sont-elles pourtant résolues? Secondaires, sont-elles inexistantes?

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏԵՔՍԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

***ԼԻՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան*

***ԳԱՅԱՆԵ ՇՄԱՎՈՆՅԱՆ***

*Հայաստանի պետական ճարտարագիտական  
համալսարան*

Ներկայումս գիտական մտքի և տեխնիկայի սրընթաց զարգացման պայմաններում աճում է թարգմանության՝ որպես տեղեկատվության տարածման կարևորագույն միջոցներից մեկի դերն ու նշանակությունը: Տվյալ ուսումնասիրության շրջանակներում քննության են ենթարկվում գիտական և տեխնիկական տեքստերի թարգմանության առանձնահատկությունները, թարգմանության ժամանակ (մայրենի լեզվից օտար լեզու և հակառակը) առաջացող որոշ խնդիրներ, ինչպես և դրանց առաջացմանը նպաստող գործոնները:

Յուրաքանչյուր կենդանի լեզու գտնվում է մշտապես փոփոխման և զարգացման գործընթացում: Այդ գործընթացն ավելի ակնհայտ է գիտության և տեխնիկայի բնագավառում, ուր օրեցօր նոր բառեր (մեծ մասամբ եզրույթներ) ու արտահայտություններ են գործածության մեջ մտնում՝ անվանելու գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում ի հայտ եկած նոր երևույթները (*նանոլար* – nanowire, *մոլեկուլային փնջային էպիտաքսիա* – molecular beam epitaxy, *տիեզերական դեղորայք* – space medicine, *տեսածրման մանրադիտակ* – scanning microscope, *էկոաղետ* – ecocatastrophe), ինչպես և միջգիտակարգային գիտաճյուղերը (*կենսաբժշկական ճարտարագիտություն* – biomedical engineering, *մանկալեզվաբանություն* – pedolinguistics, *հանրալեզվաբանություն* – sociolinguistics): Հայտնի է, որ թարգմանությունը ենթադրում է տեքստի վերարտադրում մի լեզվից մյուսը, որի հաջող իրականացման համար թարգմանչից պահանջվում է թարգմանության որոշ հիմնախնդիրների և սկզբունքների իմացություն, որը հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում գիտական և տեխնիկական տեքստեր թարգմանելիս (տվյալ դեպքում՝ անգլերենից հայերեն):

Երբեմն գիտական և տեխնիկական տեքստերի թարգմանության ժամանակ թարգմանիչները առաջնորդվում են գրական և գեղարվեստական թարգմանության կանոններով (օրինակ՝ օգտագործում են բազմաթիվ հոմանիշներ, հարուստ բառապաշար)՝ թարգմանվածքը վերածելով գրական տեքստի: Մինչդեռ թարգմանվածքը պետք է ճշգրիտ, հասկանալի և հակիրճ արտահայտի բնագիր գիտական և տեխնիկական տեքստի միտքը: Ուստի շատ կարևոր է, որ նման տեքստերի թարգմանությունը լինի ճշգրիտ, բայց միաժամանակ հնարավորինս պարզ ու հասկանալի, հատկապես երբ դրանք օգտագործվում են ուսուցողական կամ ցուցադրական (իլյուստրատիվ) նպատակներով:

Գիտատեխնիկական թարգմանության պահանջները հասկանալու և դրանք կիրառելու համար թարգմանիչը պետք է կարողանա հաղթահարել լեզվական և տեխնիկական որոշ խնդիրներ, ինչպիսիք են թարգմանվող *նյութի ծավալը* և *բարդության աստիճանը*:

Ամեն տարի տարբեր երկրներում տպագրվում են բազմաթիվ տեխնիկական ուղեցույցեր, գիտական հոդվածներ, ամսագրեր, գյուտեր և հայտնագործություններ, որոնց շնորհիվ գիտնականները իրազեկ են դառնում աշխարհում գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում իրականացվող աշխատանքներին, նորություններին, ինչպես նաև կատարելագործում են իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

Գիտատեխնիկական թարգմանվածքը ամբողջական փաստաթուղթ է և պարունակում է բարդ գծագրեր ու սխեմաներ, որոնք հասկանալի չեն այդ բնագավառից հեռու մարդկանց: Հարկ է, որ դրանք թարգմանվեն այնպես, որ հասկանալի լինեն հասարակության լայն շրջանակների համար: Նույնը վերաբերում է կենցաղում օգտագործվող տեխնիկական սարքերի և սարքավորումների տեխնիկական ցուցումներին, տեխնիկական ուղեցույցերին և այլն: Հետևաբար, շատ կարևոր է գիտատեխնիկական թարգմանության այնպիսի հիմնական սկզբունքների իմացությունը, ինչպիսիք են լեզվի *ինտեգրումն* ու *սյարգեցումը*: Լեզվի ինտեգրման մեթոդներն են՝ պատմական ակնարկը, պարբերական վերլուծությունը և հիմնական տվյալների ուսումնասիրությունը:

Երբեմն գիտական և տեխնիկական տեքստեր թարգմանելիս առաջանում են դժվարություններ՝ կապված երևույթների և եզրույթնե-

րի թարգմանության հետ: Նման դեպքերում խորհուրդ է տրվում վերլուծել ըստ բաղադրիչների (ինչպես բառերի, այնպես էլ արտահայտությունների մակարդակում)՝ իհարկե հաշվի առնելով համատեքստը: Օրինակ՝ հետևյալ գուտ տեխնիկական և գիտական եզրույթները կարելի է թարգմանել այսպես.

*grafold* – գրածալ (գրաֆինի ծալում),

*failure to danger* – վտանգավոր վիճակ առաջացնող խափանում,

*enabling control device* – կառավարման գուրընթաց սարք,

*hold-to-run control device* – ավտոմատ վերադարձով կառավարման սարք,

*metal-organic vapour chemical deposition* – մետաղ-օրգանական գոլորշու քիմիական նստեցում:

Գիտատեխնիկական տեքստերում լայն տարածում ունեն նաև փոխառությունները: Մա արդյունք է այն հանգամանքի, որ հաճախ թարգմանիչները, չկարողանալով թարգմանվող լեզվում գտնել այս կամ այն օտար բառի կամ եզրույթի համարժեքը, օգտագործում են օտար բառը, որի գերօգտագործումը կարող է հանգեցնել լեզվում տվյալ բառի ինտեգրմանը, և այն կարող է դառնալ պատրաստի օգտագործվող եզրույթ, օրինակ՝ *սկայայ* – *skype*, *ինտերնետ* – *internet*, *ռադար* – *radar*, *գրաֆին* – *graphene* բառերը: Եթե նույնիսկ թարգմանիչները դեմ են այդ «ժամանակակից» բառերի օգտագործմանը, նրանք հաճախ ստիպված են ընդունել տարածված օտար արտահայտությունները: Ինչպես Բրունո Միգլիորինին է նշել՝ «Օտար բառերը տարածվել են տեխնիկական լեզվում, և ամեն անգամ փոխառված բառերը փորձում են իրենց ճանապարհը հարթելով՝ օգտագործվել հմուտ թարգմանիչների կողմից» (Migliorini, 1983:102): Փոխառված բառերի օգտագործումը հանգեցնում է տերմինաբանական և ռճական երկրնտրանքի և այնուհետև դառնում տարածված կամ ընդունված ձև տվյալ լեզվում: Օրինակ՝ *on* (միացնել) և *off* (անջատել) բառերը, շնորհիվ իրենց հակիրճության, լայնորեն կիրառվում են մեր կենցաղում, հատկապես երբ խոսքը վերաբերում է սարքերին և սարքավորումներին, քանի որ դրանք ավելի տպավորիչ են, քան “turn on/off” կամ “switch on/off” բառերը, որոնք բառիս ամենալայն իմաստով նշանակում են “operating” (գործող) և “out of operating” (չգործող):

Պետք է նշել, որ գիտատեխնիկական թարգմանության գործընթացում թարգմանչի մասնագիտական գիտելիքները և նյութի իմացությունը ևս չափազանց կարևոր են: Որպես կանոն, թարգմանիչը պետք է հասկանա ինչպես բնագրի տեքստի բովանդակությունը, այնպես էլ բնագրի լեզուն: Ինչպես դոկտոր Ռոջեր Բելն է նշել. «Մեծ նշանակություն ունեն թարգմանչի ունակությունը, հմտությունը և պատասխանատվությունը» (Bell, 1993:57):

Թարգմանիչը, տեքստի նյութը ըմբռնելուց բացի, պետք է տիրապետի նաև այն բոլոր հմտություններին, որոնք անհրաժեշտ են թարգմանչին: Ուստի, թարգմանիչը պետք է.

- ունենա գերազանց լեզվական և թարգմանչական ունակություններ,
- կարողանա տեքստը հասկանալի և պարզ լեզվով վերարտադրել,
- լինի բազմակողմանի և խորը զարգացած անհատականություն,
- լեզվի իմացությանը զուգընթաց ունենա լեզվական հոտառություն:

Այսպիսով, գիտական և տեխնիկական թարգմանության հիմնախնդիրների և սկզբունքների իմացությունը մեծապես կօգնի թարգմանչին հնարավորինս խուսափել անճշտություններից և կատարել որակյալ թարգմանություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Bell R.**, *Translation, Translation Theory and Practice*. London, New York: Longman, 1993.
2. **Hrisonopulo K.**, *Essentials of Technical Translation*. English-Russian Practice Book. [http://www.academia.edu/3985575/Essentials\\_of\\_Technical\\_Translation](http://www.academia.edu/3985575/Essentials_of_Technical_Translation)
3. **Migliorini B.**, *Technical Translation*. London: CPH, 1983.
4. **Montgomery S.L.**, *Science in Translation: Movement of Knowledge through Cultures and Time*. Chicago: University of Chicago Press, 2000.
5. **Pinchuck I.**, *The Theory of Technical Translation*. London.,1997.



**ЛИЛИ КАРАПЕТЯН, ГАЯНЭ ШМАВОНЯН – О некоторых особенностях перевода научных и технических текстов.** Наряду с быстрым развитием науки и техники, возрастает также роль перевода как средства распространения информации. В данной статье авторы рассматривают особенности перевода научных и технических текстов, проблемы, возникающие в процессе перевода, факторы, вызывающие эти проблемы, а также причины, обуславливающие успех перевода.

**LILI KARAPETYAN, GAYANE SHMAVONYAN – On Some Peculiarities of the Translation of Scientific and Technical Texts.** With the rapid advancement of science and technology the role of translation, as one of the most important means of spreading information, increases. The present article dwells on the peculiarities of the translation of scientific and technical texts, problems arising in the process of translation of those texts, as well as the factors favoring them. The authors also suggest some principles determining the success of the translated text which will help the translator avoid inaccuracies.

**ԽՈՍՔԱՅԻՆ ՈՒ ՈՉ-ԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՁԵՎ**

**ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Գրավոր ու բանավոր թարգմանության հմտությունների ու տեխնիկաների մասին խոսելիս՝ հատկապես կարևորվում են խոսքային ու ոչ-խոսքային միջոցները միջմշակութային հաղորդակցման համատեքստում: Մշակույթն այն միջոցն է, որը խոչընդոտում կամ հեշտացնում է հաղորդակցման գործընթացը: Թարգմանությունը տարբեր լեզուների ու մշակույթների միջև ամուր կապ ստեղծող առանցքային օղակն է: Հաղորդակցման տարբեր ձևեր գոյություն ունեն՝ խոսքային և ոչ-խոսքային: Խոսքային հաղորդակցությունն ընկալվում է որպես երկու կամ ավել անձանց միջև երկխոսություն՝ մտքերի փոխանակման նպատակով: Այն բաղկացած է երկու ենթադասերից՝ միջանձնային ու հանրային խոսք: Ոչ-խոսքային հաղորդակցությունը տեղեկության փոխանակումն է մարմնի լեզվի միջոցով: Այն իրականացվում է դեմքի ու աչքերի արտահայտության, հայացքի, խորհրդանիշների ու նշանների միջոցով:

Անժխտելի է այն, որ ցանկացած հաղորդակցություն տեղի է ունենում երկու կամ ավել մարդկանց միջև, որոնք կամ նույն մշակույթի կրողներն են կամ էլ պատկանում են տարբեր մշակույթների: Հաճախ հաղորդակցական բազմաթիվ խնդիրներ են ծագում, երբ հաղորդակցությունը տեղի է ունենում տարբեր մշակույթների պատկանող մարդկանց միջև, քանզի արտահայտած յուրաքանչյուր միտք կարելի է յուրովի մեկնաբանել ըստ մշակույթի, ուստի այս դեպքում մեծանում է թյուրըմբռնման հավանականությունը: Ըստ Ռիչարդսի, միջմշակութային հաղորդակցությունը լեզվաբանության ուսումնասիրության մի ճյուղ է, որն առնչվում է այն բանին, թե ինչպես են տարբեր մշակույթների պատկանող մարդիկ հաղորդակցվում, և որոնք են հիմնական հաղորդակցական նմանություններն ու տարբերությունները մշակույթից մշակույթ:

Տեղին է նշել, որ մշակույթը գաղափարներից, ավանդույթներից, մարդկային վարքագծից ու շատ այլ տարրերից բաղկացած մի բարդ համակարգ է: Հետաքրքրական է այն, որ նույնիսկ այն մարդիկ, ովքեր ապրում են միևնույն երկրում, ունեն մշակութային շատ նմանություններ ու միևնույն ժամանակ բազում տարբերություններ: Ասածի վառ օրինակ կարող են ծառայել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են դասակարգային (“class”), բարձր ու ցածր մշակույթները: Միևնույն երկրի մշակույթը փոխվում է ժամանակի ընթացքում՝ իր մեջ ներառելով մշակույթի ժամանակակից միտումները: Ուստի, երբ տարբեր մշակույթների պատկանող մարդիկ հաղորդակցվում են, նրանց անհրաժեշտ է զինված լինել ընդհանուր լեզվով (common language)՝ իրար առավելագույնս ճիշտ հասկանալու համար:

Թարգմանությունը միջմշակութային հաղորդակցման ձևերից է: Այս գործընթացը նման է մեքենայի, որի դեկին լավ վարորդ է անհրաժեշտ: Այս պարագայում թարգմանիչը հանդիսանում է թարգմանության գործընթացի գլխավոր դերակատարը, ով ոչ միայն լավատեղյակ պիտի լինի թարգմանվող լեզվի բնորոշ հատկանիշներին, այլև՝ տվյալ լեզվի մշակույթին: Օրվա ընթացքում ստացած ու ուղարկած հաղորդագրությունների մեծ մասը ոչ-խոսքային են: Օրինակ դեմքի արտահայտության միջոցով ներկայացվում է հաղորդակցվողների վերաբերմունքը միմյանց նկատմամբ: Գիտնականները բացահայտել են, որ դեմքի որոշ մասեր ավելի լավ են արտահայտում մարդու հույզերը, քան խոսքերը: Խոսքային միջոցներն ապահովում են տեղեկատվության 7%, ձայնայինը՝ 38%, դեմքի արտահայտությունները՝ 55%: Դրանք շարունակաբար փոփոխվում են հաղորդակցման ժամանակ: Տրամաբանական է, որ վերը նշված արտահայտչամիջոցները կարող են նույնը լինել տարբեր մշակույթներում: Ժեստերն էլ ունեն իրենց կարևոր դերը հաղորդակցման մեջ: Դրանցից առավել կարևոր են ձեռքերի շարժումները, որոնք կարող են արտահայտել կոնկրետ իմաստ (զգացմունքներ կամ մտադրություն): Կան, սակայն, ժեստեր, որոնք ըմբռնելի են համամարդկայնորեն: Օրինակ՝ վեր պարզած բռունցքը, որը պայքարի խորհրդանիշն է: Թարգմանությունը ոչ միայն լեզվաբանական, այլ նաև մշակութային գործընթաց է, որը միջմշակութային հաղորդակցման գործառույթ ունի: Այն ներառում է և՛ լեզուն, և՛ մշակույթը, քանզի այս երկու բաղադրիչներն անքակտելի են: Թարգմանիչներն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնեն թիրախային լեզվի մշակույթի տե-

սակներին ու պայմանականացման (conventionalization) աստիճանին տեղեկություն մի լեզվից մյուսը թարգմանելու համար: Թարգմանության գործընթացի հիմնական բնութագրերից մեկն այսպես կոչված «կրկնակի կապակցված իրավիճակն է» (double-bind situation), երբ թարգմանիչը պետք է կապի հիմնական տեքստը տվյալ մշակութային համատեքստի, ասել է թե՛ թիրախային լեզվի հաղորդակցամշակութային պայմանների հետ (House, 2009): Հաուսը կարծում է, որ իրավիճակային համատեքստն ուղղակիորեն առնչվում է այն բանին, թե ում ու ինչի համար է տվյալ տեղեկությունը նախատեսված: Այս հարցերն են կանխորոշում, թե ինչպես պետք է տվյալ տեքստը կամ տեղեկությունը թարգմանվի: Իրավիճակային համատեքստն արտացոլվում է ավելի մեծ շրջանակ ունեցող մշակութային աշխարհում: Այն թարգմանիչը, ում հաջողվում է ճիշտ հարցադրումներ կատարել տվյալ տեքստի կամ տեղեկության վերաբերյալ, այդպիսով հաղթահարում է միջմշակութային հաղորդակցության ու թարգմանության կարևորագույն խոչընդոտը: Թարգմանությունը մի տեղեկություն մյուսով փոխարինելու հմտությունն է, ուստի կարևոր է ճիշտ թարգմանել ամբողջական տեքստը՝ առանձին բառերի ու նախադասությունների փոխարեն: Հաղորդակցական տեղեկությունը ներառում է իր մշակութային բնորոշ հատկանիշները: Թարգմանիչը պետք է տեղյակ լինի թիրախ լեզվի մշակութային: Նա նաև պետք է իմանա հաղորդակցման նպատակը, ունկնդրողներին՝ ճիշտ ու ժամանակին որոշումներ կայացնելու համար, որպեսզի թարգմանությունը միջմշակութային հաղորդակցման տեսանկյունից արդյունավետ լինի: Հարկ է նշել, որ լեզուների տարբերությունների պատճառով գոյություն չունի ճշգրիտ թարգմանություն երկու լեզուների միջև, այլ կան մոտարկումներ: Որքան շատ են երկու լեզուների միջև համակարգային ու մշակութային նմանությունները, այնքան ավելի մեծ է թարգմանության արդյունավետությունը: Թարգմանության մեջ մշակությունը լրջությամբ դիտարկելու պրակտիկան երկար պատմություն ունի: «Տրանսստեղծում» (trans-creation) եզրույթը ստեղծվել է վերը նշված պրակտիկան սահմանելու նպատակով: Այն բնավ չի նշանակում զուտ բառերի ուղղակի թարգմանություն, այլ՝ տվյալ նյութի հարմարեցումը միջմշակութային հաղորդակցության համար: Մշակույթի անմիջական կիրառումը թարգմանության ընթացքում կարող է տարբեր ձևեր ստանալ՝ բառային բովանդակությունից ու շարահյուսությունից մինչև գաղափարախոսություններ ու կենսակերպեր, ըստ մշակույթ-

ների: Թարգմանիչը պետք է լրջորեն հաշվի առնի որոշ մշակութային հայեցակետերի կարևորությունը ու թե ինչպես պետք է դրանք թարգմանվեն թիրախ լեզվում: Նյումարքը սահմանում է մշակույթը որպես «կենսակերպ ու դրա դրսևորումները, որոնք բնորոշ են այն ազգին, որն օգտագործում է կոնկրետ լեզու սեփական մշակույթն արտահայտելու համար: Ուրեմն ցանկացած լեզվախումբ ունի իր սեփական մշակութային առանձնահատկությունները» (Newmark, 1988, 94): Նայդան գուգահեռաբար ընդգծում է թարգմանվող ու մայրենի լեզուների մշակույթների կարևորությունն ու եզրահանգում, որ մշակութային տարբերություններն առավել մեծ դժվարություններ են առաջացնում թարգմանության ժամանակ, քան լեզվայինը (Nida, 1964: 130): Բասնեթը նշում է, որ թարգմանությունը պետք է հաղորդի տվյալ տեղեկույթի բովանդակությունն այնպես, ինչպես այն իրականում հնչել է մայրենի լեզվում, ու մշակութային բաղադրիչի պահպանումը մի մշակույթից մյուսը փոխանցելու ժամանակ վտանգավոր է (Bessnett 1991; 23): Վերը նշված գաղափարից բխում է այն, որ թարգմանելու ժամանակ հարկ է հաշվի առնել ոչ միայն գաղափարների ճշգրիտ փոխանակումը, այլև՝ մշակույթի ընկալումը: Նայդան առաջարկում է երկու հակադիր մեթոդներ մշակութային բառերն ու հասկացությունները թարգմանելու համար: Նա նշում է, որ «տրանսֆերենցիան» գույն է հաղորդում թարգմանությանը, երբ պահպանվում են տվյալ մշակույթին բնորոշ հասկացություններ: Նա նաև առաջարկում է «բաղադրիչային վերլուծություն» (componential analysis)՝ բնութագրելով այն որպես ճշգրիտ թարգմանական գործընթաց, որը բացառում է մշակութային հայեցակետն ու ընդգծում զուտ հաղորդակցության կարևորությունը: (Nida, 1964: 129): Միննույն ժամանակ նա կարծում է, որ թարգմանիչը պետք է վերարտադրի տվյալ տեղեկույթն այնքան իմաստալից և՛ ձևի, և՛ բովանդակության առումով, ինչպիսին ի սկզբանե այն եղել է մայրենի լեզվում, ու ապահովի ճշգրիտ մոտարկում:

Օրինակ՝

- 1) *The failed project has become an albatross around Tom's neck. His boss rejects all her new proposals without even looking at them.*
- 2) *The Chairman said there would be a salary increase across the board.*
- 3) *The boss did not like any of the designs we had given him. It is back to square one.*


- 4) *Our CEO is planning on visiting one of those banana republics next month.*
- 5) *A few of the local bigwigs are expected to be present at the meeting.*

Ինչպես պարզ երևում է օրինակներից, նմանօրինակ նախադասություններ թարգմանելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել թիրախ լեզվի մշակույթին ու փորձել տեղեկույթը փոխանցել ոչ թե բառացի թարգմանության միջոցով, այլ՝ փորձել հասկանալ դրանց մշակութային հենքն ու նախապատմությունը ու գտնել մայրենի լեզվում դրանց համարժեք տարբերակները:

Թարգմանություններ կատարելիս առանձնահատուկ դժվարություններ են առաջացնում հարալեզվական հաղորդակցական միջոցները: Ինչպես նշվում է եվրոպական լեզվական քաղաքականության փաստաթղթերում «հարալեզվական միջոցները» ներառում են «մարմնի» լեզուն: «Մարմնի» կամ «շարժումների լեզուն» տարբերվում է խոսքով ուղեկցվող գործնական այլ քայլերից նրանով, որ բոլորի կողմից ընդունված նշանակություն ունի, ինչը, սակայն, կարող է զգալիորեն տարբերվել տարբեր մշակույթներում: Օրինակ՝ եվրոպական շատ երկրներում ընդունված է, ի նշան բողոքի, բռունցք թափահարել, իսկ ինչ վերաբերում է կեցվածքին, ապա աթոռին թրմփալով ընկնելը հուսահատություն է ցույց տալիս, իսկ առաջ նստելը՝ շահագրգռվածություն: Հպման օրինակ է համբույրը կամ ձեռքսեղմումը, հաղորդակցելիս միմյանց մոտիկ կամ հեռու կանգնելը (proxemics): Լեզուների իմացության/իրազեկության համակարգից օգտվողները պետք է յուրացնեն այն հնարները, որոնք անհրաժեշտ են հարալեզվական վարվելակերպի տարրերը հասկանալու ու դրանք համապատասխանաբար խոսքի մեջ ճիշտ օգտագործելու համար (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ, 2005:103):

2006-2010 թթ իրականացված «Խոսութային իրազեկության փուլային զարգացման առանձնահատկությունները մասնագիտական անզլերենի դասընթացում» ատենախոսության շրջանակում շոշափվել է նաև հարալեզվական տարրերի անփոխարինելի դերը շփման ընթացքում: Գիտափորձի ընթացքում քննության է առնվել ուսանողների հարալեզվական տարրերը ճանաչելու ու դրանք ճիշտ վերարտադրելու հմտությունների մակարդակը: Գիտափորձի սկզբում, որին մասնակցում էին թվով 48 ուսանող, առանց բացատրության ցուցադրվել է ժեստեր ներկայացնող 47 նկար: Նկարները բաժանվել են ըստ բնորոշումների՝ հա-

լերին ու լեզվակիրներին բնորոշ: Արդյունքները ցույց տվեցին, որ առանց բացատրության հայալեզու ուսանողները կարողացան կռահել 47 նկարներում պատկերված ժեստերից 11-ը, անձանոթ ժեստերը տարբերակելու համար անցկացվեցին անզլերեն լեզվով քննարկումներ:



(Raymond C. Clark, Patrick R. Moran, Arthur A. Burrows, 2003: 266-269):

47-նկարներից 25-ը հիմնականում բնորոշ չէին հայերին: Գիտափորձի սկզբում լեզվակիրներին բնորոշ ժեստերը անզլերեն լեզվով կարողացան ներկայացնել ուսանողների 27 %-ը: Ժեստերի հետ կապված առաջադրանքները գիտափորձի շրջանակում հետևյալն էին. կռահել ժեստերը՝ նայելով նկարներին կամ դիտելով ցուցադրվող ֆիլմը, վերարտադրել ժեստերը՝ կարդալով նկարագրությունը, ներկայացնել ժեստերը նշված իրադրությունում, հասկանալ, բացատրել լսարանում ներկայացված ժեստերը, կռահել միջազգային նշանային այբուբենը, կիրառել նշաններն ու ժեստերը երկխոսությունների մեջ, բացատրել ցուցադրվող ֆիլմում տեղ գտած ժեստերը, դրանք հանպատրաստից կիրառել խոսքում:

Այսպիսով, պարզ է դառնում, որ թարգմանություններ կատարելիս՝ թարգմանիչը պետք է զինված լինի ոչ միայն լեզվական, այլ նաև արտալեզվական գիտելիքներով, որոնց թվում են հարալեզվական տարրերը՝ ոչ-խոսքային միջոցների դրսևորմամբ: Ե՛վ խոսքային, և՛ ոչ-խոսքային միջոցներն իրենց մեջ արտացոլում են մայրենի և թիրախ լեզուների մշակութային բաղադրիչները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bassnett S., *Translation Studies*. Routledge, London, 1991.
2. House J., *Translation*. New York: Oxford UP, 2009.
3. Newmark P., *A Textbook on Translation*. Prentice Hall, New York, 1988.
4. Nide E., *Principles for Correspondence*. In Venuti I (ed.). *The Translation Studies Reader*. Routledge, London, 1964.
5. Richards J. C., *Interchange 2 (3<sup>rd</sup> ed.)*. New York: Cambridge UP, 2005.

6. **Raymond C., Patrick M., Arthur B.,** *A Treasury of Cultural and Linguistic Information.* Pro Lingua Associates, Publishers, USA, 2005.
7. **Uperdran S.,** *Know Your English,* Universities Press, 2011.
8. *Հեղուների իմացության/իրազեկության համաեկրոպական համակարգ, ուսումնառություն, դասվանդում, գնահատում:* Ծրագրի ղեկավար՝ Ս. Չոլյան, Թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., խմբ.՝ Ս. Չոլյան, Մելանյա Աստավաճատրյան և ուրիշ., Եր., Նորք գրատուն, 2005:
9. **Մանուկյան Ա.,** *Խոսքային իրազեկության փուլային զարգացման առանձնահատկությունները մասնագիտական անզլերենի դասընթացում* (թեկն. առ.), Եր., 2010:

**АНИ МАНУКЯН – Перевод вербальных и не вербальных средств как межкультурная коммуникация.** Коммуникация всегда была главной необходимостью для человечества. Люди использовали разные типы коммуникации с давних времен. Язык – это главное средство для человеческой коммуникации. Когда язык проявляется в коммуникативном контексте, то он отражает культуру целевого языка, который выражается с помощью множество комплексных средств. Человек выражает свои мысли вербально или не вербально. Перевод является не только лингвистическим действием, но так же культурным. Процесс перевода в себя включает и культуру обоих языков. Язык и культура не отделимы. Лингвистические сегменты становятся доступными, когда они созвучны с культурой. Поэтому переводчик должен серьезно принять во внимание культуру обоих языков, а так же паралингвистические средства, чтобы осуществить адекватный перевод с точки зрения культуры.

**ANI MANUKYAN – The Translation of Verbal and Non-verbal Means as a Cross-cultural Communicative Act.** Communication has always served as an essential necessity for all societies. People have been using different means of communication since ancient times. Language is the main way to express human communication. When language is used in a communicative context it directly reflects the culture of the target language which is expressed in many complex ways. A human being expresses his/her ideas verbally (uses the speech organs) and non-verbally (body language, gestures, mimicry, and etc). Translation is not only a linguistic act, but also a cultural one. Translation embraces both language and culture of the source and the target languages. Language and culture are indispensable. Linguistic segments become comprehensible only when they are compared with culture. So, a translator/ interpreter should pay a specific attention to the culture of the target language. He/she should also take into serious consideration paralinguistic means to provide a culturally accurate translation.



## TRANSLATING CULTURES: THE CASE OF ENGLISH-PERSIAN TRANSLATION

*KARO KARAPETYAN  
HEIDAR NARGESY*

*Yerevan State University*

The aim of this article is to discuss the main cultural differences between Persian and English which might cause problems as well as to make, to show the effect of these variations in understanding each other's an attempt points of views.

It is inevitable to face some points of cultural differences while you translate from English in to Persian or vice versa. The lack of ability to maneuver among these differences will result in misunderstanding and the final product is not something that can be trusted as a pure copy of the original language in another format.

In order to understand the specificity of another culture, you have to know your own culture first. We are not normally aware of how specific our way of seeing and judging the world is, nor of the nonuniversal ways we express our feelings and attitudes, both verbally and nonverbally. If we want to behave in an adequate way in another cultural community, we have to compare the behaviour conventions of the foreign culture with those of our own. To do this, we have to pay attention to our intuitive behavior patterns with conscious knowledge of our own cultural specificity.

Many of the phrases or clauses translated from Persian into English and vice versa can become challenges of cultural ambiguity if they aren't clarified in a suitable way. It happens that very often we aren't acquainted with this or that side of a cultural aspect of a discussion or even both sides. However, we still try to continue the translation regardless of the comprehension or miscomprehension of the text by the readers. The lack of the proper knowledge of the source or the target language culture causes misunderstanding of the original language context. Such problems might be due to the word definition translation differences, contextual behaviors and sometimes phrases and clauses used in the slang forms or proverbs in both languages.

The most important part of the problem is related to the phraseology and lexical choices in the mentioned groups of word selections which in two different cultures have different interpretations. Other syntactic, phonological and semantic aspects of translation variations aren't the matters of discussion in this article but need special consideration and interpretation in connection with the linguistic and cultural meanings of words, set expressions, phraseological units, etc.

The correlation between language and culture or a culture-specific way of thinking has been first observed by Herder and Wilhelm von Humboldt in the late 18th and early 19th centuries. It was later reformulated in the Sapir-Whorf hypothesis, which supports the idea that "different languages lead their speakers to different conceptualisations of the same extra-linguistic reality, which seems to be the most evident in the way that reality is segmented by the **lexicon**." (Skandera 2007:V) It is generally accepted by linguists that a language, and especially its lexicon, influences its speakers' cultural patterns of thought and perception in various ways, for example through a culture-specific and culture-bound segmentation of the extra-linguistic reality, the frequency of occurrence of particular lexical items, or the existence of key words or key word combinations revealing the core cultural values.

Nida (2001) cited in Alousque (2009) says that much of the vocabulary of a person has a cultural referent and is thus specific to a speech community. The meaning of culturally marked words is often difficult to grasp without some cultural knowledge and poses translation problems, particularly when the words are associated with cultural domains. Wierzbicka (2008: 7) points out that "the meanings of words provide the best evidence for the reality of cultures as ways of speaking, thinking and living." The translation of culturally marked words is a problematic issue that has been explored by a number of authors. A range of translation procedures have been suggested to transfer the cultural information encoded by the source language vocabulary to the target language vocabulary. It should be stressed that the meaning of culturally dependent words is difficult to transfer in another language, particularly when the words are linked to cultural domains (Nida 2001: 21), i.e. important sets within a culture. The most difficult aspects of the language for translation are its phraseology, social context differences, proverbs, specifically culture-bound notions and phenomena, etc.

Specialists in the field of translation studies stress the fact that difficulties are caused by a number of linguistic phenomena, including the different semantic range of the cultural words in two languages, the absence of the cultural concept in one of the languages, the loss of meaning and metaphorical meaning in particular, conveyed by many cultural words. All these cause great difficulties while translating from English into Persian and vice versa.

Let's consider the translation of a dialogue from English into Persian where these statements clearly show that translation is no longer seen simply as a natural process of interlingual transfer. It goes beyond the code-switching process and involves a negotiation between source and target cultures.

When meeting each other, greeting, having parties or different kinds of ceremonies, the behavioral reactions must be balanced in a way that the readers can easily relate them to their experiences.

Thus, translating the following typical dialogue into Persian might cause a feeling of carelessness, impoliteness or not being thoughtful toward the speaker:

(doorbell!)

*Dave opens the door and sees Tom at the door.*

Dave: Hi, Tom. How are you? What's up?

Tom: Good afternoon, Dave. I wonder if you've got some time. I need some advice on my project.

Dave: Oh! So sorry Tom. I need to go shopping, because I've got some guests tonight.

Tom: That's OK, may be some other time.

Someone who reads the translated version of this text might think how Dave could reject his friend's request, since he could have given him some minutes to check out his problem and then he could have gone shopping. The dialogue like this can be what an Iranian expects:

(doorbell)

*Dave opens the door and sees Tom at the door.*

Dave: Hi, Tom. How are you? What's up?

Tom: Good afternoon, Dave. I wonder if you've got some time. I need some advice on my project.

Dave: Oh! Sure. I should always have time for you. Come in!

And this is regardless of the fact that Dave may get into trouble, be late or get stuck in traffic and so on. This is not due to the matter that Tom might not understand his friend but due to the hospitable culture that Iranians have when something like that sometimes goes too far.

Since there are often hidden connotations behind the words, in many cultures the translation of proverbs isn't done literally. Many authors make an attempt to find equivalent phrases or clauses to convey the same meaning. However cultural exchanges sometimes cause some similarities in words, phrases or even clauses. Sometimes there is no equivalent in the target language culture and there is no way to give any kind of translation. Below, you can find some examples in English and their Persian versions, e.g.:

<b>English version</b>	<b>Persian version</b>
Do at Rome what the Romans do.	If you want not to be disgraced, get the same color of the public.
Likes like likes equals	Pigeons fly with Pigeons, Geese with geese, the same race fly together.
You see nothing, you hear nothing.	You saw the camel, you didn't see the camel.
Jack of all trades and master of none.	Having all jobs and having none.
Actions speak louder than words.	Two hundred words aren't like an action.
A pot of milk is ruined by a drop of poison.	A sick goat makes all the cattle sick.
All things come to him who waits.	If you are patient you'll make halva out of unripe grapes.
A word spoken is past recalling.	A shot arrow never comes back to the bow.
You can't teach an old dog new tricks.	A nail can't go into the Stone.
To each his own.	Jesus has his own religion and Moses, his.
The early bird gets the worm.	Get up early and get what you want.

On the other hand, the interdependence of cultures often creates similar phrases and situations resulting in proverbs with the same definitions and usages, e.g.:

No news is best (good) news.

Haste is from the Devil.

Something is better than nothing.

Let bygones be bygones.

There is truth in wine.

High places have their precipices.

Never put off till (until) tomorrow what you can do today.

The pot calls the kettle black.

A person is known by the company he keeps.

On the basis of this we can say that the difference in cultural knowledge may require an adjustment of the relationship between **explicit and implicit** information in the text, as well as the difference in culture-specific genre expectations may require an **adaptation** of the text's form to the target culture textual and stylistic conventions. Both are vividly expressed in Persian when we deal with the translation of texts from English into Persian.

All in all, the cultural aspect of translation requires familiarity with source and target language cultures, acquaintance with the lexicon, idioms, slang and proverbs in both languages, awareness to distinguish which might be more effective in its own place and enough tactfulness to combine all these together.

## REFERENCES

1. **Baker M.**, *In Other Words: A Coursebook on Translation*, London & New York: Routledge, 1992.
2. **Bassnett S.**, *Translation Studies*, London: Routledge, 1991.
3. **Bradenu L.**, *Piece of Cake or Hard Nut to Crack, Translating Culture-Bound Lexical Units*. The Alexandru Ioan Cuza University, Iasi, 2010.
4. **Chesterman, A.**, *A causal model for translation studies*. In: Maeve Olohan, ed. *Intercultural Faultlines. Research Models in Translation Studies 1: Textual and Cognitive Aspects*, Manchester: St. Jerome, 2000.

5. **Mauranen, A.**, *Strange Strings in Translated Language: A Study on Corpora*. In: Maeve Olohan, ed. *Intercultural Faultlines. Research Models in Translation Studies 1: Textual and Cognitive Aspects*, Manchester: St. Jerome, 2000.
6. **Newmark, P.**, *About Translation*, Clevedon: Multilingual Matters, 1991.
7. **Sabban, A.**, *Culture-boundness and problems of cross-cultural phraseology in Phraseology*, An International Handbook of Contemporary Research, Berlin, New York: Walter de Gruyter, 2007.
8. **Skandera, P.**, *Phraseology and Culture in English*. Berlin, New York: Mouton de Gruyter, 2007.
9. **Wierzbicka, A.**, *A conceptual basis for intercultural pragmatics and world-wide understanding, Developing Contrastive Pragmatics*, Berlin: Mouton de Gruyter: 2008.

**ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՉԵՂԱՐ ՆԱՐԳԵԶԻ – Մշակույթների թարգմանություն. անգլերեն տեքստերի պարսկերեն թարգմանության խնդիրներ.** Հոդվածում քննության են առնվում այն մշակույթային բնույթի տարբերությունները, որոնք դժվար ընկալելի են և խոչընդոտներ են ստեղծում անգլերենից պարսկերեն և պարսկերենից անգլերեն տեքստեր թարգմանելիս: Նշվում է, որ թարգմանության դժվարությունները պայմանավորված են երկու ժողովուրդների լեզուների վառ ընդգծված տարբերություններով: Միևնույն ժամանակ, տեքստի իմաստը առավելագույնս ճշգրտությամբ օտար լեզվով փոխանցելու համար անհրաժեշտ է մայրենի լեզվի խորը իմացություն: Այս առումով հոդվածում քննության են առնվում նշված լեզուների տարբերությունները տարբեր մակարդակներում՝ բառային, դարձվածաբանական, ինչպես նաև երկու լեզվական համակարգերի գործառության հասարակական մակարդակում:

**КАРО КАРАПЕТЯН, ГЕЙДАР НАРГЕЗИ – Перевод культур: проблемы перевода текстов с английского языка на персидский язык и наоборот.** В статье рассматриваются основные различия культурологического характера, которые представляют существенную трудность при понимании и переводе текстов с английского языка на персидский язык, а также с персидского на английский. Подчеркивается, что трудности перевода вызваны ярко выраженными различиями в языках двух народов. В то же время, для максимальной передачи смысла текста на иностранный язык, необходимо, прежде всего, глубокое знание родного языка. С этой точки зрения, в статье рассматриваются различия в двух языках на различных уровнях: лексическом, фразеологическом, а также социальном уровне функционирования двух языковых систем.

**ՄԻԶՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԴԵՐԸ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ-ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

***ՄՐԲՈՒՅԻ ԼՈՒԼՈՒԿՑԱՆ***

*Հայաստանի պետական մանկավարժական  
համալսարան*

Վերջին տասնամյակում օտար լեզուների ուսուցման ու ուսումնառության համար շատ կարևոր նշանակություն են ստացել ժողովուրդների միջև զարգացող միջմշակութային կապերը, հաղորդակցությունը և փոխներգործությունը:

Միջմշակութայնությունը որպես ժողովուրդների փոխըմբռնմանը, միջմշակութային արժեքների փոխհարստացմանը նպաստող գործոն, նշանակալից ազդեցություն ունի տվյալ երկրի լեզվի ճանաչողական գործառնություն, լեզվական և երկրագիտական գիտելիքների ձեռք բերման, խորացման և ամրապնդման համար:

Ժամանակակից կրթության նպատակն է սովորողներին զինել այնպիսի գիտելիքներով ու ունակություններով, որոնք կնպաստեն նրանց մասնագիտական առաջընթացին միջմշակութային և բազմամշակութային հասարակությունում: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ միջմշակութային ուսուցումը օտար լեզուների ուսուցման կարևոր և անբաժանելի բաղադրիչն է, քանի որ սովորողները հաղորդակցվում են տարբեր լեզուներով, ունեն տարբեր մշակույթներ, և այն նպաստում է սովորողին դուրս գալ մայրենի լեզվի և իր մշակույթի սահմաններից: Միջմշակութային կրթության կարևորագույն խնդիրներից է համարվում սովորողների մոտ հանդուրժողականության զարգացումն ու դաստիարակումը այլազանության և բազմազանության նկատմամբ, որն էլ կնպաստի համերաշխության և փոխադարձ ըմբռնման զարգացմանը:

Թարգմանությունը շատ ավելին է, քան տեքստերը մի լեզվից մեկ այլ լեզու թարգմանելը: Թարգմանությունները ցանկացած լեզվի և մշակույթի հարստացման բանալին են: Իսկ թարգմանության մշակութաբանական արժեքը կապված է միջմշակութային հաղորդակցության խնդիրների հետ:

Մշակույթի և լեզվի կապն արտահայտվում է ոչ միայն իմաստաբանության մեջ, այլև նրանում, թե որ մշակույթով է պայմանավորված մարդու հաղորդակցական պահվածքի ազգային առանձնահատկությունը: Միջմշակութային ուսուցման անհրաժեշտությունն էլ բխում է հենց այն հիմնական փաստից, որ տարբեր մշակույթներ հարաբերվում և հաղորդակցվում են միմյանց հետ, և կարևորվում է միջմշակութային ուսուցման նպատակը՝ միջմշակութային իրազեկության ձեռք բերումը:

- Միջմշակութային իրազեկությունը օտար լեզվի դասին ներկայանում է որպես կարևորագույն հասկացություն այլ ունակություններ կամ իրազեկություններ զարգացնելիս:
- Միջմշակութային իրազեկությունից խոսում են, եթե
  - ✓ տարբեր մշակույթների պատկանող մարդիկ շփվում, հաղորդակցվում են միմյանց հետ:
  - ✓ Միջմշակութային հաղորդակցության պատշաճ ընկալումն ու գնահատումը կարևոր գործոն է միջմշակութային դրական հարաբերություններ խթանելու և լեզվական հաղորդակցական ունակություններ զարգացնելու մեջ:
- Միջմշակութային ուսուցումը հաղորդակցական իրազեկության զարգացման միջոց է, եթե գոյություն ունի պատրաստակամություն՝ խորանալ մեկ այլ մշակույթի մեջ այնքան, որ հնարավորինս հեշտ լինի այն հասկանալ և տվյալ լեզվով հաղորդակցվել:

Եթե խոսենք միջմշակութային հաղորդակցում հասկացության մասին, ապա այն ներառում է «մշակույթ» և «հաղորդակցում» հասկացությունները: «Մշակույթ» տերմինը պատկանում է ամենաբազմիմաստների շարքին, և դա բացատրվում է նրանով, որ մշակույթն ինքնին չափազանց բարդ և բազմակողմանի երևույթ է, որն արտացոլում է մարդկային կեցության բոլոր կողմերը: Միջմշակութային հաղորդակցման ամմիջական հետազոտությունների սկիզբը դրվել է XXդ. երկրորդ կեսին, 1954թ. Է.Հոլլի և Դ.Տրագերի «Մշակույթը որպես հաղորդակցում» (Culture as Communication) գրքի լույս տեսնելուց հետո: Այստեղ առաջին անգամ օգտագործվել է «միջմշակութային հաղորդակցում» հասկացությունը, որը հեղինակների կարծիքով պետք է արտացոլեր տարբեր մշակույթների պատկանող մարդկանց



միջև հարաբերությունների առանձնահատկությունը: Միջմշակութային հաղորդակցման ձևավորումը որպես ուսումնական դիսցիպլին, տեղի է ունեցել Եվրոպայում 1970-1980-ական թվականներին: Միջմշակութային հաղորդակցման խնդիրների նկատմամբ լարված հետաքրքրությունը հարուցված էր եվրոպական ինտեգրացիայի ավելի և ավելի արագացող գործընթացներով, որոնք բերեցին Եվրամիության ստեղծմանը, սահմանների բացմանը:

Նոր գիտակարգի ներմուծումը եվրոպական համալսարաններում ուղեկցվել է տվյալ բնագավառում գիտական հետազոտությունների գործընթացով, որն իր ամենալայն զարգացումը ստացել է Գերմանիայում: Այստեղ, մասնավորապես Մյունխենի և Յենայի համալսարաններում, ԱՄՆ-ի օրինակով բացվել են միջմշակութային հաղորդակցման բաժիններ, ընդ որում դասավանդման և հետազոտության հիմնական ուղղությունները կապված էին խոսքային վարքի հետ: Սակայն, ինչպես ցույց տվեց պրակտիկան, օտար լեզվի նույնիսկ խոր իմացությունը բավարար չէ այդ լեզվի կրողի հետ արդյունավետ հաղորդակցման համար. այլ լեզվի յուրաքանչյուր բառ արտացոլում է մի այլ աշխարհ և այլ մշակույթ, «յուրաքանչյուր բառի հետևում կանգնած է ազգային գիտակցությամբ պայմանավորված պատկերացում աշխարհի մասին»: Այլևայլ ժողովուրդների յուրահատուկ մտածելակերպը և լեզվական առանձնահատկությունները նաև ստեղծագործական թարգմանությունների հնարավորություն են ընձեռում: Կան կիրառություններ, երբ անգամ դրանց թարգմանական ճշգրիտ համարժեքներն ամբողջ նախադասությանը սխալ բովանդակություն են հաղորդում: Օրինակ՝ **Die Lebensbedingungen auf dem Lande gleichen sich denen der Stadt an.** Գյուղի պայմանները հավասարվում են քաղաքի պայմաններին: Կամ՝ **Das tragende Prinzip** հիմնական սկզբունք: Այսպիսի օրինակները եզակի չեն, և թարգմանության ընթացքում անհրաժեշտ է մշտապես հարազատ մնալ բնագրին: Թարգմանիչը կատարելապես պետք է տիրապետի թարգմանության գործընթացում առկա երկու լեզուների և՛ գրական, և՛ խոսակցական բառապաշարին, հաշվի առնի այդ լեզուներին բնորոշ սահմանափակումները, քարացած արտահայտությունները, ասույթները, ասացվածքները, դարձվածքները և բարբառային տարբերակները: Այսպես, եթե *aufser Acht lassen* առանձին բառերը թարգմանենք բառացիորեն, դուրս կգա՝ **բացի ուշադրություն թողնել**. Ճիշտ թարգ-

մանությունն է՝ **ուշադրություն չդարձնել, աչքաթող անել**: Մեկ այլ օրինակ. Ende gut, alles gut – եթե վերջը լավ է, ամեն ինչ լավ է (բառացի թարգմանությունը պարզապես բառերի շարք է՝ ավարտ լավ, ամեն ինչ լավ):

Հաղորդակցականության սկզբունքից ելնելով՝ օտար լեզուների ուսումնասիրությունը պետք է նպաստի այդ լեզվով մտքեր փոխանակելուն, խոսքային բոլոր տեսակների՝ գրելու, կարդալու, ունկնդրելու և խոսելու կարողությունները զարգացնելուն: Այդ պատճառով օտար լեզվի ուսուցումը պետք է այնպես կազմակերպել, որպեսզի ուշադրությունը կենտրոնանա ոչ միայն սովորողների լեզվական կարողությունների, այլ նաև մտավոր և ստեղծագործական զարգացման ուղիների վրա: Օտար լեզու սովորողը պետք է իրագեկ լինի նպատակային երկրի մշակույթին, որը միաժամանակ կօգնի բացահայտել իր երկրի մշակութային տարրերը: Օտար լեզուների ուսուցման, հատկապես բանավոր հաղորդակցման կարողությունների զարգացման համար կարևորվում են ակտիվ հաղորդակցություն ենթադրող և ապահովող փոխներգործուն մեթոդները՝ հաշվի առնելով փոխներգործուն մեթոդի սկզբունքները.

- փոխազդեցությունը, փոխուսուցումը
- սովորողի ակտիվությունը
- համագործակցությունը
- ինքնաարտահայտման խրախուսումը
- հանդուրժողականությունը
- ուսուցումը որպես ճանաչողական գործընթաց որևէ սոցիալական համատեքստում և այլն:

Ուսուցման ընթացքում կարևորվում է սովորողի ընդունակության, հետաքրքրության գործոնը: Օտար լեզուների ուսուցման և ուսումնառության ընթացքում տվյալ լեզվակիր ժողովրդի մշակույթին ծանոթանալու համար գերակա են դառնում հանրամշակութային և միջմշակութային իրագեկությունների ձևավորման անհրաժեշտությունը: Օտար լեզու ուսումնասիրելիս սովորողները գիտելիքներ են ձեռք բերում տվյալ լեզվի, այդ լեզվով խոսող ժողովրդի ու նրանց երկրի մասին, բացահայտում և ըմբռնում այն առանձնահատկությունները, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից: Այս պարագայում կարևոր է միջմշակութային փոխըմբռնման զարգացումը,

տվյալ ժողովրդի մշակույթի ճիշտ ընկալման կարողությունների ձևավորումը: Քանի որ լեզուն տվյալ ազգի մշակույթի կրողն է, ուստի այն բացահայտում է տվյալ երկրի մտածելակերպը, մշակույթը, բարքերն ու սովորությունները: Օրինակ, ֆրանսիացիներին բնորոշ է սիրալիրությունը, քաղաքավարի վերաբերմունքը, հարգալիությունը, լավ վարվեցողությունը, խնայողությունը, ինչպես նաև անհոգությունը: Այս առիթով ֆրանսիացի հրապարակախոս և սոցիոլոգ Է.Թոդը նշում է. «Ֆրանսիացիները ներկայանում են որպես թեթևամիտ, անհոգ, զվարճասեր, սակայն իրականում նրանք մտահոգ, նյարդային, հեշտ վիրավորվող և աշխատասեր են»:

Նման տպավորություններ ստանում ենք, օրինակ, ասացվածքներից և առածներից: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հաղորդակցական իրազեկության զարգացման կարևորագույն բաղադրիչներից են նաև ասացվածքները, որոնք կարող են նպաստել ոչ միայն լեզվական երևույթները յուրացնելուն, այլ նաև՝ ազգային մտածելակերպը բացահայտելուն: Ասացվածքները դիտվում են որպես ազային մշակույթի հարստություն, որոնք պետք է մատուցվեն օտար լեզվի դասընթացում և դաստիարակության գործընթացում՝ լեզվական ինչպես նաև ազգային առանձնահատկությունները ըմբռնելու և հասկանալ կարողանալու համար: Այսինքն, դրանք կարելի է անվանել լեզվի հարստացման միջոց, որոնք լեզուն «համեմուն» և «կենդանի» են դարձնում և հաղորդակցական իրազեկության զարգացման անքակտելի մասն են կազմում:

Մարդկանց կենսագործունեությունը և հարաբերությունները որոշվում են այս կամ այն մշակույթում գոյություն ունեցող նորմերով, որոնք կանոնավորում են մարդկային մտածողության և վարքի լայն շրջանները և մեծ ազդեցություն են ունենում ընկալման բնույթի, գնահատականների և միջանձնային հարաբերությունների վրա:

Այս համատեքստում չպետք է տարանջատել լեզվի ուսումնասիրությունը մշակութային գիտելիքներից և հաղորդակցական կարողություններից, այլ դրանք պետք է միավորել հաղորդակցական ավելի լայն նպատակներ իրականացնելու համար: Նման խնդիրները լուծելու համար շատ կարևոր է ուսումնական տեքստերի ճիշտ ընտրությունը, որոնք կնպաստեն հաղորդակցական և միջմշակութային կարողությունների զարգացմանը: Այդպիսի տեքստերը պետք է հետապնդեն հետևյալ խնդիրների լուծումը.

- խորհել սեփական մշակութային արժեքների մասին, գտնել տարբերությունները և նմանությունները;
- մշակել գններու, հետազոտելու, մեկնաբանելու և քննադատական մտքեր արտահայտելու կարողություններ;
- իրականացնել տեքստի շուրջ այնպիսի աշխատանքներ, որոնք կնպաստեն լեզվի ուսումնառությանը մշակույթի միջոցով:

Անփոփելով թեման, օտար լեզուների՝ որպես հաղորդակցման միջոցի ուսումնասիրության, հիմնական խնդիրն այն է, որ լեզուները պետք է ուսումնասիրել այդ լեզուներով խոսող ժողովուրդների աշխարհի և մշակույթի հետ անխզելի միասնության մեջ:

Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում մշակութային տարբերությունները: Թարգմանիչը պարտավոր է խորապես ծանոթ լինել այն լեզվի մշակույթին, որից կատարվում է թարգմանությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Hans-Jürgen K.**, *Interkulturelles Lernen und interkulturelle Kommunikation*. In: Bausch, Karl-Richard / Christ, Herbert / Krumm, Hans-Jürgen (Hrsg.): *Handbuch Fremdsprachenunterricht*. Tübingen: Francke, S. 156-161, 1995:
2. **Lothar B.**, *Zielsetzungen interkulturellen Fremdsprachenunterricht*. In: 1999:
3. **Lothar B.**, *Delanoy, Werner (Hrsg.): Interkultureller Fremdsprachenunterricht*.
4. *Tübingen: Narr*, S. 85-120.
5. **Тер-Минасова С.Г.**, *Язык и межкультурная коммуникация*. М., 2008.
6. **Онхас С.Л.**, *Французы: национальный характер, символы, язык*. Иностран. языки в школе. 1992.
7. **Շամսե Ն.Լ.**, *Միջմշակութային հաղորդակցման այժմեական խնդիրները*, Վոլգոգրադ, 1999:

**СРБУИ ЛУЛУКЯН – Роль перевода межкультурной коммуникации в семантически-познавательном процессе.** Литературный перевод значит больше, чем подстрочный перевод текста с одного языка на другой. Перевод является ключом обогащения для любого языка и культуры. А культурная ценность перевода напрямую связана с задачами межкультурного общения.

В статье рассматривается роль перевода как одного из основных средств в межкультурном семантически – познавательном процессе. В этом случае важно развитие межкультурного взаимопонимания, формирование правильного понимания культуры данного народа. В этом контексте не должно отделяться изучение языка от знаний культуры и коммуникационных возможностей, а они должны быть объединены с целью реализации более широкого общения.

**SRBUHI LULUKYAN – The Role of Intercultural Communication in Semantic Cognitive Process of Translation.** Translation is more than just translation of texts from one language into another. Translation is a key to extension of any language and culture. The cultural value of translation is closely connected to the issues of intercultural communication.

The article discusses the role of intercultural competence in the process of semantic-cognitive translation.

Focus on aspects of culture encourages intercultural comparison which leads to thorough understanding of one another's culture. Moreover, cultural awareness reinforces not only language competence but also develops communicative skills.

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
«ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ» ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ  
ԳՐՔԵՐԻ ՇԱՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ<sup>41</sup>**

*ՆԱՐԵ ԶԱԲԱՂՅԱՆ*

*Երևաի պետական համալսարան*

Ցանկացած գեղարվեստական գործ թարգմանելը իրական մարտահրավեր է յուրաքանչյուր թարգմանչի համար, հատկապես երբ թարգմանությունը կատարվում է երեխաների համար: Այս առումով շատ ավելի դժվար է, երբ գործ ունենք երեխաների համար նախատեսված գիտահանրամատչելի տեքստերի հետ:

Գիտահանրամատչելի գրականությունը բնութագրվում է որպես գիտական ճշգրտության և ժամանցային նյութի միաձուլում: Նման տեքստերի նպատակը ընթերցողի մոտ բացատրվող թեմայի վերաբերյալ հետաքրքրություն առաջացնելն է, բայց ոչ թե պարզապես գիտականորեն նկարագրելով և մեկնաբանություններ տալով, այլ նաև նյութը հնարավորին չափ դյուրին և պարզ ներկայացնելով, ինչն էլ հետագայում կողորդի ընթերցողին էլ ավելի համակողմանի ուսումնասիրել կոնկրետ առարկան կամ թեման:

Առօրյա կյանքում հաճախ ենք հանդիպում «Հետաքրքրաշարժ քիմիա», «Հետաքրքրաշարժ ֆիզիկա» կամ «Հետաքրքրաշարժ աշխարհագրություն» վերնագրերով գրքերի և անմիջապես հասկանում ենք, որ գրքի բովանդակությունը չի կարող սահմանափակվել զուտ գիտական նյութով: Այս դեպքում նպատակը փոքր-ինչ փոխվում է, քանի որ առնչվում ենք երեխաների համար նախատեսված գիտահանրամատչելի գրականության հետ: Զարմանալի չի դառնում արդեն այն, որ տեքստում կարող են ի հայտ գալ ոչ սովորական միջոցներ, գեղարվեստական գրականությանը բնորոշ տարրեր, զվարճալի փաստեր, հանելուկներ, խնդիրներ, բանաստեղծություններ: Այս հատուկ միջոցների շնորհիվ էլ երեխաների մոտ մեծ ցանկություն է ա-

---

<sup>41</sup> Հետևյալ հոդվածը գրելու համար հիմք են ծառայել “The Cavern of Clues”, “The Mansion of Mazes”, “The Museum of Mysteries”, “The Planet of Puzzles” գրքերը, որոնց հայերեն թարգմանությունը կատարվել է հոդվածի հեղինակի կողմից:

ռաջանում է՝ ավելի խորանալ ու հիմնական նյութի, տվյալ դեպքում՝ մաթեմատիկայի մեջ:

Փորձենք համառոտ ներկայացնել այն խնդիրները, որոնք ծագել են «Մաթեմատիկական որոնումներ» գրքերի շարքը թարգմանելիս: Նման գրքերն ունեն թե՛ կրթական, թե՛ հետաքրքրական արժեք երեխաների համար:

Գրքի թարգմանության ժամանակ առաջ եկած խնդիրներն ու դժվարությունները ճիշտ կերպով հասկանալու համար պետք է պատկերացում կազմել գրքի կառուցվածքի մասին, քանի որ այս շարքի գրքերը չունեն սովորական էջերի հերթականություն: Այն չես կարող կարդալ էջերի ընդունված հերթականությամբ՝ 1, 2, 3, այլ ետուառաջ ես գնում այն ուղիով, որով առաջնորդում է գիրքը:

Այս շարքի ամեն մի գիրք ներկայացնում է մի առանձին դետեկտիվ պատմություն, և երեխայի առջև դրվում է խնդիր՝ գիրքը կարդալու ընթացքում հանդիպած հուշումների միջոցով բացահայտել հանցանքը: Հուշումներն իրենցից ներկայացնում են մաթեմատիկական որոշակի խնդիրներ (problem-solving exercises), և ընթերցող երեխան պետք է լուծի դրանք՝ առաջ գնալու համար: Երեխաներին օգնելու համար գրքի վերջում գետեղված է մաթեմատիկական հասկացությունների բառարան, ինչպես նաև գծապատկերների միջոցով բացատրվում են առաջադրանքների լուծման ճիշտ եղանակները:

Մակայն թարգմանիչը պետք է հետևողական լինի և ուսումնասիրի մաթեմատիկայի դպրոցական դասագրքերը, որպեսզի բացատրությունները համապատասխանեն գրքերին: Այս դեպքում թարգմանիչը կարող է նույնիսկ տալ այն սահմանումը, որը տրված է դասագրքում՝ երեխային ավելորդ չծանրաբեռնելու նպատակով:

Օրինակ

*Decimal means 'made from groups of ten'.*

Անգլերենում ունենք վերը նշված բացատրությունը տասնորդական կոտորակի համար, սակայն ավելի նպատակահարմար ենք գտել տալ ոչ թե բառացի թարգմանությունը, այլ ավելի համապատասխանեցնել մեր դասագրքերում տրված սահմանմանը:

*Տասնորդական կոտորակը բաղկացած է ամբողջ մասից և տասնորդական մասերից:*

Առաջադրանքներից մեկում երեխայից պահանջվում է գտնել, թե որ արտադրյալն է ավելի մեծ՝  $11x9$ , թե՛  $11x8$ -ը: Մեկ այլ դեպքում ըն-

թերցողը պետք է գտնի շրջանի տրամագիծն ու շառավիղը կամ ճիշտ հասկանա, թե ո՞րն է հավասարասրուն և հավասարակողմ եռանկյունների տարբերությունը: Ճիշտ է, այս դեպքում մենք ավելի շատ գործ ունենք երեխայի մաթեմատիկական գիտելիքների հետ, այլ ոչ թե թարգմանության ճշգրտության հետ, բայց չպետք է մոռանանք, որ այս շարքի գրքերը երեխաներին ուսուցանելու համար են, և մաթեմատիկական հասկացությունների սահմանումների հստակությունից էլ կախված է գրքի գործառույթը, այսինքն՝ ուսուցման նպատակը:

Հետևաբար, գրքերի այս շարքը (“The Cavern of Clues”, “The Mansion of Mazes”, “The Museum of Mysteries”, “The Planet of Puzzles”) վերաբերում է և՛ գեղարվեստական, և՛ գիտական գործառույթային ոճերին:

Գոյություն ունի ընդհանուր մի պատկերացում, թե մանկական գրականություն թարգմանելն ավելի հեշտ է և՛ ոլորտին, մինչդեռ թարգմանիչն էլ ավելի մեծ պատասխանատվության է ենթարկվում, քանի որ գործ ունի մանկական պարզ ու միամիտ աշխարհի հետ, այն աշխարհի, որ լի է բազում ու բազմազան, երբեմն էլ անհնարին պատասխաններ պահանջող երևակայական հարցերի հետ: Ուստի նախքան թարգմանելու գործընթացը սկսելը թարգմանիչը պետք է իր առաջ հարց դնի. «Ու՞մ համար է կատարվում թարգմանությունը»: Մանկական գրականության հետ առնչվելիս անհնար է դառնում հաշվի չառնել երեխա-ընթերցողի հետաքրքրությունների ու կարողությունների շրջանակը, քանի որ սխալ կամ ոչ հասկանալի թարգմանությունը, օտար մշակույթին վերաբերող անձնանուններն ու տեղանունները, բարդ շարադասությունը, անհասկանալի ակնարկները կարող են շեղել երեխային գրքից կամ խոչընդոտել հետաքրքրության առաջացումը: Հետևաբար, թարգմանիչը կարող է իրեն թույլ տալ փոփոխություններ անել, ավելացնել կամ հանել բառեր, օգտագործել մեղմասություններ, չափազանցություններ և այլ ոճական հնարներ և ուրուշ դեպքերում ոչ թե պարզապես թարգմանել, այլ հորինել համապատասխան արտահայտություններ, որոնք ավելի հասկանալի և մատչելի կլինեն թիրախ լեզվով կարդացող երեխաների համար:

Օրինակ՝ անգլերենում հանդիպած հետևյալ նախադասությունը թարգմանելիս ավելի նպատակահարմար ենք գտել համապատասխանեցնել այն մեր առօրյա կյանքում օգտագործվող արտահայտությանը, որպեսզի ավելի պատկերավոր լինի երեխաների համար:

*I can't thank you enough.*

*Չգիտես՝ ինչպես շնորհականություն հայտնել:*



Անգլերեն տեքստում շատ հաճախ է օգտագործվում you (դու) դերանունը: Բիարկե, անգլերենում այն չօգտագործելը կամ դրանից խուսափելն անհնարին է: Մինչդեռ հայերենում շատ հեշտությամբ, նույնիսկ որոշ դեպքերում պարտադիր կերպով կարող ենք բաց թողնել դերանունների անհարկի կիրառումը ավելորդ կրկնություններից խուսափելու համար:

Օրինակ՝

*You set off along the passage and spot another door. You open it, but there is no floor. You start to topple over into empty space. But Barkimedes grabs your shirt with his teeth and pulls you back.*

*Շարունակելով ճանապարհը՝ նկատում ես մեկ այլ դուռ: Բացում ես դուռը, սակայն այնտեղ հատակ չկա: Քիչ է մնում ընկնես այդ դատարկ տարածության մեջ, երբ Բարքիմեդեսը ատամներով բռնում է վերնաշապիկից և քեզ հետ քաշում:*

Մանկական գրականություն թարգմանելիս թարգմանչի առաջ ծագում են մի շարք խնդիրներ՝ սկզբնաղբյուր և թիրախ լեզուների միջև եղած մշակութային տարբերությունը, թարգմանված տեքստի լեզուն: Այլ կերպ ասած՝ լեզուն պետք է լինի պարզ, հստակ, ճշգրիտ և հասկանալի, նախադասությունները չպետք է լինեն բարդ և երկար: Քանի որ հասկանալի է, որ երեխաների համար գիրք կարդալը ավելի շուտ զվարճանք է և զբաղմունք, թիրախ լեզվով կարդացող երեխաները ոչ մի տարբերություն չպետք է զգան սկզբնաղբյուր լեզվում եղած տեքստի համեմատ: Թարգմանիչը պետք է հասկանա երեխաների հոգեբանությունը:

Մշակութային տարբերությունները զգալի ազդեցություն են թողնում թարգմանության վրա: Երբեմն թարգմանիչը ստիպված է լինում փոխել տեքստը՝ հարմարեցնելով թիրախ լեզվի մշակույթի հետ:

Օրինակ՝ գրքերից մեկում առաջադրանքը ներկայացվում է հետևյալ կերպ. աղյուսակում ունենք անգլերենի այբուբենին համապատասխանող նշաններ կամ պատկերներ, և երեխայից պահանջվում է գտնել այն բառը, որը թաքնված է տրված պատկերների տակ: Քանի որ հայերենի և անգլերենի այբուբեններում առկա տառերի քանակը տարբեր է (անգլերեն-26, հայերեն 39), առանձին դժվարություն է ներկայացնում պատկերները համապատասխանեցնել երկու լեզուների այբուբեններին:

Գիտահանրամատչելի տեքստերի թարգմանությունը պահանջում է ոչ միայն լեզվաբանական, այլև թեմայի (այս դեպքում՝ հետաքրքրաշարժ մաթեմատիկա) և համապատասխան եզրույթների համակողմանի իմացություն (*solid and plane shapes – տարածաչափական և հարթաչափական մարմիններ, hexagon – վեցանկյուն, magic square – մոգական քառակուսի, place value – կարգային միավոր, number line – թվային ուղիղ, Venn diagram – Վեննի տրամագիր, pie chart – շրջանաձև զծապատկեր, frequency table – հաճախականության աղյուսակ* և այլն): Նման առաջադրանքները նպաստում են աշակերտների բնագիտական հենքային գիտելիքների ամրապնդմանը:

Օրինակ՝ հանելուկներից մեկում ընթերցող-երեխայից պահանջվում է գտնել տարածաչափական մարմինները: Եթե երեխան չգիտի, թե որն է տարածաչափական մարմինների և հարթաչափական պատկերների տարբերությունը, ապա հեշտությամբ կարող է դիմել գրքի վերջում զետեղված հասկացությունների բառարանի օգնությանը և պարզել, որ տարածաչափական մարմինները եռաչափ են, այսինքն՝ ունեն երկարություն, լայնություն և բարձրություն:

Հաճախ թարգմանիչը բախվում է մի շարք բառերի և եզրույթների, որոնք գոյություն չունեն թիրախ լեզվում (*untranslatable notion*): Մա հիմնականում պատահում է այն դեպքերում, երբ սկզբնաղբյուր տեքստում օգտագործվում են եզրույթներ կամ բառեր, որոնք դեռ նոր են ստեղծվում: Այս պարագայում թարգմանիչներից շատերը կարող են նույնիսկ չթարգմանել եզրույթը և թողնել, ինչպես որ օգտագործվել է սկզբնաղբյուր լեզվում՝ տողատակի հատվածում պարզապես տալով բացատրությունը: Մա այնքան էլ արդյունավետ միջոց չէ երեխաների համար նախատեսված գրականության մեջ, քանի որ միշտ չէ, որ երեխաները ուշադրություն են դարձնում տողատակում տրված բացատրությանը: Եթե սահմանումը, նկարագրությունը կամ բացատրությունը բավարար չեն, թարգմանիչը ստիպված է ստեղծել համապատասխան եզրույթ:

Օրինակ՝ «Հանելուկների մոլորակ»-ում հանդիպում ենք *tally* բառին: Անգլերեն-հայերեն բառարաններում տրվում է այս բառի առաջին իմաստը՝ որպես *հաշվեփայտ*, իսկ երկրորդ իմաստով պարզապես նկարագրվում է այն որպես թվերի կամ տարբեր առարկաների քանակը նշելու հեշտ եղանակ: Մակայն մեր դեպքում նկարագրական թարգմանություն տալը անտեղին էր, ուստի հայերենի

խմբագրի օգնությամբ ստեղծվեց նոր բառ՝ *հաշվեհամակարգ*, և գրքի վերջում գտնվող հասկացությունների բառարանում նշվեց այս նոր եզրույթի իմաստը:

Լինում են դեպքեր, երբ թարգմանվող տեքստում հանդիպում ենք հեղինակի կողմից ստեղծված եզրույթների կամ պարզապես բառերի, որոնք գոյություն չունեն ոչ միայն թիրախ լեզվում, այլև ընդհանրապես՝ մեր իրականության մեջ: Սա ևս իրենից լուրջ խնդիր է ներկայացնում, քանի որ թարգմանիչը ինքն էլ պետք է ստեղծի նոր բառ իր լեզվում:

Շարքի գրքերից մեկը պատմում է այլմոլորակային սարքավորումների մասին, որոնք պատրաստվում են կործանել Հանելուկների մոլորակի վրա գտնվող Ալֆա բազան: Այս գրքում հեղինակը հորինել է մի շարք սարքավորումներ, որոնք իրական կյանքում գոյություն չունեն:

Օրինակ՝

*Biodegradable Recycling Unit – Կենսաքայքայող վերամշակման սարք*

Մեկ այլ խնդիր է նաև բառախաղերի և բանաստեղծությունների թարգմանությունը, որոնք մանկական գրականության մեջ հաճախ են հանդիպում և թարգմանական հատուկ մոտեցում են պահանջում:

Այս շարքի գրքերում հաճախ առաջադրանքների մի մասը տրվում է փոքրիկ հանգավորված բանաստեղծությունների տեսքով, որոնց թարգմանությունը պահանջում է որոշակի հմտություններ: Այսինքն, թարգմանիչը պետք է կարողանա թիրախ լեզվում նույնպես պահպանել հանգավորումը:

Օրինակ՝

*Once this cave was our home,  
But now we are not alone.  
Pirates come in here at night,  
To stash their booty out of sight.*

*Մի ժամանակ այս քարանձավն էր մեր տունը,  
Բայց այժմ կորցրել ենք մեր խաղաղությունը:  
Գալիս են այստեղ ծովահենները  
Ու թաքցնում են իրենց գանձերը:*

\*  
\* \*

*Blue Beard's mine holds diamonds rare.  
Multiplication will take you there.  
Seven times seven leads the way.*

*Շատ ադամանդ կա Կապտամորուսի հանքում,  
Պետք է կատարես դու բազմապատկում,  
Յոթ անգամ յոթը թե արագ հաշվես,  
Ճիշտ ուղղությունը հաստատ կգտնես:*

Այս շարքի գրքերը թարգմանելիս ամենաբարդ խնդիրը, որ դրվում է թարգմանչի առաջ, այն է, որ սկզբնաղբյուր և թիրախ լեզուներում գրքերի էջերը պետք է համապատասխանեին իրար: Չի կարելի խախտել ոչ մի էջ, քանի որ կխախտվեն նկարների դասավորությունը, առաջադրանքների հերթականությունը: Ինչպես արդեն նշվել էր վերևում, էջերը սովորական հերթականություն չունեն և առաջադրանքի ճիշտ լուծումից է կախված հաջորդ էջի համարը: Ճիշտ լուծելու դեպքում երեխան առաջ է անցնում դեպի մեկ այլ էջ, սխալվելու դեպքում վերադառնում և ուղղում է սխալը: Քանի որ անզլերենի հետ համեմատած, հայերենի բառերն ավելի երկար են, իսկ նախադասություններն ավելի ծավալուն, թարգմանչին մեծ ջանքեր են պետք անզլերեն տեքստի ծավալը հայերենում պահպանելու համար:

Նշված խնդիրներն ու դժվարությունները աննշան են թվում, երբ կարևորում ես այն նպատակը, որի համար նախատեսված են նման գրքերը: Եվ, իհարկե, թարգմանություն կատարելիս չի մոռացվել, որ երեխաները ոչ միայն սովորելու, այլ նաև զվարճանքի համար են ընտրելու այս գրքերը: Ուստի պետք է լինել առավելագույնս ուշադիր և պատասխանատու:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Glover D.**, *Maths Quest. The Cavern of Clues*, UK, QED Publishing, 2011.
2. **Glover D.**, *Maths Quest. The Mansion of Mazes*, UK, QED Publishing, 2011.
3. **Glover D.**, *Maths Quest. The Planet of Puzzles*, UK, QED Publishing, 2011.

4. Glover D., *Maths Quest. The Museum of Mysteries*, UK, QED Publishing, 2011.
5. Nida E., *Toward a Science of Translating*, Leiden, Brill, 1964.
6. Nikolajeva M., *Children's Literature Comes of Age. Toward a New Aesthetic*, Garland Publishing Inc., 1996.
7. Գլովեր Դ., *Մաթեմատիկական որոնումներ: Հուշումների քարանձավը*, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013:
8. Գլովեր Դ., *Մաթեմատիկական որոնումներ: Լաբիրինթոսների կալվածքը*, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013:
9. Գլովեր Դ., *Մաթեմատիկական որոնումներ: Հանելուկների մոլորակ*, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013:
10. Գլովեր Դ., *Մաթեմատիկական որոնումներ: Առեղծվածների թանգարանը*, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013:

**NARE DJABAGYAN – Перевод на армянский язык книг “Занимательная математика” для учащихся школ.** Настоящая статья посвящена проблеме перевода серии книг “Занимательная математика” для учеников школ. Стиль данной серии может рассматриваться как литературный, так и научно-популярный.

С одной стороны, при переводе детской литературы рассматриваются такие проблемы как различие культур между текстами оригинала и переводимого, язык переводимого текста, который должен быть доходчивым, точным, безошибочным и тщательно разработанным по структуре и содержанию, равно как и не очень длинным.

С другой стороны, перевод научных работ предполагает наличие знаний и понимания данной области науки, её терминологию переводчиком (в данном случае математики) для передачи полной информации текста.

При переводе данной серии мы попытались учесть выше указанные требования и отразить их в статье.

**NARE JABAGHYAN – On the Armenian Translation of “Mathematical Quests”, a Series of Entertaining Books for Pupils.** The present article is a brief introduction to the problems which occurred in the process of translating the series “Mathematical Quests”. The series of books can be considered to be of both literary and scientific style.

While translating children’s literature the translator encounters numerous problems: cultural differences between source and target texts, the language of the text, i.e. it must be clear, precise and accurate, the sentences shouldn’t be complicated and too long. Whereas the translation of a scientific work requires a good understanding and knowledge of the theme (in this case mathematics) and corresponding terms.

**ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵՔԵՆԱԿԱՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

***ՄԱՆԵ ԱՂԲԱԼՅԱՆ***

*Երևանի պետական համալսարան,  
Իջևանի մասնաճյուղ*

Մեքենական թարգմանության ծննդյան թիվը համարում են 1947 թ. մարտը, երբ ծածկագրության մասնագետ Ուերոն Ուիվերը Նորբերտ Վիներին ուղղած նամակում առաջին անգամ առաջադրեց մեքենական թարգմանության խնդիրը: Սակայն առաջին անգամ մեքենական թարգմանության գաղափարը առաջարկել են հայազգի ֆրանսիացի գյուտարար Գեորգի Արծրունին և ռուս գյուտարար Պ. Սմիրնով-Տրոյանսկին:

Պետք է նշել, որ նոր տեխնոլոգիաների դարաշրջանում շատ կարևոր է մեքենական թարգմանության դերը: Մեքենական թարգմանությունը կատարում է աշխատանքի մեծ մասը, քանի որ ինչպես հայտնի է, էլեկտրոնային մեքենաներն ունեն արտակարգ հիշողություն, որի մեջ կարող են մեծ թվով նյութեր պահվել, բայց դրանց հետ մեկտեղ աքիլեսյան գարշապար ունեն բառերի բազմիմաստությունը: Ահա թե ինչու մեքենական թարգմանությունը անկիրառելի է, օրինակ, գեղարվեստական տեքստերի ժամանակ, բայց կարող է բավականաչափ հաջողությամբ կիրառվել գիտական և տեխնիկական տեքստեր թարգմանելիս. տեքստեր, որոնցում բառերի ճնշող մեծամասնությունը մենիմաստ է:

Հետազոտողների աշխատանքները թարգմանության ոլորտում սահմանափակվում են մեկ այլ լեզվում բառային համարժեքներ գտնելով: Բայց նույնիսկ այդ շատ պարզ ու հասարակ մակարդակում առաջանում են բարդություններ, քանի որ բառային կառույցներն ու միավորները բոլոր լեզուներում մենիմաստ չեն և ոչ միշտ են պարզ: Այստեղ արդեն առաջ են գալիս նաև համանունության և բազմիմաստության խնդիրները թե՛ մեքենական և թե՛ մարդու կողմից արված թարգմանության մեջ:

Հարկ է ևս մեկ անգամ հիշեցնել, որ համանունությունը նույն հնչեղությունն ունեցող ձևայիններն են: Իսկ ահա բազմիմաստության

ժամանակ նշանակիչը ունենում է բազմաթիվ նշանակելիներ: Այս երկու հասկացությունների մեջ տարբերակումը երբեմն շատ ակնհայտ և հստակ չի լինում: Բազմիմաստության մեջ տարբեր նշանակելիներ ունեն իմաստային ընդհանրություններ, այնինչ համանունության մեջ ընդհանուր գծեր չկան (օրինակ՝ le palais de Versailles (-Վերսալի պալատ), le palais de Justice( Արդարադատության պալատ) /le palais (քիմք)/ dans la bouche/):

Մեր կատարած դիտարկումները թույլ են տալիս ասել, որ այն հսկայական խնդիրները, որոնք առաջ են բերում համանունությունը և բազմիմաստությունը մեքենական թարգմանության մեջ, կարող են լուծվել պրոֆեսիոնալ թարգմանչի կողմից:

Հոդվածում օրինակները ներկայացված են 3 ձևաչափով՝ բնօրինակ, մեքենական թարգմանություն և մարդու կողմից արված թարգմանություն:

Բնօրինակը անգլերենով	Մեքենական թարգմանություն ֆրանսերենով	Մարդու կողմից արված թարգմանություն
<p><b>This is being undertaken through the International Consultative Forum on Education for All (EFA Forum) and a technical advisory group has been set up to advise and assist the EFA Forum Secretariat, based at <u>UNESCO Headquarters</u>, to coordinate this exercise.</b></p>	<p><b>Ceci est entrepris par le forum consultatif international sur l'éducation pour tous (forum d'EFA) et un groupe consultatif technique a été installé pour conseiller et aider le secrétariat de forum d'EFA, basé <u>aux sièges sociaux de l'UNESCO</u>, pour coordonner cet exercice.</b></p>	<p><b>Ils ont chargé de cette tâche le Forum consultatif international sur l'éducation pour tous (Forum EPT) dont le secrétariat, basé <u>au Siège de l'UNESCO</u>, est assisté d'un groupe consultatif technique pour la coordination de cet exercice.</b></p>

“at UNESCO Headquarter” բառախումբը թարգմանելու համար թարգմանիչը օգտագործել է “au Siège de l'UNESCO” և ոչ թե “aux Sièges de l'UNESCO”: Երկու տեղեկատվական տարրեր թույլ են տալիս նրան խուսափել այդ խնդրից. նախ թարգմանիչը գիտի, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն առևտրային կամ արդյունաբերական-հասարակա-

կան կազմակերպություն չէ, այլ միջազգային, բացի այդ գիտի նաև, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ունի մեկ նստավայր և ոչ թե բազմաթիվ նստավայրեր: Սա արդեն տեղի է ունենում ոչ թե լեզվաբանական մակարդակում, այլ արտալեզվաբանական:

Մեքենական թարգմանությունները կատարվում են մի քանի համակարգչային ծրագրերով՝ SYSTRAN, LOGOS, CRITTER, DLT, EUROTRA, METAL, ROSETTA, KBMT-89, ULTRA: Նույնիսկ այս համակարգչային ծրագրերից օգտվելու ժամանակ առաջանում են բազմիմաստության հետ կապված մի շարք սխալներ, սխալներ, որոնք կարող են բաժանվել երկու խմբի՝

- 1) սխալներ, որոնք կապված են մի անկախ լեզվական միավորը բնութագրող բազմիմաստության հետ,
- 2) սխալներ, որոնք մի քարացած արտահայտությունից կախված տարրը բնութագրող բազմիմաստության արդյունք են:

Ստորև ներկայացված օրինակը պարզաբանում է առաջին խմբի սխալները:

Բնօրինակը անգլերենով	Մեքենական թարգմանություն ֆրանսերենով	Մարդու կողմից արված թարգմանություն
<p><b>Various sponsorship schemes have been concluded involving the media, private enterprise, and public figures associated with UNESCO's work and ideals.</b></p>	<p><b>On a conclu de divers arrangements de patronage impliquant les médias, l'entreprise privée, et les figures publiques associées au travail et aux idéaux d'UNESCO'S.</b></p>	<p><b>Divers projets de parrainage ont vu le jour grâce à des médias, des entreprises du secteur privé et de personnalités associées à l'action et aux idéaux de l'UNESCO.</b></p>

Այս օրինակում վեր է հանվում անկախ միավորների բազմիմաստության երկու դեպք՝ “sponsorship/patronage, parrainage” և “schemes /arrangements, projets”: Համակարգչի կողմից արված լեզվական միավորների վատ ընտրությունը չի կարող հստակ ներկայացնել հաղորդագրությունը: Համակարգիչը ներկայացնում է նշված երկու լեզուներում իմաստային առումով մոտ համապատասխան բանային միավորները, որոնք սակայն ճշգրիտ համարժեքներ չեն կա-



րող լինել նշված այդ երկու լեզուներում: Տրված համատեքստի համար լավագույն համարժեքի ընտրությունը դժվարանում է նույնիսկ հոմանիշների առկայության դեպքում, ինչն էլ կարող է մեծ խնդիրներն առաջ կանգնեցնել նույնիսկ մարդուն:

Վերանայենք “sponsorship”-ի դեպքը. երկլեզու “Robert and Collins” (1987) բառարանը ներկայացնում է այդ բառը հետևյալ կերպ՝ «*[loan] cautionnement m ; [child, member] parrainage m ; (Rad, TV) commande f publicitaire; [appeal, announcement] patronage m ; (Sport) sponsoring m*». Այսպիսով, այս բառարանը առաջարկում է հինգ հնարավոր համարժեքներ: Այն դրանք տարբերակում է ըստ միկրոհամատեքստի (այն օրինակները, որոնք ներկայացված են քառակուսի փակագծերի մեջ՝ *[loan], [child] etc*), և ըստ մակրոհամատեքստի (կոր փակագծերի մեջ դրված օրինակները՝ *(Rad, TV; Sport)*): Նույնիսկ եթե համակարգիչը օժտված լիներ բոլոր այդ հնարավոր տեսակները տարբերակելու հատկանիշներով, անհնար կլիներ գուշակել բոլոր հնարավոր համատեքստերը մի միավորի համար: Ապացույցն այն է, որ “sponsorship” միավորը նշված օրինակում չի համապատասխանում բառարանի կողմից ներկայացված ոչ մի համատեքստի:

Հաջորդ օրինակը ներկայացնում է բազմիմաստության հետ կապված սխալների երկրորդ խումբը, որն արդեն ներկայացնում է քարացած արտահայտության մեջ լեզվական միավորները:

Բնօրինակը անգլերենով	Մեքենական թարգմանությունն ֆրանսերենով	Մարդու կողմից արված թարգմանություն
<b>non-governmental organizations</b>	<b>organismes non gouvernementaux</b>	<b>organisations non gouvernementales</b>
<b>primary education</b>	<b>l'éducation primaire</b>	<b>l'enseignement primaire</b>
<b>equalization of opportunities</b>	<b>égalisation [sic] des occasions</b>	<b>égalité des chances</b>

Այս դեպքում համակարգչի կողմից տրված լուծումները չեն խանգարում հաղորդագրության ճիշտ ընկալմանը, բայց արտահայտության մեկ կամ երբեմն էլ բազմաթիվ ձևույթները թարգմանվում են առանց հաշվի առնելու նրանց ընդհանրացումը, ինչն էլ տալիս է այլ լեզվում համարժեք արտահայտություններին մոտ բարդ ձևեր, որոնք մարդը (*թարգմանիչը*) կարող է գտնել առանց մեծ դժվարության:

Ընդհանրապես հետազոտական աշխատանքները ցույց են տալիս, որ բազմիմաստության առկայության պարագայում սխալներն ավելի շատ են լինում՝ 54.7%, քան համանունության կիրառման ժամանակ՝ 45.30%: Բազմիմաստությունը ներկայացնում է միայն բառային անհամապատասխանելիություն, այսինքն՝ այն տանում է դեպի մի միավորի օգտագործում, որը չի ներկայացնում ճշգրիտ համարժեքը համատեքստում: Իսկ համանունության սխալների ժամանակ երբեմն լինում է ինֆորմացիայի սխալ ներկայացում:

Ուսումնասիրելով նյութը՝ կարելի է եզրակացնել, որ չպետք է ամեն դեպքում համեմատել մարդու (*թարգմանչի*) և մեքենական թարգմանության ծրագրերով օժտված համակարգչի կատարած աշխատանքները, այլ պետք է մտածել, թե ինչպես կարելի է կատարելագործել համակարգչային ծրագրերը այնպես, որ մեքենական թարգմանությունները մոտենան մարդու կատարած թարգմանությունների որակին: Կարևորվում է երեք ոլորտ՝ լեզվական, խոսքային և արտալեզվական: Առհասարակ լեզվին պատկանող նյութերն ավելի հեշտ է ընդգրկել մեքենական թարգմանության մեջ, քան խոսքին պատկանող նյութերը, քանի որ խոսքն ավելի շատ անհատական է, և խոսքում ավելի շատ են անհատական իմաստային կառույցները, ինչը մեծ խնդիր կարող է հանդիսանալ համակարգչի համար: Իսկ արտալեզվական ոլորտի տարրերն այնքան շատ են ու տարբեր, որ գործնականորեն անհնար կլիներ ընդգրկել դրանք մեքենական թարգմանության ծրագրերի մեջ: Թարգմանչի և համակարգչի միջև հսկայական տարբերությունն էլ հենց կայանում է նրանում, որ մարդն ունի բանականություն, ինչը, ինչը նրան թույլ է տալիս կատարել, դեկավարել բոլոր անկանխատեսելի իրավիճակները, այնինչ համակարգիչը հաջողության է հասնում միայն նախապես ծրագրավորված դեպքերում:

Պատահական չէ, որ “SYSTRAN INTERNATIONAL”-ի նախկին տնօրենը նշում է՝ «Մարդն ապահովում է թարգմանության որակը, իսկ մեքենական թարգմանությունը՝ արագությունը»: Իսկ որպեսզի ապահովվի և՛ որակը, և՛ արագությունը, ստեղծվում են ավելի կատարելագործված էլեկտրոնային բառարաններ, որոնք շատ օգտակար կլինեն թարգմանչի համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Abbou A.**, *La traduction assistée par ordinateur, Actes du séminaire international sur la TAO et dossiers complémentaires*, Paris, 17-18 mars 1988, Paris, DAICADIF-Observatoire des industries de la langue, 1989.
2. **Dubois J.**, *Dictionnaire de linguistique*, Paris, Larousse, 1973.
3. **Jacmin L.**, *Classification générale des systèmes de traduction automatique*, in: BOUILLON P.; *La traductique. études et recherches de traduction par ordinateur*, Montréal, les Presses de l'Université de Montréal, 1993.
4. **Loffler-Laurian A.-M.**, *La traduction automatique*, Villeneuve d'Ascq, Presses universitaires du Septentrion, 1996.
5. **Trabulsi S.**, *Le Système SYSTRAN*, in: Abbou A., 1989 – *La traduction assistée par ordinateur, Actes du séminaire international sur la TAO et dossiers complémentaires*, Paris, 17-18 mars 1988, Paris, DAICADIF-Observatoire des industries de la langue, 1989.

### **МАНЕ АГБАЛЯН – Проблемы многозначности при машинном переводе.**

Машинный перевод – это перевод осуществляемый электронной машиной с одного языка на другой. Электронные машины имеют превосходную память, в которой может храниться безграничный материал, но имеют и ахиллесову пяту – полисемию. Электронная машина может запомнить миллионы слов, но не может распознать значения многозначного слова, которая реализуется в языке.

В данной статье сделана попытка выяснить проблемы многозначности, которые возникают при машинном переводе.

### **MANE AGHBALYAN – The Problems of Polisemy in Automatic Translation.**

The automatic translation is the translation done by an electronic machine from one language into another. The electronic machines have great memory where they can keep limitless materials but they have also disadvantage too and that is the problems of Polisemy. The electronic machine can remember millions of words but it can not differ the different meanings of one and the same word. This contribution aims at giving a clear, complete and rigorous opinion about it.

**ԵՐԿԼԵԶՎԱԿԻՐ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԽՈՍՔԻՆ ԲՆՈՐՈՇ  
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՄԽԱԼՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

**ՆԱԻՐԱ ԱՎԱԳՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Յուրաքանչյուր ժողովրդի էթնիկական պատմության մեջ զգալի տեղ ունեն էթնոլեզվական գործընթացները: Հայերը քաղաքական, պատմաաշխարհագրական և այլ տարբեր հանգամանքների բերումով իրենց վրա միշտ էլ կրել են երկլեզվակրության տարածմանը նպաստող գործոնների ազդեցությունը: Դարերի ընթացքում հայերը էթնիկական շփումներ են ունեցել ռուսների, վրացիների, արաբների, հույների, ասորիների, թուրքերի, պարսիկների և այլ ազգերի հետ:

Հայ ժողովրդի էթնիկական պատմության մեջ նոր երևույթ էր խորհրդային շրջանի հայ-ռուսերեն երկլեզվակրությունը: Դրան նպաստող գործոններից էին հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզվի նկատմամբ հատուկ վերաբերմունքը, ինչպես նաև հայ զինակոչիկների՝ խորհրդային բանակում զինվորական ծառայությունն անցկացնելու փաստը:

Խոսելով հայ-ռուսերեն երկլեզվակրության տարածման աղբյուրների մասին՝ հարկ է նշել, որ ներկայումս երկլեզվակրության զարգացման բարձր տեմպերը Հայաստանում որոշ չափով պայմանավորված են հանրապետություն ներգաղթածների մեծ թվով: Ռուսաստանից, Վրաստանից և առավելապես Ադրբեջանից սեփական էթնիկական միջավայր վերադարձած վերաբնակիչների լեզվական վարքում ռուսաց լեզվի ազդեցությունը զգալի է ինչպես ընտանեկան միջավայրում, այնպես էլ արտադրական, հասարակական-քաղաքական և գիտամշակութային ոլորտներում, առավելապես տեղեկատվության փոխանակման դաշտում:

Երկլեզվակրությունն ամենից քիչ տարածված է մինչև 8 տարեկան երեխաների մոտ: Դրա տարածման սահմաններն այստեղ որոշվում են ընտանեկան միջավայրի լեզվական վարքով և ուսումնական հաստատությունների ազդեցությամբ:

Երեխաների մոտ տարբերակում են երկլեզվակրության երկու հիմնական ձև՝ համաժամանակյա և տարաժամանակյա: *Համաժա-*

*մանակյա* երկլեզվակրությունը երկու լեզուների գրեթե հավասարաչափ տիրապետումն է մենչև 3 տարեկան հասակը: Դա մանկական երկլեզվակրության առաջին փուլն է: Այդ շրջանում ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խոսքի ուշացումը և երկու լեզուների միախառնումը: Սակայն ժամանակի ընթացքում երեխան սկսում է տարբերել լեզուները, և այդ երևույթներն արագ անհետանում են: Այդ գործընթացին նպաստում են նաև արտաքին գործոնները: Քանի որ առաջին փուլում երեխայի խոսքի ձևավորումը հիմնականում կատարվում է ընտանիքում, շատ կարևոր է, որ ծնողները կամ ընտանիքի մյուս ավագ անդամներն իրենց խոսքում չխառնեն երկու լեզուները: *Տարածամանակյա* երկլեզվակրության դեպքում երեխայի երկրորդ լեզվի իմացությունը ձեռք է բերվում մի քիչ ավելի ուշ՝ խարսխվելով մասնավորապես հիմնական լեզվի իմացության վրա:

Ուսումնասիրելով հայկական միջավայրում ապրող ռուսալեզու երկլեզվակիր երեխաների խոսքը՝ կարելի է նկատել, որ հազվադեպ երևույթ է երկու լեզուների հավասարաչափ տիրապետումը: Լեզուներից մեկը գրեթե միշտ դոմինանտ է՝ առաջնային: Առաջնային է հիմնականում այն լեզուն, որով խոսում են ընտանիքում: Տվյալ պարագայում դա ռուսերենն է: Երկրորդ լեզվի յուրացումը մասնավորապես տեղի է ունենում առաջնային լեզվի հիմքի վրա, որի ընթացքում ի հայտ են գալիս թարգմանական սխալներ լեզվի տարբեր մակարդակներում՝ բառային, քերականական և այլն: Դիտարկենք մի քանի օրինակ.

*Քույրիկս ինձ չի տալիս քնեմ (не дает спать) ----- չի թողնում քնեմ*

*Իմ մոտ նոր խաղալիք կա (у меня новая игрушка) ----- ես նոր խաղալիք ունեմ*

*Ինձ ցուրտ է (мне холодно) ----- ես մրսում եմ*

Ստորև բերված օրինակներում սխալ են թարգմանված նախդիրները.

*տաքսիի վրա եկանք (приехали на такси)*

*քույրիկս դուրս եկավ փողոցի վրա (вышла на улицу)*

*կրակել թռչունի վեջ (стрелять в птичку)*

*պապան աշխատանքի վրա է (папа на работе)*

*նվազում եմ ջութակի վրա (играю на скрипке)*

*նվազում եմ դաշնամուրի վրա (играю на пианино)*

գնում ենք թատրոնի **մեջ** (идем в театр)  
գնացինք զբոսայգիի **մեջ** (пошли в парк)  
ուշացանք դասի **վրա** (опоздали на урок)

Հետևյալ օրինակներում ցույց են տրված սխալներ միաժամանակ բառային և քերականական մակարդակներում.

Ես չեմ մրսում, ես **պալտոյի մեջ** եմ (я в пальто)  
**Ժիլետի / շուքայի մեջ** եմ (я в жилете / в шубе)  
**Տյոտյան ակնոցների մեջ** է (тетя в очках)  
Մաման ակնոցներ չի **տանում** (мама не носит очки)  
**Դեղույին գնում են այս ակնոցները** (дедушке идут эти очки)

Սխալների շատ հաճախ կարելի է հանդիպել դարձվածքային արտահայտությունների թարգմանություններում.

– Որտեղի՞ց: – Ուղտից: (Откуда? – От верблюда.)  
– Իմ բերանը կողպեքի վրա է: ( У меня рот на замке.)

Բերենք շարահյուսական սխալների մի քանի օրինակ: Ինչպես գիտենք, հայերենի շարադասությանը առավել բնորոշ բանաձևն է՝ ենթակա + ուղիղ խնդիր + ստորոգյալ: Ռուսերենին ավելի բնորոշ է ենթակա + ստորոգյալ + ուղիղ խնդիր կառույցը:

– Ի՞նչ ես անում: – Ես լսում եմ երաժշտություն (слушаю музыку) – Երաժշտություն եմ լսում:

– Մաման ի՞նչ է անում: – Պատրաստում է ճաշ: (готовит обед) – Ճաշ է պատրաստում:

Ինչպես տեսնում ենք, ռուսալեզու երկլեզվակիր երեխաների խոսքում հանդիպող շատ սխալներ պայմանավորված են ռուսերենի քերականական կառույցների ազդեցությամբ՝ մասնավորապես նախդիրների և նախդրավոր արտահայտությունների սխալ թարգմանությամբ:

Ուսումնասիրելով հայկական միջավայրում ապրող ռուսալեզու երեխաների խոսքը՝ կարելի է եզրահանգել, որ երեխայի խոսքի ձևավորման գործընթացում շատ կարևոր է ընտանեկան և սոցիալական միջավայրի դերը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Bialystok E.**, *Bilingualism in Development: Language, Literacy, and Cognition*, Cambridge, UK: Cambridge University Press, 2001.
2. **Bosemark Ch.**, *Raising Bilingual Children*. Art Galleries & Dealers in San Francisco, CA, 2003.
3. **De Houwer A.**, *Bilingualism and Migration*. New York: Mouton de Gruyter, 1998.
4. **Eisenberg A., Murkoff H., & Hathaway S.**, *What to Expect the First Year*. New York: Workman, 1989.

**НАИРА АВАКЯН – О проблемах перевода в речи двуязычных детей.** Знание двух языков даёт детям много преимуществ в жизни. Есть два основных вида двуязычия – синхронное и приобретённое. При синхронном двуязычии ребёнок до трёх лет параллельно, одновременно владеет двумя языками. В этой стадии возможно смешивание слов и грамматических конструкций двух языков, но это временное явление. Приобретённое двуязычие – это изучение второго языка на основе первого (родного) языка. Изучение речи русско-армянских двуязычных детей показывает, что проблемы возникают в основном из-за неправильного перевода лексико-грамматических конструкций, в частности предлогов.

**NAIRA AVAKYAN – On Some Problems of Translation in the Speech of Bilingual Children.** The knowledge of two or more languages truly gives children many advantages in life. Bilingual children have the advantage of knowing two cultures, of being able to communicate with a wider variety of people. There are two major patterns in bilingual language acquisition: simultaneous bilingualism and sequential bilingualism. In *simultaneous* bilingualism, the child acquires two languages at the same time before the age of three. Children may mix words or parts of words from both languages at this stage. *Sequential* bilingualism may also occur before the child is three years old, but the child can draw on the knowledge and experience of the first or dominant language (the language of the country they live in, or the one spoken in the family) while acquiring the second language. Our study of Russian-Armenian bilingual children's speech has revealed that the language mixture may be the result of mistranslation of words and grammatical structures, mostly prepositions.

ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԱՆՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ  
ԱՌԱՇՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

*ԱՍՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Կենդանիների անուն պարունակող առածներն ու ասացվածքները հայտնի են դեռևս հնագույն ժամանակներից: Կենդանիներից շատերի անունները խորհրդանիշ են, այսինքն՝ դրանք ընկալում և ընդունում ենք՝ հաշվի առնելով այդ անունների նախնառաջ ուղիղ, ինչպես նաև փոխաբերական իմաստները: Հարկ է նշել նաև, որ տվյալ դեպքում կենդանիների անունների փոխաբերական ընկալումը ժողովրդի աշխարհընկալման և աշխարհըմբռնման արդյունք են, ինչպես օրինակ՝ գայլը՝ նենգության, աղվեսը՝ խորամանկության, ճագարը՝ վախկոտության, շունը՝ հավատարմության, էջը՝ հնազանդության և հիմարության, խոզը՝ փնթիության, և այսպես շարունակ: Առածի կամ ասացվածքի բաղադրիչ մաս դառնալիս կենդանիների անուններն արտացոլում են տվյալ ժողովրդի աշխարհաճանաչողությունը՝ պայմանավորված տվյալ ժողովրդի պատմական, մշակութային և հոգևոր ավանդույթներով ու առանձնահատկություններով, ինչպես նաև աշխարհագրական դիրքով և բնակլիմայական բազմազանությամբ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում *կենդանի* անուն պարունակող առածների և ասացվածքների թարգմանությունը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը տվյալ ժողովրդի մտածողության արգասիքն է՝ երբեմն բնորոշ միայն տվյալ ժողովրդի մտածողությանն ու աշխարհընկալմանը: Ինչպես հայտնի է, առածների և ասացվածքների հիմնական գործառույթը սերունդներին կենսափորձի փոխանցումն է, այն կենսափորձի, որն արդեն ունեին կամ ժառանգել էին նախորդ սերունդները: Ուստի թարգմանչի գերխնդիրն է կարևորել միտքը, իմաստը և գաղափարախոսությունը և ոչ թե կատարել բառացի թարգմանություն: Թարգմանիչը պետք է նախ և առաջ փնտրի այդ առածների և ասացվածքների համարժեքը թիրախ լեզվում:

Իսպանացի հայտնի լեզվաբաններ Խուլիա Մելվիյա Մունյոսը և Մանուել Մելվիյա Մունյոսը առաջարկում են առածների և ասացվածքների թարգմանության մի քանի հնարքներ, որոնք թարգմանչի



համար հաջողված և որակյալ թարգմանության բանալի են: Առաջարկվող միջոցներն են՝ **ցուցիչային, թեմատիկ, հումանիշային և սեռանիշ** թարգմանությունները:

**Ցուցիչային** թարգմանությունը համարվում է լավագույն տարբերակը, քանի որ թարգմանության ժամանակ թարգմանվող առածի կամ ասացվածքի գլխավոր բառը՝ ցուցիչը, երկու լեզուներում էլ նույնն է մնում: Այսպես՝ *Հաչան շունը մարդ չի կծի* և *perro ladrador poco mordedor* ունենք միևնույն ցուցիչը: Միաժամանակ երկու լեզուներում էլ նրանք ունեն միևնույն նշանակությունը, այն է՝ **վտանգ չի ներկայացնում այն մարդը, ով բարձրաձայնում է իր սպառնալիքների մասին**: Նույն կերպ ունենք՝ *Մշավան կատուն մուկ չի բռնում*, *Gato maullador, poco cazador* և *A caballo regalado no le mires el diente* Նվիրած ձիու ատամները չեն հաշվում օրինակները:

**Թեմատիկ** թարգմանության դեպքում թարգմանչի հմտությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ թարգմանվող լեզվում բացակայում է միևնույն ցուցիչով առածը կամ ասացվածքը, սակայն թարգմանիչը կարողանում է այն փոխարինել մեկ այլ առածով կամ ասացվածքով, որն ամենևին էլ չի մթազնում տվյալ առածի կամ ասացվածքի բարոյախրատական իմաստը, այլ՝ ընդհակառակը, է՛լ ավելի է խտացնում պատկերը՝ համապատասխան կերպով փոխանցելով ակնկալելի ենթատեքստը: Այսպես՝ *Asno callado, por sabio es contado* *Լուռ էշը իմաստուն է կհամարվի* օրինակին, կարելի համարժեք համարել *Խոսքը արծաթ է, լռությունը՝ ոսկի* առածը: Մերվանտեսի «Դոն Գիշոտ» վեպում հանդիպում ենք *«-!A otro perro con ese hueso!* (Don Quijote, XXXII, Parte I), իսկ թարգմանության մեջ հանդիպում ենք՝ *Այդ հեքիաթները մեկ ուրիշին կպատմեք* (թարգմ. Վահան Սարգսյան): Ինչպես տեսնում ենք, իսպաներենում *շուն* բաղադրիչը փոխարինվել է *հեքիաթ* բաղադրիչով, որից բնավ չի տուժել բնօրինակ տեքստը: Կամ դիտարկենք հակառակ օրինակը, երբ իսպաներենում առկա չէ կենդանու որևէ բաղադրիչ, սակայն հայերենում այն թարգմանված է կենդանու անվան բաղադրիչով է՝ *Castígame mi madre y yo trompogelas*, առածին հայերենում համարժեք կարող ենք համարել՝ *Գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց, շուտ արեք, ոչխարի հոտը սարն անցավ*: Մեկ այլ օրինակում հանդիպում ենք *De coronada de burro no vi morir a ninguno* առածը, որը բառացիորեն նշանակում է *Էշի պոզահարումից դեռ ոչ ոք չի մահացել* և որին համարժեք հայերենում ունենք *Շունը կաղալով չի սասկի* տաբերակը:

**Հումանիշային** հնարքը թարգմանչի համար նոր խնդիր է առաջ բերում, քանի որ համարժեք առածը կամ ասացվածքը թարգմանելիս կոնկրետ ստեղծագործության մեջ, թարգմանիչը պետք է հաշվի առնի նաև հեղինակի ոճը, տվյալ ստեղծագործության ոճային առանձնահատկությունները և ճիշտ ընտրություն կատարի: Օրինակ՝ *Poco a poquillo el pajaroa su nidillo* առածն իսպաներենում մեկնաբանվում է՝ գործը իրականացնելու համար բավականաչափ ժամանակ է հարկավոր: Այս առածին համարժեք իսպաներենում ունենք հետևյալ հումանիշ առածները՝ *Poco a poco hila la vieja el copo. Un grano no hace granero, pero ayuda a companero. Grano a grano, hincha la gallina el papo. Grano a grano, allega para todo el año. Gota a gota, se llena la boca* իսկ հայերենում՝ *Համբերե, ու համբերե, Համբերությունը կյանք է, Կամաց-կամաց բամբակը կըլնի մանած* և այլն: Մեկ այլ օրինակում՝ *Va palabra de boca en boca como pajarillo de hoja en hoja* առածը բառացիորեն նշանակում է *Բառը բերանից բերան է անցնում, ինչպես թռչունը՝ ճյուղից ճյուղ* համարժեք հայերենում ունենք՝ *Բերան բերան՝ հազար բերան* կամ *Վատ լուրը շուտ ա հասնում* տարբերակները: Ինչպես տեսնում ենք, ինչպես հայերենում, այնպես էլ իսպաներենում միևնույն առածը կարելի է թարգմանել մի շարք ուրիշ առածներով, սակայն թարգմանչի գերխնդիրն է փոխարինել դրանք այն առածով, որն առավելագույնս կհամապատասխանի հեղինակի ոճին և հնարավորինս ճիշտ կընկալվի ընթերցողի կողմից:

Առանձնահատուկ մոտեցում է պահանջում **սեռանիշ** առածների թարգմանությունը, քանի որ այս դեպքում թարգմանիչն առածը և ասացվածքը թարգմանում է ոչ թե փոխարինելով այն հումանիշ առածով, այլ առածի և ասացվածքի ցուցիչն այստեղ տեսականիշ է: Ինչպես երևում է օրինակից՝ *Al escarabajo sus hijos le parecen granos de oro* հայերենում ունենք լայն տարածում ունեցող՝ *Ազոավիին հարցրին՝ դռերի մեջ որն է սիրուն, սասց՝ իմ ճուտը* տարբերակը, կամ *Ավելի լավ է մեկ ուրուր ձեռքում քան հարյուրը օդում* առածի փոխարեն իսպաներենում ունենք՝ *Ma´s vale un pa´jaro en la mano aue ciento volando* առածը, որտեղ *թռչուն* բառի տեսականիշ է հանդիսանում *ուրուրը*: «Դոն Կիխոտ» վեպի հայերեն թարգմանության մեջ հանդիպում ենք. «Ավելի լավ է ճնճողուկը ձեռքում, քան ուրուրը երկնքում» (Գլուխ՝ XXXI, թարգմ.՝ Վահան Սարգսյան), որտեղ որոշ չափով նկատելի է իմաստի մթագնում: Այսպիսով, առածների և ասացվածքների թարգմանության ժամանակ մենք գալիս ենք այն եզ-

րակացության, որ կարելի է շատ ու շատ զուգահեռներ անցկացնել իսպանացի և հայ ժողովուրդների լեզվամտածողության, աշխարհընկալման և, անշուշտ, նաև խոսքում պատկերավորման միջոցների արտահայտման մեջ: Մակայն միննույն ժամանակ կարելի է նշել, որ թարգմանիչը տվյալ առաձններն ու ասացվածքները թարգմանելիս առավելագույն պատասխանատվությամբ պետք է թարգմանի դրանք, որպեսզի հասնի լիակատար համապատասխանության և համարժեք փոխանցի երկու ժողովրդների զգացողության և կենսափորձի բոլոր նրբերանգները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Valles J.**, *Refranero popular*. Editorial LIBSA, 2010.
2. **Basset D.**, *Diccionario panhispánico de refranes*. Editorial Herder, S.A.2002.
3. **Nida E.**, *Sobre la traducción*. Ediciones Cátedra, 2012.
4. **Moya V.**, *La selva de la traducción, Teorías traductológicas contemporáneas*. Cátedra, 2004.
5. **Cervantes M.**, *El ingenioso hidalgo don Quijote de la Mancha*, La Habana, Editorial de arte y literatura, 1974.
6. **Մերվանտես Ս.**, *Հնարամիտ հիդալգո դոն Կիխոտ Լամանչեցի*, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2010.

**АСЯ ХАЧАТРЯН – Вокруг некоторых проблемах переводов поговорок и пословиц у которых есть имена животных.** Перевод поговорок и пословиц содержащих имена животных представляет определенный интетес, потому что каждый из них результат мышления данного народа иногда типично исключительно этого народа и мировосприятия. Как известно, основная функция пословиц и поговорок передать бытовой опыт от одного поколения к другому которые имели или унаследовали предки.

Одноко, супер задача переводчика передать основную мысль, идею и идеологию а не переводить лишь слова или делать словарный перевод.

Переводчик прежде всего должен найти соответствующую пословицу или поговорку которая существует в данном языке на который переводит.

Известние испанские лингвисти Хулия Севиля Мунйос и Мануел Севиля Мунйвс предлагают некоторые приемы пословиц и поговорок, которые являются удачными и качественными ключами для переводчиков. И так, эти средства-опорное, тематические, синонимичные и родовые переводы.

**ASYA KHACHATRYAN – On some problems of translation of sayings and proverbs containing animal names.** The translation of the sayings and proverbs that contain the word “animal” is of a particular interest, since each of them is the result of the given nation’s mentality, sometimes typical only to them and how they perceive the world. As we know, the main function of the sayings and proverbs is to convey to the coming generations the experience that the previous generations had had or had inherited. This is why it is greatly important that the translator should highlight the concept, meaning and the ideology, and should not do a literal translation. The translator should first of all look for the equivalents of the sayings and proverbs in the translating language.

Famous Spanish linguists Julia Sevilla Muñoz and Manuel Sevilla Muñoz offer some techniques of sayings and proverbs that are translator’s keys for successful and efficient translation. Thus, the suggested methods are: actancial, thematic, synonymous and hyperonymic.

## ПРОБЛЕМЫ ПЕРЕВОДА РЕКЛАМНЫХ ТЕКСТОВ С ПОМОЩЬЮ КОМПЬЮТЕРНЫХ ПРОГРАММ

**НАРИНЕ АГАДЖАНЯН**

*Ереванский государственный педагогический  
университет*

Проблема перевода текстов различных жанров во все времена развития науки, техники, культуры взаимоотношения народов различных стран занимала и занимает одно из главных мест в деятельности профессиональных переводчиков, но не только их. В настоящее время, предпочтение отдается информативному переводу, в котором особенности индивидуально-авторского стиля отходят на задний план. Развитие информационных технологий привело к появлению компьютерных программ, осуществляющих перевод различных текстов, особенно рекламных. Мы попытаемся разобраться в недостатках и преимуществах этого вида перевода.

В настоящее время есть множество компьютерных программ, позволяющих переводить тексты с помощью компьютера. Это, с одной стороны, облегчает работу переводчика, нет необходимости выискивать в словаре незнакомые слова, а с другой стороны, такой перевод нельзя считать окончательным, так как при переводе компьютерные программы допускают много ошибок. Ведь даже профессиональный переводчик при переводе обращается к различным словарям для подбора нужного эквивалента. В поисках варианта перевода переводчик вновь и вновь обращается к единицам иностранного языка в оригинале, ищет их значение в словаре и затем решает возможно ли использовать для их перевода один из вариантов, предлагаемый в двуязычном словаре. Иногда переводчик обнаруживает, что имеющийся в словаре перевод можно непосредственно использовать для перевода данного текста, и задача сводится к правильному выбору словарного соответствия. Однако, чаще переводчик не находит в словаре такого варианта, который удовлетворял бы содержанию конкретного контекста. Предположим, что переводчик переводит на русский язык следующую английскую фразу: *“The United States worked out a formula which*

*later came to be known as dollar diplomacy*”. Большой англо-русский словарь предлагает четыре перевода слова formula: «формула», «рецепт», «догмат» и «шаблон», ни один из которых не может быть прямо перенесен в перевод данного высказывания. Но переводчик может все же использовать словарные варианты, и в итоге у него получится следующий вариант перевода: «США выработали политическую программу, которая затем стала называться «долларовой дипломатией». А компьютерные программы зачастую выдают только один вариант перевода слова, что приводит к неправильному переводу.

Лексический анализ текста показал, что “Проект машинного перевода” по большей части адекватно переводит знаменательные части речи, но допускает ошибки при переводе падежей, речевых оборотов и построении предложений. Для более адекватного перевода в перспективе можно предложить более глубокий эвристический анализ грамматического построения предложения, с улучшением качества перевода различных частей речи и их грамматических характеристик, а так же исключить конфликт словарей при переводе специализированных текстов.

Грамматический анализ текста показал, что электронный переводчик справляется с переводом слов во множественном и единственном числе, но имеется определенная трудность в переводе падежей и постановки глаголов в нужном лице. Это объясняется различной интерпретацией падежей в русском и английском языках: в русском – через окончание, в английском – через предлоги.

Как известно, условия рыночной экономики вызвали форсированное развитие рекламы как социального института и области профессиональной деятельности сотен тысяч людей в нашей стране. Из дилетантского торгового предложения реклама превращается в изощренный механизм воздействия на потребителя. Современные средства массовой информации дали толчок распространению международной рекламной деятельности. Сегодня перевод рекламы сделался не только необходимым и прибыльным делом, но и повседневным явлением жизни мирового сообщества. При этом, знание теоретических основ перевода является не только обязательным условием, но и гарантией качества перевода.

Перевод рекламного текста, в отличие от перевода художественной литературы, в которой переводчик обязан передать художествен-

но-эстетические достоинства оригинала, несколько отличается по форме, языковым средствам, а также ярко выраженной коммуникативной направленностью. В процессе перевода таких текстов, переводчику приходится решать как чисто языковые, лингвистические проблемы, обусловленные различиями в семантической структуре и особенностями использования двух языков в процессе коммуникации, так и проблемы социолингвистической адаптации текста.

Переводчику нередко приходится искать особые средства для передачи смысловых и стилистических составляющих оригинала. В таком случае достигается прагматическая эквивалентность между оригиналом и переводом, что и определяет коммуникативный эффект рекламы. Нас же интересует именно коммуникативная функция перевода рекламных текстов, а не художественно-содержательная.

В процессе ознакомления с рекламными текстами переводчики рекламных текстов сталкиваются с существенными трудностями при передаче прагматического потенциала оригинала. В частности, это связано с переводом в рекламном тексте фактов и событий, связанных с культурой данного народа.

Один из выдающихся специалистов в области перевода и перевода А. Д. Швейцер отмечает, что переводчик должен передать прагматический аспект содержания переводимого текста путем его переадресации иноязычному получателю с учетом той реакции, которую вызовет текст, точно передающий денотативный и коннотативный компоненты содержания исходного высказывания у иноязычного читателя. При этом, происходит прагматическая адаптация исходного текста, т.е. внесение определенных поправок на социально-культурные, психологические и иные различия между получателями оригинала и переводного текста. На практике именно социолингвистические факторы становятся определяющими при переводе текстов рекламы на другой язык.

Сегодняшние реалии заставляют нас более внимательно относиться к переводу рекламных текстов также и с точки зрения их психологического влияния на массовую аудиторию. Тексты рекламного объявления должны содержать четкие фактические данные: они должны быть исчерпывающе изложены, как следствие. При переводе рекламных текстов переводчик должен учитывать следующие факторы: цель текста, характер потребителя, языковые качества текста ори-

гинала, культурные и индивидуальные возможности языка в культурном аспекте потребителя и многое другое. Перевод текстов рекламы может определяться как близкий к «адекватному». Такой тип перевода вызван его практической необходимостью. Данный подход требует хорошего знания переводчиком предмета, о котором идет речь в оригинале, что хотел сказать автор рекламного текста, т.е. коммуникативное намерение рекламного текста. Перевод рекламного текста при изменении словесной формы должен быть, вместе с тем, точно передан по смыслу.

Тематический анализ рекламы показывает, что к числу наиболее часто рекламируемых товаров относятся предметы косметики и парфюмерии, продукты питания и лекарственные препараты, бытовая техника, одежда, автомобили. Можно сказать, что этот концептуальный набор универсален для рекламного рынка любой страны. Вместе с тем, несмотря на общий процесс глобализации рекламного рынка, тематическая структура рекламы культуроспецифична: содержание рекламы в каждой отдельной стране характеризуется рядом заметных различий, отражающих особенности общественного развития именно в данном культуролингвистическом ареале. Эффективность рекламного текста зависит от удачного соединения всех составляющих его компонентов: изображение, звук, образ, словесная ткань. Вместе с тем, исследователи отмечают первостепенную важность именно вербального компонента рекламы – словесного текста. Многие авторы отмечают, что язык рекламы это что то большее, чем его зрительное изображение и его восприятие. С этим не возможно не согласиться.

Для многих практиков рекламной деятельности текст иностранного языка служит только средством для понимания идеи рекламируемого продукта, сам же текст часто пишется заново на языке страны потребителя с учетом его национальной специфики. В тех случаях, когда точный перевод представляется почему-либо нежелательным, переводчик пользуется приблизительными по смыслу фразами, которые обязательно должны учитывать традиционные этнические, национальные и социальные особенности, стереотипы поведения конкретной аудитории, на которую направлена продукция, обозначенная в рекламном тексте.



## ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. **Бархударов Л.С.**, *Уровни языковой иерархии и перевод*, Тетради переводчика., вып. 6, Москва, 1969.
2. **Бархударов Л.С.**, *Язык и перевод*, Москва, Международные отношения, 1975.
3. **Пирогова Ю.К., Паршин П.Б.**, *Рекламный текст, семиотика и лингвистика*, Москва, изд. Гребенникова, 2000.
4. **Ревзин И.И., Розенцвейг В.Ю.**, *Основы общего и машинного перевода*, Москва, изд. Высшая школа, 1993.
5. **Бобров В.Б.**, *Англо-русский словарь по рекламе и маркетингу*, Москва, 1999.
6. **Bell R.T.**, *Translation and Translating, Lodon, Longman, 1991.*

**ՆԱՐԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ – Գովազդային տեքստերի թարգմանությունը համակարգչային ծրագրերի միջոցով.** Հոդվածի նպատակն է ուսումնասիրել այն խնդիրները, որոնք առաջանում են գովազդային տեքստերի թարգմանության ժամանակ համակարգչային ծրագրերի միջոցով:

Գովազդային տեքստերի թարգմանության կենտրոնում է գտնվում գաղափարային հասկացությունը՝ հաշվի առնելով սպառող երկրի ազգային պատկանելությունը, քանի որ թարգմանելիս պետք է չանտեսվեն տվյալ երկրի ավանդական, էթնիկ, ազգային և սոցիալական առանձնահատկությունները:

**NARINE AGHAJANYAN – Translation of Ads by Means of Computer Programs.** The article is dedicated to the consideration of the translation problems which appear while translating different texts by using computer programs as well as the translation of the language of advertising.

**ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՉ**

**ՆԱԻՐԱ ԳԱՄՊԱՐՅԱՆ  
ՄԱՐԻԱՆՆԱ ՕՀԱՆՅԱՆ**

*Երևանի Պետական Համալսարան*

Թարգմանությունը իրենից ներկայացնում է մի ոլորտ, որի միջոցով որոշակի խոսույթ հնարավոր է լինում ներկայացնել մեկ այլ լեզվի համապատասխան խոսույթի միջոցով՝ խոսքը բնօրինակից վերածելով արդյունքի: Խոսույթ ասելով հասկանում ենք նշանների այնպիսի շարք, որտեղ նշանները միմյանց հետ կապված են որպես մեկ ամբողջություն և օգտագործվում են որոշակի նպատակով: Բժշկագիտական հաղորդակցումը միջազգային ասպարեզում ուսումնասիրվել է հատկապես խոսույթի դիտանկյունից: Բժշկագիտական հաղորդակցումը ներկայացնում է իբրև միջազգային կարգի շփում, որը տեղի է ունենում առողջապահական համակարգում: Թարգմանչի առջև ծագում է համապատասխան համարժեք թարգմանության խնդիրը: Լայն առումով բժշկագիտական խոսույթ ասելով հասկացվում է բուժող, ապաքինող, թերապևտիկ խոսքը: Ծանոթ լինելով բժշկագիտական խոսույթին՝ հատկապես լեզվաոճական առանձնահատկություններին և այդ խոսքային դրսևորման հատուկ կապակցման միջոցներին, թարգմանիչը կառնչվի համեմատաբար քիչ դժվարությունների հետ: Այս աշխատանքը նպատակ է հետապնդում առաջարկելու կանոններ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել պատշաճ բժշկագիտական թարգմանություն խոսույթի սահմաններում:

Այսպիսով, մեր խնդիրն է ցույց տալ բժշկագիտական խոսույթի առանձնահատկությունների այն բազմությունը, որն անհրաժեշտ է պահպանել թարգմանության ժամանակ, երբ մտադիր ենք ներկայացնել համապատասխան համարժեք թարգմանություն: Այլ կերպ ասած, աշխատանքի նպատակն է անգլերենից հայերեն թարգմանելիս ներկայացնել կապակցված բժշկագիտական խոսք, որն անմիջականորեն ընկալվում է իբրև անգլերեն տարբերակի լավագույն համարժեք: Հետաքրքիրն այն է, որ տարբեր լեզվաբանական դպրոցներ,

այդ թվում չեխական գործառական ոճագիտության դպրոցը կամ ամերիկյան խոսույթային վերլուծական դպրոցը, անդրադարձել են այս հարցերին: Ժամանակակից ՀՆԼ (հատուկ նպատակներով լեզու) ուսումնասիրողները համամիտ են այն հարցում, որ բժշկագիտական խոսույթը ավելի շատ սոցիալ լեզվաբանության դիրքերից ուսումնասիրության խնդիր ունի, քան գործառական ոճագիտության, երբ խոսքը վերաբերում է խոսողին ու հաղորդակցական իրավիճակներին, մինչդեռ երբ խոսքը գնում է գրավոր խիստ պաշտոնական բժշկագիտության մասին, կա այն կարծիքը, որ բժշկագիտական խոսույթի թարգմանության նկատմամբ անհրաժեշտ է կիրառել նույն մոտեցումը, ինչ տեխնիկական թարգմանության (Brunt 1987): Երևույթը խոսույթի դիրքերից բնութագրելով՝ բժշկագիտական տեքստը պետք է ներկայացվի իբրև բազմաթիվ ժանրային հատուկ բնագավառներից մեկը (գրավոր կամ բանավոր, գիտահետազոտական հոդված, բժշկագիտական սարքավորման բնութագրի մասնագիտական ամսագրի համար և այլն): Բժշկագիտական խոսքի նկատմամբ կիրառելով տենորի մոտեցումը՝ Լանկամպի (Lankamp 1989:21) թույլ է տվել տարբերակել նշված խոսույթի հետևյալ տարբերակային դրսևորումները

- 1) բժշկական կրթության լեզու (դասագրքեր),
- 2) Բժշկական մասնագիտության լեզու (մասնագիտական ամսագրերի հոդվածներ),
- 3) լրագրային բժշկագիտության լեզու (հանրամատչելի լրագրային բժշկագիտական հոդվածներ),
- 4) Բժիշկ-հիվանդ լեզու,
- 5) Բժշկական տեխնիկայի լեզու (ամսագրեր):

Նշված ենթահամակարգի ցանկացած օղակի համարժեք թարգմանության համար նախընտրելի և անհրաժեշտ է նախևառաջ ապահովել միանշանակ լեզու՝ արտահայտված եզրույթային համապատասխանությամբ, որի նպատակն է հստակորեն ձևակերպել համապատասխան հասկացությունները՝ հատկապես բժիշկ-բժիշկ տենորում: Մեր հետազոտության համար կարևորում ենք մասնագիտական որակավորման բարձր մակարդակը, քանի որ հետազոտությունը կատարված է բժիշկ-բժիշկ գրքային սահմաններում/տենորում, երբ բժշկագիտական խոսքը բարձրագույն տեխնիկական, մասնագիտական, խոսվածք է: Այսինքն, նախ անհրաժեշտ է որոշել

նշված բնագավառներից, որոնց հետ ենք պատրաստվում աշխատել, քանի որ բուն բժշկագիտական տեքստի և գիտահանրամատչելի հոդվածի բառապաշարային հիմքերը անպայմանորեն պետք է տարբերվեն. գիտահանրամատչելի հոդվածի բառապաշարը չի կարող տերմինաբանական առումով նույնքան ծանրաբեռնված լինել, որովհետև նմանօրինակ հոդվածը նախատեսված է լայն մասսաների համար, որոնք հնարավոր է, որ ոչ միայն բժշկական կրթություն չունենան, այլև ընդհանրապես կրթություն չունենան: Անդրադառնալով բժշկագիտական թարգմանությանը Ֆիշբախը (Fishbach, 1986), որ բժշկագիտական և կրոնական թարգմանությունները գիտական թարգմանության ամենաունիվերսալ և ամենահին տարատեսակներն են, որովհետև մարդկային մարմինը առկա է միշտ և ամենուրեք միաժամանակ: Ֆիշբախը (Fishbach, 1986:19) նշում է, որ թարգմանական առումով այս տարատեսակը մասնագիտական անգլերենի հոծ բազմազանության շրջանակներում ամենաքիչ դժվարություններ հարուցող տարբերակն է՝ շնորհիվ միայն իրեն հասուկ հունալատինական բառապաշարային հիմքի: Գրագրության մեջ շարունակաբար գործածվում են հունալատինական բառապաշերտը ներկայացնող եզրույթները: Բժշկագիտության բնագավառի վաղ շրջանի թարգմանական արվեստը տանում է դեպի սանսկրիտ, եգիպտերեն և այլ հին լեզուներ, մինչդեռ ժամանակակից թարգմանությունների համար իբրև հիմք ծառայում է 15-րդ դարի հունարենից անգլերեն կատարված թարգմանությունները (այս մասին ավելի մանրամասն տես M. Pilegaard:159-184)

Թարգմանական առաջին խնդիրը, այսպիսով, հասկացությունների հստակ ձևակերպմանն ուղղված՝ բառային միավորների, առաջին հերթին եզրույթների ճիշտ ընտրությունն է: Անհրաժեշտ է նշել նաև, որ բժշկագիտական եզրույթի մեջ իրենց արտահայտությունն են գտնում և առաջին պլան են մղվում ոչ միայն գիտական հասկացության բուն էությունն արտահայտող գերակայող հատկանիշները, այլև ուսումնասիրվող երևույթի բազմազան գուգորդումային և սուբյեկտիվ բնութագրերը: Հետևաբար, գիտական գիտելիքի զարգացման պատմական ժամանակաշրջանով էլ պայմանավորված է նրա ընկալումը: Որոշ եզրույթներ կարող են ներկայացնել միաժամանակ երկու կամ երեք հասկացություններ (օրինակ՝ ժամանակի և անձի, գործընթացի և ժամանակի հասկացություն, ինտենսիվության և ժամա-

նակի հասկացություն և այլն), ինչպես նաև միաժամանակ արտացոլել հատկանիշներ, որոնք հատուկ են տարբեր հասկացությունների (օրինակ՝ abdominal pain, mental pain): Հասկացություններին հատուկ հատկանիշների այդպիսի սերտաճը՝ արտացոլված միևնույն եզրույթում, հիմք է ծառայում եզրույթի հորինվածքային իմաստաբանության ձևավորման համար: Եզրույթը, ունենալով ներքին բարդ իմաստային կառուցվածք, անվանման ինքնուրույն միասնական միավոր է (Обчаренко В.М 1969:41): Եզրույթներն օժտված են հատուկ տերմինաբանական նշանակությամբ՝ առաջացած տարերայնորեն կամ հատուկ գիտակցական կոլեկտիվ պայմանավորվածությամբ: Տերմինները բավականաչափ ճշգրիտ և լիարժեքորեն արտացոլում են համապատասխան հասկացության հիմնական, կարևոր հատկանիշները, ինչպես նաև գիտության զարգացման մակարդակը տվյալ փուլում: Քանի որ բժշկագիտության լեզուն արտացոլում է մարդկության համար կարևորագույն գիտելիքների ոլորտ, այն գործածվում է հատուկ նպատակների համար, վերաբերում է հնագույն լեզուների շարքին, աչքի է ընկնում արտահայտման միջոցների մեծ բազմազանությամբ, այն միշտ եղել և մնում է տերմինաբանների ուշադրության կենտրոնում: Այսօր բժշկագիտական տերմինաբանության մեջ այդ պրոֆեսիոնալ լեզվի և բժշկագիտական տերմինաբանության տարբեր ենթահամակարգերի առանձին ուղղությունների հարուստ փորձ կա կուտակված: Ժամանակակից շատ լեզուներում գիտական եզրույթների կազմության համար կիրառվում են հունարեն և լատիներեն բառերն ու բառակազմիչ տարրերը: Բժիշկների և դեղագետների համար լատիներեն ու հին հունարեն լեզուները հատուկ նշանակություն և կիրառում ունեն: Լատիներենը, ինչպես գրաբարը, սանսկրիտը, հին հունարենը, մեռած լեզու է: Այն պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին: Մինչև 19-րդ դարի կեսը շատ գրքեր և համարյա բոլոր թեզերը հրատարակվում էին լատիներենով: Բժշկության բազմադարյան զարգացման ընթացքում մեծ է եղել լատիներենի դերը: Ոչ պակաս կարևորվել է նաև հին հունարենի բառապաշարի հարուստ ժառանգությունը: Հին հունարենի և լատիներենի միջոցով ստեղծված բժշկագիտական տերմինաբանությունը շատ հարմար է գիտնականների միջազգային հաղորդակցման համար: Դարերի ընթացքում բժշկության ամենատարբեր բնագավառների հեղինակությունները հարստացրել են հունալատիներեն տեր-

մինաբանությունը: Հենց այս ավանդույթն էլ մինչև օրս դեռ որոշում է ժամանակակից բժշկագիտական տերմինաբանության լեզվական զարգացումը: Եթե կենդանի լեզուներում բառերը մեծ մասամբ բազմիմաստ են, գործածման ընթացքում ձեռք են բերում փոխաբերական լրացուցիչ իմաստներ, ապա մեռած լեզուներում դա հնարավոր չէ: Նրանցից փոխառնված բառերը, որպես օրենք, գործածվում են միայն մեկ իմաստով: Մեռած լեզուների բառերին և բառակազմիչ տարրերին կարելի է տալ պայմանական, նեղ մասնագիտական իմաստ, որը նրանք չունեին այդ լեզուներում (Առաքելյան Հ.Թ., Բալաբանյան Վ.Ս. 2003): Օրինակ՝ *kytos* հունարեն բառը նշանակում է որևէ իր, որն իր մեջ որևէ բան է պարունակում, ուռուցիկ է՝ անոթ: Լատինացված *cytus* տերմինն արտահայտում է բջջաբանության հիմնական իմաստներից մեկը՝ բջիջ: Օրինակ, *cytologia* – բջջաբանություն, *leucocytus*, – արյան սպիտակ գնդիկ (*monocytes*, *lymphocytes*, *myocytes*) և այլն:

Բժշկագիտական հունալատինական տերմինաբանության մեջ շատ հաճախ հանդիպում ենք այնպիսի եզրույթների, որոնք արտահայտված են գոյական-ածական շարույթով. օրինակ՝ *tinctura amara* – դառը թուրմ, *sirupus amarus* – դառը օշարակ, *medicamentum rubrum* – կարմիր դեղանյութ: Բժշկագիտական տերմինաբանության մեջ այսպիսի օրինակները բազմաթիվ են: Բժշկագիտական հունալատինական տերմինաբանության մեջ բայերը հիմնականում գործածվում են դեղագործության մեջ՝ դեղամիջոցը պատրաստելու և այն բաց թողնելու, ցուցում տալու համար: Բժշկագիտական տեքստերում թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում հաճախ հանդիպում են հրամայական և ըղձական եղանակի ձևերը:

Ինչպես նշում են որոշ հետազոտողներ, լատիներենում բժշկագիտական և դեղագիտական գրականության մեջ ըղձական եղանակը լայն կիրառություն ունի: Ըղձական եղանակը հաճախ գործածվում է հրամայական եղանակի փոխարեն՝ արտահայտելու համար բժշկի հրամանը, ցուցումը դեղագործին՝ ինչպես պատրաստել, պահել և բաց թողնել դեղամիջոցը (Առաքելյան Հ.Թ., Բալաբանյան Վ.Ս. 2003): Այս երևույթին անգլերենում համապատասխանում է եղանակավորման կարգի կիրառությունը (*should be done*, *should not be mixed*):

Բժշկագիտական տերմինաբանության գիտակցական յուրացման համար անհրաժեշտ է.

- ա) իմանալ առավել գործածական հունալատիներեն տարբերի իմաստը և ստուգաբանությունը, որոնցից բաղկացած են եզրույթները,
- բ) հասկանալ բառի, եզրույթի իմաստը փոխող ածանցների բառակազմական հնարավորությունները,
- գ) իմանալ առավել գործածական հոմանիշները և հականիշները:

Բժշկագիտական տարբեր բնագավառների տերմինաբանության մեջ կան շատ հունարեն և լատիներեն հոմանիշներ, ընդ որում անատոմիական (*articulatio* – հոդավորում) և դեղաբանական (*aqua*) տերմինները հիմնականում լատինական ծագում ունեն, իսկ ախտաբանական (*hydor*, *arthron* – հոդավորում, հոդ) տերմինները՝ հունական:

Այսպես Վերածննդի ժամանակաշրջանից՝ լատիներեն և հունարեն ծագում ունեցող բազմաթիվ, այդ թվում նաև բժշկակենդանաբանական եզրույթներ փոխառնվեցին անգլերենում առանց – *s* վերջավորության: Նրանք ենթարկվեցին լատիներենի հինգ հոլովումների հոգնակի թվի կազմության կանոններին: Այսպիսի գոյական եզրույթներ մի մասն ունի հոգնակի թվի համար երկու վերջավորություն (մեկը լատիներեն, մյուսը՝ անգլերեն – *s*):

Այսպիսով, հին հունական և լատինական տերմինաբանությունը կիրառելի է գիտության տարբեր բնագավառներում, հատկապես տեսական և գործնական բժշկության մեջ, օգնում է տարբեր ազգերի գիտնականներին միջազգային հաղորդակցության ոլորտում իրականացնելու արդյունավետ համագործակցություն:

Այնուհետև, տերմինաբանական միավորների ճիշտ ընտրությունից պակաս կարևոր չէ ճիշտ քերականական կառույցների ընտրությունը, այսինքն՝ ինչի մասին խոսելիս ինչ և ինչպիսի շարահյուսական կառույցներ պետք է ընտրվեն: Օրինակ, բժիշկ-հեղինակը, կատարված գործողությունները նշելով ու առանձնացնելով, փորձում է թվարկել, ընդհանրացնել և ամփոփել՝ բացատրելով ստեղծված իրավիճակը, դրանով իսկ արդարացնելով բուժմանն առնչվող անհրաժեշտություն դարձած հետագա քայլերը:

Epidural anesthesia has no significant effect on the progress of labor. It has not been demonstrated to affect the uterus directly but contractions may decrease in intensity or frequency after initial catheter placement.

Has not been demonstrated ներկա վաղակատարի ժխտական ձևը բացառության տեղ չի թողնում՝ շեշտելով երկար տարիների ընթացքում փորձի միջոցով ստացված նշանակալի ձեռքբերումները: Եվ, վերջապես, թարգմանության ընթացքում կարող են ի հայտ գալ մշակութային տարբերություններ. օրինակ, ամերիկյան բժշկության մեջ յոդի գործածությունը այնպիսին չէ, ինչպես սովետական մշակույթը կրող երկրներում, հետևաբար, թարգմանիչը նախ պետք է պարզի թե ամերիկյան մշակույթում ո՞ր դեղամիջոցն է նրան փոխարինում, կամ ասենք, ամերիկյան իրականության մեջ տարածված է բերանի խոռոչում տեղադրվող ջերմաչափի միջոցով մարմնի ջերմության չափումը, և այլն:

Ամփոփելով, կարելի է ասել, որ բժշկագիտական խոսք ներկայացնող ցանկացած ժանրային ոլորտի համարժեք թարգմանության յուրահատկությունները պայմանավորված են.

- եզրույթների և տերմինաբանական կապակցությունների համարժեքների ճիշտ ընտրությամբ՝ պայմանավորված բժշկագիտական խոսքի ժանրային բնագավառների առանձնահատկություններով (օրինակ՝ գինեկոլոգիա), ընդ որում, հունալատինական տերմինները սովորաբար հասկացվում են նույնիսկ առանց թարգմանության նեղ մասնագիտական շրջանակներում՝ բժիշկ-բժիշկ տենորում,
- քերականական կառույցների ճիշտ ընտրությունը կարևոր է հասկացությունների և երևույթների ճիշտ ընկալման համար,
- վերջապես, խիստ էական է մշակութային տարբերություններն հաշվի առնելը համարժեք թարգմանություն ապահովելիս:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Овчаренко В.М.**, *Термины, аналитическое наименование и номинативное определение.* // Современные проблемы терминологии и в науке и технике. М., Наука, 1969. – С.91. Fishbach H. Some anatomical and physiological aspects of medical translation. Meta, March, 1986.
2. **Gasparyan N.** Linguostylistic Peculiarities of US Medical Leaflets. Armenian Folia Anglistika, 2(9) 2011, Yerevan, p.36-39.



3. **Pilegaard M.** Translation of Medical Research Articles. 1997, edited by Trosborg A. Text Typology and Translation. Amsterdam-Philadelphia. John Benjamins, pp.159-184.
4. **Առաքելյան Հ.Թ. Բալարանյան Վ.Մ.** Լատիներեն լեզու և դեղագիտական տերմինաբանություն, Երևան, 2003, 237էջ:
5. **Օհանյան Ս.** Անգլերեն բժշկագիտական խոսքի ոճաժանրային առանձնահատկությունները. բան. գիտ. թեկն. սեղմագիր, Երևան, 2013:
6. [http://books.google.com/books/about/The\\_Translator\\_s\\_Invisibility.html%3Fid%3DKRBv](http://books.google.com/books/about/The_Translator_s_Invisibility.html%3Fid%3DKRBv)
7. [books.google.am/books?isbn=9027216290](http://books.google.am/books?isbn=9027216290).
8. <http://search.tb.ask.com/search/redirect.jhtml?action=pick&ct=GD&q=&searchfor=TOWARDS+A+TYPOLOGY+OF+TRANSLATIONS+RODA+P.+ROBERTS>.

**GASPARYAN N., OHANYAN M. – On Some Peculiarities of Scientific Medical English.** Medical communication has been studied in international sphere from the perspective of discourse. Medical communication is a kind of international communication which mainly takes place in health care system. The knowledge of medical discourse makes the process of adequate translation easier.

**ГАСПАРЯН Н., ОГАНЯН М. – О некоторых особенностях научно-медицинского перевода.** В статье рассматривается проблема медицинского перевода с точки зрения дискурса. Медицинский дискурс является интернациональным общением, которое происходит в области здравоохранения. Будучи знакомым с медицинским дискурсом, переводчик облегчает свою задачу.

## ՀԵՄԻՆԳՈՒԵՑԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻՆ

**ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

20-րդ դարի ամենաճանաչված և ազդեցիկ գրողներից է Էրնեստ Հեմինգուեյը: Նրա ոճը ուղիղ է, չծանրաբեռնված, ինչպես ինքն է անվանել այն՝ «այսբերգի տեխնիկա»: Նրա ոճը առանձնանում է կարճ, կյանքից վերցված երկխոսություններով: Լեզուն հակիրճ է, շատ քիչ ածականներով կամ մակբայներով համեմված, հաճախ հանդիպող բացթողումներով: Ընդունված կարծիք է, որ նրա տաղանդը թույլ է տալիս առանձնացնել նրան գրականության մեջ, որպես յուրահատուկ գրողի: Նա մեծ արձակագիր է, մտածող, իսկական արվեստագետ, ով կարողացել է քիչ բառերով ասել ամենակարևորը:

Հեմինգուեյի կերպարները կարելի է ներկայացնել երկու ձևով: Առաջինը «Հեմինգուեյի հերոսն է»: Դրանք հանդիպում են համարյա բոլոր ստեղծագործություններում: Հեղինակը նկարագրում է նրանց մանկությունը, որն անցնում է դժվարին պայմաններում, պայքարի մեջ: Վերջապես նրանք հայտնվում են դաժան իրականության առջև: Երկրորդ տեսակը «Հեմինգուեյի կողմն է»: Այս կերպարներն ունեն որոշակի սկզբունքներ: Այս մարդիկ ունեն ինքնասիրություն, ազնվություն և այն ամենը, ինչ հատուկ է մարդ արարածին:

Հեմինգուեյի միակ փիլիսոփայությունը կյանքի փիլիսոփայությունն է: «Մարդուն կարելի է ոչնչացնել, բայց հաղթել նրան հնարավոր չէ»: Սա են ապացուցում նրա հերոսները:

Անդրադառնանք Հեմինգուեյի կին հերոսներին: Նրանց նույնպես կարելի է բաժանել երկու խմբի՝ անբարո և հրեշտակային: Իր հերոսուհիների բնավորությունները և էությունը բացահայտելու համար Հեմինգուեյը դիմում է տարբեր մեթոդների: Դրանցից մեկն իր հերոսուհիներին տարբեր անուններով կոչելն է, որոշ դեպքերում նույնիսկ՝ անունից գրկելը:

20-րդ դարի սկիզբը հայտնի է դրամատիկ փոփոխություններով ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլև ամբողջ աշխարհում:

Գենդերային քաղաքականության զարգացմանը համընթաց՝ զարգանում էր գրականությունը, լրատվությունը, ռադիոն, հեռուստացույցը, կինոարտադրությունը: Աշխարհի շատ երկրների տնտեսական աճը բերեց նրան, որ կանայք հնարավորություն ստացան աշխատելու դրսում:

«Նոր կինը» հեռու էր իդեալից, նրա վարքագծի և բնավորության շատ գծեր հիացմունքի արժանի չէին: Սովորույթը, սակայն, այնքան ուժեղ էր, որ «կանացի կնոջ» կերպարը մնում էր գրականության մեջ «նոր կնոջ» կերպարի կողքին: «Նոր կնոջ» կերպարը առավելապես սկսեց առաջ գալ առաջին համաշխարհայինից հետո, կին, ով անկախ է, ուժեղ և ազատ: Նրանք մարմնավորում էին դարի ոգին:

Հեմինգուեյի կին կերպարներին հասկանալու համար պետք է նախ և առաջ համեմատել նրանց հեղինակի կյանքում տեղ գտած կանանց հետ:

Առաջին և ամենահզոր ազդեցությունը Հեմինգուեյի վրա թողել է նրա մայրը՝ Գրեյս Հոլ Հեմինգուեյը: Նրա հարաբերությունները մոր հետ, նրա տարաձայնությունները այդ կնոջ հետ ունեցան ճակատագրական ազդեցություն կանանց հետ Հեմինգուեյի հետագա հարաբերությունների վրա:

Հեմինգուեյի մոտ ընկերը՝ Չարլզ Լանհամը, նշում է, որ նա միշտ հիշատակել է մորը, «այդ բոլոր...» արտահայտությամբ և պատմել է, թե շատ է ստույգ նրան: Հեմինգուեյի մոր ճնշող ազդեցությունն իր ամուսնու վրա ծնեց հեղինակի մոտ ուժեղ տղամարդու կերպար ստեղծելու ցանկություն:

Կարծես իր մորից ստացած հարվածը քիչ էր, երկրորդ ոչ պակաս ցավոտ հարվածը ստացավ իր առաջին սիրուց՝ Ագնեսից:

Այսպիսով, իր ստեղծագործական կյանքի սկզբում Հեմինգուեյը ուներ բավականաչափ կյանքի փորձ, բայց կանանց հետ հարաբերվելու փորձ չուներ: Ժամանակի ընթացքում փոխվեց հեղինակի հարաբերությունների որակը կանանց հետ, որը բերեց նոր ընկալման:

Ամուսնություն, հասունացում. բաժանում՝ սրանք այն թեմաներն են, որոնք անընդմեջ կրկնվում են Հեմինգուեյի ստեղծագործություններում:

Անկարող լինելով հաղթարել իր և իր մոր միջև եղած կոնֆլիկտը, Հեմինգուեյը տեղափոխում է այդ լարվածությունը յուրաքանչյուր նոր հարաբերության մեջ: Վախը կնոջ գերակայությունից հանգեցնում է նրան, որ հեղինակը այդպես էլ չի կարողանում նկարագ-

րել առողջ հարաբերություններ կնոջ և տղամարդու միջև: Այնուհետև գումարվում է նրա կյանքի փորձի մյուս փուլը, որտեղ նա ձախողվում է՝ և՛ որպես ամուսին, և՛ որպես հայր:

Բսկ շրջապատում զարգանում է նոր կինը իր ուրույն տեղով, դերով, և Հեմինգուեյը անընդմեջ պայքար է մղում իր, իր աստելության և ինքնուրույնություն ստացած կնոջ դեմ: Ցավոք, նա չի կարողանում հաղթահարել հոր ճակատագիրը չլրկնելու վախը, և դա պարզ երևում է նրա կարճ պատմվածքներում:

Բազմաթիվ կենսագրագետներ ուսումնասիրել են Հեմինգուեյի կյանքի այս առեղծվածը: Հեմինգուեյի գենդերային ինքնությունն առավելապես հոգեբանական հիմքեր ունեն: Ակնհայտորեն դա ազդել է Հեմինգուեյի վրա տղամարդ հերոսների բնավորությունները կերտելիս ուժեղ, ասլետիկ, կռվարար, ֆիզիկապես զարգացած: Դա «տղամարդն առանց կնոջ» աշխարհն է: Հեմինգուեյի դրախտում կինը տեղ չունի, բայց մայրը կա: Այս դժվարին խնդրի լուծումը Հեմինգուեյը գտնում է՝ բնությանը մայրական հասկանիչներով օժելով:

**ГАЯНЕ ГРИГОРЯН – Хэмингуей и гендерная проблема.** Исследуя Хемингуэя приходим к заключению, что миф его муже-ориентации не столько связан с гендерной проблемой сколько с его психологическими проблемами

Явно он пишет о мужественных, атлетических, сильных чемпионах, о мире “мужчин без женщин”.

Решая дилемму Матери и женщины Хемингуэй превозносит мать и рисует природу материнскими чертами.

**GAYANE GRIGORYAN – Hemingway’s Relations with Gender Problems.** Research into Hemingway has invariably pursued the explosion of the myth of masculinity by asserting that the writer’s gender identity, the source of his psychological conflicts, was androgynous.

It is evident that Hemingway wrote a self-image as the he-man of American letters, the writer who created an exclusively male preserve-athletes, prize fighters, sportsmen, killers – a world of “men without women”.

Resolving the dilemma of wanting the Mother but abhorring the Woman, Hemingway ascribes maternal qualities to nature.

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*ԱՆՆԱ ՄԱՀԱԿՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Առաջին հայացքից, տեխնիկական թարգմանությունը մեծապես կապված է մասնագիտական տերմինաբանության և ոլորտի իմացության հետ՝ ինչն էլ կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ թարգմանչի համար: Այնուամենայնիվ, դժվարությունը ոչ միայն ոլորտի և տերմինաբանության իմացությունն է, այլ նաև տեխնիկական տեքստերի հետ աշխատելու, գրագետ և պարզ, բայց ոչ պարզամիտ գրելու հմտությունն է: Վերջին տարիների ընթացքում մի շարք նյութեր և գրքեր են մշակվել անգլերեն տեխնիկական լեզվի մասին: Այսօր այն բավականին համակարգված ոլորտ է, ինչը չի կարելի ասել հայերեն տեխնիկական լեզվի մասին:

Սույն հոդվածում կպարզաբանվեն տեխնիկական գրի և թարգմանության բնույթը և ոճի, բառապաշարի ու քերականության առանձնահատկությունները:

Տեխնիկական թարգմանության մասին խոսելիս՝ հարկավոր է դիտարկել և հստակ պատկերացնել տեխնիկական տեքստի նպատակը, կառուցվածքը և տեսակները, որոնք էլ սահմանում են տեքստի ոճի, բառապաշարի և քերականական կառուցվածքների ընտրությունը: Տեխնիկական տեքստերն ունեն ընթերցողների նեղ և հատուկ շրջանակ: Դրանք կոչված են ընթերցողին օգնելու, բացատրելու և ցուցումներ տալու համար: Ուստի բառապաշարը և քերականական կառուցվածքները պետք է լինեն հասկանալի և զուրկ երկիմաստությունից: Կառուցվածքային տեսանկյունից՝ տեղեկությունը տեքստում պետք է դասավորված լինի այնպես, որ ընթերցողը կարողանա հեշտորեն գտնել և հասկանալ պահանջվող տեղեկությունը, այսինքն՝ բովանդակության տրամաբանական ճիշտ կապակցվածության, գրաֆիկական պատկերների և աղյուսակների առկայություն, և այլն: Մակայն տեխնիկական տեքստերին ներկայացվող պահանջները կարող են մի քիչ տարբեր լինել՝ կախված տեքստի տեսակից: Տեխնիկական տեքստերը կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝

Ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթեր (օրինակ՝ հրահանգներ, շահագործման ձեռնարկներ)

Նկարագրական կամ բացատրական փաստաթղթեր (օրինակ՝ ապրանքների և ծառայությունների նկարագրություն, հասկացությունների, գործընթացների բացատրություն)

Առաջարկությունների կամ գնահատման փաստաթղթեր (օրինակ՝ ինժեներական նախագծեր, արտադրանքի կամ ծառայության գնահատականներ, ինչպես նաև գործառնություններ կամ քաղաքականություն առաջարկող զեկույցներ)

Հետազոտության վերաբերյալ փաստաթղթեր (օրինակ՝ հետազոտության արդյունքներ)

Անգամ դասակարգումից կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ փաստաթղթերի կամ տեքստերի նպատակները տարբեր են՝ հետևապես ուղղված են ընթերցողների տարբեր շրջանակներին (սպառողներից մինչև գիտական աշխատողներ): Հարկավոր է նշել, որ վերոնշյալ տեսակներից յուրաքանչյուրը բաժանվում է մի քանի ենթատեսակի: Սակայն հնարավոր է խմբավորել տեխնիկական թարգմանության հիմնական սկզբունքները և բոլոր տեսակներին հատուկ առանձնահատկությունները:

**Պարզություն և բառի ընտրություն:** Տեքստը պարզ և հակիրճ ներկայացնելու համար հարկավոր է խուսափել մի շարք ավելորդ բառերից:

Օրինակ՝ անզլերենից հայերեն թարգմանության ժամանակ.

*A measuring system for direct sales shall be provided with means for resetting the display to zero.*

*Ուղիղ առևտրի համար նախատեսված չափիչ համակարգը պետք է ունենա ցուցմունքները գրոյացնելու միջոց:*

Բառացի թարգմանության արդյունքում վերոնշյալ արտահայտությունը կարելի գրել «պետք է ապահովված լինի», որը իմ կարծիքով բավականին արհեստական և հայերեն լեզվում չհնչող կառուցվածք է: Սակայն գոյություն ունի հակիրճության և պարզության որոշակի սահման, որը խախտելիս կարելի է ստանալ անհասկանալի և երկիմաստություններով լի տեքստ, ինչն էլ ընթերցողից հավելյալ ջանքեր կպահանջի տեքստը ընկալելու համար:

Առանձնահատուկ ուշադրությամբ պետք է մոտենալ տեխնիկական լեզվի բառապաշարին, որը բազմաշերտ է: Բառապաշարի մեջ

մտնում են «ժարգոնը» (հատուկ տերմինները), նորաբանությունները և հապավումները: Տերմինների հետ կապված՝ թարգմանիչը պետք է հետևողական և ուշադիր լինի, քանի որ տարբեր ոլորտներում միևնույն տերմինը կարող է տարբեր հասկացություններ ներկայացնել: Բացի այդ թարգմանիչը պետք է խուսափի տերմիններն ինքնուրույն թարգմանելուց, քանի որ այսօր, քիչ թե շատ, գոյություն ունեն տերմինների բազա, տեխնիկական կանոնակարգերով և օրենքներով հաստատված՝ ոլորտին հատուկ տերմիններ, որոնց գոյությունը հնարավոր չէ անտեսել: Անդրադառնալով նորաբանություններին՝ հարկավոր է նշել, որ դրանց թարգմանությունը ժամանակատար և ստեղծագործական հմտություններ պահանջող գործըթաց է: Հապավումները թարգմանելիս՝ տեքստում պետք է գրել նաև հապավման բացված ձևը կամ բացատրել այն:

**Նախադասության մակարդակ:** Այս մակարդակում հանդիպող խնդիրներից են բառերի կրկնությունը, նախադասությունների և նախադասության տարրերի կառուցվածքային ոչ համապատասխանությունը: Բառերի կրկնությունը կարող է լինել պետքական կամ անպետք: Պետքական կրկնությունները ուղղված են ընթերցողի ուշադրությունը ֆիքսելուն, կամ որևէ բան հիշեցնելուն: Սակայն թարգմանիչը պետք է բաց թողնի անպետք կրկնությունները, որոնք կարող են պատահել բնօրինակ տեքստում:

Օրինակ՝

*The effect of an electromagnetic disturbance on a gas meter or volume conversion device shall be such that:*

*– the change in the measurement result is no greater than the critical change value as defined in 3.1.3, or*

*– the indication of the measurement result **is such that** it cannot be interpreted as a valid result, such as a momentary variation that cannot be interpreted, memorised or transmitted as a measuring result.*

Գազի հաշվիչի և ծավալի մեծության վերափոխման սարքի վրա էլեկտրամագնիսական աղմուկի ազդեցությունը պետք է լինի այնպես, որ՝

չափման արդյունքի փոփոխությունը չգերազանցի փոփոխության կրիտիկական արժեքը, ինչպես սահմանված է 3.1.3 կետում, կամ

չափման արդյունքի ցուցմունքը չմեկնաբանվի որպես ճշգրիտ արդյունք, օրինակ՝ վայրկենական շեղումը, որը չի կարող մեկնաբանվել, հիշվել կամ փոխանցվել որպես չափման արդյունք:

Նախադասության տարրերի և նախադասությունների միջև գոյություն ունեցող՝ կառուցվածքային պարտադիր համապատասխանությամբ է պայմանավորված տեքստի պարզությունը, դյուրըմբռնելիությունը և սահունությունը:

Օրինակ՝

*This strategy is based on the following principles:*

*National measurement standards are established and maintained to provide metrological traceability of all measurements to the International System of Units (SI).*

*Ensuring the legal framework of the National Metrology System (NMS) in Armenia is harmonised with relevant international legislation, in particular*

*Մույն ռազմավարության հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝*

*Հիմնել և պահպանել ազգային էտալոններ՝ Միավորների միջազգային համակարգին՝ բոլոր չափումների չափագիտական հետևելիությունը ապահովելու նպատակով:*

*Երաշխավորել, որ Հայաստանում Չափագիտության ազգային համակարգի (ՉԱՀ) օրենսդրական դաշտը ներդաշնակեցված է համապատասխան միջազգային օրենսդրության հետ՝ հատկապես*

Անգլերեն տարբերակում նախադասության a և b միավորները պետք է լինեն համարժեք քերականական կառուցվածքի տեսանկյունից, քանի որ երկուսն էլ մանրամասնում են սկզբունքները և ցուցակի համարժեք տարրեր են: Սակայն կարող է պատահել, որ բնօրինակ տեքստում լինի նմանատիպ սխալ: Լավ թարգմանիչը պետք է շտկի նման սխալը, այլ ոչ թե արտատպի և փոխանցի թիրախ լեզվով: Նմանատիպ համապատասխանություն պետք է լինի նաև բարդ համադասական նախադասության մեջ, որ ավելի չընդգծվի նախադասության բարդությունը և չխճճի ընթերցողին:

**Քերականական փոխակերպումներ:** Թարգմանության ժամանակ անհնար է խուսափել փոխակերպումներից, որոնք կարող են արտահայտվել շրջադարձության, փոխարինման, հավելման կամ կրճատման տեսքով: Փոխակերպումները քննարկելու համար ճիշտ կլինի դիտարկել մի քանի օրինակ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն իրականացված թարգմանություններում:



Օրինակներ՝

Անգլերենից հայերեն թարգմանություն.

*A gas meter powered from the mains (AC or DC) shall be provided with an emergency power supply device or other means to ensure, during a failure of the principal power source, that all measuring functions are safeguarded.*

*Փոփոխական կամ հաստատուն հոսանքի աղբյուրներից սնվող գազի հաշվիչը պետք է ունենա սնուցման աղբյուրի օժանդակ սարք կամ այլ միջոցներ՝ հիմնական սնուցման աղբյուրի աշխատանքի խափանման ժամանակ, չափման բոլոր ֆունկցիաների պահպանումը երաշխավորելու համար:*

Հայերեն տարբերակում փակագծերը բացված են, ինչպես նաև հապավումը, քանի որ հայերենը չունի «փոփոխական և հաստատուն հոսանքի» համարժեք ընդունված հապավում: Այստեղ տեղի է ունեցել փոխարինում բառային մակարդակում: Մեկ այլ փոխարինում բառային և քերականական մակարդակում կարելի է դիտարկել «shall be provided with» արտահայտության հայերեն թարգմանության մեջ, որը դարձել «պետք է ունենա», և արդյունքում մենք ազատվել ենք կրավորական սեռից՝ ստանալով ներգործական սեռով արտահայտված բայ: Հայերենը չի ապահովում կրավորական սեռի լայն կիրառություն, հետևապես թարգմանության ժամանակ, հնարավորության դեպքում, պետք է խուսափել կրավորական սեռից՝ նախադասության հայերեն կառուցվածք ստանալու համար: Անդրադառնալով շրջադարձությանը՝ կարելի է նշել, որ գրեթե բոլոր թարգմանված նախադասություններում առկա է շարահյուսության փոփոխություն, որը պայմանավորված է անգլերենի և հայերենի առանձնահատկություններով:

Հայերենից անգլերեն թարգմանություն:

*Սույն աշխատանքում ներկայացված են վերը նշված դետեկտորների էներգիական բնութագրերի ուսումնասիրությունները՝ ալֆա սպեկտրամետրական չափումներում դրանց օգտագործման հնարավորությունները բացահայտելու նպատակով:*

*The studies of the energy characteristics of the above mentioned detectors are presented in this paper in order to reveal the possibilities of their usage in alpha spectrometric measurements.*

Հայերենից անգլերեն թարգմանության ժամանակ ի հայտ են գալիս այլ դժվարություններ, որոնցից մեկը՝ անգլերենի կայում շարահյուսությունն է: Հայերեն նախադասությունը թարգմանելիս, նախ հարկավոր է գտնել ենթական, ստորոգյալը և խնդիրը, հետո վերջինների լրացումները և սկսել կառուցել նախադասությունը անգլերենով, այլապես մենք անգլերենով կներկայացնենք մեր հայերենի բարդ և ազատ շարահյուսությունը: Բառապաշարի ընտրությունը իրականացվում է վերոնշյալ սգբունքների համաձայն:

Այսպիսով, տեխնիկական թարգմանիչը պետք է ոչ միայն պայքարի քերականական, բառապաշարի, ոճային, կառուցվածքային և մի շարք այլ առանձնահատկությունների հետ երկու տարբեր լեզուներում, այլ նաև պետք է իրազեկ լինի բնագավառի, զարգացումների և առկա գրականության մասին երկու տարբեր մշակույթներում, որ իր սոված արտադրանքը լինի երկկողմանի ընդունելի և հասկանալի:

**АННА СААКЯН – Особенности технического перевода.** Целью данной статьи является ознакомление с основными принципами стилистических, лексических и грамматических характеристик технического перевода, на основе изучения природы, структуры и типов технических текстов, а также их функции и аудитории, которой они адресованы. В результате стало очевидно, что технический перевод является многослойным, включая характерные черты двух рабочих языков и, по крайней мере, основные знания в этой области.

**ANNA SAHAKYAN – The Peculiarities of Technical Translation.** The aim of this article is to introduce the main principles and stylistic, lexical and grammatical characteristics of technical translation through examining the nature, the structure and the types of technical texts, as well as their aim and audience they are addressed to. It becomes obvious that technical translation is multi layered including characteristic features of two working languages and at least principal knowledge of the field.

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՏԵՍՏՆԵՐ.  
ԹԱՐԳՄԱՆԵ՛Ն, ԹԵ՛ ՈՉ

*ՀԱՄԱԻՎ ՄԿՐՏՁՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

*Բառերը չպետք է ուշադրությունը շեղեն իրենց վրա,  
քանի որ ճշմարտությունը նրանցից դուրս է:*

**Բապո**

Անհերքելի փաստ է, որ լեզուն, միտքն ու մշակույթը փոխկապակցված են: Մշակութային տարբեր դրսևորումներ միանշանակ ազդում են տվյալ ազգի լեզվի վրա՝ դարձնելով այն եզակի:

Ուտելիքը, լինելով մեր առօրյա կյանքի, ինչպես նաև մշակույթի անբաժան մասը, արտահայտված է նաև մեր խոսքում. այսինքն մենք հաճախ օգտագործում ենք ուտելիք պարունակող հատկաբանություններ, արտահայտություններ, կապակցություններ և այլն:

Օրինակ Անգլիայում *tea break*, *High tea*, *tea time*, *tea party*, *tea towel* և այլ նմանատիպ բառակապակցություններ սերում են անգլիացու թեյ խմելու սովորույթից: Սակայն այլ երկրներում, որտեղ կարող է և չլինել նմանատիպ սովորույթ, ենթադրաբար, չեն լինի նաև համապատասխան լեզվական արտահայտությունները: Սա նշանակում է, որ եթե ցանկանում ենք սովորել որևէ օտար լեզու, ապա պետք է ուսումնասիրենք նաև տվյալ լեզուն կրող ազգի մշակույթը, որպեսզի կարողանանք հասկանալ տվյալ բառերի և հասկացությունների լիարժեք իմաստն ու բովանդակությունը:

Ազգերի շփման և հաղորդակցման հետևանքով ազգային ուտելիքը ներթափանցում է տարբեր ժողովուրդների ճաշացանկ, ինչպես նաև բառապաշար՝ առաջացնելով բազմաթիվ թարգմանական խնդիրներ:

Ազգային գրականության և մշակույթի ձևավորման գործընթացում թարգմանությունների դերը շատ մեծ է եղել: Պարզ է, որ թարգմանությունը լեզվական գիտակարգ է: Մինիար Բելոռուչևը մատնանշում է, որ թարգմանության գործընթացը մի լեզվի միավորները մեկ այլ լեզվի միավորներով պարզ փոխարինում չէ:

Թարգմանությունը մարդկային գործունեության բարդ և բազմակողմանի գործընթաց է: Հաճախ թարգմանության մասին խոսելիս նկատի ունենք մեկ լեզվից մյուսը փոխանցելը: Իրականում թարգմանության գործընթացում տեղի է ունենում ոչ թե մի լեզվի միջոցների փոխարինում մեկ այլ լեզվով, այլ մշակույթների, տարբեր անձանց, մտածելակերպերի, գրականությունների, դարաշրջանների, զարգացվածության տարբեր աստիճանների և սովորույթների բախում: Յուրաքանչյուր նշում էր, որ «միջմշակութային հաղորդակցության լայն կիրառումը՝ հատկապես թարգմանչական գործունեությունը, պետք է միշտ լեզվաբանական գիտակարգի հայեցողության տակ լինի»:

Լեզվաբանները գտնում են և ապացուցում են, որ գոյություն ունի, այսպես կոչված, անհնար թարգմանության տեսություն (*теория непереводимости*), համաձայն որի թարգմանությունը ընդհանրապես անհնար է: Եթե պոետները, լեզվաբանները, քննադատները կասկած էին հայտնում, որ կարելի է, հատկապես գրական թարգմանության մեջ, վերարտադրել բնագրի գեղարվեստական հատկանիշները, նրանց ազգային առանձնահատկությունները, պատմական, կենցաղային զուգորդությունը (ասոցիացիա), ապա ցանկացած լեզվի բառապաշարի և քերականական առանձնահատկությունների յուրօրինակությունը նույնպես փաստում են, որ անհնար է հասնել բնագրի և թարգմանվածքի նույնարժեքության: Այսպիսով հետևում է, որ կանգ ենք առնում մի պարադոքսի առջև. այն է՝ փաստորեն դարեր շարունակ գոյություն ունեցող գործնական թարգմանությունը դառնում է տեսականորեն անհնար:

Յուրաքանչյուր մարդ իր մշակույթի արդյունքն է և մեկ այլ մշակույթի ներկայացուցչին կարող է հասկանալ և ընկալել սահմանափակ չափով:

Միջմշակութային հաղորդակցման ժամանակ առավելագույնս կարևոր է հենքային գիտելիքը: Թարգմանիչը պիտի տիրապետի ոչ միայն տվյալ ազգի լեզվին, այլև քաջատեղյակ լինի մշակույթին, որպեսզի ի վիճակի լինի թարգմանել զգացում, գաղափար, հագուստ, ուտելիք և այլն արտահայտող բառեր: Միանշանակ բավականին բարդ է ազգային որևէ ուտեստ թարգմանելը, քանի որ կարող ես և չգտնել համարժեքը: Օրինակ, եթե թարգմանիչը իրազեկ չլինի, թե ինչ է նշանակում High Tea –ն անգլիացիների համար, ապա բառացի թարգմանությունը, որը հայերենում հնչում է բարձր թեյ, կարող է թյուրիմացություն առաջացնել:

Խոսակցական առօրյա անգլերենում այնպիսի արտահայտություններ ինչպիսին օրինակ “Would you like a cuppa” – ն է, փորձենք թարգմանել, կրախվենք “cuppa” բառը թարգմանելու խնդրին, քանի որ այն չենք գտնի ոչ մի բառարանում: Այս բառը հորինել են անգլիացիները, որպեսզի կրճատեն “a cup of tea” բառակապակցությունը: Այսպիսով “a cup of tea” ասելու փոխարեն նրանք ասում են “cuppa”, որն էլ չի կարողանա թարգմանել այս ամենից ոչ քաջատեղյակ թարգմանիչը:

Մեկ այլ արտահայտություն ինչպիսին “Let me be mother” կամ “Shall I be mother”, որը նշանակում է «թեյ լցնե՞մ» եկել է անգլիացու թեյ խմելու ավանդույթից: Բառացի թարգմանությունը կարող է ծիծաղաշարժ լինել, քանի որ հայ իրականության մեջ «թեյ» բառը երբեք չէր առնչվի «մայր» բառի հետ: Սակայն անգլիացին այնքան է սիրում թեյը, որ համեմատում է այն մոր հետ, որը ամենապաշտելի էակն է մեզ համար:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ քերականությանն ու բառապաշարին տիրապետելը դեռ բավարար չէ համարժեք թարգմանություն անելու համար: Չնայած, մեր համոզմամբ, ամեննին էլ կարիք չկա թարգմանել ազգային ուտեստները, քանզի նույնիսկ ամենամանրակրկիտ և գրագետ կատարված թարգմանությունն անգամ ինչ-որ չափով տուժելու է: Ինչպե՞ս թարգմանել դափաման անգլերեն, կամ пельмени և shepherd’s pie հայերեն և այլն:

Թարգմանական հնարները կոնկրետ գործողություններ կամ որոշակի միջոցներ են, որոնց շնորհիվ հաղթահարվում են թարգմանության ընթացքում ծագող դժվարությունները: Թարգմանության առավել հայտնի հնարներն են ընդհանրացումը, կոնկրետացումը, հականշային թարգմանությունը, հարմարեցումը, ընդլայնումը, փոխհատուցումը, խտացումը, կրճատումը, բացատրությունը և այլն:

Բացատրություն թարգմանական հնարը կիրառվում է, երբ թարգմանական տեքստ է ներմուծվում լրացուցիչ տեղեկատվության նպատակ ունենալով ընդհանրապես հաղորդել այն, ինչը բնագրում ակնհայտ է առանց որևէ պարզաբանության: Բացատրությունը կիրառվում է այն դեպքում, երբ խոսվում է բնագրի լեզվի կրողներին քաջածանոթ որոշ իրադարձությունների, փաստերի մասին, որոնք կարող են անհասկանալի լինել թարգմանող լեզուն կրողներին, ընդ որում բացատրությունը կատարում է ինչպես ավելի ծավալուն նկարագրական թարգմանություն, այնպես էլ ծանոթագրությունների միջո-

ցով, որոնք տրվում են փակագծերում: Օրինակ՝ *black paper* բառացի թարգմանվում է *черная книга* կամ սև գիրք հայերեն: Սա ոչինչ չի ասում ռուս կամ հայ ընթերցողին և զուգադրվում է սև ցուցակ արտահայտությամբ: Ահա թե ինչու այն թարգմանելիս անհրաժեշտ է տալ բացատրություն, այսինքն՝ պարզ մատնանշելով, որ սև գիրքը անգլիական կառավարության քաղաքականությունը և գործողությունները քննադատող մի փաստաթուղթ է: Նույնպիսի բացատրություն էլ կարծում ենք, պիտի տրվի ազգային ուսուսանների դեպքում դրանք ինչ-որ կերպ թարգմանելու փոխարեն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Kiple K.**, *A movable feast*, Cambridge University Press, 2007.
2. **Kopytoff I.**, *The cultural biography of things*, Cambridge University Press, 1986.
3. **Douglas M.**, *Introduction*, in Jessica Kuper, ed., *The anthropologist's cookbook: second edition*, London: Kegan Paul, 1997.
4. **Sidney W.M.**, and Christine M. B., *The anthropology of food and eating*. Annual Review of Anthropology. Cambridge: Cambridge University Press, 2002.
5. Российская Академия Наук Институт языкознания, *Фразеология в контексте Культуры*, Москва, 1999.

**АСМИК МКРТЧЯН – Национальная еда: Перевести или нет?** Перевод – сложный и разносторонний процесс человеческой деятельности. Зачастую, говоря о переводе, имеют в виду перевод с одного языка на другой. В реальности в процессе перевода имеют место не перенос средств одного языка на другой, а столкновение разных культур, личностей, образа мышления, литератур, эпох, различных степеней развитости и обычаев.

Языковеды считают и доказывают, что существует так называемая «теория непереводаемости», согласно которой перевод вообще невозможен. Отсюда следует, что мы оказываемся перед парадоксом: он заключается в том, что существующая на протяжении веков практическая переводческая деятельность теоретически становится невозможной.

Каждый человек является плодом своей культуры, и способен понять и воспринять представителя другой культуры в ограниченном объеме. При переводе национальных явлений необходимо соблюдение условия базовых знаний.

**HASMIK MKRTCHYAN – National Food: Translate or Not?** National food, in virtue of contact and interaction of different nations appears in other cultures causing some translation problems. Here the background knowledge is an important means to realize intercultural communication that is awareness of a certain culture realia. That is why the translator should be true bilingual, who is considered to be a member of two different linguistic and cultural communities at the same time. The way bilingual people translate words is quite different from the dictionary translation of the same words. Words denoting objects have rather similar meanings when translated, but words denoting ideas, emotions, clothing, food etc. have different meanings in different languages and cultures. The meanings people attribute to them are different from culture to culture. So, “the translations” of the true bilinguals differ from the dictionary translations, because they adjust the meaning to the other culture. Culture plays a crucial role in respect of belongings in the “translation” process. Two words sometimes do not refer to the same thing even if they are given as dictionary equivalents of each other.

So, it is a very difficult task to translate the names of traditional dishes of different nations. Wrong or incomplete translations may often lead to the jest and put people in a ridiculous situation.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### **ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Թարգմանության դասավանդման և թարգմանիչների պատրաստման խնդիրը..... 3

### **ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ**

Բանավոր թարգմանության ուսուցման ռազմավարությունները..... 9

### **ՄԵՂԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Գեղարվեստական թարգմանություն և գեղարվեստական համարժեքություն..... 17

### **ՆԱՐԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ**

Համարժեքության խնդիրը թարգմանության մեջ..... 22

### **ՀԱՍՄԻԿ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ**

Պատկերավորության՝ որպես թարգմանական կատեգորիայի որոշ խնդիրների շուրջ..... 28

### **ՄԱՐԻԱՄ ԽԱԺԱԿՅԱՆ**

Բառը որպես թարգմանության միավոր..... 36

### **ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՂՅԱՆ**

Իմացական և երևակայական փոխաբերությունների թարգմանությունը գիտագեղարվեստական գրականության մեջ..... 40

### **ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ**

Արտալեզվական լեզվամշակութային գործոնների դերը բանավոր թարգմանության գործընթացում..... 45

### **ԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

Բանաստեղծական խոսքի թարգմանությունը..... 52

### **ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ**

Թարգմանությունը իբրև միջմշակութային հաղորդակցության միջոց..... 57



**ԱՆՈՒՇ ԱՅՈՒՆՑ**

Բնագրի և թարգմանության գուգադրական քննության դերը գեղարվեստական ստեղծագործության վերլուծության գործընթացում..... 64

**ՏԱԹԵՎԻԿ ԼԱԶԱՐՅԱՆ**

Արթյուր Ռեմբոյի արձակ բանաստեղծությունները և դրանց թարգմանական դժվարությունները հայերենում..... 69

**ԱՐՄԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ՄԵԼԻՆԵ ՂՈՆՅԱՆ**

Գեղարվեստական ստեղծագործության ընկալման ու մեկնաբանման շուրջ..... 76

**ԷՄՄԱ ԹԵՄԱԶՅԱՆ**

Եղիշե Չարենցը՝ «Արքա Լիրի» հայերեն թարգմանության խմբագիր..... 83

**ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Ժան Ժիոնոյի «Պանի նախերգը» ստեղծագործության խորհրդանշանները և դրանց փոխանցումը հայերեն ..... 93

**ՈՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ**

Համարժեքության որոշ խնդիրներ Մ. Էմեի «Թառած կատվի հեքիաթների» թարգմանություններում..... 107

**КРИСТИНА СОГОМОНЯН**

Особенности перевода фразеологических единиц ..... 118

**ԳՈՀԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Ասացվածքները՝ ազգային մշակութային ժառանգություն. արժանի մարտահրավեր թարգմանիչներին ..... 122

**ԳՈՒՐԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Քերականական դժվարությունները քաղաքական լեզվի թարգմանության ժամանակ ..... 129

**ЛИЛИТ ЗАКОЯН**

Особенности перевода политического дискурса ..... 135

**ԼԻԼԻ ՄԱՔԱՆՅԱՆ**

Օր դերանվան թարգմանական դժվարությունները..... 142

**ԼՈՒՄԻՆԵ ՄԱՐԳՍՅԱՆ**

“Ted Talk”-ը որպես բանավոր թարգմանության ուսուցանման միջոց ..... 146

**ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Կին» հասկացությունը անզլերենի և հայերենի դարձվածքներում..... 151

**ԱՐՄԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Խոսքայնացված թանատաբանական հասկացությի թարգմանության փոխանցումը Էդգար Ա. Պոլի «Կարմիր մահվան դիմակը» ստեղծագործության մեջ..... 156

**ՍՈՒՄԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Թարգմանիչը՝ միջմշակութային հաղորդակցության միջնորդ..... 164

**ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ըմբռնումը որպես միջմշակութային հաղորդակցության և համարժեք թարգմանության նպատակ..... 170

**ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՐՈՆՅԱՆ, ԱՆՆԱ ՌՈՍՏՈՍՅԱՆ**

Խոսքի սաստկացման միջոցների թարգմանության խնդիրը..... 180

**ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՈՒՐԱԴՅԱՆ**

Անթարգմանելի թարգմանության մեջ..... 188

**ԱՐԴԱ ՄԱՐԴԱՆՅԱՆ**

Ֆրանսերենի առածների և սասցվածքների թարգմանության որոշ առանձնահատկություններ ..... 195

**ՍՈՒՄԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Անզլերենի իրադրային քերականական կադապարների թարգմանության և ուսուցման մի քանի առանձնահատկությունների մասին..... 202

**ՄԱՐԿՈՒՀԻ ՈՍԿԱՆՅԱՆ, ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Համաժամանակյա թարգմանչին անհրաժեշտ սկզբունքային հմտությունները և դրանց զարգացման ժամանակակից մեթոդները ..... 207

**ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հաջորդական թարգմանության մարտավարության  
հարցերի շուրջ ..... 213

**КАРО КАРАПЕТАН, АЛЛА МКРТЧЯН**

Прагматический аспект обучения переводу устной речи  
на факультете журналистики ..... 221

**ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱՄԱՐԱԶՅԱՆ**

Գիտական տեքստերի թարգմանության խնդիրներն ու  
դժվարությունները..... 227

**ԼԻԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ՇՄԱՎՈՆՅԱՆ**

Գիտաան և տեխնիկական տեքստերի թարգմանության  
որոշ առանձնահատկությունների շուրջ..... 236

**ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Խոսքային ու ոչ-խոսքային միջոցների թարգմանությունը  
որպես միջմշակութային հաղորդակցման ձև..... 241

**KARO KARAPETYAN, HEIDAR NARGESY**

Translating cultures: the case of english-persian translation ..... 248

**ՄՐԲՈՒՀԻ ԼՈՒԼՈՒԿՅԱՆ**

Միջմշակութային հաղորդակցման դերը թարգմանության  
խմաստարանական-ճանաչողական գործընթացում..... 254

**ՆԱԴԵ ԶԱԲԱՂՅԱՆ**

Դպրոցականների համար նախատեսված «Մաթեմատիկական  
որոնումներ» հետաքրքրաշարժ գրքերի շարքի հայերեն  
թարգմանության շուրջ..... 261

**ՄԱՆԵ ԱՂԲԱԼՅԱՆ**

Բազմիմաստության խնդիրները մեքենական  
թարգմանության մեջ..... 269

**ՆԱԻՐԱ ԱՎԱԳՅԱՆ**

Երկկեզվակիր երեխաների խոսքին բնորոշ  
թարգմանական սխալների շուրջ..... 275

**ԱՍՅԱԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կենդանիների անուն պարունակող առածների և  
ասացվածքների թարգմանության որոշ խնդիրների շուրջ ..... 279

**НАРИНЕ АГАДЖАНИЯН**

Проблемы перевода рекламных текстов с помощью  
компьютерных программ..... 284

**ՆԱԻՐԱ ԳԱՄՊԱՐՅԱՆ, ՄԱՐԻԱՆՆԱ ՕՀԱՆՅԱՆ**

Բժշկագիտական թարգմանության որոշ  
առանձնահատկությունների շուրջ..... 289

**ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հեմինգուեյի վերաբերմունքը գենդերային հարցերին ..... 297

**ԱՆՆԱ ՄԱՀԱԿՅԱՆ**

Տեխնիկական թարգմանության առանձնահատկությունները ..... 300

**ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՅԱՆ**

Ազգային ուտեստներ. թարգմանե՞լ, թե՛ ոչ..... 306

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ  
ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային ձևավորող՝ Ն. Օ. Խնկիկյան  
Կազմի ձևավորող՝ Ա. Ստեփանյան

Ստորագրված է տպագրության 28.02.2014 թ.:  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպաքանակ՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

---

Երևան, Ալեք Մանուկյան 1

